ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЯНСКАЯ ЭТНОГРАФИЯ И ФОЛЬКЛОР

МАТЕРИАЛЫ И ИССЛЕДОВАНИЯ

13

Б. Г. ТОРЛАКЯН

ЭТНОГРАФИЯ АМЩЕНСКИХ АРМЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН • 1981

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՂԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13

Բ. Գ. ԹՈՐԼԱՔՅԱՆ

ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 1981

902.7(С43)
Ч2П4 63.5(2Ј)
Հ 24

Ջայլ ազգագրական և բանահյուսական նյութեր և ուսում-
նասիրություններ /ՀՍՍՀ Գն, Հնագիտ. և ազգագր. ին-տ; խմբ.
կոլեգիա Ռ. Ս. Սոսթիկյան և ուրիշ.—Եր.: ՀՍՍՀ Գն Հրատ., 1982.
հ. 13. Հարևանակայքերի ազգագրություն /Ռ. Գ. Թոռոսյան. 153 էջ
4,5 Ք. Նկ.

Նշված աշխատությունում ներկայացված են հայ ազգագրա-
կան մշակույթի մեզանում մինչև օրս չուսումնասիրված և
հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակը: Ընթերցողի
նախադատական շահագրգռություն կարող են հարևան ազգերի
նկատմամբ հայերի ունեցած վերաբերմունքի հետազոտությունը:

Հրատ. պլանի 1982 թ. № 24

Տպագրվում է ՀՍՍՀ Գն Նախագահության և պղպարության
Խնամքով գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր Կ. Ս. Ղազարյան
Գ. Ն. ՍՈՍԹԻԿՅԱՆ, Է. Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Ա. Ա. ՊԵՀԼԻՎԱՆՅԱՆ | Ա. Գ. ԵՍՔՊՏՅԱՆ, Գ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ'
պատմական գիտությունների թեկնածուներ
Գ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ և Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Նշված հրատարակության պատրաստման ի նկատառում
պահի գործ ունեցող ընթերցողը դիմի Գրքի տան խմբագրա-
կան բաժին՝ Երևան, Պարոնյան 24

Տպագրված է ՀՍՍՀ Գն Հնագիտության և ազգագրության
Խնամքով գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա
Ռ. Ս. ԼՈՍԹԻԿՅԱՆ, Է. Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Կ. Ա. ՊԵՀԼԻՎԱՆՅԱՆ | Ա. Գ. ԵՍՔՊՏՅԱՆ, Գ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հ 0608000000 39—80
703(02)—81

902.7(С43)
Գ4Պ 63.5(2Ј)

© Հայկական ՍՍՀ Գն Հրատարակչություն, 1982

Եղեռնում զահատակված մորս՝
Ոսկեհատի հիշատակին

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ



Ծնվել եմ 1899 թ., Տրապիզոնին մերձակա Կյուշանա համշենահայ գյուղում։ Տեղի վեցամյա զպրոցն ավարտելուց հետո, ուսումս շարունակել եմ Տրապիզոնի Սահակ-Մեսրոպյան ութամյա վարժարանում, որի վերջին շրջանավարտներից եմ (1914 թ.)։ Լուսաշող Ոսկեհատ մայրիկիս հորդորներով ու աջակցությամբ, խույս տալով 1915թ. Մեծ եղեռնից, ընդգրկվեցի ղեռներում ապաստանած հայդուկային խմբերում։ Շուրջ մեկ տարի, հաճախակի ընդհարվելով թուրքական կանոնավոր և րաշիրոզուկ զինված ուժերի հետ, շատերս փրկվեցինք ռուսական հսղթական բանակի՝ Տրապիզոնը գրավելու (1916 թ., ապրիլ) շնորհիվ։ Մինչ ռուսական բանակի ետ քաշվելը (1918 թ. հունվար), եղեռնից մազապուրծ եղած սակավաթիվ րեկորներս վերաբնակվեցինք քարուքանդ եղած մեր բնակավայրերում։ Մեր րազմամարդ գերդաստանից փրկվեցինք միայն ես՝ ղեռներում ապաստանելով, և հորեղբորս որդին, որը, նախքան մղձավանջային արհավիրքը, ապաստանել էր Ռուսաստանում։

1918 թ. գարնանից, վերաբնակություն հաստատելով Սոչիի շրջանում, մինչև կենսաթոշակի անցնելս (1959 թ.), աշխատել եմ որպես ուսուցիչ, ծխախոտագործների շրջանային միության վարչության նախագահ, 1927—1929 թթ. վերապատրաստվելով ծխախոտագործների գյուղատնտեսական բարձրագույն դասընթացներում (Մոսկվա), շարունակել եմ աշխատել գյուղատնտեսության հետ կապված համապատասխան հիմնարկներում։

Կենսաթոշակի անցնելուց հետո ամբողջովին լծվել եմ դեռևս երիտասարդ տարիներից փայփայած նվիրական նպատակիս՝ համշենահայության ոդիսականի պատմության, տնտեսական զբաղմունքների, նյութական ու հոգևոր մշակույթի, նիստուկացի, սովորույթների, ժողովրդական բանահյուսության* վերաբերյալ դաշտային նյութերի հավաքման, դասակարգման ու շարադրման գործին։ Անմիջականորեն գտնվելով համշենահայության վերապրած սերունդների շրջապատում և մոտիկից ծանոթ լինելով նրա բառ ու րանին, բնակավայր ատ բնակավայր շրջել, հանդիպել ու նյութեր եմ հավաքել Սև ծովի կովկասյան ափերում և Կրասնոդարի երկր.ամասում հաստրվանած իմ հայրենակիցների ավագ ու միջին սերնդի ավելի քան երկուհարյուր լավատեղյակ ներկայացուցիչներից։ Հիմնականում բանավոր, րայց և հավաստի հաղորդումների հիման վրա շարագրված սույն աշխատությունն արգասիք է շուրջ քսան ատրվա իմ հավաքչական անդադրում պրպտումների։

Տեղագրությունն ու բնակչության թվաքանակն առավել հավաստի գարձնելու նպատակով համեմատել, ճշդրտել ու դասակարգել եմ տեղագրական ու վիճակագրական ավյալներ հաղորդած

* Բանահյուսական նյութերը գտնվում են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում։

ասացողների նյութերը, նկարագրել համշենահայ յուրաքանչյուր բնակավայրի տեղագրությունը և նրանում ապրող հիմնական գերդասանները, ինչպես նաև՝ հարեան կամ գրկից թուրքերի, հույների, աջարացիների ու լազերի բնակավայրերի կամ թաղերի տեղագրությունը։

Ժողովուրդների անշահախնդիր բարեկամությունը և նրանց խաղաղասիրական, մարդասիրական ու արդարամիտ ձգտումներն ընդգծելու նպատակով, բազմաթիվ ու հուղիչ դեպքերից ներկայացրել եմ թուրքական գավագիր իշխանությունների ու կրոնամոլ խառնամրոխի աղգասպան վայրագություններին բացահայտ կամ գաղտնի ընգգիմացող, պայքարող թուրք, աջար, քուրդ, լաղ և հույն ժողովուրդների բարյացակամ ու անձնազոհ վերաբերմունքի գրվագներ՝ անդեն ու անպաշտպան համշենահայության նկատմամբ։ Նրանք, հաճախ անտեսելով իշխանությունների կողմից մեղագրվելու և գաժանորեն պատժվելու վտանգը, պաշտպան էին կանգնում, իրենց բնակավայրերում, տներում թաքցնում, ապաստան էին տալիս հայ մանուկներին, կանանց ու ծերերին, կենքով ու կենսամթերքով օգնում էին լեռներում ու անտառներում ապաստանած հայդուկային-պարտիզանական հայկական խմբերին։

Համշենահայության աղգագրական ու բանահյուսական նյութերը հնարավորին չափ համապարփակ ու ըստ արժանվույն հավաքելու և աղասակարգելու երկարատե ժամանակամիջոցում, ինչպես նաև իմ հեղինակությամբ մի շարք հոդվածներ ու հաղորդումներ գիտական պարբերականներում հրատարակելու ապարեղում, ծերունաղարգ, բայց գիտության մեջ ակնհայտ մշտապես գիտամեթոդական ու նյութական գործուն օգնություն են ցույց տվել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և աղգագրության ինստիտուտի գիրեկցիան և, առանձնապես, ինստիտուտի աղգագրության բաժինը, որի անմիջական ղեկավարությամբ էլ աշխատում եմ ատ այսօր ե, որի համար, օգտվելով առիթից, հայտնում եմ իմ և հայրենակիցներիս խորին շնորհակալություն։ Պարտքս եմ համարում նշելու նաև իմ որդիներ Յոլակ ու Վարուժան Թոռլաքյաններին և բարեհիշատակ ընկերոջս որդի Վրույր Երվանդի Դավլաշյանին, առանց որոնց բարոյական և նյութական աջակցության անհնար կլիներ աղգագրական ու բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով իմ բաղմամյա շրջագայություններն ու այս գործի իրականացումը։

Ամենեին էլ չհավակնելով ներկայացվող աշխատության անթերի լինելուն, գոհունակությամբ կընդունեմ ընթերցող հասարակության ե, հատկապես, լավատեղյակ հայրենակիցներիս առաջարկությունները, լրացումներն ու դիտողությունները։

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ*

Արխազական ԻՍՍՀ ահմաններում ու ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամասում՝ առանձին բնակավայրերով, ինչպես և արխաղների, ոուսների ու վրացիների հետ խառը, հարյուր տարուց ավելի է, ինչ հաստատվել են տասնյակ հաղարավոր հայեր, որոնց մեծադույն մասի նախնիները համշենցիներ են եղել և որոնք իրենց ստեղծագործ աշխատանքով խթանում են այդ վայրերի անտեսական կյանքի ու մշակույթի զարդացմանը։ Սա Սովետական Միության սահմաններում դոյություն ունեցող հայկական ամենախոշոր դաղթօջախն է։

Համառոտ այս ակնարկով փորձելու ենք լուսաբանել համշենահայ պատմության կարեորագույն դրվագները՝ քննարար օգտագործելով պատմական, աեղադրական ու աղդադրական արդեն հայտնի ցաքուցրիվ նյութերը։

Որոշ ուսումնասիրողներ հայտնել են այն տեսակետը, որ Սև ծովի հարավարեելյան ափամերձ շրջաններում հայ էթնիկական տարրն սկսել է հաստատվել տակավին հայ ժողովրդի կազմավորման ամենավաղ շրջաններում։ Մեծ հավանականությամբ ներթափանցման այդ հոսքը շատ ավելի լայն ծավալ է ստացել մ. թ. ա. II—I դդ., երբ հզոր Պոնտական թագավորությունը իր տրնտեսական ու քաղաքական աղդեցության ոլորտի մեջ էր առել Փոքր Հայքը և Մեծ Հայքի հյուսիսարևմտյան որոշ շրջաններ։ Անտարակույս, այս տեսակետն ընդունելի է, սակայն անհերքելի փաստեր առայժմ չկան պոնտահայության հին շրջանի պատմական հիշատակները վեր հանելու համար։ Համեմատարար ավելի առատ են տեղեկությունները Խաղտյաց և Տայոց աշխարհներին հյուսիսից ահմանակից այն տարածքի մասին, որը դտնվում էր Մեծ Հայքի սահմաններից դուրս, բայց վաղ միջնադարից սկսած դարձավ դուտ հայարնակ մի շրջան, հայկական իշխաններով կառավարվող։

Համշենի հայկական իշխանության հիմնադրման ստույդ թվականը հնարավոր է լինում որոշել Ղեոնդ պատմիչի հաղորդած տվյալներով։ Ըստ VIII դարի այդ սկղրնադրյուրի, արարական բռնատիրության սակ հեծող հայ ժողովրդի տնտեսական ու իրավական վիճակը հատկապես անտանելի է դառնում 788—790 թվականներին՝ Օբայդուլլահ իբն ալ-Մահդի ոստիկանի ու սրա փոխանորդ՝ «քան դամենեսին ժանտ և չարագործ» Սուլեյմանի կառավարչության տարիներին[1]։

Սուլեյմանն առաջինն էր արար ոստիկաններից, որ Հայաստանի փոխարքայության նստավայրը տեղափոխեց Պարտավ. նա Դվինն ուղարկեց ծադումով հույն հավատուրաց իր փեսային, որը, հարկապահանջներ առաքելով Հայաստանի տարբեր շրջաններ, «աստիկ դժնդակությամբ խոշտանդէր զրնակիչս աշխարհին»։ Մեկ տարի անց հարկապահանջությունն ու կոդոպուան այնպիսի ծավալ ստացան, որ պատմիչի խոսքերով՝ «յայնմհետէ ոչ ոք էր տէր ընչից իւրոց»։ Շատերը, այլևս պայքարելու և տոկալու ուժ չունենալով, լքում էին իրենց հաղարամյա րնակավայրերը և, հաղթահարելով տիրողների դիմադրությունը, արտադաղթում այլ երկրներ։

Այս տարիներին է. ահա, որ Բյուզանդական կայսրության հյուսիսարեելյան խալդեա ծայրադավառում՝ Հայաստանից կազմակերպված արտադաղթի հետեանքով, ստեղծվում է Համշենի

---

* *Այս ակնարկը Լ. Ս. Խաչիկյանի «Էջեր համշինահայ պատմությունից» (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 115—144) հոդվածի վերափոխված ու համառոտված տարբերակն է, որ տրամադրել է հեղինակը այս պրակում վեաեղելու համար՝ ընդառաջելով մատենաշարի խմբագրական կոլեգիայի խնդրանքին։*

[1] *Պատմութիւն Ղեոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 167—169։ Ղեոնդի շարադրանքից այն տպավորությունն է սաացվում, թե Օբայդուլլահ ոստիկանը, իբր, հաշորդել է Սուլեյմանին, սակայն Հայաստանի արար ոստիկանների գիտական ժամանակագրությունը վերականգնող Հ. Նալբանգյանը այս եղկուի կառավարչությունը գնում է մինչեւն՝ 788—790 թթ., Սուլեյմանին համարելով Օբայդուլլահի կողմից նշանակված փոխանորդ (Տե՛ս նաև՝ «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 8, էջ 114)։*

հայկական իշխանությունը, որը հարատեում է երկար դարեր և ղդալի դեր կատարում հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային պատմության մեջ։

Այդ արտագաղթի մասին ուշադրավ են ժամանակակից պատմիչ Ղևոնդի հաղորդած տվյալները, որ մեջ ենք բերում ստորև, աշխարհարար թարգմանությամբ.

«Եվ շատերը, չկարողանալով տանել աղեսների ծանրությունը, կամովին թողնում էին իրենց (անասունների) հոտերն ու արտերը. իսկ թշնամիները գերեվարում էին անասուններին և ավար առնում նրանց ունեցվածքը։ Իսկ ապա, երբ այդպես ունեցվածքից ղուրկ, մերկ և րոկ և քաղցած մնացին ու չդտան ապրուստի միշոցներ, հեռացնաց ճանապարհ բռնելով՝ փախան, գնացին Հունաց աշխարհ, որոնց (փախչողների) թիվը, ասում են, եղել է տվելի քան 12 հազար տղամարդ՝ կանանց ու երեխաների հետ միասին։ Սրանց առաջնորդներն էին Շապուհը՝ Ամատունյաց տոհմից, նրա որդի Համամը և ուրիշներ հայ նախարարներից ու նրանց հեծյալներից։ Եվ անօրեն ու ժոնտ թշնամին իր ղորքով հետամուտ լինելով փախչողներին, հասնում է նրանց Հրաստանի սահմանում գանվող Կող գավառում, որտեղ ճակատամարտ տալով փախուստի են մատնում և ոմանց էլ սպանում (արարներից), իսկ իրենք անցնում են Ակամախ (Ճորոխ) գետը, որ բխելով Տայքի կողմերում՝ հոսում է հյուսիս-արևմուտքով, անցնելով Եղերով, թափվում է Պոնտոս (Սև ծով)։ Եվ երբ անցան գետը, հունաց կայսր Կոստանդինը շտապ լուր ստանալով կանչեց նրանց, պատիվներ տվեց նախարարներին ու նրանց հեծյալներին, իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց ղեղեցիկ ու արդավանդ մի երկրում»[2]։

Այս անցուդարձերի առիթով, բացի արաագաղթը գլխավորող Շապուհ և Համամ Ամատունի իշխաններից, հիշատակված են հեռավոր նշանավոր դեմքեր. Եսայի Եղիպատրուշեցի կաթողիկոսը (775—788), արարական ոստիկան Օրայդուլլահն ու նրա փոխանորդ Սուլեյմանը (788—790) և բյուղանդական կայսր Կոստանդին VI-ը (780—797)։

Վերը նկարագրված արտագաղթը և Համշենի հայկական իշխանության ստեղծումը տեղի է ունեցել Եսայի կաթողիկոսից (մհ. 788) հետո, Օբայդուլլահ ու Սուլեյման ոստիկանների կառավարչության տարիներին, ուստի՝ 789—790 թվականներին։

Արտագաղթը գլխավորել, արար պաշտոնյաների գիմադրությունը չախչախել և 12 հազարից ավելի բնակչության համար Բյուղանդական կայսրության տիրապետության ներքո ապահով բնօրրան են ստեղծել Շապուհ և Համամ Ամատունիները և ուրիշ նախարարներ։ Համշեն անունն իսկ կապվում է Համամ Ամատունու անվան հետ։ Ըստ խառնաշփոթ ու ժամանակավրեպ մի ավանդության (դրանցված այս դեպքերից շուրջ մեկ-երկու հարյուրամյակ հետո) Համամը բնակություն է հաստատել սկզրից Տամրուր կոչվող քաղաքում։ Այդ քաղաքը հետագայում գրավվել է Վաշդեանն անունով վրաց իշխանի կողմից, որ նենդելով հայերին ու բյուղանդացիներին, դործակցել է արաբների հետ ու օղնական ղորք ստացել նրանցից։ Համամ իշխանը, որ Վաշդեանի քեռորդին է եղել, մեղադրել է նրան նենգության ու դավաճանության մեջ, սակայն ձերբակալվել է ու պատժվել՝ ոտքերի ու ձեռքերի ծայրատումով։ Վաշդեանն այնուհետև, ըստ ավանդության, «առեալ ղպարսիկս (իմա՝ արաբներին), անց ընդ գետն Ճորոխ, և դնաց ի քաղաքն Համամայ, որ կոչի Տամբուր, եհար սրով և հրով և դերեաց գքաղաքն»[3]։

Այս դեպքերից հետո է, որ Համամ իշխանը ավերված Տամրուրի տեղում կառուցել է մի նոր քաղաք, իր անունով կոչելով Համամաշեն, որ հետագայում ռդվելով հնչվել է ու հնչվում է առ այսօր Համշեն կամ Հեմշին ձևերով։

Որքան էլ վիպական կերպարանք սառացած ու դոնաղարդված լինեն Հովհան Մամիկոնյանի կողմից դրանցված կամ նրա անունով մեզ հասած այս տվյալները, նրանցում, անտարակույս, կան իրական գեպքերի արձադանքներ։ Ուշադրության արժանի են հատկապես Վաշդեան վրացի իշխանի ու Համամի աղգակցությանն ու բախումներին վերաբերող տեղեկություններ։ Դրանք հնարավորություն են ընձեռում խորհելու, որ Շապուհ և Համամ Ամատունիները իրենց ժողովրդին առաջնորդել են Լաղիստանի անմատույց շրջանները՝ նախապես ծանոթ լինելով այդ վայրերին և խնամիական կապեր ունենալով նրանց իշխանների հետ։

Ղևոնդ պատմիչի հաղորդած տվյալները հնարավորություն են ընձեռում ոչ միայն պարզելու Համշենի հայկական իշխանության հիմնադրման ստույգ ժամանակը՝ 789—790 թթ., այլև որոշելու Հայաստանից արտագաղթած ու Համշենում հաստատված հայ բնակչության բնօրրանը։

Գիտենք արդեն, որ Համշեն արտագաղթած հայերի դեկավարները հայ ժողովրգի պատմու-

---

[2] Ղևոնդ, գլ. ԽՐ, էջ 168—169։

[3] Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1951, էջ 284։

թյան մեջ մեծ դեր կատարած Ամատունյաց նախարարական տան պայազատներ էին։ Պատմական ու վիմագրական աղբյուրներում առկա ակնարկների հաւսգրումով հնարավոր է լինում հանգել անտարակուսելի այն եզրակացության, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ամատունյաց նախարարության կալվածներն ընկած էին Այրարատյան նահանգի Արագածոտն և Կոտայք գավառներում, կենտրոն ունենալով Օշական նշանավոր ավանը։

Ուստի պարզ է, որ Շապուհ և Համամ Ամատունիների գլխավորությամբ Համշեն ներգաղթած հայ բնակչության ճնշող մեծամասնությունը, լինելով Ամատունյաց հպատակ հծծյալներ ու շինականներ, դուրս էին եկել Հայաստանի սրտից՝ Այրարատյան նահանգից։

Բնականարար, հետագա դարերում Համշենի լեռնաշխարհը իր անմատչելի ձորագավառներում պատսպարած պետք է լինի նաև Հայաստանի այլ շրջաններից, մասնավորապես Համշենին սահմանակից Բարձր Հայքի գավառներից արտագաղթած նոր խմբերի, սակայն հայկական Համշենի հիմնագիրները Շապուհ ու Համամ Ամատունիների գլխավորությամբ ալարական լծի դեմ ղենք վերցրած և հաղթական պայքարով իրենց համար նոր հայրենիք նվաճած հերոսներ էին[4]։

Անանցանելի լեռներով, խոր ձորերով ու խիտ անտառներով, արտաքին աշխարհից կտրված, ինքնամփոփ, մութ ու մատնախլապատ մի երկրամաս էր Համշենը։ Հեթում պատմիչը, որ XIII դ. վերջերին անձամբ եղել է այնտեղ, հայտնում է, թե «տեղին այն այնչափ մատնախլապատ է և խաւտրչուտ՝ այնպիսի նսեմութեամբ, զի ոչ ոք է՝ որ կարիցէ նշմարել ինչ անգ. և ոչ ոք է՝ որ համարձակեսցի մտանել յայն երկիր, զի ոչ ոք գտանէ շաւիղ գնալոյ ընդ այնս»։ Հեթումին լրացնում է իսպանացի դիվանագետ Ռուի Գոնսալես դե Կլավիխոն, որ 1406-ի սեպտեմբերին, տունգարձի ճանապարհին տնգել է Համշենով, մեծարժեք իր «Ուղեգրության» մեջ գրանցելով կարևոր տեղեկություններ այգ երկրամասի դիրքի, պատմության ու ժողովրդի բարքի մասին[5]։

Համշենի աշխարհագրական ու կլիմայական պայմանների, հաղորդակցության միջոցների և հարակից խնդիրների մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև XIX դ. օտարազգի և հայ ուղեդիր-տեղագիրները, մասնավորապես Կ. Կոխը, Մ. Հալկունին, Պ. Թումայանցը և ուրիշներ։ Թումայանցն, օրինակ, դրում է. «[Համշինի] ժողովուրդը, այս ամեն չարչարանքը իր երկրին լեռնային դիրքը պատճառով կը կրե, ուր կաւղ բանել բնականարար անհնարին բլլալե ղատ՝ շատ մը ճանապարհ կոչված տեղերն անգամ ձի և ջորի ալ չ'կրնար բանիլ, որով շինականը արտեն և թե անտառեն ի տուն և թե ի քաղաք փոխադրելիք բաները... կը ստիպի շալակով կրել՝ դժվարին և վախվոր ճանապարհներով»[6]։

Թե ինչ երկրամաս գրավեց Շապուհ և Համամ Ամատունիների գլխավորությամբ Այրարատյան նահանգից արտագաղթած 12 հազար բնակչությունն սկզբնական շրջանում, չգիտենք։ Միջին դարերից ևս տեղեկություններ դրեթե չեն պահպանվել (եթե անտեսենք Համշենի իշխանությունը հարավից Սպերին սահմանակից լինելու մասին ձեռագրական տվյալը՝ XV դարից)։ Ուստի, կամ թե ակամա, դիմելու ենք XIX դ. ուղեդիրների օգնությանը։

Գերմանացի գիտնական Կարլ Կոխը, որ 1843—1844 թթ. անձամբ անցել է Համշենով ու գրանցել ճամփորդական ուշագրավ իր տպավորությունները, նկատում է, թե Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող այդ երկրամասը կիսանկախ էր՝ վոյվոդ կոչվող պաշտոնյայի կառավարության ներքո[8]։ Համշենի սանջակի մեջ, բացի կենտրոնական դիրք դրավող բուն Համշենի շրջանից, Կ. Կոխի տվյալներով, մտնում էր երեք ձորապետություն (դերերեյություն)։ Դրանցից մեկի կենտրոնը եղել է Ջեմիլ գյուղը՝ հնամանուն գետափին (Կալապոտամոս գետի ա-

---

[4] Համշենցի հայերը, ինչպես նաև տրապիզոնցիները, ղրիմցիները և նրանցից ծագած հայկական ուրիշ գաղթօջախների հետ բնակչությունը ավանդաբար իրեն սերված է համարում Բագրատունյաց Հայաստանի նշանավոր կենտրոն Անի մայրաքաղաքից։

Այս ավանդություններ հաստատող ստույգ փաստեր չեն պահպանվել, սակայն հիմքեր չկան ամբողջապես մերժելու նաև Անիից ներողջ կատարված լինելու հնարավորությունը։ Փաստավոր այդ քաղաքի բնակչության մի ղգալի մասը սերտորեն կապված էր միջազգային առևտրի կարևորագույն հանգուցակետերի, մասնավորապես Տրապիզոնի և Ղրիմի ծովափնյա քաղաքների հետ, ուստի կարող էր նաև Սև ծովի հարավային նավահանգստային քաղաքներում ստեղծել նախ առևտրական հենակետեր, իսկ հետագայում (Անիի անտեսական անկումից հետո)՝ մշտական բնակավայրեր։

[5] Հեթում պատմիչ Բարբարայ, Վենետիկ, 1842, էջ 15։

[6] Рюи Гонзалес де Клавихо, Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1403—1406 гг., пер. П. И. Срезневского, СПб., 1881, стр. 382—384.

[7] Պ. Թումայանց, Պոնտոսի հայերը, «Լումայ», 1899, Բ գիրք, էջ 164։

[8] Հայտնի է. և Կ. Կոխն էլ պարզաբանում է. որ վոյվոդ էին կոչվում Օսմանյան կայսրության այն սանջակների կառավարիչները, որոնց վստահված Երկրամասի բնակչությունը քրիստոնյա էր, ի տարբերություն մյուսների կոչվածների, որոնք իշխում էին հիմնականում մահմեդական բնակչություն ունեցող շրջանների վրա։

կունքներից), երկրորդի կենտրոնը՝ Օրթաքյոյը՝ Մապավրա գետի ափին, իսկ երրորդինը՝ Մարմանադ գյուղը՝ Աթենա ծովափնյա դյուղաքաղաքից 2,5 ժամվա հեռավորության վրա»[9]։

Համշենի սահմանների մասին ավելի մանրամասն տվյալներ հաղորդում է բաղմարդյուն աղգագրագետ Ս. Հայկունին։ «Համշենի վիճակը,— գրում է նա,—րոնած է Ապերի և Իրիղեի միջավայրն, Ապերից սկսած դեպի մր երկու հովիտներն կր գրավե, որ հինավուրց հսկա անտառներով պատած է, և շրշապատված է նաև հսկա լեռներով։ Խաչավանք սարից Թեթևիթ սարի երեսը անցնելու համար մի լճակի եզրից պիտի անցնենք, որ ձկներով առատ է և որի շրջապատը կարելի է կտրել 20 վայրկյանում։ Քյոդցեր լերան վրա ևս լիճ մի կա, Այդր կյոլ անունով։ Այս լճերըն երկու գետերու սկզբնավորության են, մեն 6 ժամու ճանապարհ Ապերի կողմ հոսելով Ճոլոխի կր խառնվի. որը ևս (իմա մյուսը՝ Լ. Խ.) կր հոսի Սև ծով 5 ժամ Իրիղեի արևմտյան կողմից։ Ճեմել գետն արևմտյան կողմը հոսելով կիջնա՝ աշ կողմից Կալապատոմուղի կր խառնվի... բուն Համշեն կր սկսի Յոթը Փարա դյուղից, որ Իրիղեից 24 ժամ բարձր է։ Յոթը-Փարա գյուղից 8 ժամ բարձր է Համշենի Գարադերեն, որ Կալապատոմուղի կր խառնվի։ Մափավրի գետն ևս կր հոսի Սև ծովը Իրիղեից 4 ժամ յարևելս, որն ևս Համշենի լեռներեն կիջնա... վերին Կալե գետակն 2 ժամ ընթացքե հետո՝ արևելյան եզրից Ֆորթունա (Բուք) գեսին կր խառնվի Չափճոսի մոտ՝ Թեթևիթի հովիտեն անցնելով։ Ֆորթունան Խաչվանքի սարից կիջնա, Արտաշենից կանցնի, և Ատինտյեն 2 ժամ հարևելս Սև ծովը կր թափի...»[10]։

Համշենի բնական պայմանները՝ լեռնային լանդշաֆտ, անանցանելի ու խիտ անտառներ և տյլն, հնարավորություն չեն ընձեռում բաղմամարդ բնակավայրեր սաեղծելու։ Գյուղերն այստեղ, սովորարար, կազմված են լինում 20—30, առավելն 50 միմյանցից 1—3 և ավելի կիլոմեար հեռու ընկած տների խմբերից կամ հաա-հաա տներից։ «Գյուղացիին բնակարտնր երր նեդ դա,—գրում է Համշենի մեծավաստակ աղդագրագետը,—կամ քանի եդրայրներ միասին բնակելու խոչընդոտներ հառաջ կդան, իրենց տնեն 1—2—3 վերստ հեռու... անտառի հարմարավոր վայրերը կորոշե տուն շինել, այնպիսի տեդ մի, որ լինի դաոիվայր, տան վերեր իրեն հատուկ անտառ... տանր շուրջր պտղատու ծառներ տնկելու հարմարություն ունենա» և այլն[11]։

Մշակելի նոր հողամասերի իրացման հետ կապված դրեթե անհաղթահարելի դժվարությունները, հնադույն ժամանակներից սկսած, արտագդրի ու պանդխտության պատճառ են հանդիսացել համշենցիների համար։ Նրանք, քայլ առ քայլ դուրս դալով րուն Համշենի սահմաններից, տարածվել են դրեթե րոլոր ուղղություններով։

Կրկին անդրադառնանք քաղաքական կյանքի պատմությանը։

Տեղեկություններ չկան պարզելու, թե Համամ Ամատունի իշխանից հետո Համշենը որքան ժամանակ է մնացել նրա տոհմի տիրապետության ներքո։ Կարող ենք միայն ենթադրել, որ IX—XI դդ. Հայասատանի, Վրաստանի և Աղվանքի սահմաններում բադրատունիների հզորացման և անախընթաց վերելքի այդ ժամանակաշրջանում, Համշենը նույնպես, հարավից սահմանակից լինելով Բադրատունիների հին բնօրրան Սպերին, րնկել է նրանց քաղաքական աղդեցության ոլորտի մեջ։ Այս մութ ժամանակահատվածի վրա, կարծես, ադոա լույսի մի ճառադայթ է նետում Համշենցիների միջավայրում մինչև XIX դ. վերջերը պահպանված ավանդությունը՝ թագավորական ցեղից սերված Գրիդոր և Մարաիրոս իշխանների մասին։ Ըստ այդմ, «Մտրտիրոս Գրիդորի աղջիկը կուղե յուր որդույն՝ Արտաշենի համար. Գրիդոր չի հոժարիր տալ. Մարաիրոս ղինու ղորությամբ Գրիդորի երկիրը կր մտնե, կր պատերազմի, կր հաղթե, կառնե աղջիկր, կր պսակե Արտաշենի վրա, Արտաշեն Գրիդորի երկրի մեջ, Համշենի մեծ գետի վերի ակներուն մոտ մի հսկա րերդ կր կառուցանե, որ այսօր ևս Արտաշեն կասվի»[12]։

Այս ավանդության մեջ պատմական է, նշուշտ, հայ իշխանների միմյանց դեմ մղած պատերազմների վերհուշը և, մանավանդ, ուշադրավ այն տվյալը, որ իրար դեմ պատերազմող հայ այդ իշխանները եղել են «թագավորական ցեղեն»։

Պատմաաշխարհադրական այս միջավայրում «թագավորական ցեղ» էին առաջին հերթին Բադրատունիները, որոնք զենքի ուժով, խնամիական կապեր հաստատելով և այլ ուղիներով քաղաքական իրենց աղդեցությունը տարածում էին նորանոր շրջանների վրա, մանավանդ Տայքի ու Կղարջքի տեր Դավիթ Կյուրոպաղատի իշխանության տարիներին (961—1001), ինչպես նաև հետագա-

---

[9] Reise im pontischen Gebirge und turkisch-Armenien, von Prof. Dr. Karl Koch, Weimar, 1846, էջ 22—25 և հտ.։

[10] Ս. Հայկունի, Համշեն («Արարատ», 1895, էջ 296)։

[11] Ս. Հայկունի, Տրապիզոնի հայ գյուղագոդ կյանքը («Արարատ», 1905, էջ 789)։

[12] «Արարատ», 1895, էջ 295—297։

յում՝ վրաց Իպրատոմնիների քաղաքական վերնախավի տանտերերին։ Այս ժամանակաշրջանից պատմական սուղ վկայություններ, ցավոք, չեն պահպանվել։

XIII դարի սկզբներին, խաչակրաց 4-րդ արշավանքի հետևանքով մասնատված ու բզկտված Իլուզանդական կայսրության հյուսիսարևելյան շրջաններում ստեղծվեց պետական մի նոր կազմակերպություն՝ Տրապիզոնի կայսրությունը, որը միավորեց հույն, հայ ու վրացի ազդություններով բնակեցված մի շարք շրջաններ և XIII—XIV դարերում նշանակալից դեր կատարեց միջազգային առևտրի ասպարեզում։

Այդ մի ժամանակաշրջան էր, երբ իսալական բազաք-պետությունները, մասնավորապես Ջենովան ու Վենետիկը, ներթափանցեցին Սև ծով և առևտրական ֆակտորիաներ ստեղծեցին Ղրիմում և Ազովի ու Սև ծովերի կովկասյան ափամերձ շրջաններում. Կաֆան (Թեոդոսիան) արեելյան և արևմտյան երկրների ապրանքափոխանակության նշանավոր հանգուցակետը դարձավ։ Տնտեսական մեծ նշանակություն ստացան նաև Տանան կամ Ազախը՝ Դոնի գետաբերանում, Մաարեգան՝ Թամանի թերակղզում, Կոպան՝ Հյուսիսային Կովկասում, և 30-ից ավելի այն նավահանգիստները, որոնք ստեղծվել էին Սուդախից մինչև Սերասոպոլիս (Սուխում) ընկած ծովափերին։ Ինչպես նկատում են մասնագետները, բոլոր այս կենտրոններում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները կատարում էին կարևորագույն դեր. Կաֆայի բնակչության երկուերրորդը (46 հազար մարդ) հայ էր. հայերը մեծ թիվ էին կազմում նաև մյուս կենտրոններում[13]։

Այս շրջանում Համշենի հայկական իշխանությունը, մասն կազմելով Բյուզանդական Խալդեա (Խազտիք) Թեմի, կիսանկախ իր դիրքությունը պահպանեց Տրապիզոնի կայսրության կազմի մեջ։ Խազտիքի դժվարակոխ ճանապարհների ու նրա ռազմատենչ բնակչության մասին 1223 թվականից ունենք պերճախոս մի վկայություն, որը հարևանցիորեն վերաբերում է նաև Համշենին ու նրա քաջարի զավակներին։ Այդ թվականին րախվեցին Իկոնիայի սուլթանության ու Տրապիզոնի կայսրության զինական ուժերը։ «Պատմություն սուրբ Եվգենիոսի հրաշագործությանց» ելևէջ տվյալներով սուլթանը Ճամրար զարկեց Բարբերդից ոչ հեռու մի վայրում և շրջակա բնակչությունից տեղեկություններ սկսեց քաղել Տրապիզոն տանող ճանապարհի մասին. նրան ասացին, որ անհրաժեշտ է շրջանցել Խազտիքը, քանի որ այդ թեմը դժվարանցանելի է և ունի ռազմատենչ բնակչություն։ Հետագա դեպքերը եկան հավաստելու այդ տեղեկությունը. «Խազտիքի և Մացուկա կոչվող շրջտնի բնակիչները, տրապիզոնցիների հարձակումը հետ մղելով, ոգեշնչվեցին և, ժամանելով դիշերով՝ հալածեցին պահպանողներին, ջնջամու բանակատեղից քշեցին-տարան պատերազմական ձիերը, հափշտակեցին ու դերեցին»։ Խիստ ուշադրավ են, մանավանդ, սկզբնաղբյուրի հետևյալ տողերը. «Հույները դրավեցին հապճեպ փախուստի հետեանքով թողնված ձիերն ու զենքը։ Իսկ հնարավոր չ, արդյոք, թվարկել, թե մացուկացիներն ու Խազտիքի բնակիչները որքան փախստականներ չարդեցին Տավրոսի ձորերում»[14]։

Խազտիքի բնակիչներն այսօրեդ խիստ որոշակի առանձնացված են հույներից ու մացուկացիներից։ Հիմք չունենք պնդելու, որ «Խազտիքի բնակիչ» ասելով սկզբնաղբյուրի հեղինակը նկատի է առել միայն և բացառապես Համշենի հայերին (այդպես կարող էր կոչվել նաե Բարերդից հյուսիս՝ հնում Խազտոյ ձոր կոչվող շրջանի, ինչպես և Սպերի հայ ազդարնակչությունը), սակայն կարող ենք չառարկուսել, որ Տրապիզոնի կայսրության ազդեցության ասկ դանվող Համշենի հայկական իշխանությունը, իր հարևանների նման, կիսանկախ դիրք ուներ կայսրության և սուլթանության նկատմամբ, պահպանել էր ռազմատենչ իր ոգին և պատրաստ էր ոչ միայն դիմադրելու ջնջամի բանակներին, այլև նպաստավոր իրադրությունից օգտվելով՝ նախահարձակ լինելու։

XIV դ. կեսերից Տրապիզոնի կայսրությունը, քայքայման ու մասնատման անկանդ ընթացքի մեջ մտնելով, մեկը մյուսի ետևից կորցնում էր իր ծայրագավառները, փաստական իշխանությունն պահպանելով միայն Տրապիզոն քաղաքի ու մերձակայքի վրա։ 1360-ական թվականներին սրդեն Խազտիքը կայսրության մաս չէր կազմում. այդ տարիներին երկրամասը, հավանաբար Համշենի հետ միասին, դանվում էր արդեն Բաբերդի էմիրի զերիշխանության ներքո, որն իր հերթին Ջելաիրյանների, ապա Թեմուրյանների վասալն էր։

Սկզբնաղբյուրների բազմադարյան լռությունը Համշենի հայկական իշխանության մասին խըզվում է XV դարի սկզբներին, երբ այդ դժվարա-

[13] *Е. С. Зевакин* и *Н. Л. Пенчко*, Очерки по истории генуэзских колоний на западном Кавказе в XIII и XV вв. (Исторические записки, № 3, 1938).

[14] *Ф. И. Успенский*, Очерки из истории Трапезундской империи, Л., 1929, стр. 52, 56.

կոխ երկրով անցնում է իսպանտցի դիվանագետ Կլավիխոն։ Այնուհետև լեղու են առնում մի քանի Նոյ Հիշատակագիրներ, որոնց հաղորդած շորս ամսաք տեղեկություններն ի մի բերելով, հնարավոր է լինում ստվերագծել այդ իշխանության վերջին հարյուրամյակի պատմության հիմնական դրվագները։

Սամարղանդից հայրենիք վերադառնալու ճանապարհին, Ասե ծովի նավահանդիստներից որեէ մեկին հասնելու համար, Կլավիխոն ժամանում է Սպեր, ուր հյուրընկալվում է մահմեդական իշխողի կողմից (սրան անվանում է Piahacabea)։ Այնուհետև, 1406 թ. սեպտեմբերի 13—15-ին, նա անցնում է Համշենով, այդ երկրի մասին արձանագրելով կարևոր տեղեկություններ. «Այդ գիշեր նրանք (Կլավիխոն և իր ուղեկիցները՝ Լ. Խ.) օթևանեցին լեռան ստորոտում գտնվող մի դյուղում։ Հաջորդ օրը՝ կիրակի (սեպտեմբերի 13-ին) բարձրացան անտառաղուրկ բարձր լեռը, որն այնքան զառիվեր էր, որ և՛ մարդիկ, և՛ անասունները շարժվում էին մեծ դժվարությամբ։ Այդ օրը նրանք դուրս եկան Գորդանիայից և մտան Առաքել (Arraquiel) [կոչվող] երկիրը։ Հաջորդ երկուշարթի նրանք ճաշեցին այդ Առաքել երկրի մի գյուղում և, անմիջապես մեկնելով, դիշերեցին մի այլ գյուղում։

Ահա պատճառը, որի հետևանքով այդ մահմեդականը (Piahacabea-ն՝ Լ. Խ.) իշխում է [միաժամանակ] Սպերին և այդ Առաքել [կոչվող] երկրին։

Այդ երկրի բնակիչները դժդոհ էին իրենց իշխանից, որին, ինչպես և երկիրը, կոլում էին Առաքել։ Նրանք ուղևորվեցին Սպեր՝ վերոհիշյալ իշխանի մոտ, ասելով, որ նրան կդարձնեն իրենց իշխան, պայմանով, որ նա պաշտպանի իրենց։ Եվ արեցին այդպես՝ հանձնվեցին նրա իշխանությանը։ Նա ընդունեց և իր փոխարեն մի մահմեդական նշանակեց այդ երկրի կառավարման համար, մի քրիստոնյայի ընկերակցությամբ։

Այդ երկրամասը շատ լեռնոտ է, ունի մի քանի լեռնանցքներ, որոնցով անկարող են տնցնել կենդանիները։ Որոշ տեղերում ժայռից ժայռ տնցնելու համար՝ փայտե կամուրջ են կապել։ Բնակիր կենդանիներն այդ երկրամասում, ըստ մեծի մասի, անկարող են շարժվել և մարդիկ ընտիպված են ամեն ինչ կրել իրենց ուսերին։ Հացահատիկն այնտեղ քիչ է [աճում]։

Այդ լեռներով նրանք շարժվում էին չորս օր, մինչև հասան ծովափնյա մի տուն, որից մինչև Տրապիզոն վեց օրվա ճանապարհ էր։ Այստեղից նրանք վատ ճանապարհով գնացին մինչև Այուրմենե կոչվող վայրը»[15]։

Համշենի պատմության համար կարևոր այս տեղեկությունները կարոտ են մեկնաբանության։

Դժվարակոխ ճանապարհներով Սպերից Այուրմենե հասնելու համար Կլավիխոն, անտարակույս, անցել է Համշենով, սակայն այդ երկիրը նախկին իշխանի անունով կոչել է Առաքել[16]։

Ուշադրավ է Կլավիխոյի պատմածն այն մասին, որ Համշենի բնակիչները, դժդոհ լինելով իրենց Առաքել իշխանից, պատգամավորություն են ուղարկում հարևան Սպերի իշխանի մոտ և, որոշ պայմաններ առաջադրելով, կամովին ընդունում նրա գերիշխանությունը։ Այն անվանական է լինում, քանի որ Համշենը կառավարվում է մեկ մահմեդական ու մեկ քրիստոնյա պաշտոնյաների համագործակցությամբ, և համշենցիներն այնքան անկախ դիրք են դրավում, որ իրենց դերադաս Սպերի իշխանի կողմից մեծ պատվով ընդունված և ճանապարհված դեսպաններին իրենց երկրամասից անցնելու իրավունք են տալիս միայն համապատասխան տուրք ստանալուց հետո։

Համշենի իշխաններն այնքան ուժ ունեին, որ ի վիճակի էին հրաժարվելու Սպերի տիրող խնամակալությունից՝ նրա ստանձնած պարտավորությունների թերացման կամ քաղաքական նոր իրադրությունների պայմաններում։ Եվ այդպես էլ կատարվում է. Կլավիխոյի նկարագրած իրավիճակը փոխվում է XV դ. սկզբներին, երբ Լանկթամուրի մահով ծայր են առնում դահակալական կռիվներ ու երկարատև պայքարից հետո Հայաստանի ու Հյուսիսային Իրանի վրա իրենց տիրապետությունն են հաստատում Թուրքմեն Կարակոյունլումները։

Ատույդ չդիտենք երբ, բայց, անտարակույս, 1422-ից տարիներ առաջ, Համշենի իշխանու-

---

[15] *Рюи Гонзалес де Клавихо, անգ, էջ 382—384։ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 142—143 (Հակորյանի թարգմանությունը հաջող չէ)։*

[16] *Այդ մասին աներկրա վկայում է ինքը՝ Կլավիխոն, գրելով. «Այդ երկրի բնակիչները դժդոհ էին իրենց իշխանից, որին, ինչպես և երկիրը, կոլում էին Առաքել»։ Որևէ երկրի անվան փոխարեն նրա իշխողի անունը կամ տիտղոսն օգտագործելու դեպքերը եղակի չեն միջնադարյան մատենագրության մեջ։ Պարսկական ու հայկական սկզբնաղբյուրներում, օրինակ, Գոսել է կոչվել Լեհաստանը՝ լեհ թագավորի Կառոլ տիտղոսից, կամ էլ Ջուվեյնին Գույուկ եաքանի թագադրման հանդեսին ներկա հյուրերի շարքում հիշատակել է «թագավոր երկրի սուլթանին», այսինքն հայերեն թագավոր բառը (իմա՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր) ընկալել և որպես երկրի անուն, ճիշտ այնպես, ինչպես Կլավիխոն Համշենի փոխարեն ավել է այդ երկրի իշխան Առաքելի անունը։*

ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐ ԵՎ ՊՈՆՏԱՀԱՅԵՐ

(ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄՈՏԱՎՈՐ ՍԽԵՄԱ ՏԻԿ ՔԱՐՏԵՋ ԸՍՏ 1915Թ ՎԻՃԱԿԻ)



թյունն անցնում է կրկին մեզ արդեն ծանոթ Առաքելի, կամ նրա գերդաստանից սերած համանուն մի այլ իշխանի ձեռքը։ Այդ մասին տեղեկություն է պրանցված Երուսաղեմի Հայոց պատրիարքության գրատան № 1617 ձեռագրի մի հիշատակագրության մեջ, որի համաձայն ձեռագրի սկզբի մասն ընդօրինակվել է Համշենի Քոշտենց վանքում՝ 1422 թ. «ի խնդրոյ պարոնաց պարոն Առաքելինս»[17]։

Երեք տարի անց՝ 1425 թ., Համշենի պարոն է կոչվում Դավիթ իշխանը, հավանարար նախորդի որդին. այդպես ենք կարծում, որովհետև նրա վերաբերյալ տեղեկությունը նույնպես դրանցված է Առաքել իշխանին պատկանած վերոհիշյալ ձեռագրի մեջ՝ նրա վերջին մասում. «Գրեցաւ գիրս... յաղագս խնդրոյ պարոնաց պարոն Դաւթի... ի դրան սուրբ Աստուածածնի, որ կոչի Քոշտենց վանք, ի դաւառն ի Համշինու, հայրապետութեանն տէր Պաւղոսի, թադաւորութեանն Սքանդար պահկին, պարոնութեանն պարոն Դաւթին»[18]։

XV դարի առաջին հինգամյակում՝ Սքանդար Կարա-կոյունլուի և նրա հաջորդ Ջհանշահի իշխանության տարիներին, երբ բովանդակ Հայաստանի վրա իրենց տիրապետությունը տարածելու համար հարատև բախումների մեջ էին Ադ-կոյունլու և Կարա-կոյունլու թուրքմենական ցեղախմբերը, վերջիններիս համար փակ էր Երզնկայի վրայով Սև ծովի ափերը (Տրապիզոն և այլ նավահանդիստներ) տանող միջազգային առևտրի մայրուղին։ Այս պայմաններում Կարա-կոյունլուների դերիշխանությունը ճանաչած Համշենի հայկական իշխանությունը, հակառակ իր դժվարակոխ անցուդարձերի, ավելի բանուկ ճանապարհ էր դարձել։

Երթևեկող առևտրականների համար կյանքի ու ունչքի ապահովություն ստեղծելու և կայուն մաքսատուրքեր սահմանելու խնդիրը, բնականաբար, մտահոգելու էր Սև ծովով կատարվող միջազգային առևտրի մեջ ներդրավված վաճառականներին։ Դրանցից մեկն էր, անշուշտ, հայ մեծահարուստ խոջա Շամշադինը, որը 1431 թ. վերակառուցեց Տրապիզոնի Հայոց Ջարխափան եկեղեցին, իսկ մեկ տարի հետո, կաֆալից ոչ հեռու գտնվող սուրբ Անտոնի վանքում, գրել տվեց Ն. Շնորհալու բանաստեղծություններ ձեռագիր մի ժողովածու[19]։

Եվ ահա, Համշենի իշխաններ Առաքելին ու Դավթին պատկանող վերոհիշյալ ձեռագրի մեջ, դրանցվել է այս խոջա Շամշադինի՝ Համշենի տեր պարոն Դավթին ուղղված մի նամակը, որը պատմական կարևոր փաստաթուղթ է՝ արժանի մեջբերման առանց սղումների։

«Յանուն Աստուծոյ և սուրբ Նիկոլաոսի. պարոն Դաւիթ՝ յառաջն դուն ղայս ուխտէ Աստուծոյ, որ ճամփորթ(ի) համար լաւ լինաս ու ղճամփորթի ապրանքն հանց պահես որպէս ղաստուծոյ տված հոդիդ, ով որ լինա՝ թէ քրիստոնեա է թէ այլազգ, ատ քեղ աւանդ։ Եւ ղինչ քեղ ես Շամշադինս աւանդ դնեմ՝ դայն առնուա, այլ աւելի տամահութիւն չլինայ։ Վրայ այս բանիս դրէ մօտ ի Սպերու տէրն, որ բեռն բեռ բռնէ, թամպալիթ՝ թամպալիթ, իլոման՝ իլոմայ, խուրճին՝ խուրճի, պողչան՝ պողչայ։ Եւ բեռին աալիքն ընդ սաղաթ ընդ ամեն խարճ մինչև Բասենու սինօռն՝ դան որ պիտ առնուն՝ դան լիստակ դրեն որ (թա)մահ է ատութիւն չլինայ ի մէջն»[20]։

Հանձնարարական այս նամակի բովանդակությունը կարելի է ամփոփել երկու կետով։

1. Խոջա Շամշադինը հորդորում է Դավթի իշխանին՝ Համշենով անցնող վաճառականներից (ճամփորդ), լինեն նրանք քրիստոնյա, թե մահմեդական, դանձել չափավոր մաքս ու պայմաններ ստեղծել, որ նրանց ապրանքներն անկորուստ մնան իր իշխանության սահմաններում։

2. Խորհուրդ է տալիս հատուկ դրությամբ դիմել Սպերի տիրոջը և հորդորել, որ նա որոշակի դարձնի Սպերի ճանապարհներով փոխադրվող բեռների փոխադրավարձն ու մաքսատուրքը, որպեսզի «թամահ է ստութիւն չլինայ ի մէջն»։

Ըստ ինքյան հետաքրքրական այս նամակը

---

[17] «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Ա, էջ 344։ Այսուհետև Ժե դարի հիշատակարանների մեր հրատարակած I, II և III մասերը վկայակոչում ենք Ժե, I (կամ՝ II, III) համառոտությամբ։

[18] Ժե, III, 365։ Երուսաղեմի № 1617 ձեռագրի Առաքել իշխանի պատվերով ընդօրինակված բաժինը (ձեռագրի սկզբի մասը) պարունակում է Գր. Տաթեացու Քարոզգիրքը, իսկ Դավիթ իշխանի խնդրանքով ընդօրինակվածը՝ ավան Քագաւորելոյ Թէոդոսի» խորագրով առասպելախառն մի պատմություն։

[19] Խոջա Շամշադինի մասին տե՛ս Մ. Բժշկյան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 81։ Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 1016։ Այս աղբյուրներում հիշատակված Շամշադիններին Հ. Աճառյանը ներկայացրել է որպես երկու տարբեր անձնավորություններ (Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 141). մենք նույնացնում ենք, նկատի ունենալով, որ երկու գեպքում էլ նա հիշատակված է իր խաչատուր որդու հետ Համշենարար, այս Շամշադինի ազգականներից է նաև խոջա Աստեփանոսը՝ կոչված «Շէմսէլդին», որ կառուցել է Տրապիզոնի Հայոց Ամենափրկիչ վանքը (Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 82)։

[20] Ժե, I, 345։ Այստեղ թվարկված՝ բեռ, թամպալիթ, իլոմա, խուրճի, պողչա տերմինների սակ պետք է հասկանալ Համշենի արահետներով գետի Սև ծով ու հակառակ ուղղությամբ տարվող ապրանքների տարբեր չափերը։

հուշում է մեզ, որ Դավիթ իշխանը Խաքանդար Կարա-կոյունլուի թագավորության սարիններին (1422—1437) մեծ հեղինակություն վայելող ու գորավոր մի ավատատեր է եղել, ի վիճակի նույնիսկ խրատներ տալու իր հարեան Սպերի իշխանին։

Դավիթ Համշենցու մասին տեղեկություններ ունենք նաև 1440 թվականից, երբ նա, իր զեռաբույս զավակ Վարդի հետ միասին, շարունակում էր իշխել իր հայրենի երկրին։ Այդ վկայությունը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 7263 ձեռագրում. «Արդ,— ասված է այնտեղ,—ի յանկ եդեալ աւարտեցաւ Մաշդոցս ձեռամբ անիմաստ և անարհեստ դրչի Աստուածատուր աբեղի, ի գաւառիս որ կոչի Համշէն, և ի վանքս Խուժկա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և կենսակիր աստուածբնդաց սուրբ Նշանացս, ի թուականութեանս յարեղական աումարիս ՊՁԹ (1440), հոռի ամսոյ Բ (2), ի պարոնութեանն պարոն Դօթի (իմա՝ Դաւթի՝ Լ. Ա.) և զեռարոյս զաւակին իւրո պարոն Վաւրդին, զոր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն»[21]։

Երկու տասնամյակ հետո Համշենի հայկական իշխանությունը ծանր կացության մեջ է ընկնում։ Երուսաղեմի № 3701 ձեռագրի մեջ ընդօրինակված ժամանակագրության անծանոթ հեղինակը ՋԹ (1460) թվականի առիթ դրանցել է այսպիսի տողեր. «Ես յայսմ ամի ղՎէքէ մանուկն, զորդի պարոն Վարդին, զաէրն Համշինու ըմբռնեաց Շահալին, եւ ետ ի ձեռն Սօֆուն, որ Շէխ կոչէին»[22]։

Այս տեղեկության համաձայն, 1440—1460 ԹԹ. ընթացքում վախճանվել են ինչպես պարոն Դավիթը, այնպես էլ 1440-ին «զեռարոյս» կոչված նրա Վարդ որդին։ Ահա այս Վարդի «մանկահասակ» թառանդ Վեքե իշխանի մասին է վերոհիշյալ ավյալը. նա 1460-ին, լինելով Համշենի տերը, պարտություն է կրել Շահալի կոչվող մեկի կողմից, ձերբակալվել ու հանձնվել «ի ձեռն Սօֆուն, որ Շէխ կոչէին», այսինքն՝ Արդարիլում նստող ղզլբաշ ցեղերի առաջնորդ Սեֆյան շեյխ Հայդարին (1456—1488)։

Վեքե Համշենցուն պարտության մատնած Շահալին, հավանարար, ղզլբաշ ադանդին պատկանող Փոռնակ ցեղի առաջնորդն էր, որ հարձակումներ էր գործում հյուսիսային Հայաստանի և Վրաստանի վրա, թալանում ու կերեվարում բնակչությանը[23]։

Պատանի Վեքեի կերությամբ Համշենի հայկական իշխանությունը չի դադարում գոյություն ունենալուց. նրան հաջորդում է Դավիթ անունով մի իշխան, որ, հավանաբար, որդին էր Վարդ իշխանի, եղբայրը Վեքեի, ու Դավիթ էր կոչվել իր պապի անունով։

Ցոթ հարյուրամյակ գոյատևած Համշենի հայկական իշխանությանը վերջ է տրվում 1489 թվականին կամ դրանից մեկ-երկու տարի առաջ։ Ողբերգական այդ դեպքի մասին պահպանված արժեքավոր հիշատակարանի հետ ծանոթանալուց առաջ վերհիշենք, որ 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավումից հետո, օսմանյան թուրքերը, ամենուրեք սարսափ տարածելով, նվաճումներ էին կատարում Փոքր Ասիայում ու եվրոպական մայրցամաքում։ 1458-ին նրանք դրավեցին Աթենական հերցոգությունը, 1459-ին՝ Սերբիան, 1460-ին՝ Մորեան, 1461-ի հոկտեմբերին՝ Բյուզանդական երբեմնի հզոր կայսրության վերջին հիշատակը՝ Տրապիզոնի կայսրությունը։ Քիչ անց թուրքերը հատատավում են նաև Լեսբոս կղզում, Բոսնիայում, Ղարամանիայում, իսկ 1475-ին գրավում են Ղրիմ թերակղզին, որ մեծաքանակ հայ բնակչություն ունենալու պատճառով եվրոպական որոշ աղբյուրներում կոչվում էր «Մովսային Հայաստան»։

Համշենի հայկական իշխանության վախճանի մասին վերոհիշյալ հիշատակարանում դրանցված են հետաքրքրական տեղեկություններ.

«...Զորոյ տեսեալ պայծառութիւն Աւետարանիս այս Դրիդոր երէցս և ետ դաղափարել զսա ի ձեռն քահանայի՝ անարժան սարկաւագի և փանաքի դրչի։ Եւ ժամանակս վերջին, որ էր թուականս Հայոց ՋԼՀ (1489), ի վերաղիաողութեան Հայոց տեառն Սարգսի. և Յոհաննէսի, և վերակացութեանն Դրիդոր վարդապետի, և իշխանութեանն պարոն Դաւթի, որ էր տէր Համշէնի, զոր եղև պանդխտանալ նմա և բնակիլ ի յերկիրս Սպերու, ի յազգէն շիթախիճ, զոր շատ քրիստոնեա իշխանք և թագաւորք պանդուխտ եղեն ի յաւետարութիւն ի ձեռաց նոցա, զորոց զսուրս նոցա աստուած խորտակեսցէ ամենաղաւր աջովն իւրով, ամէն։

Զոր և ես՝ մեղսամած և անիմաստ դրիչս գրեցի զսա ի պանդխտութեան մերում ի երկիրս Սպերու, ի դեպուղս Կորնկանց, ընդ հովանեաւ սրբոյն Դաւթի, իշխանութեանն աստկաց Դատայիին,

---

21 Ժե, I, 510։

22 Մեծարժեք այս ժամանակագրության հեղինակը Սամուել Անեցու անանուն շարունակողներից է. հաղորդում է ուշագրավ շատ տեղեկություններ։

23 Մի հայ հիշատակագիր այս Շահալիի մասին գրել է. «Վա՜յ ահագին լալի և կոծելի աւուրն, որ ի մեղացն Աստուած հաշտեցաւ և յեա գերել զՏիխխա ի ձեռն անաւրէն և անիրաւ Փոռնակ Շահալին. երկու եղբարս ղերեցան...» («Ծուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից», Վենետիկ, 1969, էջ 21)։



Ի սուքեհասնելն Նարտախն, որ տիէր տանս մեծ, կոչեցեալ Ամրակից»[24]։

Ըստ այսմ՝ հիշատակարանի հաստատ Շարշեղի վերը ասվածը՝ Ներսես Գորգեցի Թոռնից էր հետևյալ տոհմագրությունը ունենալու համար։ Ներսես Գորգեցի (1478—1490) իշխանության տարիներին Ամրակից-Հաղբակ (1468—1478) և օրամյանց սուլթան Ուրուդուբեկ (1451—1481), իսկ հետագայում նաև օրամյանց գերիշխանության տակ էր գտնվում Ամրակից գավառը։ Ներսես Գորգեցու ասվածից հետևում է, որ Շարշեղի հայրը Գորգ անունն էր կրում։ Գորգ անունը հանդիպում է նաև Ներսես Գորգեցու նախնիների շրջանում։ Գորգ անունով էր կոչվում նաև Ներսես Գորգեցու հորեղբայրը, որի մասին նա հիշատակում է հետևյալ կերպ.

«Ի ծնունդս իմ հայրն Գորգ կոչեցաւ, որ ի մանկութենէ ի Տեառնէ ընտրեցաւ ի ծառայութիւն սրբոյ Աստուածածնին, եւ ի տասներկուց ամի հասակին իւրոյ ի սուրբ վանսն Գոշ մտեալ, ի ձեռն Տեառն Յովհաննու վարդապետի Գոշեցւոյ, որ էր ի ժամանակին ի վանսն եղբայր եւ ի ծառայութեան, եւ ի ձեռն նորա ի սուրբ կարգն քահանայութեան ձեռնադրեցաւ, եւ ի սուրբ վանսն Գոշ ծառայեաց ամս բազումս»[25]։

Ներսես Գորգեցու ասածից հետևում է, որ Գորգ անունը կրող անձը ծնվել է 1460 թ. (տիրել է 1460-ից առաջ) և 1489-ին եղել է 29 տարեկան։ Ներսես Գորգեցին ասում է, որ Գորգը ծնվել է Ամրակից գավառում, որտեղ էլ ապրել է մինչև 1489 թ.։ Ներսես Գորգեցին ասում է, որ Գորգը ծնվել է Ամրակից գավառում, որտեղ էլ ապրել է մինչև 1489 թ.։

Համշենից վտարեցին Դավիթ Բ իշխանին, ակամա մտածում ենք, որ այդ տեղափոխությունը ինչ-որ ներքին առնչություն ունի Դավիթ Համշենցու իշխանագուրկ լինելու հետ։ Թերևս Ավադ վանքի համալսարանի տնտեսական կարիքների մի մասը հոգում էր ինքը՝ Հովհաննես իշխանաղումն-բռնապետը, իր հարաղաանների ձեռնտվությամբ։ Համշենցի վարդապետ կնքեց իր մահկանացուն 1497-ին, և մինչև կյանքի վերջին օրերը գլխավորեց նշանավոր ուսումնական այդ հաստատությունը։ Իր աշակերտների համար նա մեկնաբանում էր աստվածաբանական-իմաստասիրական լուրջ երկեր, որոնց շարքում կարևոր տեղ էին գրավում Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու դրվածքները, «Մեկնութիւն սուրբ գրեանց» կոչվող ուշադրավ բնագիրը և այլ աշխատություններ։

Միջնադարյան Համշենի մշակույթի ամենաակնառու ներկայացուցիչ Հովհաննես բարձրաստիճան դիտամանկավարժական իր գործունեությունը ծավալել էր հիմնականում Համշենից դուրս։ Բուն Համշենի իշխանության սահմաններում ևս XV—XVI դարերում եղել են վանական հաստատություններ, որոնցում աշխատող բանիմաց ու դրագետ դրիչները բազմացրել են արժեքավոր ձեռագրեր և աշխատել մշակույթի այլ բնագավառներում։

Միջնադարյան Հայաստանի վանական հաստատությունների պատմության վաստակաշատ ուսումնասիրող Հ. Ոսկյանին հայտնի է Համշենի սահմաններում գտնվող երեք վանք՝ Խաչքարի կամ Խաչքարի, Սուրբ Խաչիկ հոր և Վարշամակի կամ Վարսամպեկի[27]։

Ուշադիր բաղդատելով վանական այս հաստատությունների մասին առկա հին ու նոր ավյալները՝ գալիս ենք այն համոզման, որ Եղնովիտ գյուղի մոտ դտնվող «Սուրբ Խաչիկ հօրն հոգեվորի» կոչված վանքը՝ նույն «Խաչքարոյ» վանքն է։ Կարծում ենք նաև, որ «Խաչիկ հայր» անունն իսկ, ժողովրդական ստուգաբանությամբ, ծագել է Խաչքար-Խաչքար (Ճաներեն՝ Կաշկարի)[28] լեռնագագաթի անունից։ Կովկասի և Փոքր Ասիայի 10 վերստանոց ոուսական քարտեղի վրա Կաշկար են կոչված Պարխարյան լեռնաշղթայի երկու տարբեր գագաթներ. այն, որից սկիզբ է առնում Ֆորթունա գետի Կաշկար-սու վտակը՝ կոչված է Վարսամբեկ-Կաշկար, իսկ մյուսը, որ գտնվում է սրանից շուրջ 28 կմ հյուսիս-արևելք՝ կոչված է միայն Կաշկար։ Կարծում ենք, ուստի, որ Վարշամակ կամ Վարսամբեկ կոչված վանքը նույն Խաչքարի կամ Սուրբ Խաչիկ հոր վանքն է, որ կոչված է այդպես Խաչքար (Կաշկարի) լեռնաղագաթի Վարսամբեկ անունով։ Քրիստոսի վարշամակի այնտեղ պահվելու առասպելը, որի մասին խոսում է Ղ. Ալիշանը[29], հավանարար հորինվել է վերոհիշյալ լեռնադագաթի անունը միտումնավոր ստուգաբանելու ճանապարհով։

Ամփոփելով այս ավյալները, հանգում ենք այն եղրակացության, որ վերոհիշյալ երեք տարբեր անուններին տակ թաքնված է Համշենի միջնադարյան մշակույթի միենույն կենտրոնը՝ Խաչքարի վանքը, որ հետագայում կոչվել է նաև Խաչիկ հոր վանք, ինչպես նաև Վարսամպեկ-Վարշամակ։ Վանքը դանվել է Եղնովիտ գյուղի մոտ. «Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Սիովնի և սուրբ Խաչիկ հօրն հոգեորի և սուրբ Վարդանանցս, որ ասա կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրիս և դաւառիս մերոյ (Համշինու)»,—այսպես է դրել Կարապետ երեցը իր բնդօրինակած Աղթարական բժշկարանի հիշատակարանում[30]։

Վերոհիշյալ Կարապետը բազմարդյուն դրիչ է եղել. մեզ են հասել 1499—1528 թթ. ընթացքում՝ նույն Եղնովիտ գյուղում նրա բնդօրինակած հետևյալ ձեռագրերը՝ Բժշկարան, տարբեր նյութերի մի ժողովածու, Տոնացույց-Ավետարանացույց, Ն. Շնորհալու «Յիսուս որդի», 2 Մաշտոց, 3 Շարակնոց։ Մի այլ դրիչ՝ Հովհաննես Մալաղ անունով, 1517-ին բնդօրինակել է Բժշկարան, իսկ 1523-ին՝ Ավետարան[31]։

Խաչքարի վանքը, ըստ երեւույթին, Համշենի վանական հաստատություններից ամենանշանավորն էր, բայց ոչ միակը։ XV դ. կեսերին այնտեղ եղել է երկու այլ վանք ևս՝ Քոշաենց և խուժկա վանքերը, որոնց մասին Հ. Ոսկյանը տեղեկություն չունի։ Սրանցից առաջինում (Քոշտենց վանքում), ի վյելումն Համշենի իշխաններ Առաքելի ու Դավթի, 1422—1425 թթ. խաչատուր գրիչն բնդօրինակել էր մեզ արդեն ծանոթ ձեռագիրը[32]։

---

[27] Հ. Ոսկյան, *Բարձր Հայքի վանքերը*, էջ 183—189, 199։

[28] *Н. Я. Марр*, Из поездки в Турецкий Лазистан (впечатления и наблюдения), «Известия императорской Академии наук», 1910, стр. 608.

[29] Ղ. Ալիշանը գրում է. «Համշէն, որ է Պաշ Համշէն կայ ի ստորոտս Տէմիրտաղ լերին, առ որով և Խաչքար լեառն, յորում մենաստան հին, ուր պահէին նշխարք Վարդանանց, ի գագաթան նորին առանգի պահել վարշամակին Քրիստոսի, վասն որոյ լեառն Վարշամակ կոչեցաւ և ի ռամկաց Վարսամպէկ» (*«Տեղագիր Հայոց Մեծաց»*, Վենետիկ, 1855, էջ 39)։

[30] *Ժե, III, 288։*

[31] Հ. Ոսկյան, *այգ. աշխ., էջ 185—189։*

[32] *Երուսաղեմ, ձեռ. № 1617։ Հիշատակարանում գրված*

Խուժկա վանքը հայտնի է 1440 թ., երբ այստեղ Աստվածատուր դրչի ձեռքով ընդօրինակվել է Մաշտոց՝ «ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և կենսակիր աստուածրնկալ սուրբ նշանացս»[1]։

Ցպետք է տարակուսել, որ Համշենում ըստեղծվել են նաև հարյուրավոր ուրիշ ձեռագրեր, որոնք, սակայն, վերջին հարյուրամյակների ընթացքում ոչնչացվել են բարբարոս տիրապետողների կողմից, կամ դեռևս հայտնի չեն դիտական աշխարհին[34]։

Համշենի հայկական իշխանության սահմաններից դուրս՝ պատմական Հայաստանի մշակութային այլ հաստատություններում ևս աշխատել ու սաեղծագործել են բաղմաթիվ համշենցիներ։ Առայժմ մեզ հայտնի են դրանցից մի քանիսի անուններր, որ նշում ենք ստորև։

Հովհաննես եպիսկոպոս Համշենցի. սա 1401 թ. շարադրել է չափածո մի հիշատակարան, այսպիսի սկսվածքով.

Ջսակաւ գիրս գրեցի
Եպիսկոպոսըս Համշինցի,
Այս անպիտանս յամենայնի,
Որ ցովանէս անունս կոչի,
Ցաւաւք հեղեալ յայս աշխարհի՝
Դառն և գժնեայ և անրարի,
Միայս փութով ի չար գիմի
Եւ ի բարոյն յոյժ հեռացի...[35]

Հայտնի է նաև Հակոբ Համշենցի անունով գրիչը, որ 1428-ին շարադրել է դարձյալ չափածո մի հիշատակարան.

Ցակոբ ծաւալ անպիտանի,
//ր յիշելոյ չ(՚ա՚ արժանի),
Զի եմ բնական ես Համշենցի,
Որ բնաւ բարութիւն (չունի)[36]...

Այս և նախորդ հիշատակագրիները հեղինակել են, անշուշտ, և այլ դրվածքներ. մեջ բերված քառյակները վկայում են չափածո տողեր հորինելու նրանց հմտության մասին։

Մի այլ համշենցի դրիչ՝ Մովսես աբեղան, հաղտյաց գավառի Բերդակա վանքում, XV դ. 70-ական թվականներին ընդօրինակել է Ավետարան[37]։

Համշենի դրչության առանձնահատկությունների ուսումնասիրության համար որոշակի արժեք ունի նաև Մատենադարանի № 7056 ձեռագիրը, որ զեղեցիկ մանրանկարներով զարդարված և երաժշտական խազերով օժտված մի Շարակնոց է։ Այն ընդօրինակել է 1506-ին, Կողոնիայի շրջանում, Հայրապետ կրոնավորը՝ «ի Համամաշէն գաւառոյս Համշենի մշակութային դործիչների այս ցանկր, վստահ ենք, որ լրացվելու է հայերեն հազարավոր ձեռագրերի հիշատակարաններից քաղված նոր անուններով։

Համշենահայերի մշակույթին նվիրված էջը փակելուց առաջ մի երկու խոսքով պետք է անդրադառնալ նրանց բանավոր դրականությանը, որ մեղվաջան րանահավաքներ Ս. Հալկունու, Գ. Սրվանձայանի և այլոց ջանքերով՝ համեմատաբար լավ է ուսումնասիրված[38]։

«Երկրի դրից բնական պատճառներով» դարեր շարունակ ինքնամփոփ կյանք վարելով, Համշենահայերը պահպանել են իրենց բնաշխարհի լեռների ու ձորերի, գյուղերի ու շենների հայկական անունները, նրանց դավառաբարբառում կան տասնյակ ու հարյուրավոր դուտ հայերեն բառեր կենդանական ու բուսական աշխարհի տարբեր նմուշների մասին։ Համշենցի հայը, քրիստոնյա թե՛ մահմեդական, պահպանել է նաև իր հնամենի ժողովրդական երդը, առածներն ու հանելուկները, ղվարճալի պատմվածքները անրան ու խելապակաս կանանց ու տրտնց մասին։ Արժե հիշատակել, որ Հ. Թումանյանի տաղանդավոր մշակումով հռնրահռչակ դարձած «Կիկոսի» ու «Բարեկենդանի» հիմքում ընկած է Համշենահայերի «Հայ Գասպարրը»[39]։

---

[1] *Ե. «Գրեցաւ գիրքս... ձեռամբ մեղաւոր և անարժան խաչատուր արեղի, յաղագս խնդրոյ պարոնաց պարոն Դաւթի... ի դրան սուրբ Աստուածածնի, որ կոչի Քոշանց վանք, ի գաւառն ի Համշինուս» (Ժբ, III, 365)։*

[33] *Ժբ, I, 510։*

[34] *Ա. Հալկունին հայտնում է. որ «Այս երկիրը մանող հայք կը հավատացնեն, թե բաղմաթիվ տներու մեջ տեսած են եկեղեցական հին անոթներ, որը իբրև նվիրական կամ արքունյուն մի պահած են, այլև ուրիշ հնություններ՝ ձեռագիրներ և այլն, որ ինձ շատ հավատալի է, նորա համար, որ հավատարիմ անձերե լսած եմ» («Արարատ», 1895, էջ 297)։*

[35] *Ժբ, I, 18—19։*

[33] *Ժբ, III, 368—369։*

[37] *Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 171։*

[38] *Տե՛ս Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի» (Երևան, 1947) ուսումնասիրությունը, որտեղ բերված է Համշենի աղղագրության և բանահյուսության մասին հայ պարբերական մամուլի էջերում հրապարակված կարևոր հոդվածների ցանկը։*

[39] *Հ. Թումանյանի մշակումը ժողովրդական պատումի հետ համեմատել կարողանալու համար, ստորև բերում ենք երկու հատված «Հայ Գասպարը»-ից։*

—«Վախ գիտի վախ եիս էշտալի մաշդու, ինձիկի ըլլիր մօնչ մը, օնուր գնեի Գասպար, Գասպարը մեծրնար, գրեկիցներու մօնչերու հետ խաղեր, հետըար իզա տեղ գեին, իգա փքած ծառի վրան էլլնեին, ծառի ճուղքր փեսուիր, Գասպար ըղնիր տակը մեռնիը, հապա իմ բօնր ինցօ՞ կըլլիը, վայ կիտի Գասպար, վայ քեորնար քու մոր աչքեր» («Արարատ», 1895, էջ 397—398, հմմտ. Աղբյուրի մոտ Կիկոսի մոր լաց ու կոծի հետ)։

—Էչն գետնի վրա քելե կու, ունի երկու օտք, կընե մեկ,

2—1045

Ուշադրության արժանի է նաև «Կանչէ, կրոունկ, կանչէ» ժողովրդական երգի համշենյան գեղեցիկ փոփոխակը, որի առաջին 6 տողերն են.

Ցօրոր գարունը կուգայ, կուկուն կու կօնչէ,
Ոտքս փուշ պատեցաւ, սիրտս կու խողչէ։
Կօնչէ, կուկուս, կօնչէ բարձրի լեռներէ,
Էշքամ գործուքին, վախիմ մեռնելէ։
Կուկուն էլ թառեցաւ ածուքի պատին,
Աստուած հոգիս առնուր մայրիկիս գոգին...[40]

Համշենի հայկական իշխանությունը, ինչպես ասեցանք, դիմադրավեց Օսմանյան կայսրությանը ու կարողացավ պահպանել կիսանկախ իր դոյությունը շուրջ երեք տասնամյակ՝ ավելի, քան Տրապիզոնի հունական կայսրությունը։

1489-ին արդեն Համշենի վերջին հայ իշխան Դավիթը, վտարված իր ախոյաններից, հանդրվանել էր Սպերի ջրջանում, որ դեռես դտնվում էր Սղկոյունյաց փադիշահերի դերիշխանության ներքո։ Պետք է ենթադրել, սակայն, որ Համշենի իշխանանիստ դյուղի դրավումից ու հայ իշխանի փոխարեն թուրք վոյվոդի նշանակումից հետո էլ, դեռ երկար ժամանակ, իրենց ինքնավար վիճակը պահպանեցին անմատչելի ու ինքնամփոփ այդ լեռնադավառի հայ ձորապետները։ «Այդպիսի դժվարամուտ լերանց մեջ,— հենվելով Կ. Կոխի հեղինակության վրա դրել է Հ. Տաշյանը,— դյուրին էր իշխանաց կես-անկախ դոյություն մը պահել։ Նաև օսմանյան ախրապետության սակ երկար ատած է այս վիճակը և Քոխ դեղեցիկ կնկարադրե տակավին յուր ուղեորության աաեն (այսինքն՝ XIX դարի 40-ական թթ.) շարունակվող տյս դրությունը»։ Կոխր հյուր եղավ վաղուց ի վեր մահմեդականություն ընդունած մի դերդաստանի զավակ՝ Ջեմիլի շրջանի դերեբեյի (ձորապետի) տանը, և նրա արտաքինից դատելով նկատեց, որ «դլխավորաբար հայ արյունն էր հոսում նրա երակների մեջ»[41]։

Իրենց կիսանկախ ու ինքնավար վիճակը պահպանեցին նաև բուն Համշենից դուրս եկած և հարևան շրջաններում ու Սև ծովի ափամերձ վայրերում բնակություն հաստատած համշենցիները։ Զարշամպայից ոչ հեռու դանվող Կուրշումլի (Խուշունլի) ավանի Համշենից դաղթած հայ բնակչության մասին, օրինակ, ունենք վկայություն XIX դարի սկզբներից, որի համաձայն նրանք՝ ամենքը «դինվոր դրված են որդվոց որդի. և ունին դորապետ հայ իշխան, որ զիրենք կը կառավարե. մարդե ահ չունին. միայն տերեզեկիին հետ պատերազմ կերթան, և զորավոր մարդիկ են»[42]։

Համշենի ու շրջակա դավառների հայ աղդաբնակչության վիճակը էական փոփոխություն չրկրեց XVI դարում։ Թուրք դավիթները կայսրության ծայրադավառներում քրիստոնեության դեմ անսանձ հալածանքի ու բռնի մահմեդականացման իրենց քաղաքականության իրադործումն սկսեցին XVII դարի կեսերից։

Համշենի և մերձակա հայաբնակ շրջանների բռնի մահմեդականացման հետ առնչվող սրտաճմլիկ դեպքերը, անշուշտ, դրանցվել են ժամանակակից և ականատես հիշատակադիրների կողմից։ Սակայն այդ աղբյուրները անդարձ կորած են, և ուսումնասիրողները անդրադառնալով այդ խնդրին, կամա թե ակամա հեաեել են աղդադրադետ-բանահավաք Ս. Հայկունուն, որը ավանդությունների հիման վրա շարադրել է Կարա-դերեի հայության մահմեդականացման պատմությունը, որ նրա կարծիքով տեղի է ունեցել 1708—1710 թթ.[43]։ Ըստ այդմ, բուն Համշենի հավատափոխությունը, կաատրված լինելով աասնամյակներ առաջ, վերաբերելու է XVII դարին։

Համշենահայության վիճակի լավադույն ուսումնասիրողներից Պ. Թումայանցը, 1870-ին կազմած իր աեղադրության մեջ, հայտնում է, որ Կարա-դերեի հայերը դաղթել են Սպերից, Բարերդից և, մանավանդ, Համշենից՝ «կրոնափոխութենե աղաաելու նպաատակով, ասկե դրեթե 170 կամ 180 աարի առաջ», այսինքն՝ 1690-ական թվականներին։ «Բավական աարիներ ետքը,—շարունակում է նա,—երբ Համշեն դավառը մնացող ժողովուրդը ամբողջ տաճկացուցին և հալածանքը Գարա-աերեի վրա դարձավ՝ հաղարավոր բնակիչներ, մեկ, երկուս ու կէջտայ. քու ձին ունի չուլս ոտք, կրնե մեկ, երկու, իրեք, չուլս, ինչտք դուն չուլս բնիս, էն մեկ էրկուս կասե ու կոնցնի քեզիկի. ինչիր վեր, ձեզ տուր ինձիկ, դուն էլ էն մաշդու լոմոն մեկ էրկուս երե ու գնա, ժմնե» («Արարատ», 1895, էջ 400. Համմա. «Բարեկենդանի» հերոսի խրատը խելապակաս տղամարդուն, որ ձիով դուրս էր եկել հետապնդելու իր կնոջը խարած երիտասարդին)։

[40] Գ. Սրվանձտյանցի գրառումն է (տե՛ս «Մասիս», 1886, 3824, էջ 963. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 217—218)։

[41] Հ. Տաշյան, Հայ բնակչությունը Սև ծովին մինչև կարին, Վիեննա, 1921, էջ 27։

[42] Մ. Բժշկյանց, նշվ. տշխ., էջ 49։

[43] Բռնի հավատափոխության առասպելախառն իր պատմությունը Ս. Հայկունին հրապարակել է «Կորած և մոռացված հայեր. Սև գետացիք» խորագրով հոդվածաշարում («Արարատ», 1895, էջ 239—243, 293—297 և, հատկապես, էջ 239, 240—242)։ Այնուհետև տպագրվել է «Հայոց նոր վկաներ» ժողովածուի մեջ՝ «Տեր Կարապետ քահանա Թորոսյեցի» վերնագրով (Վաղարշապատ, 1903, էջ 702—709), ինչպես նաև՝ վերապատմված է Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի» աշխատության մեջ (էջ ə—8)։ Հ. Աճառյանը այդ գեպքերը կատարված է համարում 1715-ին։

նիր ամեն բանև դրկված փախան Տրապիզոնի, Օրտուի, Յունիայի, Չարշամպայի, Պաֆրայի. Սինոպի և մինչև Ատրպատարի դյուղերն ու քաղաքներու»։

Պ. Թումայանցը Ուղի Սամիրա գյուղում տեսել է մի Շարակնոց, որի հիշատակարանում գրված է նաև Կարա-դերեի հայության բռնի մահմեդականացման պատմությունը։ Ցավոք, այդ հիշատակարանը նրա հոդվածում լրիվ մեջ չի բերված, բովանդակությունը վերապատմված է այսպես. «Դարա-տերեի ամրոցը տաճկանալը և վերջին մաս մը մնացողներու սպաննվել և փախչելը՝ Հայոց ՌՄԻԲ (1780) թվին պատահեր է, ասկայն հալածումը շատ առաջ սկսեր և ոտք ոտք առաջացեր ու աճկացած հայոց ձեռքով այլ շատ անօրենություններ ու արյունահեղություններ ըլլալե հետո՝ վերոհիշյալ թվականին Գարա-աերեի վերին ծայրը Խաղաղ գյուղը վերջացել է, ուսկից փախնը է, դիշերայն և այս հիշատակարանը գրող տեր Կարապետ անուն առաքինի քահանան»[44]։

Մերձավորապես նույն ժամանակաշրջանում է կատարվել նաև Ճորոխի հովտում և նրանից հարավ բնակություն հաստատած համշենցիների («Խոփե Հեմշին» կոչվածների) մահմեդականացումը։ 1887-ին հրապարակած իր մի հոդվածում խոսելով արանց և Օլթիի շրջանի մահմեդական հայերի մասին, Գր. Արծրունին հայտնում է. որ նրանք «60—100 տարի սրանից առաջ», այսինքն՝ շուրջ 1780—1820-ական թվականներին են ընդունել իսլամը[45]։

Ժամանակագրական վերոհիշյալ տվյալները, որքան էլ թեական լինեն, հնարավորություն են ընձեռում եզրակացնելու, որ համշենահայությունը՝ բուն Համշենում, Կարա-դերեի շրջանում և Ճորոխի հովտում մահմեդականություն է ընդունել աստիճանական՝ սլայքաներից հետո, որ սկսվելով XVII դ. կեսերից, ավարտվել է, հիմնականում, 1820-ական թվականներին[46]։

Այս եղրակացության օգտին է խոսում և այն փաստը, որ XIX դարի 10-ական թվականներին այդ վայրերում շրջագայած Մ. Բժշկյանը «Պատմության Պոնտոսի» նշանավոր աշխատության մեջ դրում է, թե «Համշենցիք կես կես (այսինքն՝ կես քրիստոնյա, կես մահմեդական՝ Լ. Խ.) են. շատը դարձած են, բայց քրիստոնեության սովորությունը կը պահեն, ժամոց և ողորմությունը պակաս չեն ըներ. դրեթե ամենքը Վարդավառին և Վերափոխման կերթան եկեղեցին, մոմ կը վառեն և մաստաղ կընեն իրենց պապերուն հոդուն համար»։ Նույնը նաև Կարա-դերեի (Սյուրմենեի) հայության մասին. «Կան ծերեր, որ դիտեն քրիստոնեություն, կը պատվին խաչը և ծածուկ ողորմություն կուտան ժամերուն»[47]։

Այդպիսի «կես կես» վիճակի համար շատ բնորոշ են նաև մահմեդականի ու քրիստոնյայի կրկնակ անունները՝ Ալի-Սարդիս Կարապետ-օղլի, Մահմուդ Հովհաննես-օղլի, որ վկայված են այդ հայերի միջավայրում[48]։

Բնականաբար հին սերնդի հետ վերանալու էին քրիստոնեական ծեսերն ու սովորությունները, սանավանդ, որ դրանց դեմ ծրագրված պայքար էին մղում պարտադրվող կրոնի պաշտոնյաները։ XIX դ. վերջին տասնամյակներին արդեն այդ շրջաններում մահմեդականությունն ըստ ամենայնի հաղթանակել էր։ Պ. Թումայանցն, օրինակ, վկայում է. որ համշենցիները «քրիստոնեության ամեն նշան կորուսած են» և այդ մեծ դավառում միայն նշանավոր Ծդնովիա (Էլեհովիա) գյուղում է մնացել քրիստոնեությունը պահած քսան ընտանիք[49]։

Միջին դարերում դրեթե ամենուրեք, մանավանդ Օսմանյան կայսրության նման թեոկրատիկ-

---

[44] [Պ. Թումայանց], Պոնտոսի հայերը («Լումայ», 1899, Բ հիրք, էջ 175—177)։

[45] «Մշակ», 1887, № 5։

[46] Ավելորդ չէ այստեղ մեջ բերել Համշենից ոչ շատ հեռու գտնվող Բերդաղրակ (Կիսկիմ) դավառի հայերի մահմեդականացման մասին Կ. Կոխի հաղորդած տվյալները։ Բաղդատելով դրանք համշենահայության մասին մեր դիտողածի հետ, գալիս ենք այն համոզման, որ ամենուրեք թուրք իշխանությունները նույն քաղաքականությամբ էին առաջնորդվում։ «Այս դավառի մահմեդականները,—ասում է Կոխը,—XVIII դարի վերջերին դեռ քրիստոնյա էին. և դավառի կիսանկախ իշխանը ընկել էր հավատքի համար մղած կռվում։ Սրա որդին մանուկ հասակում տարվել էր Կ. Պոլիս, կրթվել որպես մահմեդական ու գարձվել էր հայրենի իշխանության ժողովրդի մեծ մասի մահմեդական դառնալու սկզբնավորությունը, ինչպես ամենուրեք Մահմեդի վարդապետության տարածումը, այստեղ ևս կատարվել է կոտորածով» (K. Koch, նշվ. աշխ., էջ 75)։

[47] Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 92—93, 96—97։

[48] «Մշակ», 1887, № 13, Խ. Լինչը, իր «Հայաստան» աշխատության մեջ, ուշադրավ տվյալներ է հաղորդում Տրապիզոնից ոչ հեռու գտնվող մի դյուղի բնակիչների մասին, որոնք մահմեդականություն ընդունած հույներ էին, բայց դեռ պահպանել էին քրիստոնեական շատ սովորություններ. «Նրանք,—գրում է Լինչը,—կնքում են իրենց դավակներին, բայց մոլլան նույնպես աղոթքներ է կարդում նրանց վրա, ու ամեն ոք կրում է ինչպես քրիստոնեական, նույնպես և մահմեդական անուն, ինչպես Ահմեդ-Ապոստոլ» (X. Ф. Б. Линч, Армения, путевые очерки и этюды, II, Тифлис, 1910, стр. 302).

[49] «Լումա», 1899, Բ դիրք, էջ 156։ Այս Նդնովիա դյուղը ամենից երկար դիմադրեց մահմեդականներին. 1806 թ. միայն գյուղի բնակչության կեսը դարձավ մուսուլման (տե՛ս Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 31)։

բոնատիրական մի երկրում, էթնիկական որևէ խմբի ազգային պատկանելությունը որոշելու կարևորագույն հատկանիշը համարվում էր նրա դավանած կրոնը։ Իրենց «մուսուլման» և «օսմանլի» էին կոչում հույն, լազ, վրացի, հայ և այլ ազգությունների մահմեդականություն ընդունած ներկայացուցիչները։ Սակայն համշենահայերը, մահմեդականություն ընդունելուց հետո էլ պահպանեցին, և ըստ մեծի մասին շարունակում են պահպանել, իրենց լեզուն՝ համշենահայ դավառաբարբառը, իրենց բնակավայրերից շատերի, ընաշխարհի դետերի, ձորերի ու լեռների հնամենի հայկական անունները ու իրենց ավանդությունները, երգերը, բառ ու բանը։

Տեղեկություն կա, որ Անատոլիայի շատ շրջաններում, փաշաների կարգադրությամբ, կարել են հայերեն խոսող հպատակների լեզուն՝ պարտադրելով թուրքերենը։ Ուծացման բարբարոս այս միջոցը կիրառվե՞լ է արդյոք նաև համշենահայերի միջավայրում, չդիտենք։ Բայց պետք չէ ատակուսել, որ թուրք կրոնական ու պետական պաշտոնյաները այստեղ ևս քաջ դիտակցել են, որ մայրենի լեզուն պահող նորաթուխ «օսմանցիները», վաղ թե ուշ, կսկրդ են դառնալ իրենց պապերի հավատքին և մայր ժողովրդի գիրկը։ XIX դ. կեսերին իսլամ ընդունած մի քանի ընտանիք վերստին քրիստոնյա դարձան. այս բանի առաջն առնելու համար մոլլաները ճնշումներ գործադրեցին և փորձեցին արդելել հայերենը, հայատարարելով, որ «մուսուլմանի համար յոթ հայերեն բառ՝ մեկ հայհոյանք էր։ Կանայք, որ թուրքերեն չդիտեին, մի քանի դյուզերից դադանակներով քշեցին մոլլաներին, իսկ այր մարդիկ, երկյուղ կրելով կոտորածից, ժողով անելով՝ պայման կապեցին. հինդ ոչխար տուգանք տալ իրենց ազային՝ ամեն անգամ հայերեն խոսելու համար[50]։ Սակայն հաշվեհարդարով ու արդելքներով հնարավոր չեզավ փոխել համշենահայերի ընտանեկան լեզուն, և այսօր էլ նրանք պահպանել են իրենց բարբառը։ Մի քանի տարի առաջ նշանավոր արևելագետ-լեզվաբան Գ. Դումեզիլը Սամբուլում դրանցել էր Համշենի բարբառով երեք պատմվածք և ուսումնասիրել այդ բարբառը՝ հարցուփորձ անելով Ismet Akbiyik անունով հեմշինի մի ուսանողի[51]։ Սրա պատմածները խոսուն փաստեր են այն իրողության, որ այսօր իսկ կենսունակ է համշենահայ բարբառը շուրջ երկու դար առաջ բոնի հավատափոխ եզած համշենցիների նոր սերնդի շրթերին։

Մահմեդականացած համշենցիները ինչ-որ չափով պահպանել են նաև ընտանեկան իրենց կենցաղն ու բնավորությունը. ականատեսների վկայությամբ նրանք տարբերվում են իրենց հարեանությամբ ապրող մահմեդական հույներից, լազերից ու վրացիներից. քաջարի են, վեհանձն, անխարդախ ու պարզասիրա, չեն խնամիանում ուրիշների հետ և հարեաններից առանձնատվում են իրենց ճեմշին անվանումով, որ մատնանշում է ոչ այնքան իրենց հայրենի երկրամասը, որքան հայկական ծագումը։

Ստույգ ավյալներ չունենք հեմշինների թիվը որոշելու։ Անցյալ դարավերջին, մերձավոր հաշիվներով, նրանք 16 հազար տուն էին։ «Համշենի և Սև-դետ (Կարա-դերե) գավառաց մեջ,—գրել է Ս. Հայկունին,—կան 16.000 չափ հայեր, որոնք մտած որջացած են այնպիսի վայրեր, գավառակներ, որոնց հարաբերությունը արտաքին գավառներու հետ խզված էր երկրի դրից բնական պատճառներով»[52]։ Հ. Աճառյանը հայտնում է, որ 1915 թ. ապրիլյան եզեռնից առաջ Թյուրքիայում ապրում էին շուրջ 20 հազար քրիստոնյա համշենցիներ. «Նույնքան կամ ավելի կարելի է դնել մահմեդական հայերին»[53],—ենթադրում է նա։

Այս հարցին ավելի հանդամանորեն անդրադարձել է համշենահայերի պատմության և ազգագրության անխոնջ ուսումնասիրող Բ. Գ. Թոռլաքյանը։ Նրա ավյալներով մինչև առաջին աշխարհամարտը Տրապիզոնի նախկին նահանգում ապրել են շուրջ 65 հազար քրիստոնյա հայեր և հավանաբար 100 հազարից ավելի մահմեդական համշենցիներ[54]։

Այժմ մի քանի խոսք իրենց պատմական բնօրրանից դուրս եկած ու Սև ծովի թուրքական և կովկասյան ափամերձ շրջաններում բնակություն հաստատած համշենահայերի մասին։

Բուն Համշենի բնական ու աշխարհագրական պայմանները անհաղթահարելի դժվարություններ էին հարուցում անասնապահության ու երկրագործության հետագա ընդարձակման ու զարգացման համար։ Բնակչության աճը սաիւզում էր

---

[50] «Արարատ», 1897, էջ 297, «Լումա», 1899, Բ, էջ 175։

[51] *Georges Dumezil*, Trois récits dans le parler de arméniens musulmans de Hemsin („Revus des Etudes Armenienes", Nouvelle serie, t. IV, 1967, p. 19—35).

[52] «Արարատ», 1895, էջ 239։

[53] Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 10։

[54] Բ. Գ. Թոռլաքյան, Համշենահայերի և պոնտահայերի բնակավայրերը ու թվաքանակը 1914 թվականին («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 213)։ Իհարկե, վիճակագրական տեղեկությունների բացակայության պայմաններում, բնակչության քանակի մասին այս տվյալները կարող են վիճելի համարվել, այս դեպքում՝ գուցե չափազանցված։

Համշինահայերին աաժանակիր աշխատանքով մշակնլի փոքրիկ հողամասեր կորզնել ղառիթափ ու խավարշուտ անտառներից, կամ էլ ապրուստի միջոցներ որոնել հայրենի երկրից դուրս՝ նոր բնակավայրեր հիմնելով հարեան շրջաններում ու արտադաղթելով հնոավոր երկրներ։

Կարա-դերեի և Խոփայի շրջաններում հաստատված համշենցիների մասին մի քանի խոսք արդեն ասել ենք։ Բուն Համշենին արեելքից ու արևմուտքից հարեան, բնական ու կլիմայական պայմաններով նույն պահերն ունեցող այդ շրջանները համշենցիների ուշադրությունը գրավել են վաղ ժամանակներից, և նրանք, քայլ առ քայլ առաջ շարժվելով, ներթափանցել ու հաստատվել են այդ վայրերում, բնականաբար, բախվելով տեղացի հին բնակչության՝ հույների ու լաղերի հետ։ Նրանց միջև տեղի ունեցած պատերազմների մասին եղել են ավանդություններ, որոնք, գժբախտաբար, դրի չեն առնվել[55]։

Ներթափանցման այդ պրոցեսը մեծ ծավալ է ընդունել հաակապես XVIII դարի կեսերից, երբ բուն Համշենում սկսվել են բռնագաղթությունները՝ իսլամ աարածելու համար։ Իրենց հավաքին հավատարիմ մնացած համշենահայերի մի մասը գաղթել է Կարա-դերե, մյուսները՝ Տրապիզոն, Օրդու, Ջարշամպա։ Մի քանի աասնամյակ հետո, երբ հավատափոխության է հարկադրվել նաև Կարա-դերեի բնակչությունը, քաջարար մարանչող հաղարավոր հայեր լքել են իրենց այդ հանդրվանը եա, և ապաովել հեաապնդումից՝ փախչելով ու հաստաավելով Սև ծովի հարավային ափերին՝ Սինոպից մինչև Բաթում։ Այս ողջ աարածքի վրա համշենահայ բնակավայրեր կային, անշուշտ, մինչև այդ տխուր իրադարձությունները, բայց նոր դաղթականությամբ հայ աարրն ստվարանում և ավելի կենսունակ է դառնում։

Հ. Աճառյանը «Քննություն Համշենի բարբառի» մեծարժեք ուսումնասիրության մեջ վիճակագրական տեղեկություններ է հաղորդում Տրապիզոնից մինչև Սինոպ ընկած շրջանների հայ բնակչության վերաբերյալ, որոնց դերակշիռ մասը եղել է համշենցի։

Մեր օրերում համշենահայության և, աոհասարակ, պոնտահայության XIX դարի վերջի և XX դարի սկզբների պաամության և, աոանձնապես, աղդադրության ու բանահյուսության ասպարեզում մեզվաջան ու հայրենանվեր դործ է կաաարել և շարունակում է աշխաել այդ բնագավաում եղևոնից մաղապուրծ եղած համշենահայ բանահավաք Բարունակ Գրիդորի Թոոլաքյանը, որի սուրն մատենաշարով ներկայացվող «Համշենահայերի աղգագրությունը» աշխաությունը հավաաի, ուաի և արժեքավոր նյութերի ժողովածու է. մեծապես օդտակար հետադա ուսումնասիրողների համար։ Նա արդեն հրատարակված իր հոդվածների մեջ[56] ուշադրության արժանի փորձ է կաաարել լուսաբանելու համշենահայության պաամությանը վերաբերող և ուսումնասիրության կարոա շաա հարցեր։

Թուրքական բռնապեաությանն հայահալած քաղաքականությունը իր բարբարկեաին հասավ արյունոուշա Աբդուլ Համիդ II-ի դահակալության աարիներին. նրա կիրաոած հրեշավոր «միջոցաոումները» պեաական քաղաքականության մակարդակի բարձրացվեցին երիաթուրքերի կողմից, որոնք ծրադրեցին և հեաևողականորեն իրականացրեցին Արեմաան Հայաասանի խաղաղ աղգաբնակչության ցեղասպանությունը՝ 1915 թ. ապրիլյան մեծ եղեռնը։ Թուրքիայի արեելյան նահանգներում, բոլոր այն վայրերում, ուր դարեր շարունակ ապրում էին հայ ղանգվածներ, սրի քաշվեցին հարյուր-հաղարավոր անմեղ մարդիկ՝ ծերոնիներ, կանայք ու մանուկներ. եղեռնի ղոհ դարձավ նաև համշենահայության մեծամասնությունը։ Իսկ արհավիրքից հրաշքով փրկված սակավաթիվ հերոսները, ապաասանելով հայրենի լեռնածերպերում և խիա անտառներում, միավորվեցին ու պարաիզանական խմբեր կաղմելով մահու և կենաց պայքար մղեցին ցեղասպանների դեմ. հերոսական պայքարով նրանք փրկեցին աասնյակ հաղարավոր անպաշապան հայերի կյանքը, նրանց առաջնորդեցին դեպի Ռուսաասան։

Վերապրած համշենահայերը արտագաղթերին հիմնականում Սև ծովի կովկասյան ափերը և Ղրիմ, երկրամասեր, ուր, ինչպես ասել ենք արդեն, բնակություն էին հաասաել հայ ղանգվածներ օրհասական այդ դեպքերից դեուա հարյուրամյակներ առաջ։

Ղրիմի հայկական գաղթօջախի մասին մի

---

[55] «Արարաա», 1895, էջ 296։

[56] Բ. Գ. Թոոալյան, Համշենահայեր («Գրական Թերթ» 24/5 1968)։ Նույնի՝ Համշենահայերի և պոնտահայերի բնակավայրերն ու քվաքանակը 1914 թ. («Պաամա-բանասիրական հանդես», 1970, № 2)։ Նույնի՝ Դրվադներ համշենահայերի պաամությունից («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2)։ Նույնի՝ էջեր համշենահայերի 17—18-րդ դդ. պաամությունից («Պաամա-բանասիրական հանդես», 1972, № 4)։ Նույնի՝ Համշենահայերի մասին («Բանբեր Երևանի արխիվների», 1970, № 2)։ Նույնի՝ Տրապիզոնի նահանգի հայկական կրթական և կրոնական հասաատությունները առաջին համաշխարհային պաերազմի նախօրյակին («Բանբեր Երևանի արխիվների», 1977, № 3) ևն։

Հրիմրա Հայոց Տրտիկեցոյն ի Հրիմ
տետեսակն Հաւակրն։ XIII դ. Քեմիսկեցոյ Հայ-
Հայոց Հրշանդեալ Եեմիսկեցոյն Հայ-
րենիքն, քաղաքական Հայրենասիրական
Հրիմ Հայ Հայրենասիրական Հայրենիքն
Հայոց Հրիմ Հայրենասիրական Հայրենիքն
Հայոց Հրիմ Հայրենասիրական Հայրենիքն
Հայոց Հրիմ

թուրքահայերի (իմա՝ համշենահայերի՝ Լ. Խ.) ձևորովն են փորվել ու բացվել...»[57]։

Արխալիայում հաստատված համշենցիների անուսնական շինարար ղործունեության մասին այս անկեղծ ու հիացական տողերը դրանցվել են շուրջ 7 աստնամյակ առաջ, երբ նրանց թիվը, մոտավոր հաշիվներով, չէր անցնում 15 հազարից։ Թուրքական լաթազանից փրկված համշենահայության բեկորները, հաղթահարելով անասելի դժվարություններ, խարիսխ նետեցին իրենց աղ-

դակիցների կողմից արղեն շենացված այդ երկրամասում, հաջողությամբ մասնակցելով իրենց նոր հայրենիքի բարգավաճմանն ի նպաստ թափվող ամենօրյա ջանքերին։

Արխազիայում և Կրասնոդարի երկրամասում բնակություն հաստատած հայերն ունեն իրենց դպրոցներն ու մշակութային հաստատությունները և սերտորեն շաղկապված են մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։

ՀՍՍՀ ԳԱ. ակադեմիկոս
ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

---

[57] Հ. Մուրադյան, Համշենցի հայեր. (արտատպություն «Ազգագրական հանդեսից»), Թիֆլիս, 1901, էջ 3—4։

ԳԼՈՒԽ Ի. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Տրապիզոնի հունական կայսրության (պատմական Պոնտոսի) վերջնական անկումից (1461 թ.) առաջ և հետո Սև ծովի այդ երկրամասի Հումշեն, Սյուրմենե (Սև-գետ) և հարակից Յոմուրալի շրջաններում ու, առհասարակ, Բաթումից մինչև Սինոպ ընկած ամբողջ ասրածքում և Գյումուշխանե գավառում սաղարախիա հասվածներով բնակվում էին համշենահայերը, որոնք տեղի պատմական անունով կոչվում էին նաև պոնտահայեր։

XVII—XVIII գգ. սկսած, համշենահայերին բռնությամբ իսլամացնելու նպատակով թուրքական րոնապետության ու մոլեռանգ կրոնավորների գործադրած գազանությունների հետևանքով, համշենահայերի զգալի մասը, ֆիզիկական ընաջնշման ահից, յաթաղանի սպառնալիքի ասկ, «ընգունեց» մահմեդական կրոնն ու կռոչած մնաց արգեն հայրենի գարձած օշախներին։ Նրանք, որ հասասա մնացին իրենց ագգային գարավոր մշակույթին ու կրոնական հավատքին, լքեցին իրենց պապենական բնակավայրերն ու սփովեցին այս լեռնաշխարհում՝ երկրամասեր, որոնք գարձան նրանց նոր հայրենիքը։

Մինչև XX դ. սկզբները Տրապիզոնի նահանգը (վիլայեթ), որաեղ հիմնականում սփոված էր համշենահայությունը, ընգգրկում էր Սև ծովի հարավային ափերը՝ Բաթումից մինչև Սինոպ, հյուսիսային լայնության 40—42 և արևմտյան երկարության 36—42 ասաիճանների միջև։ Նահանգի վարչական կենարոնը՝ կուսակալանիստ քաղաքը, Տրապիզոնն էր։ Նահանգը բաժանված էր չորս գավառի (սանշակ)՝ Տրապիզոնի, Լազիստանի (կենարոնը՝ Ռիզե), Սամսոնի (Ճանիկ) և Գյումուշխանեի։ Գավառներն իրենց հերթին բաժանված էին գավառակների (կագա)։ Տրապիզոնի գավառում՝ Օրդու, Կիրասոն, Կյուրելե, Վագիֆրքեպիր, Պլաստանա (Ագչեսպատ). Լազիստանում՝ Համշեն, Խոփա, Սքինա, Սամսոնի գավառում՝ Բաֆրա, Չարշամպա, Թերմե, Ունիե, Կավակ, Գյումուշխանեի գավառում՝ Թորուլ (Արաստա), Քելքիթ, Շեյրան[1]։ Գավառակներն իրենց հերթին բաժանված էին գյուղախմբերի կամ վիճակների (նահիե), վերջիններս էլ՝ առանձին գյուղերի կամ րնակավայրերի։

Գավառի իշխանությունը գանվում էր նահանգապետի (վալի) կողմից նշանակված գավառապետի (մյութեսարիֆ) ձեռքին, որը ենթարկվում էր վալիին։ Գավառակի կառավարիչը՝ գայմագամը նույնպես նշանակվում էր նահանգապետի կողմից և անմիջականորեն ենթարկվում էր մյութեսարիֆին։ Նահիեի կառավարիչը կոչվում էր միդուր (ավագ), որին նշանակում էր գայմագամը (ուստի գյուղախումբ-նահիեն կոչվում էր նաև միդուրլուղ)։ Գյուղերն ունեին իրենց «ընտրովի» գյուղապետը կամ տանուտերը (թաղապետ կամ մուխթար), որը պարտավոր էր հետևել ու աջակցել պետական որոշումների կամ հրամանների իրականացմանը։

Արևելքից արևմուտք, Ճորոխի գետաբերանից մինչև Սինոպի սահմանը՝ Գրզրլ-իրմաքի (Ալիս) գետաբերանը, խճուղով 674 մղոն (1145 կմ) էր։ Հարավից հյուսիս նահանգի լայնությունը հասնում էր 50—80 կմ, առանց Գյումուշխանե գավառի, ուր այն հասնում էր շուրջ 125 կմ։ Նահանգի մակերեսը 32400 քառ. կմ էր, որից մշակովի հողեր էին ընգամենը 17%-ը՝ 5400 քառ. կմ, չօգտագործվող, բայց մշակության պիտանի՝ 17%-ը՝ 5400 քառ. կմ, անտառներով ծածկված տարածությունը՝ շուրջ 20%-ը՝ 6500 քառ. կմ, լեռնային արոտավայրերը՝ 25%՝ 8000 քառ. կմ,

---

[1] *Տրապիզոնի նախկին նահանգը ներկայումս բաժանված է վեց առանձին վիլայեթների, որոնք են՝ Տրապիզոն, Ռիզե (Նախկին Լազիստան), Օրդու, Կիրասոն (որին միացվել է նաև Շապին-Գարահիսարը), Սամսոն և Գյումուշխանե։ (Տե՛ս ԺԺամանակակից Թուրքիան», Երևան, 1967, էջ 414 և ներդիր քարաեզր։ Հ. Խանջյան, Աշխարհագրություն Օսմանյան կայսրության, Կ. Պոլիս, 1912)։*

ապատաժներն ու օդտադործման համար անպետք հոզերը՝ շուրջ 21%՝ 7000 քառ. կմ², Նահանգն արևելքից սահմանակից էր Անդրկովկասին, հարավից՝ Կարինի ու Սերաստիայի նահանգներին, արևմուտքից՝ Կաստեմունիի (Ասիական) նահանգին, հյուսիսից Սև ծովն էր։

Ամրողջ նահանդը գրեթե համատարած լեռնաշխարհ է, բացի հշիլ-իրմաք (նախկինում՝ Իրիս) և Գրզրլ-իրմաք (նախկինում՝ Ալիս) գետերի ծովամերձ հովիտներից ու ծովեզերքի ատանձին հատվածներում նեզ շերտով՝ մեծ մասամբ ճահճային հարթավայրերից։ Պոնտական կամ Պարխարյան գոդավոր լեռնաշղթան ձգվում է ողջ նահանդի հարավային երկայնքով։ Տրապիզոնից հարավ-արևելք, Ռիզեից ուղիղ դծով շուրջ 80 կմ հեռավորության վրա, բարձրանում է լեռնաշղթայի ամենտրարձր դագաթը՝ Քաջքարը կամ Վարշամը (3937 մ), որը հասնում է մշտնջենական ձյան ստհմանին։ Տրապիզոնից շուրջ 30 կմ հարավ, Գյումուշխանեի մոտ, Ջիղանա սարի գագաթը ավելի քան 2000 մ. բարձրություն ունի։ Ջիղտնայից արևմուտք լեռների բարձրությունը աստիճանարար իջնում է։ Ամասոնի դավառում լեռների միջին բարձրությունը հավասար է 1000—1200 մ.։ Շատ վայրերում, հատկապես նահանգի արևելքում, լեռների թևերն ու բազուկները իջել են ուղղակի ծովափ, գոյացնելով բազմաթիվ կիրճեր, խորխորատներ, հրվանդաններ ու ծոցեր։ Նահանդի գլխավոր լեռներից հիշատակության արժանի են Տրապիզոնի մոտերքում Այուրմեննի, Կալաֆկայի, Արդուլայի, Գարատաղի, Կրոմի, Սանթայի, Կալիանի լեռները, Ախնջանի ու Այորի ապատաժները, Օրդու դավառում՝ Քիրեզ-տերե, Բաշ-չարտազ, Գարա-դյոլի լեռները, Ունիայում՝ Քյոքլուդ, Կապաք-կելիշ, Սիվրի-դադ, Ջամ-րելի, Ուզու-տազ լեռները, Ջարշամպայում՝ Թովկարաջի, Ջանկելիշ, Տաշլի-յաթաղ, Ասյ-քիրեզ, Արփա-չուղուր, Թոփալլի և այլ լեռներ։

Նահանդի կլիման բազմազան է։ Ծովափնյա հարթավայրերում ու հովիտներում տարևրային պատուհաս էր ջերմը, որին տեզացիք դող (սըրթմա) էին ասում։ Ամռովա ամիսներին ջերմից առուզում էին մեծն ու փոքրը։ Ծովեզերքից իջնելով դեպի հարավ, մերձարևադարձային կլիման աստիճանարար փոխարինվում է բարեխառնի։ Բարձր լեռներում ու սարահարթերում ափրում է ցամաքային կլիման, ամուսնր՝ շոգ, ձմոանր՝ ծածկրված ձյան հաստ ջերտով։ Առանձնապես առողջարար, կենսատու օդով ու զուլալ ջրերով հադեցած են միջին և բարձր լեռնային տարածությունները։

Ծովափնյա հատվածներում ձմեռվա ամիսների միջին ջերմաստիճանր —3° —5° պակաս չի լինում, հազվադեպ երևույթ է —5° —7° սառնամանիքր։ 1500—2000 մ. բարձրության լեռներում ու սարահարթերում ձմեռվա ամիսներին այնքան ձյուն էր կուտակվում, որ ճանապարհները փակվում և երթևեկությունր օրերով դադարում էր։

Պոնտական լեռնաշղթայի ծովահայաց լանջերում անծայրածիր անտառներր Սև ծովից բարձրացող խոնավության կուտակման ու հորդառատ տեզումների վիթխարի շտեմարան են։ Ամենաառատ տեզումներր լինում են նահանգի արևելքում՝ Համշենում ու Լազիստանում։

Գերակշռող բարեխառն կլիմայի ու հորդ տեզումների շնորհիվ, չափազանց ճոխ ու բազմազան է նահանգի բուսականությունր։ Ծովափնյա մեդմ ու արեդունի, հատկապես քամիներից պաշտպանված վայրերում՝ Ռիզեից մինչև Բաթումի սահմաններր նարնջի ու կիտրոնի համաատրած այգիներ էին։ Տրապիզոնի շրջակայքում, առանձնապես Պլատանայում, ձիթապազի (զեյթուն) առատ բերք է սաացվում։ Կազնու՝ լայնատարած այգիներ կան նահանգի միջին ու արևելյան, մանավանդ Կիրասոնի ու Տրապիզոնի շրջաններում։ Ծովից մինչև 1000 մ. բարձրության ընդարձակ լեռնային տարածություններր ծածկված են թանկարժեք սազարեաավոր ու մշտադալար ծառատեսակների անտառներով՝ ածրի (հաճարենի), խոզկաղնու, մաշմուրգենու (շադանակ), լաստենու, մոնի, կաթնատերևի, մշտադալար առսախի, ծվաղենու և այլ ծառերով։ Շատ վայրերում բարձր

---

[2] Հրաեոտ Խաչիկյան, Աշխարհագրություն Օսմանյան կայսրության, էջ 24։

[3] Կաղին—ընտանի կաղնի ծառի պտուղը, որը պիտանի է մարդկանց սննդի համար, պեղուկ։ ...Կաղին արքայական —նույնն է Արքայակաղին։ (Տե՛ս ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. III, ե., 1974)։

Պոնտահայերի, այդ թվում նաև Համշենահայերի մեջ վաղուց անսի քաղաքացիության իրավունք էր ստացել մշակովի այս պտղի՝ թխտազնու, ակոզինի կամ պլեղուկի կաղին անվանումը, իսկ սրա մշակովի ալգին կոչվում էր կաղեուա։

Այս կապակցությամբ հետաքրքիր է Ղ. Ալիշանի հետեյալ գիտողությունը. «Արքայակաղին. Արքակաղնի։ Ծանոթ ծառ մանավանդ Պաղովն, որ է կաղին։ Պոնտոք (արարերեն)... ֆընտըգ. նույնպես ծանոթ է Պոնտոսի կողմերն այս ծառիս հատուկ կամ հայրենիք ըլլալն. անոր համար ի հնուց Յոյնք Պոնտական ընգոյզ կոչեր են... Իսկ մեր մեծ առաքելոսն (Մխ. Գոշ) զԱրքակաղնին՝ Վայրի կաղինի ծառի հետ համեմատելով, այս եաքինս ներկայացնե հպարտ ի մեծութեան համար. «Իսկ Արքայակաղնի ոչ ժուժկալ՝ հանդիմանական վարեցավ առ նա բանիվ... միթ այդպես հանուղնիս. ես ե ոչ մի ինչ եմ, բայց մարդիկ զպատուղ իմ ուտելով՝ ե կիս ես հարգեն. այլ պտուղ քո ի դարման կայ խոզից»։ (Տե՛ս Ղ. Ալիշան, Հայրուսակ կամ հայկական բուսարաութիւն, Վենետիկ, 1895, էջ 65—66)։ (Ծանոթությունը խմբագրի)։

1914 թ. սկսած աշխատասիրած հետաքրքիր տվյալները այդ ցավոտ պատմության վերաբերյալ ևս։

1908—1909 թթ. արտահերթ ժողովներ։ Ընդհանուր ծրագրային դրույթներ մշակելու նպատակով հատկացված ժամանակը հերիք չէր ընտրական օրենքի նախագծի բոլոր կետերի շուրջ տեղի ունեցած բանավեճերը ավարտելու համար։ Հարկ եղավ ընտրական ժողովներ հրավիրել նաև հանգստյան օրերին։ Ընտրական պայքարը հասավ իր գագաթնակետին։ Ընտրողների ցուցակներ կազմելու, ընտրական տեղամասեր ստեղծելու, ընտրողներին քարոզչական նյութեր հասցնելու, ընտրական հանձնաժողովներ ձևավորելու, ընտրողներին ժողովներ հրավիրելու, ընտրական հանձնաժողովներ ընտրելու և այլ գործեր կատարելու համար ընդամենը 10 օր էր տրված։ Ընտրական հանձնաժողովները ստիպված էին ընտրողների ցուցակները կազմել ընտրողների անձնական քարտերի հիման վրա։ Ընտրողների ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ էր ունենալ ընտրողների անձնական քարտերի 2/3-ը։ Ընտրական հանձնաժողովները ստիպված էին ընտրողների անձնական քարտերը ստանալ ոստիկանական կազմակերպություններից

այրի բարձր պագաթներին ամիսներով կուտակվող ձյան շերտերից ու մթնոլորտային տեղումներից։ Այս պատճառով ներքին դետերի ձեծ մասրն ամռանը սակավաջուր է դառնում, մասամբ նաև՝ յոլորովին չորանում։ Ներքին ջրերով հարուստ է նահանդի միջին, հատկապես արևելյան մասը։ Նշել-իրմաքից դեպի արևելք, հաջորդաբար, Սև ծովն են թափվում մեծ ու փոքր հետևյալ դետերը՝ Չութաղը, Ճևիգ-տերեն, Ծուլամոնը, Մելլեթը, Տուռնասուն, Կիրասոնը, Գասապ-սուն, Զիֆրեն, Կալևրան, Խուրշուդը, էլաչուն, Ֆոլը, Կալամինան, Տևղերմեն-տերեն, Ճամպոլին, Գարա-ախրեն (Սև-դետ), Խամուրկյանը, Մահռնան, Կաղապտուման, Ռիղեն, Մափավրին, Աքինան, Ֆուրթունան և շատ այլ դետեր ու դետակներ իրենց վտակներով։ Նահանգն արևելքից ամփոփվում է Երկտլ ու ջրառատ Ճորոխ (հնում՝ Վոհ, Ակամախս) գետով (երկարությունը՝ 345 կմ)։

Գրեթե բոլոր դետերը, մանավանդ միջին ու վերին հոսանքներում, բավականին արագահոս են, տեղ-տեղ սլանում են նեղ կիրճերով, ցած թռփվում մեծ ու փոքր ֆոտչերից (ապառաժ), դյուցազնորեն վեղտեսիլ ջրվեժներ։ Ջմայլելի տեսարան է ներկայացնում Մալա գյուղի մոտ (Տրապիզոնից հարավ-արեմուտք) Խուրշան-Կապանից՝ 150 մետր բարձրությունից, արծաթավարս կոհակներով թափվող Համանուն ջրվեժը։

Հանրահայտ է դետերի նշանակությունը բնակչության տնտեսական կյանքում։ Նահանգի ոչ մի գյուղում հողմաղաց չի եղել։ Հացահատիկ աղալու միակ միջոցը գետերի վրա կառուցված ջրաղացներն էին։ Ջրի ուժով էին աշխատում նաև ջրկոպալները (կանեփաթաք)։ Անդնահատելի է դետերի դերը նաև այս երկրամասի անասնապահության ղարդացման ասպարեզում։

Տևղերմեն-տերե դետը, հին դարերից օգտագործվելով անտառանյութ, այդ թվում նաև մեծ քանակությամբ թանկարժեք տոսախ փոխադրելու համար, հունևրից ստացել էր Բիքսիտիս (Տոսախ) անունը։

Մինչև XX դ. առաջին-երկրորդ տասնամյակները նահանգը ղուրկ էր երկաթուղային և ավտոմորիլային տրանսպորտից։ Մարդկանց և բեռների վոխագրումը գերազանցապես կատարվում էր ղրաստով (էշ, ձի, ուղտ)։ Հեռավոր վայրեր՝ Պարսկաստան, Վան, Սերաստիա, փոխադրումներ կատարվում էին հիմնականում ուղտերի, մոտակա շրջանները՝ ձիերի, ջորիների կարավաններով։ Ձիաքարշ սայլերով փոխադրում էին գլխավորապես պետական փոստն ու դանձերը։ Այդպիսի սայլերին լծում էին 3—4 ղույգ սրընթաց ձի։

1. ՀԱՄՇԵՆԻ ՇՐՋԱՆ

Համշենի հինավուրց իշխանությունը դտնվում էր՝ Թուրքիայի՝ նախկին Տրապիզոնի նահանգի Լազիստան դավառի (այժմ՝ Ռիղեի նահանգ) հարավ-արևմուտքում, Բաթումի ու Տրապիզոնի միջև, Ռիղե և Աքինտ ծովափնյա քաղաքների հարավ-արևելքում, Պարխարյան (Պոնտական) լեռնաշղթայի երկնաքեր դագաթի՝ Քաջքարի (3937 մ)[1] ստորոտում։ XIX դ. վերջից մինչև 1920-ական թվականները իր հիմնական տարածքով վարչականորեն կոչվում էր Համշենի դավառակ։ Ծովեզերքից ուղիղ դծով մինչև լեռների ջրաբաշխ դագաթը շուրջ 100 կմ է։ Քաջքարը, ինչպես նշվեց վերը, կոչվում է նաև Վարշամ, Վարսամ (Թուրք.՝ Կաչկոր)։ Ըստ ավդական ավանդության, «Վարշամ» անունը կապված է ս. Վարդանանց նշխարի հետ. որ իրր Ավարայրի ճակատամարտի վերջին ղրվագը տեղի է ունեցել այս դժվարամատչելի ձորերում, և հայ նախարարներից շատերը այստեղ են ապաստանել ու Տայոց Որջնհաղ դյուղի մոտ՝ իրաղմիցս ճակատամարտել հակառակորդի դեմ։ Այս Որջնհաղ դյուղը դոյություն ուներ նաև մեր օրերում (1913—1915 թթ.), Ճորոխի աջ ափին և կարևոր հանգրվան էր այդ երկրով անցնող ուղեվորների համար։

Թուրքերի կողմից Պոնտոսը նվաճելուց հետո (1461 թ.) Համշենը, որպես դավառակ, մտնում է Լազիստան դավառի մեջ։ Համշենի սահմաններն էին՝ արևելքից աջարացիների երկիրը (որոնց փոքրը մասն այժմ ապրում է Թուրքիայի սահմաններում, Ճորոխից արևմուտք, իսկ մեծամասնությունը բնակվում է Աջարական ԻՍՍՀ-ում)։ Հյուսիսային ծովվեղրյա մասը լազերի երկիրն էր, որոնք տարածվում էին Ռիղեից մինչև Խոփա։ Հյուսիս-արևմուտքում գտնվում էր հունարնակ Օֆ դավառակը (որն առաջիններից էր բոնի մահմեդականության ընդունողների թվում)։ Հարավարևմտյան լեռնային կածաններով Համշենի դավառը կապված էր Սև-դետին (Սյուրմենե դավառակ)։ Հարավից Պարխարյան լայնանիստ լեռներով անջատված էր Տայոց աշխարհի հարավային գավառներից (Արոտաց-փոր)։ Քաջքար ածղահան անմատչելի պատնեշ է հանդիսացել Համշեն երկիրն ասպատակող վայրագ հակառակորդների դեմ։

[1] Տե՛ս ածխանակից Թուրքիան։

Համշենի հողերն սկսում էին ծովափից 2—3 ժամ հեռու վայրերից. միայն Աթինայից արեւելք, Ծուրթունա գետի ափին, Արաշեն ավանն էր պատկանում համշենցոց, որի հրվանդանը Կեպերտի քարաեզի վրա նշանակված է «Սրմենն» անունով։ Ժամանակին Արտաշենը եղել է արեւելյան այն վերջին կետը, ուր համշենցի հայերն իջել են ծովափ։ Ընդհանուր առմամբ, սակայն, Աթինան լաղերի հողն էր, իսկ վերը՝ խալայի շրջանը Համշենին էր պատկանում։

Պատկառելի թվով համշենահայեր էին հաստատվել նաեւ Ռիզե քաղաքում. նրանք հիմնականում ապրում էին Ռոշի թաղում, ունեին փառավոր եկեղեցի, ուր գրվել էր Սաղմոսարան։ Մ. Բժշկյանի Ռիզե այցելած միջոցին (1817—20 թթ.), եկեղեցին դեռ դոյութիւն է ունեցել։

1. Մինաս Բժշկյան (1777—1851 թթ.)

Համշենի առաջքը խիտ լեռնային է՝ հարուստ խորխորատներով, ձորերով ու կիրճերով։ Հաղվադեպ են նույնիսկ փոքր հարթութիւնները։ Ընդարձակ տարածութիւններ ծածկված են մշտադալար անասուններով, ալպյան արոտավայրերով։ Բուսականութիւնը փարթամ է, առատ են պտղատու եւ այլ թանկարժեք ծառատեսակները։ Հայտնի են Համշենի առուսթը, ընկույզը։ Համշենի տանձը, իր աիրոջ հետ անցնելով երկար ու տառապալի ճանապարհ, եկել հասել է Սոչիի գյուղերը։ Դրա համար պարտական ենք սիմֆերոպոլի Սիմավոնյան Սարդսին, որ այդ տանձի շյուղերը խնամքով պարուրած, բերել ու պատվաստել է Սոչիի մոտակա Դե-Սիմոն դյուղում։

Համշենն առատ է ներքին ջրերով եւ մթնոլորտային տեղումներով։ Բարձր լեռներում առատ ձյան պատճառով օրերով դադարում էր երթեւեկութիւնը։ Այսպես երբեմն այնքան թանձր մառախուղ էր պատում, որ 10 քայլի վրա իրար տեսնելը անհնար էր դառնում։ Գետերն ու աղբյուրները ոլորապտույտ հոսում են հյուսիս-արեւելք ու միանալով Ծուրթունա գետին, Աթինայի արեւելքում թափվում են Սեւ ծովը։

Համշենի լեռնային արահետները նեղ ու դժվարանցանելի են։ Հաճախ խոր ձորերի, քուշերի մի կողմից մյուսը հսկայական ծառերից կամուրջներ էին ձգվում։ Այդ ծառ-կամուրջների ցած ղլորելը րավական կլիներ, որպեսզի երկրամասի մի ամբողջ հատվածի մուտքը փակվեր թշնամու առաջ։

Համշենցիք անխոնջ երկրագործներ էին, սակայն նրանց հիմնական զբաղմունքն անասնապահութիւնը, հատկապես խաշնարածութիւնն էր։ «Համշենցին օր շարաթ մը օչխրոն րիրիլ (կաիտ) հոա չենե, հիվոնդնա կուս»,—ասում էր ժողովուրդը։

Առատ էր Համշենը մեղրով ու մոմով։ Բացի տնային մեղվանոցներից, համշենցիք առատ մեղրը ու մոմ էին հայթայթում նաեւ դարավոր ծառերի փչակներում բույն դրած վայրի մեղվարնտանիքներից։ Ըստ Ղ. Ինճիճյանի հաղորդման, համշենցի հայերը շուրջ 2000 օխա (շուրջ 6000 կգ) մեղրամոմ էին հայթայթում թուրքական սուլթանի արքունիքի համար։ Համշենի որոշ վայրերի վայրի մեղրը, սակայն, թունավոր բաղադրամաս ուներ։ Իրը, Քսենոֆոնի ղողքերը այդ երկրից անցնելիս ճաշակելով Համշենի մեղրը, վանդվել են թմրութիւամբ ու փորհարութիւամբ*։

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ։ Համշենի կիսանկախ իշխանութեան սահմանում կային բազմաթիվ մեծ ու փոքր բնակավայրեր, որոնցից շատերի մասին տեղեկութիւնները հավաքելը չափազանց դժվար է հենց այն պարզ պատճառով, որ համշենահայութիւնը խուսափելով թուրք չարդարարների անուհասական, քաղաքական ու հոգեւոր ճնշումներից եւ հալածանքներից, դեռես XVI—XVIII դդ. ընթացքում թողնելով արդեն հայրենի դարձած իր բարգավաճ բնակավայրերը, ղանդվածարար դաղթել էր Սեւ ծովի հարավային երկրամասերը՝ սկսած Բաթումից մինչեւ Սինոպ։ Ուստի այստեղ կհա-

* Այստեղ եւ հետագա շարադրանքում նկատի է առնված հնագույն ժամանակներից մինչեւ XIX դ. առաջին տասնամյակները ընդունված՝ 1 ժամվա ընթացքում սովորական քարավանային ճանապարհը հետիոտն անցնելու հնարավոր հեռավորութեան (տարածութեան) չափանիշը, որը հավասար է շուրջ 5 կմ։ (Մն. խմբագրի)։

5 Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903—1905, էջ 127։


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ
Ռայոնների կենտրոններ
Գյուղեր
Ռայոնների սահմաններ
Երկաթուղիներ
Ավտոմոբիլային ճանապարհներ
Գետեր
Լճեր
Ջրամբարներ
Ճանապարհանշաններ
Ռելիեֆ
Ռայոնների կենտրոնների հեռավորությունները Երևանից
Ռայոնների կենտրոնների հեռավորությունները միմյանցից
Ռայոնների կենտրոնների հեռավորությունները ռայոնների սահմաններ

գոյություն այն հարավոր աեղեկություններր սիալն. որոնք ժամանակին դրի են առել մեր նրախտավորնևրը (Մ. Հայկունի, Ղ. Ինճիճյան, Հ. Տաշյան, Պ. Բումայան, Մ. Բժշկյան և ուրիշներ)։

1. Համշեն (Հաւամամշեն, Բաշ-Հաւշենյ), նույնանուն շրջանի գլխավոր և անցյալում իշխանական ավանը Պարխար լեռնապարի ծովահայաց սարոտում։ Համշենից Տրապիզոն հինգ օրվա ճանապարհ էր։ Համշենի միջով անցնում է նույնանուն գետը։ Մոտակա լեռնագագաթին կար մի ավերակ բերդ։

2. Պարխար, Հոսշենից արևելք, Ֆուրթունա գետի աջ ափին, մահմեդականացած հայկական գյուղ։

3. Տավի, Ֆուրթունա գետի աջ ափին, Համշենից հարավ մեկ օրվա ճանապարհի վրա։ Մահմեդականացած հայկական գյուղ էր։

4. Նղնովիա, Հաուշենից մի քանի ժամվա ճամփա հարավ, Հաուշեն գետի աջ ափին, մահմեդականացած հայերով բնակեցված առաջավոր գյուղերից մեկն էր։

5. Ոևաև, Համշենից ութ ժամ հեռու՝ գետի խոտորջուր, լայնձր լեռան վրա հիմնված, մահմեդականացած հայերով բնակեցված գյուղ։ Հայտնի է այս շրջանի մեղրր։

6. Կոշանա, Ֆուրթունա գետի ակունքի մոտ, ձախ ափին, մահմեդականացած հայերով բնակեցված գյուղ, որը Համշենից մեկուկես օրվա ճանապարհի վրա էր։

7. Բալովիտ, անտառախիտ հովտում, արգավանդ հողերով հարուստ, մահմեդականացած հայերով բնակեցված գյուղ։ Բալովիտից աջ հոսում է համանուն վտակը, որը թափվում է Ֆուրթունա գետը։ Այստեղի անտառներում կան արջ, վայրի այծ, որոնց մորթին ձմռանը սև գույնից կարմրի է փոխվում։

8. Խաչափթիք, Համշեն ավանից 3—4 ժամվա ճանապարհ գետի հյուսիս, Համշեն գետի աջ ափին դանվող բարերեր գյուղ, որը բնակեցված է մահմեդականացած հայերով։

9. Ներին-Վիժա, մահմեդականացած հայերով բնակեցված գյուղ Ֆուրթունա գետի վտակի աջ ափին։

10. Վերին-Վիժա, մահմեդականացած հայերով բնակեցված գյուղ Ֆուրթունա գետի ձախ ափին։

Բոնի կերպով մահմեդականացած հայկական բնակավայրեր են նաև Մարմանդ, Վանե, Պատատ, Ջուղա, Մակրևինց, Ժանբնդնոց, Քոշաենց, Յոթ-փարա, Ողղենց, Մեծմուն, Մանլի, Բոդինա, Բալին-քյոյ, Մափարի, Մելեսկուր, Գուշիվա, Խոշնիշին, Ուսկարդա, Օրթա-քյոյ, Ամոդդա, Մոլեմինց, Ճեսիլ, Կավկամե և այլ գյուղեր. Արտաշեն և Հին-Կալե ամրոց-բնակավայրերը և շատ այլ ամրոցներ ու գյուղեր, որոնց մասին առայժմ գրեբրև ոչ մի աեղեկության կամ հիշատակման չենք հանդիպել։

Ինչպես բուն Համշենի շրջանի, այնպես էլ հետագայում ողջ Պոնտոսով մեկ սփռված Համշենահայերի հիմնադրած կամ նրանցով բնակեցված բնակավայրերի մեծ մասի անվանում-



2. Համշենահայեր, 1914 թ.

ները թուրքական իշխանությունների կողմից կամ հիմնովին փոխվել են, կամ էլ աղավաղվել այնպես, որ հայկականի ոչ մի նշույլ չի մնացել։ Այնուամենայնիվ, շատ բնակավայրերի անվանումներ պարզորոշ վկայում են նրանց ինչպես հայկական լինելը, այնպես էլ ատվարախիտ հայությամբ բնակեցված լինելը։ Որպես այդպիսիք կարելի է հիշատակել հենց Համշեն և Արտաշեն (Աև ծովի ափին) քաղաքները, նույն Արտաշեն անվամբ ամրոց-բնակավայրը Արտաշեն քաղաքից դեպի հարավ շուրջ երկօրյա ճանապարհ հեռավորությամբ, Տափ, Սղնովիտ, Բալովիտ, Խաչափթիք, Վանե, Պատատ, Մեծմուն և այլ բնակավայրերը, Քաջքար ու Թեքեիք լեռները, Խաչքարո հռչակավոր վանքը և այլ անվանումներ։

2. ԽՈՓԱՅԻ ՇՐՋԱՆ

Սովեզրյա այս շրջանը գանվում է Թուրքիայի՝ նախկին Տրապիզոնի նահանգի լաղիսաան գավառում (այժմ՝ Ռիզեի նահանգ)՝ Խոփա կենտրոնով։ Շրջանն արևելքից սահմանակից է Անդրկովկասին (Բաթումի շրջան), արեմուտքից՝ Աթինայի և Համշենի շրջաններին։ Բռնի կերպով մահմեդականությունն ատերես ընդունած համշենահայերի այս հատվածի (խոփա-համշենցիների) նախնիները հոծ զանգվածներով այս կողմերն են գաղթում հատկապես XVII դ. երկրորդ կեսից սկսած։

Առաջին համաշխարհային պատերազմից ու Ռուսաստանում քաղաքացիական կռիվներից հետո, Սովետական Միության և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի համաձայն, Խոփայի շրջանի մահմեդականացած համշենահայերի բնակավայրերի մեծագույն մասը Խոփա կենտրոնով մնաց թուրքական սահմանում և միայն մի քանի գյուղեր՝ սովետական սահմանում (Բաթումի շրջան), որոնք հետևյալներն են.

Գըզըլ-թոփրաքը գանվում է Բաթումից 4 ժամ հեռու, Ճորոխ գետի արեմտյան ծովափնյա երկրամասում։ Բնակիչները 20 տուն մահմեդականացած համշենահայեր ու շուրջ 80 տուն քրդեր են։

Ջարճալին կամ Ճառճալը Գըզըլ-թոփրաքից հարավ, խիստ լեռնային գյուղ է, 30 տուն մահմեդականացած համշենահայեր՝ Գարաքչի-օղլի, Քյոս-օղլի, Ֆեյզ-օղլի, Միլիշ-օղլի, Դավիթ-օղլի և այլ աղգատոհմերից։ Գարաք-օղլի Իբրահիմի վկայությամբ, իրենց նախնիները կոչվել են Գարաքյաններ, իսկ քյոսօղլիները՝ Քյոսյան, գավիթ-օղլիները՝ Դավիթյան և այլն։

Գանիո։ Գըզըլ-թոփրաքից գեպի Խոփա լեռնային, մահմեդականացած համշենահայերի գյուղ է, 50 տուն բնակչությամբ, մեծ մասը Գարարաչաք-օղլի, Մարաշ-օղլի, Դարաիբրահիմ-օղլի ազգատոհմերից։

Գարաիբրահիմ-օղլի Իսակի ու նրա հորեղբայր 80-ամյա Ահմեդի վկայությամբ, նրանց նախնիները Ճերմակյան են կոչվել ու մինչև այսօր էլ համագյուղացիք նրանց Ճերմակցի են անվանում։

Կոռիաթ։ Գոնիոյին հարավից սահմանակից գյուղ, ուներ 30 աուն բնակչությամբ՝ Թաթար-օղլի, Թանթ-օղլի, Սալեհ-օղլի և այլ աղգատոհմերից։

Ավխու։ Կորիաթին սահմանակից փոքր գյուղ, 8 աուն բնակչությամբ, Ալբոյուք-օղլի, Սարխոշ-օղլի ազգատոհմերից։

Թուրֆիայի Խոփե գավառակում, Ճորոխի ձախ ափին և ծովեղերքում գանվում են մահմեդականացած հետևյալ գյուղերը[6]։

Սարվ։ Գոնիոյից արեելք, սահմանային գյուղ է, որի մի մասը գանվում է Սովետական Միությունում։ Գյուղի բնակչության մեծամասնությունը լաղեր են, մի թաղը՝ 18 տուն մահմեդականացած համշենահայեր։

Մարիալ։ Գոնիոյից հարավ, ծովափնյա, մահմեդականացած համշենահայերի գյուղ, ուներ 50 տուն բնակչություն։

Շոնա (Շանա)։ Լեռնային գյուղ Սարիից հարավ-արեելք, որն ուներ 30 տուն բնակչություն, ամբողջությամբ մահմեդականացած համշենահայեր։

Ուչ-գարդաշ։ Մաքրիալից հարավ-արեելք, ծովափնյա, մահմեդականացած համշենահայերի գյուղ, 20 տուն բնակչությամբ։ Ուչ-Գարգաշ (երեք եղբայր) անուն սաացել է ծովափում, իրար մոտ երեք խոշոր քարաժայռեր գտնվելու պատճառով։

Ջարչախանա։ Մաքրիալից հարավ-արեելք, մահմեդականացած հայերի գյուղ, 25 տուն բնակչությամբ։

Մալին-օղլու-գեղը։ Ուներ 30 տուն բնակչություն. գյուղը գտնվում է Մաքրիալից հարավ-արեելք։

Քյուիրիճի։ Գյուղ Մալին-օղլիից հարավ, Ճորոխի ձախ ափին, որն ուներ շուրջ ՃՃ տուն բնակչություն։

Խոփայից շուրջ երկու ժամ հարավ իրար հաջորդում էին մահմեդականացած համշենահայերի հետևյալ գյուղերը՝ Ջավուշլի (50 տուն), Ջուրպիչի (30 տուն), Խիկի (40 տուն), Ջոլանու (55 տուն), Կրլըճուտ (45 տուն)։ Խոփա քաղաքից հարավ-արեմուտք գանվում են ծովեղրյա կամ իրար սահմանակից մահմեդական համշենահայերի Ղալղինա (40 տուն), Կարջի (50 տուն), Օճուրուտ (30 տուն), Ճուկովլութ, Պայի գյուղերը, ինչպես նաև Արտաշեն ծովեղրյա ավանը։ Խոփա քաղաքում բնակվում էին շուրջ ՃՕ տուն մահմեդական համշենահայեր, որոնք գրաղվում էին առևտրով և արհեստով։ Առհասարակ, Խոփա քաղաքում ու շրջանում մեծ մասամբ բնակվում են մահմեդականացած լաղեր։

Այսպիսով, եթե համշենահայերի ծովեղերյա վերջին հանգրվանը հնում եղել էր Սթինայի մոտ՝ Արտաշեն ավանը, ապա մահմեդականացած համշենահայերն այդ կետը հասցրին Ճորոխի գետաբերանը՝ Բաթումի մոտ։

Թուրքիայի ներկա վարչական բաժանմամբ, Խոփե գավառակը մտնում է Արգվինի նահանգի

[6] Բնակչության թիվը 1940 թ. իմ կողմից հավաքած տվյալներով (Բ. Թ.)։

մեջ, որտեղ մահմեդականացած համշենահայերի սակավար մի հատված մինչև այսօր պահպանել է մայրենի լեզուն ու բարբառը և կոչվում է «խոփէ-համշենցիներ»։

Հետաքրքիր գույզաղիպություն է նաև երկու Չոնտա (Չոնոս) գյուղերի առկայությունը՝ մեկը Խոփայի մոտ, որը հիմնել են մահմեդական խոփաշամշենցիք, երկրորդը՝ Տրապիզոնի մոտ՝ համշենահայերի գյուղը։ Արդյոք այդ երկու հատվածների նախնիները չէ՞ն հեռացել բուն Համշենում գոյություն ունեցող Կոշանա գյուղից (համմտ.՝ Կոշանա—Շանա—Շոնա)։

3. ՍՅՈՒՐՄԵՆԵ ԿԱՄ ՍԵՎ-ԳԵՏ ԳԱՎԱՌԱԿ

Դանդում է Տրապիզոնի ու Ռիզեի գավառների միջև, Սև ու Յումպոլի գետերի միջև ընկած լեռնաշխարհում։ Սահմաններն են՝ հյուսիսից Սև ծովը, արևելքից՝ մահմեդականացած հույների Օֆ գավառակը։ Հալավարեվլյան լեռնային ճանապարհներով ու արահետներով կապված է Հաճընի դավառի հետ, հարավում Պոնտական լեռնաշղթայով բաժանված է Բարբերդի բարձրավանդակից, հարավ-արեմուտքում ղանվում է Սանգա հունական դյուղախումբը, իսկ արեմուտքում՝ Հոմուրայի վիճակը։ Այս շրջանը նույնպես հատատուած լեռնաշխարհ է՝ մեծ ու փոքր բլուրներով և անղնգախոր ձորերով։ Մշակվող հողերը դրաղեցնում են մակերեսի 20—30%։ Ծովափնյա ու միջին դոտիները ծածկված են փարթամ բուսականությամբ ու խոր ձորերով։ Անտառների իշխող երկինք հոյացած սոճիի ծառերն են։ Հատուկ է նաև հատատրուն վայրի կաղնու, խոշկաղնու, մշմոտրքի, ինչպես և լատաենու, հացենու, մոնու (նշտարենի) և այլ ծառերով ու թփերով։ Բարձրագիր վայրերում համատարած ղանգվածներ են կազմում փշատերև ծառերը՝ եղևնի, մայրի։ Հնկա ծուռների շվաքներում ու առուձին հատվածներում պնդությամբ աճում են թանկարժեք աստեխ, մշատդալար լաշենու, ծվաղի և բազմաթիվ այլ տունկեր ու մատղցող բույսեր։ Անտառային դոտու հարևանությամբ սարածվում են սիղավետ լեռնային արոտավայրերը։ Անտառները, մանուվանդ նրանց միջին ու ներքին լեռնափեշերը, հարուստ են պաղատու ծառերով՝ տանձ, խնձոր, կեռաս, բալ, սալոր, վայրի ծվաղ, ղրղրը, հոն, ինչպես նաև՝ ղանղաղան անկատեսակներով։

Վայրի կենդանիներից տարածված են՝ դայլը, արջը, վարազը, շնագայլը, քարայծը. ճագար պատահում է ամեն տեղ։

Հավզոտակի գետերից ամենաջրառատը՝ Սևդևսը (Գարա-սերե) անվում է Պարխարյան (Պոնտական) լեռների հյուսիսային բարձունքներից ու մինչև ծովափից երկու ժամ հեռու՝ Սղնաս գյուղը, ուղղակի ալանում խոր ձորերի ու կիրճերի միջով, մնացյալ ընթացքում նավարկելի է և Սյուրմենե ավանի մոտ թափվում է Սև ծովը։ Փոթորիկների ժամանակ գետաբերանը լավ ապաստան է փոքր նավակների համար։ Յամպոլի գետի ակունքները սկիզբ են առնում Բարերդի սահմանների մոտ գանվող Տաշքյուրի ու Յաղմուտ-տեբե լեռներից ու արագահոս անցնելով հունաբնակ Սանղա, ապա մահմեդականացած հայերի մարգաշատ գյուղերի (Իշխանելի, Աղրիտ, Սիմոնա և այլն) միջով՝ Սյուրմենեի արևմուտքում, Ֆալկոգ կոչված վայրում թափվում ծովը։ Այս երկու գետերն իրենց ամբողջ ընթացքում ընդունում են բազմաթիվ մեծ ու փոքր վտակներ։ Սրանց ջրերում առատ բաղմանում է քաղցրահամ կարմրախայտ ձուկը։

Յամպոլի գետի ընթացքով անցնում էր Բարերդը Սև ծովին միացնող ամենակարճ ու հարմարավետ ճանապարհը։ Գետի վերին մասերում գանվող Յաղմուր-տեբեի շրջանը երեք եղակի մի երկրամաս էր, որտեղ մինչև մեր օրերը (1900-ական թթ.) ադգային ինքնուրույնությունը պահվել էին պատմական խալգ (խալտ) ժողովրդի համախումբ սերունդները։

Սյուրմենե ավանն ունի հարմարավետ ծովախորշ-նավահանգիստ, ուր ապաստանում էին ձկնորսական և այլ առագաստանավեր ու նավակներ։

Երկիրը առատ է մթնոլորտային տեղումներով։ Ծովափնյա, մերձարեադարձային կլիման ղեպի հարավ աստիճանաբար փոխվում է բարեխառնի, ապա լեռնոտ վայրերում՝ ցամաքայինի։ Ձյան հաստ շերտը ձմռանը օրերով անմատչելի էր դարձնում այս վայրերը։

Սյուրմենահայերը համարյա ամբողջությամբ սեփական հողամասեր ունեին, որի շնորհիվ իրավունք ունեին նաև տների մեծ մասը քարաշեն կամ կիսաքարաշեն կառուցելու։ Սեփականություն ունենալը նրանց հնարավորություն էր տվել նաև հիմնական անտեսություն ունենալու՝ կաղինի այգիներ, պաղատու ծառեր, տնամերձ են։

Գրեթե բոլոր գյուղերում գլխավոր ու շահութաբեր զբաղմունքը կաղնու այգիների, պտղատու ծառերի (տանձ, խնձոր, սալոր, կեռաս, ծվաղ և այլն) մշակումն էր, որը հիմնականում սեփական կարիքները բավարարելու համար էր։

Հացահատիկներից մշակում էին հիմնականում լազուտ (եգիպտացորեն), մասամբ նաև՝ ցորեն, գարի, հաճար. վերջիններս ցանում էին «բերանափոխ» նպատակով՝ համեղ ձավարեղեն ու քաղցրեղեն պատրաստելու համար։ Ցորենի պատ-

բասաի ալյուր հիմնականում գնում էին շուկայից։

Առավել զարգացած էին անասնապահությունն ու կաթնանասեսությունը։ Կային 100—500 գլուխ ոչխար, քիչ քանակությամբ խոշոր եղջերավոր անասուններ ունեցող անասեսություններ։ Աեգետացի համշենահայ անասեսուհիները հմուտ կաթնանասեսներ էին։ Հոչակված էին Սյուրմենեի կարագն ու միճծին (չիլ պանիրը)։

Ինչպես առհասարակ համշենահայ մյուս գյուղերում, այստեղ ևս բանջարեղենը մշակում էին հիմնականում միայն եգիպատացորենի հետ միասեղ։ Մեղվարուծությամբ գրաղվում էին սեփական կարիքները բավարարելու, մասամբ՝ վաճառելու համար։

Սյուրմենահայերի մեջ կային ամրողջ գավառում հոչակված թաղիքագործներ ու կղմինգրագործներ։ Այս սեսակեսից առանձնապես հայտնի էր էլեմոնոց գյուղը։ Կանանց մեջ համրնգհանուր արհեստ էր ջուլհակությունը։ Գեգչկուհիները իրենց մանած ու գործած կասավեղենով ապահովում էին ընտանիքի սպիտակեղենի ու մասամբ վերնագգեստի պահանջը։

Այնուամենայնիվ, կային նաև մեծ թվով սակավահող ու բոլորովին հողագուրկ ընտանիքներ, որոնք սաիպված էին թուրք կալվածասերերից ծանր կապալով հողամասեր վերցնել։ Կապալաոում պարասվոր էր սասացած բերքի 25—35%-ը, իսկ կաղինի այգիներից հավաքած բերքի 50%-ը հանձնել հողասիրոջը։

Բնակավայրերը: *Խամուրկյան (Զարսուսի)՝ ծովափնյա թուրքական գյուղ Ասու գետի ափին։ Այստեղ բնակվում էր 3 տուն հայ, որոնցից մեկն ուներ գեգատուն՝ միակը ամրողջ Սյուրմենեի գավառակում։*

Բացկալա: *Սև-գետի ծովափնյա մասի աջ ափին։ Գյուղն ուներ 300 անից ավելի բնակություն, բոլորը բոնի մահմեդականացած համշենահայեր։ Սրանք մինչև վերջ բարիգրացիական հարարերությունների մեջ էին հարեան բնակավայրերի չկրոնափոխված հայերի հետ։ 1895 թ. կոտորածի ժամանակ ամեն կերպ աջակցեցին իրենց քրիսասնյա աղգակիցներին։ Գյուղում հեղինակավոր ագգասոհմ էին Ջեփելօղլիները, որոնցից Իսմայիլը հեղինակավոր պեսական պաշասնյա էր։*

Սյուրմենե ալան: *Փոքր ավան Սև-գետի արեմսյան ափին, գավառի վարչական ու առեսրական կենարոնը։ Ուներ խառը բնակչություն՝ թուրքեր, հույներ ու մահմեդականացած համշենահայեր։*

Զոհիկ: *Գյուղ Սյուրմենեի հարավ-արեմոտքում։ Ըսա բանավոր վկայությունների, գյուղի բնակիչները ամրողջությամբ հույներ են եղել, որոնք թուրքերի ներխուժման ժամանակ փոխել են. նրանց սեղը զրավել են թուրքերը։ Գյուղն ունեցել է շուրջ 200 սուն բնակչություն։*

Ախու: *Սև-գեսի ձախ ափին, Զոնիկից հարավ, նրան սահմանակից թուրքական մեծ գյուղ, որը նախկինում նույնպես հայարնակ է եղել։ Ախուցի թուրքերը չափազանց մոլեանգ ու հայատյաց են եղել։ Այս գյուղից միայն Տահերօղլիները հայերի հանդեպ բարի վերաբերմունք են ցուցաբերել։*

Կուլաֆլի: *Սև-գեսի աջ ափին, գեսաբերանից քիչ ներքև, Բացկալային սահմանակից զուսթուրքարնակ գյուղ։*

Աղճաս: *Կուլաքլիից քիչ հարավ։ Աղնաս գյուղի անները կասուցված էին գեսի երկու ափերին։ Գյուղի շուրջ 300 սուն բնակչության կեսը մահմեդականացած համշենահայեր, մյուս կեսը թուրքեր էին։ Գյուղի երկու՝ հայկական և թուրքական թաղերը միացած էին հինավուրց քարե հոյակապ կամրջով։*

Պեծօղլի ու Ֆալճիօղլի: *Այս երկու գյուղերը գտնվում էին Ախուի հարավարեմսյան կողմում։ Բնակիչների շուրջ կեսը մահմեդականացած համշենահայեր, իսկ մնացյալը թուրքեր էին։*

Փերվանա: *Սև-գեսի ձախ ափին, Աղնասից հարավ, 200 տնից ավելի մահմեդականացած համշենահայ բնակչություն ունեցող գյուղ։ Այսսեղ հայանի ագգասոհմեր էին Տելիօղլիները ու Սու Իշմեգօղլիները, որոնցից հասկապես վերջինները մնացել էին հավասարիմ ու պաշապան իրենց քրիսասնյա աղգակիցներին։*

Բիֆորա: *Փերվանային սահմանակից, Սև-գեսի աջ ափին գտնվող այս գյուղի բնակիչները խաղաղարար թուրքեր էին։*

Բուռնազ: *Բիֆորային սահմանակից այս գյուղում բնակվում էին ինքնիշխան, թուրքական պեսուԹյանը չենթարկվող մահմեդականացած լազեր։*

Սօթուխ կամ Օձ: *Բուռնազի հանգիպակաց՝ Սև-գեսի ձախ ափին ծվարած այս գյուղում իրար հեսա համերաշխ ապրում էին մահմեդականացած վրացիք (աջարացիք) ու համշենահայերը։ Ս. Հայկունին այս գյուղը Օձթուխ է անվանում։*

Ծիմվա (կամ Բրեձոր): *Գտնվում է Բուռնազից հարավ և սփռված է Սև-գեսի երկու ափերին։ Ս. Հայկունու վկայությամբ, գյուղը նախկինում Բրեձոր է կոչվել։ 1867 թ. Մուշ գնալիս նա եղել է այս գյուղում, գրուցել հայախոս ու գաղանի քրիսասնեական ծեսեր կասարող սասիկների հետ, գրի առել ժողովրգական երգեր ու խաղեր։ Այսսեղ հայերեն լեզուն ավելի գործածական է եղել, քան մահմեդականացած հայկական այլ գյուղերում։ Նա վկայում է, որ գյուղի հոյակապ եկեղեցին վերածվել էր մարագի։*

8—1045

Ուրուագիծ: Ծանր ոսկեձույլ, ուղղանկյունաձև, 300 մգրմ կշռով ձեռնափայտ՝ ֆրանսիացի նշանավոր գրող Ալեքսանդր Դյումա հոր (1802—1870) հանդիսավոր թաղման առթիվ 1970 թ. Ն. Ձայկոնի կողմից պատրաստված։ Ձեռնափայտի գլխիկը ներկայացնում է ֆրանսիական հին ոճով հագնված երիտասարդ տղամարդու կիսանդրին։ Ձեռնափայտի ներքևի մասում՝ գրանցման համարը։

Ներկայացվել է Ն. Ձայկոնի անձնական ցուցահանդեսին։

Ալեքսանդր Դյումա հոր ձեռնափայտը

Ալեքսանդր Դյումա հոր ձեռնափայտը (փայտից) պատրաստված է ընկուզենու ճյուղից։ Ձեռնափայտի գլխիկը ոսկեձույլ է, ներկայացնում է գրողի կիսանդրին։ Ձեռնափայտի ստորին մասում գրանցման համարն է։

նուկցի (2 տուն), Արրյոմցի (2 տուն) աղգատոհմերից։ Եղեռնից փրկվել է ընդամենը 8 հոգի։

Կատրա։ Գտնվում է Մաղթելայից 1 ժամ հարավ։ Գտնվելով Սյուրմենեի հայկական գյուղերի կենտրոնում, գյուղը գարձել էր նաև աղգային, մշակութային կյանքի կենտրոն։ Այսաեղ էին գրտնրվում Սյուրմենեի հայկական համայնքի ս. Լուսավորիչ քարաշեն եկեղեցին ու գպրոցը։ Գյուղում բնակվում էին՝ 5 տուն Մինասցի, 5՝ Մագիլցի ու 1՝ Մարկոսցի աղգատոհմերից, ընդամենը՝ 11 տուն (77 անձ)։

Սաթես։ Կատրայի հարավային բարձրավանդակում, Միրոնոց գյուղից արևմուտք գտնվոգ, անցյալում բաղմամարդ հայկական գյուղ։ Սև-գետի ողբերգական օրերին շատերը հեռացել էին, մի մասը բռնի մահմեդական կրոն էր ընդունել։ 1895 թ. գյուղն ուներ 15 տուն մահմեդականություն չընդունած հայ բնակչություն։ Այս գյուղից Ռուսաստան գաղթողներից Նահապետ Առաքելյանն իր աղգակիցներով հաստատվում է Սոչիի շրջանի Վերին-Լոո գյուղում և ի հիշատակ իր ծննգավայրի, հիմնում Սաթես թաղը, որը մինչև այսօր էլ կրում է այդ անունը։

Ալչաք-Տերե։ Նախկին հայարնակ մեծ գյուղ. 1914 թ. այսաեղ կողք կողքի բնակվում էին 10 տուն քրիստոնյա և 15 տուն մահմեդականացած հայեր։

Ժուժկ։ Նախկինում հայկական բաղմամարդ գյուղ։ Շաաերը փախել էին Սև-գետի սև օրերին։ Մի մասն ահաբեկված ընդունել էր մահմեդականություն։ Զգալի թվով ընտանիքներ 1895 թ. հետո ու առաջ գաղթել էին Ռուսաստան։

Ժուժկը Սյուրմենեի հայարնակ գյուղերից ամենահեռավորն էր՝ ծովափից 5 ժամ հեռու։

Էլեմոնոց գյուղը գտնվում է Կաարայից 1,5 ժամ հարավ-արևմուտք, Յամպոլի գետի աջ ափին։ Կաարայի և Էլեմոնոցի միջև անցնում է Կիրիկա գետը, որը Մաղթելայի կամուրջից վերև միանում է Յամպոլի գետին։ Գյուղն ուներ 23 տուն զավանափոխ չեղած և 15 տուն մահմեդականացած հայ բնակչություն։

Էլեմոնոցի բարձունքի քարայրում մնացել էր ավերակ գարձած մի ուխտավայր, ուր ուխտի էին գնում նաե մահմեդականացած հայերը։ Ուխտավայրում մնացել էր մի երկաթե խաչ։ Մահմեդականացած հայերից շաաերը այդ խաչը գաղտնի տանում էին իրենց տները, մի քանի օր պահում ու վերադարձնում տեղը, հավատացած, որ խաչն իրենց գործերին հաջողություն կբերի, իսկ հիվանդները կրուժվեն։ Ժողովրդի մեջ տարածվել էր, թե խաչը մոգական ուժով ինքը «գնում» է տներն ու վերադառնում։

1902—1903 թթ. Էլեմոնոց գյուղն ուներ իր գպրոցը՝ Ա և Բ դասարաններով։

Վահանաշեն (Վահանլի կամ Վահանցոցգեղ)։ Էլեմոնոց գյուղի Ղասրա կոչված բարձունքի վրա կար հինավուրց հայկական ավերակ եկեղեցի։ Այդ եկեղեցու արևմտյան լանջերին հաստատվել էր անցյալում բաղմամարդ համշենահայերի Վահանաշեն գյուղը։ Ս. Հայկունին այդ գյուղում հաշվել է յոթը ավերակ ագոթավայրի հետք։ Գյուղում մնացած բնակիչները Ղուռուֆ-օգլու ղոհերը գարձած, մահմեդականացած ազգեաացիք էին։ Մեր օրերում (1915 թ.) գյուղի հին անունը մոռացության էր տրվել, այն համարվում էր որպես Ջավղոնա գյուղի մի թաղ։ Վահանաշենն և Էլեմոնոց գյուղերը իրարից բաժանված էին Մագկաձոր կոչված ձորով։

Նենորուա (Թուրքերը վերափոխել էին՝ Նանճարի)։ Վահանաշենից արևմուտք, մահմեդականացած համշենահայերի փոքր գյուղ էր՝ Յամպոլի գետի արեելյան ափին։

Միսոխոր (Հունարեն՝ Միջին-գյուղ)։ Էլեմոնոցից շուրջ մի ժամ հարավ՝ անտառներով շրջապատված մահմեդականացած հայերի գյուղ՝ Յամպոլի գետի աջ ափին։ Գետից շուրջ 60—70 մետր արեելք անվնաս մնացել էր եկեղեցու շենքը, որը նույն գյուղի մահմեդականացած հայերը գարձրել էին մզկիթ։ Եկեղեցու մոտ կանգուն էր մնացել Յամպոլի գետը գոտկող քարակերտ հնագարյան կամուրջը։ Միսոխորը Յամպոլի գետի ափին Սյուրմենե գավառակի ամենահեռավոր գյուղն էր։ Միսոխորի մահմեդականացած հայերը բարիդրացիական հարաերությամբ մեջ էին կրոնափոխ չեղած իրենց ցեղակիցների հետ։

Մանտրա։ Էլեմոնոցի հանգիման, Յամպոլի գետի ձախ ափին, անտառապատ Մանտրա սարի լանջերին սփռված մահմեդականացած հայերի գյուղ։ Ս. Հայկունու վկայությամբ, նրանց մեջ իգական սեռը հիմնականում խոսում էր մայրենի լեզվով։

Մաղթեղ։ Էլեմոնոցից շուրջ 1.5 ժամ արևմուտք, Յամպոլի գետի ձախ ափին փոքր, անտառապատ բնակավայր։

Էլեմոնոց ու Մաղթեղ գյուղերը թեպետ աշխարհագրական ղիրքով Սյուրմենեի անրաժան մասն էին կազմում, սակայն վարչականորեն ենթարկվում էին Յոմուրայի վիճակին։

Մինաս Կարապետի Մինասյանի վկայությամբ, որը եղեռնի նախընթաց տարիներին Սյուրմենեի հայկական համայնքի թղթապետր (մուխթար) ու գպրոցի հոգարարձուների նախագահն էր, վերոհիշյալ բոլոր հայարնակ գյուղերը եղեռնի նախօրյակին ունեին 106 տուն (996 անձ)։

Տրապիզոնից մինչև Սյուրմենեի հայկական շրջանի կենտրոնական կարևոր գյուղը շուրջ 8-ժամյա հանապարհ է, որն անցնում է հետևյալ վայրերով՝ Տրապիզոն—Տրոնա—Յամպոլի գետ, ապա նույն գետի ձախափնյա արահետով բարձրանում Մաղթելայի կամուրջը, որի արևելյան կողմի արահետներով հասնում է Կատրա։ Կա նաև ավելի կարճ՝ լեռնային հանապարհ, որը բաժանվում է Տրոնայի արևելքում ու կաապրուքսա գյուղի միջով բարձրանում Ղուռնայի սարը։ Սարն այս անունն ստացել է հանապարհի եզրին գտնվող սառնորակ աղբյուրի մոտ կառուցված ղուռնայի (շրավաղանի) շնորհիվ։

Ղուռնայի արևելյան լանջերի դեմ-հանդիման տարածված էին Սյուրմենեի հայկական գյուղերը։ Բնք շավիղն իջնում է Յամպոլի գետը, որի ձախ ափին դտնվում է Մաղթեշ գյուղը։ Զավզոնա թուրքական գյուղի մոտ. փայտե կամուրջն անցնելով՝ 1,5 ժամից արդեն Կատրան է։ Այս ուղիով, շուրջ երկու ժամ կրճատվում է Տրապիզոն—Կատրա հանապարհը։

4. ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑԱԾ ՀՈՒՅՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐԸ

Կրոմ գավառակ։ Նույն տարիներին, երբ Սյուրմենեում ու մոտակա վայրերում հայոց մեջ ուրսպափ էր տարածվել, Ղուռուֆ-օղլին մոլեռանդ մոլլաների ու մի խումբ ենիչերիների ուղեկցությամբ մտնում է Տրապիզոնի ու Գյումուշխանեի միջև դտնվող, շուրջ 2500 տնից բաղկացած հունական Կրոմ գավառակը։ Սպառնալիքի առկ նրանց ստիպում են մահմեդական դառնալ։ Սյուրմենեի գավառակի հայերին պատահած դեպքերից ահաբեկված, կրոմցիք, ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու նպատակով, առերես համաձայնվում են ընդունել մահմեդականությունը։ Եկեղեցիները մզկիթ են դարձնում, արտաքուստ կատարում մահմեդական կրոնի կարդր, իսկ հոգով՝ դեռևսփոր աղոթարաններում, տներում շաբաթական հարազատ կրոնական արարողություններն ու ծիսակատարությունները և հատուտ մնում իրենց հավատին։ Մոտ 100 տարի անց՝ XIX դ. սկզրներին, ստեղծված քաղաքական նպաստավոր պայմանների շնորհիվ, նրանց հաջողվում է ամրողջությամբ վերականգնել իրենց աղգային ու կրոնական ինքնուրույնությունը։

Թոնյա։ Կրոմի հետ միաժամանակ, ենիչերիների ու մոլլաների սպառնալիքի տակ, իսլամի կրոնն են ընդունում նաև Պլատանայի հարավային լեռնաշխարհում ապրող շուրջ 1000 տուն՝ Թոնյա գյուղախմբի հուները։ Սակայն սրանք չեն կարողանում հետևել Կրոմի օրինակին։ Այդ ժամանակից մնացել էին մահմեդական, թեպետ մինչև մեր օրերը (1915 թ.) պահպանել էին մայրենի լեզուն ու աղգային բարքերը։

Օֆզիֆ։ Ինչպես վերև ասվեց, Օֆ գավառակի հուները առաջիններից եղան մահմեդական կրոնն ընդունողների մեջ ու այդպես էլ մնացին մինչև վերջ։ Նրանք շրջապատված լինելով թուրք ու լաղ աղգաբնակչությամբ, հիմնականում քրքախոս ու շատերը մոլեռանդ մահմեդականներ էին դարձել։

5. ՅՈՄՈՒՐԱՅԻ ՎԻՃԱԿ

Գտնվում է Տրապիզոն քաղաքի հարավ-արևելքում, Տեղերմեն-աերե (Ջրադացների գետ) ու Յոմսլոլի գետերի միջև ընկած լեռնաշխարհում։ Հյուսիսային սահմանները ոդողում է Սև ծովը, արեելքից սահմանակից է Սյուրմենե, իսկ հարավ-արեմուտքից՝ Ճեղղլուգի վիճակներին։ Հարավից Սինջանի ու Այորի լեռներով անջատված է Կյումուշխանե դավառի Սանդա հունական գյուղախմրից, հյուսիս-արեմուտքում Տեղերմեն-աերե գետն է։ Վիճակն ունի իր ներքին երկու գետերը՝ Կալաֆկան, որը ծով է թափվում գյուղախմրի վարչական կենտրոն Տրոնայի մոտ, ու Շանա գետը, որը ծով է հասնում ուսաջինից կես ժամ արեմուտք, կովաքա ընկնող վայրում։ Շանա գետն ունի երկու վտակ՝ Կյուշանա և Սամարուքսա, որոնք իրար միանում են ծովափից մոտ 3 կմ ներքև։ Սամարուքսա վտակն իր հերթին ունի երկու ճյուղ՝ Ճոշարա ու Մեծ Սամարուքսա։ Կալաֆկա գետն սկիզր է առնում ծովափից շուրջ 35—40 կմ հեռու գտնվող Սինջանի և Սյորի լեռներից, Կյուջանան՝ Ուղտաղի (ծովից 30 կմ հարավ), Ճոշարան՝ Ջաղրլի, Մեծ Սամարաքսան՝ Ճիկանոյի լեռներից։ Յոմուրայի անտառածածկ գլխավոր լեռներն են (հարավից հյուսիս). Կալաֆկա գետի ընթացքում՝ Սիֆքերը, Կալաֆկան, Շանա գետի հովտում՝ Ուղ-Տադին, Արդուան, Ճոշարան։

Յոմուրայի արևելյան մասում գտնվող հայկական գյուղերը տանող ճանապարհը Տրապիզոն քաղաքից մինչև Տրոնա-Ղովաքա անցնում է Տրապիզոն—Բաթում խճուղով, որին համշենցիք անվանում էին «Բաթումի ճամփա»։ Ապա այս արահետը թեքվում է դեպի հարավ՝ Տրոնայից Սպիոն—Սիֆքեր, Ղովաքայից Սինկիլա—Կյուշանա—Սարալլար—Սֆյանձ, իսկ արևմտյան գյուղերի ճանապարհն անջատվում է Տեղերմեն-աերե

գետի արևելքից գեպի հարավ, անցնելով Զեֆանող—Սկաֆիա—Ճոշարա երթուղով։

Վարչական բաժանմամբ Յոմուրայի վիճակին էին ենթարկվում նաև Տեղերմեն-աերե գետի արևմտյան ստրալանջերում գտնվող Զիղակսա, Նոխածանա և Վերանա գյուղերը, սակայն աշխարհագրական դիրքով ու ազգային ներքին կյանքով այդ գյուղերը Տրապիզոնի մերձքաղաքային հայկական գյուղերի անբաժան մասն էին, ուստի նպատակահարմար է գրանց մասին խոսել համապատասխան հատվածում։

Կովաթայի ծովափնյա մասը 6—8 կմ երկարությամբ և 2—3 կմ լայնությամբ ճահճուտներ են, ճահճատենդի (մալարիտ) բույն, տեղի բնակիչների պատուհասը։ Յոմուրայի միջին, հատկապես լեռնաշղա մասի կլիման խիստ առողջարար է, ջրերը վճիտ ու սառն են։



3. Սարգիս Հայկունի (Ղազարյան, 1838—1908 թթ.)

Յոմուրայի լեռնային գյուղերը XVIII գ. ըստ երևույթին եղել են այն առաջին հանգրվանները, որտեղ հաստատվեցին Սև-գետի (Սյուրմենեի) գավառակի սարսափներից փախած հայերը՝ բավական ստվար մի ղանգված, որի հիմնական մասը տասնյակ տարիներ թուրք կալվածատերերի մարբան* էր։ XIX գ. ընթացքում յոմուրացիների մեծամասնությանը հաջողվում է հողամասեր գնել, սեփական աներ կառուցել. հաստատուն տնտեսություն հիմնել, որը խթանեց մշակութային կյանքի աշխուժացմանը։ 1900-ական թվականներին բացառություն էին փայտաշեն տներում ապրող ընտանիքները։ Նոր կառուցված քարաշեն աները հների համեմատությամբ խիստ բարեփոխված, լուսավոր ու բարեշեն էին։ Աղճուկ փայտաշեն գպրոցները փոխարինվել էին նորաձև քարակերտներով։ Բոլոր եկեղեցիները նույնպես քարակերտ էին։

Այն հանգամանքը, որ համարյա բոլոր արնտեսություննները քիչ թե շատ սեփական հողամասերով ապահովվել էին, հնարավորություն էր ընտեղծել կրաղվելու և զարգացնելու գյուղատնտեսության այնպիսի ճյուղեր, որոնք տեղական պայմաններում ամենանպաստավոր ու շահավետն էին։ Յոմուրայում այգպիսիք կաղնու այգիներն էին։ Յոմուրայի, հատկապես Շանայի կաղինը ինչպես ներքին, նույնպես և արտաքին շուկայում մեծ հռչակ էր վայելում։ Մ. Ղ. Բժշկյանը, որը 1810-ական թվականներին եկել էր այդ վայրերում, հիշատակում է Շանայի անվանի կաղինը։ Բոլոր տնտեսությունները, բացի բարձր լեռնային լանջերից (ուր կաղնու մշակումը նպատակահարմար չէր), իրենց կարիքները ապահովելու սահմանում միայն, նվաղագույն հողամաս թողնելով գաշտամշակությանն ու բանջարարուծությանը, մնացյալը հատկացնում էին կաղնու այգիներին։ Շրջանի գլխավոր հագուստեղը եգիպտացորենն էր։ Եգիպտացորենի նույն հողամասում միաժամանակ մշակում էին ընտանիքին անհրաժեշտ բանջարանոցային այլ կուլտուրաներ։ Որպես երկրորդական, սակայն չափազանց էական ու համատարած ղրագմունքներ էին կաթնատնտեսությունը, հավսւրուծությունը, ինչպես նաև մեղվաբուծությունը։ Խոշոր եղջերավոր անասուններից միայն կով էին պահում։ Մեծաքանակ (50—150) ոչխար պահողները փոքրաթիվ էին, սակայն հաղվագեպ էին այն ընտանիքները, որոնք մսեղենի ու բրդի համար 3—10 ոչխար չունենային։

Յոմուրայի 34 գյուղում, եղեռնի նախօրյակին, հայերը հաշվվում էին 714 տուն, 5000 շունչ։ Շրջանի ղուտ հայարնակ ու հայաշատ գյուղերը կենտրոնացած էին Շանա ու Կալաֆկա գետերի հովիտներում։ Դրանք էին՝ Կյուշանա, Կալաֆկա-հայկական, Մենկիլա, Աւգիոն, Փոքր-Սամարուքսա (Սարայլար, Աֆյանձ), Ճոշարա, Սկաֆիա, Կրոմիլա, Զեֆտնող բնակավայրերը։

Թեև Յոմուրայի առանձին գյուղերում անշուք վարժատներ (գպրոցներ) գոյություն են ունեցել գեռևս 1860-ական թթ. առաջ, սակայն լուսա-

* Մարաքա կամ ֆյոշեքե—հողազուրկ, վարձակալ գյուղացի, որը զուրկ էր սեփական քարաշեն տուն և, պոհասարակ, տնտեսություն ունենալու իրավունքից և իր ու ընտանիքի ապրուստը հոգում էր կալվածատիրոջ հողամասում չնչին վարձատրությամբ աշխատելով (Մանոթ. խմբագրի)։

վորութ յան դործը ակնհայտ վերելք է ստանում ևեր պատվարժան հայրենակից, Հետագայում վաստակավոր բանասեր, երիտասարդ Ս. Հայկունու (Վաղարյան)՝ ուսուցչական պաշտոնով Շանա (Սարալլար) դյուղ դալու օրից (1864 թ.)։ Ժամանակի ապտատիտ ու առաջադեմ դաղափարներով ոդևորված եռանդուն ուսուցչին ու նվիրված սպդային դործչին հաջողվում է համախմբել դյուղի առաջադեմ երիտասարդությանը, կարճ ժամանակարնթացում ամուր հիմքերի վրա դնել դրպրոցական դործը։ Պայքարելով ժամանակի խավարամտության դեմ, նա կարողանում է համոդել ծնողներին, որպեսդի աղջիկներին տղաների հետ միասին ուսումնարան ուղարկեն (դա այն ժամանակի համար առաջադիմական քայլ էր)։ Բացի դպրոցական հասակի աշակերտությունից, անդրադևա պատանիների ու երիտասարդների համար կազմակերպում է երեկոյան դասընթացներ։ Ս. Հայկունին նույն դյուղում պաշտոնավարեց 8 տարի (1864—1872 ԹԹ.), վայելելով ժողովրդի սերն ու հարդանքը։ Նա իր առաջավոր աշակերտների մի խումբ առաջնորդեց Տրապիդոնի աղդային վարժարանը, որոնք, ավարտելով այն, վերադարձան դյուղ և դարձան իրենց հայրենասեր ուսուցչի արժանի հաջորդները։ Նրանք ոչ միայն անվանի մանկավարժներ դարձան, այլ նաև աղատադրական դադափարներ տարածողներ ու կազմակերպիչներ։

Յոմուրալի վիճակի հայկական դյուղերն այսանդ կթվարկվեն արևելքից արևմուտք։

Էլմոնոցը, Վաճանաշենը և Մաղթելը Յոմուրալի արևելքում, Յամպոլի դեսի երկու ափերին ձդված, ամենահետավոր հայ դյուղերն էին, որոնք քեզևո վարչական տեսակետից ենթարկվում էին Յոմուրալի վիճակին, սակայն աղդային կյանքով Սյուրմենևի հայկական համայնքի անբաժան մասն էին։

Ալտիսի դյուղախումբը դանվում է Սինջան լեռան արևելյան սոորոտում, Յամպոլի դեսի երկու ափերին։

Սինջանի բարձունքներից մի ժամ ցած, Յամպոլի դեսի արևմուտքում էր դանվում, նախկինում դուտ հայաբնակ, Սինջան դյուղը։ Բոնի մահմեդականացման տարիներին դյուղերից հետացող հայերի անունը դրավել էին թուրքերը։ Դեսի արևմտյան կողմում Սինջանին հաջորդում էին Սիմոնա (Սիմոնի), Կլիճլի դյուղերը։ Յամպոլի դեսի արևելյան ափին է դտնվում Իշխանլի (Իշխանաց) մեծ դյուղը։ Այս դյուղում 1900—1910 ԹԹ., ականատեսների վկայությամբ, դյուղի բնակիչները, շուրջ 200 տուն, ամրողջությամբ Ղուստֆօղլու օրով մահմեդականացած հայեր են եղել, մեծ մասամբ պահպանած աղդային բարքերն ու սովորությունները։ Այն տանը, որտեղ ընդհանրապես հյուր էին ընդունում, նույնիսկ ջահել կանայք հայ տղամարդկանց մոտ երեսները չէին ծածկում։ Տան հարսը լուռ ու մունջ ձեռքերին ջուր էր լցնում, ոտները լվանում։ Սեղանը սպասարկում էին կանայք։ Շատ դյուղեր պահպանել էին իրենց հին հայկական անունները («Խաչին օղը», «Մաղլուտա», «Քիմփուտա», «Ձաշուտա» և այլն)։ Դյուղում սնացել էին ավերակ ուխտավայրերը, ուր հատակավոր սաբդիկ գնում էին ուխտի։ Շատ դերդաստաններ կոչվում էին իրենց հայկական ավանդական աղդանուններով՝ Քիրքորցի, Սվետցի, Մարգարցի և այլն։

Աղրիաը Յամպոլի դեպարնթացի արեմտյան կողմում դանվող ամենահետավոր հայարնակ դյուղն էր, որի բնակիչները նույնպես բոնի ուժով մահմեդական էին դարձել։ Ադրիաից մեկ ժամ վերև հունական Սանդա դյուղախմբի աները արդեն դեանափոր ու հարթ հողածածկ կտուրներ ունեին։

Սինջան դյուղից դեպի հյուսիս իրար հաջորդում էին Վերին-Միսոխոր և Աբքլի դյուղերը։ Բոնի մահմեդականացման տարիներին բնակչությանն մոտավորապես կեսը փախել էր. նրանց բնակավայրերը դավթել էին թուրքերը։ Մնացողները լիովին թրքախոս էին դարձել։ Արքլին Աղրիաի շրջանի հյուսիսային կողմի վերջին հայարնակ դյուղն էր, որը դեպի ներքին՝ Սյուրմենևի բնակավայրերից բաժանված էր լայնածավալ անասունների (շուրջ երկու ժամվա ճանապարհ)։ Դրան հակառակ, հիշյալ դյուղերը սահմանակից են Յոմուրալի վիճակի հարավային՝ Ֆիրինծուա, Կալաֆկա, Պաճուլախ, Ափոն և այլ դյուղերին ու սերտ կապված էին նրանց հետ։ Այդ դյուղերից Տրապիդոն քաղաքը դնալու ճանապարհն անցնում էր Կալաֆկա դեսի ընթացքով։

Կասարուխսա դյուղը դանվում է Կալաֆկա դեսի արևելյան ափի ծովափնյա մասում, Տրապիդոնից 2,5 ժամ հեռավորության վրա։ 1700-ական թվականներին դյուղի բնակչության մեծ մասը հայեր են եղել։ Սև-դեսի սարսափելի օրերին մի մասը բոնի իսլամացվում է, մի մասն էլ հեռանում է ուրիշ վայրեր։ 1895 թ. կոտորածների օրերին Կասարուքսայում սպրում էր 11 հայ ընտանիք. Գալուսայանների նահապետական ընտանիքը 25 հոդի, 5 տուն Վարդանցի, 2 տուն Օվակցի, որոնք հայանի թաղիքագործներ (ֆեշնեզի) էին, և 3 տուն Առաքելցի։

1895 թ. կոտորածին, շնորհիվ մեծահամրավ Վարդանցի Սարդսի («Ջուտնաչի Սարդիս») խոդախության, դյուղը բալանի չի ենթարկվում։ Բոլոր ընտանիքները դինված հեռանում են անտառ, դյուղի բարձունքներում դիրք բռնում ու լուր ուղարկում թուրք թաղապետին. «Մենք սպանված

հայե փոխարեն 10 թուրք կսպանվի, մեկ թալանած կամ վառած տան փոխարեն, հինգը կհատուցվի»։ Համաձայն տեղացիների հավասար վկայությունների, հայերին սլաշապան են կանգնել Սարգսի մաերիմ ու հեգինակավոր թուրք ընկերները և այդպիսով գյուղը փրկվել է կողոպուտից ու մարդկային զոհեր տալուց։ Հետագայում, շրջապատված լինելով թուրք բնակչությամբ և տեղում մնալը անխոհեմություն համարելով, շատերը թողնում հեռանում են՝ որը Ռուսաստան, որը մոտակա հայկական գյուղերը։

Ֆիրինծուտ հայկական գյուղը գտնվում է Կալաֆկա գետի արեելյան թեք լանջերին, Տրոնայի ծովափից 3 ժամ հեռավորության վրա։ Սրահատանապարհն անցնում էր Կալաֆկա գետի արևմրալյան կողմից՝ Կալաֆկա, Միսոխոր, Խոմա թուրքական գյուղերի միջից։ Ֆիրինծուաը զուտ հայկական գյուղ էր, 27 տուն բնակչությամբ, որոնցից 3-ը՝ Խաղբեի, 3-ը՝ Քյոսեցի, 6-ը՝ Օվակիմցի, 6-ը՝ Քոչիկցի, 5-ը՝ Թոոլաքցի, 3-ը՝ Օքսուզցի ու 1-ը՝ Չեփնցի աղգատոհմերից էին։ Բոլորն ունեին սեփական հողամաս։ Բնակիչների գլխավոր զրաղմունքը կաղինի մշակումն էր, որի բերքը համարյա ամրողջովին վաճառում էին։ Գյուղատնտեսական մյուս ճյուղերը՝ գաշտամշակություն, բանջարարուծություն, հավարուծություն, մեղվարուծություն, թեև անրաժան ու կարեոր մաս էին կազմում ամրողջ անտեսության, սակայն դրանցից ստացած բերքն ու բարիքը հիմնականում ծախսվում էր սեփական կարիքների համար։

Հողի սլակասությունը, չխոսելով ֆիզիկական անապահովության մասին, շատերին սաիպում էր պանդխտության գիմել, իսկ ոմանք էլ անասուններում կոյծելի (փայտածուխ) էին պատրաստում ու շուրջ 6—7 ժամվա ճանապարհ ածուխի չվալները շալակած, առնում էին քաղաք (Տրապիզոն) ու չնչին արժեքով ծախում, առն անհետաձգելի կարիքները հոգում։

Բացի տնային ու գաշտային սլխատանքից, բոլոր կանայք անխտիր զրաղվում էին ջուլհակությամբ։ Իրենց ձեռքով մանած թելերով (կանեփ, բուրդ) ու գործած լաթերով նրանք հոգում էին ընտանիքի անհրաժեշտ հագուստեղենը։

Ֆիրինծուացիք օգավում էին հարեան՝ Ապիոն գյուղի դպրոցից ու եկեղեցուց։

1895 թ. թալան-կոտորածի օրերին, շնորհիվ Ուզ գյուղի հեղինակավոր թուրք կալվածատեր Մուրադխան օղլի Օսման բեկի մեծահոգության, ֆիրինծուացիք զոհեր չունեցան ու մեծ կողոպուտի չենթարկվեցին։ Սինջան գյուղի հրոսակներին հաջողվեց թալանել ու հրկիզել միայն մեկ առուն։ Այնուամենայնիվ, արդեն հաջորդ առիներին այդ գյուղից էլ սկսվում է զանգվածային գաղթը գեպի Ռուսաստան՝ Սուխում, Սոչի և այլուր։

Բաճուլաղ։ Ֆիրինծուաին սահմանակից այս գյուղում եղեռնի նախօրյակին բնակվում էր 30 առն թուրք ու միայն երկու առն հայ, որոնք Նողաղուրկ մարաբաները էին։ Մինչև 1895 թ. այնտեղ ապրում էր շուրջ 15 առն հայ։ Թալան-կոտորածից հետո բոլորն էլ փախչում են Ռուսաստան և այլուր։

Սիֆթեր։ Կալաֆկա գետի արեմյան կողմում գտնվող ամենահետավոր հայկական գյուղն էր, Տրապիզոնից՝ 8, ծովափից (Տրոնայից)՝ 5,5 ժամ հետավորության վրա։ Տրապիզոնից Սիֆթեր գնալու ճամփան մինչև Տրոնա անցնում էր Բաթոմի խճուղով, այնտեղից մինչև Սիֆթեր արահետն անցնում էր Կալաֆկա—Միսոխոր—Սամերա—Ապիոն—Ղողարակ գյուղերի միջով։ Սիֆթեր գյուղի բնակչության մեծամասնությունը (150 տուն) թուրքեր էին, հայերն ապրում էին երկու թաղում (մահալա)՝ Սիմավոնցոց և Պոյուկցոց, ընդամենը 26 տուն։ Հայերը թեև մեծ մասամբ սակավահող, սակայն սեփական անտեսության տեր էին, քարաշեն աներով։ Հայկական երկու թաղերն էլ ապահովված էին սառն ու ղուլալ աղբյուրներով։ Բնակչության հիմնական զբաղմունքը նույնն էր, ինչ վերոհիշյալ Ֆիրինծուտ գյուղում։

Սիֆթերցիք սեփական եկեղեցի չունեին, հաճախում էին Ապիոն գյուղի եկեղեցին։ Քարաշեն, քառամյա գպրոցը, հիմնված 1880-ական թվականներին, գտնվում էր Սիմավոնցոց թաղում։ Պոյուքցոց թաղից գպրոց գնալու ճանապարհը թուրքական թաղի միջով անցնելու պատճառով, աղջիկ երեխաները գպրոց չէին հաճախում։

1895 թ. թալան-կոտորածին սիֆթերցիներին, ինչպես նաև մոտակա ուրիշ հայկական գյուղերին, պաշապան է կանգնում վերոհիշյալ Մուրադխան-օղլի Օսման բեկը։ Մինչև կոտորածը գագաթեցնելու մասին պաշտոնական հրահանգ սատանալը, իր ապարանքում նա պատսպարում էր հարևան շատ հայերի։

Չեփնցոց-գեղ։ Սիֆթերից գեպի ծովափ, Ղոպարակ թուրքական գյուղին հաջորդում էր հայաբնակ այս ղյուղը, շուրջ 200 առն բնակչությամբ, մեծամասնությունը՝ 17 տունը Չեփնցոց աղգատոհմից։ Բացի նրանցից, այստեղ ապրում էին Գարագյոչցիք, Պոյուքցիք և Մալխասցիք։ Չեփնցոց-գեղն անցյալում Սպիոն գյուղի մի թաղն է եղել։ Տարիների ընթացքում այս թաղի տներն ավելացել ու նոր գյուղի է վերածվել։

Այս գյուղի հայերն էլ, թեև սակավահող, սակայն սեփական հողամասեր ունեին, մեծամասնությունը քարակերտ աներում էր ապրում ու

հիմնավոր տնաեսության տեր էր։ Հողամասերը հիմնականում դարավանդային էին։

1895 թ. ծիկանոցի թուրք հորդաներին հաջողվում է թալանել ու վառել այս դյուղի որոշ տներ միայն։ Շնորհիվ հիշյալ Օսման բեկի, գյուղը ընդհանուր թալանի չի ենթարկվում ու դոհևր չեն լինում 1915 թ. եղեռնին բռնադաղթի ենթարկվածներից 6 հոգի (3 կին, 3 տղա) փրկվում են Տերսիսի բրդերի շնորհիվ։

Ապիոն (Աբյան) գուա հայկական դյուղը դանվում է Կալաֆկա դետի միջին հոսանքի արեմուտքում, Պոնտական լեռնաշղթայի գնալի Սև ծովը ձգված մի բազուկի՝ Ուգտաղի լեռան, ձորերով կարուսած, հարթավայրերից բոլորովին դուրկ, թնք լանջերին։ Դտնվում է Տրապիզոնից 7, իսկ ծովափից 3 ժամ հեռավորության վրա։ Կարճ ճանապարհը նույնն է, ինչ Սիֆթեր դյուղ դնալիս։ Ապիոնի հանդիպակաց կողմում վեր է խոյացած Արնջանի ապառաժը։ Ակտնատեսներից մեկի արտահայտությամբ, ապիոնցիների տները հնացած ու անշուք փեթակների նման, իրարից 500—1000 մետր հեռու, տարածված էին այդ անհարթ ու բնակության համար անհարմար լեռնալանջերում։ Ջնչին բացառությամբ այդպես էին անվադրված նաե Ապիոնի շրջակա՝ Ստմերա, Ֆիրինծուտ, Դևփնցոց դյուղերի տները։ Ապիոնում ապրում էին խաչատուրցիք՝ 6 տուն, Գահրիմոնցիք՝ 5, Մալխասցիք՝ 7, Ոռոլաքցիք՝ 6, Պոլիսցիք՝ 3, Զրաքցիք՝ 3 և մեկական տուն Օվակցի ու Տերոևրցի աղգատոհմերից, ընդամենը՝ 31 տուն, 250 շունչ բնակչությամբ։

Ապիոնցիք, ինչպես նաե Կալաֆկա դետի հովտում հիմնված հիշյալ դյուղերի հայ բնակիչները, տարուդջությամբ Հոմշենից ու Սև-գետից փախած համշենահայեր էին՝ իրենց մայրենի բարբառով ու նահապետական-կենցաղային սովորույթներով։ Այս դյուղախումբը եղել է առաջին ու ամենամոտավոր հանդրվաններից մեկը Սև-ծնտից ճաղոպրած հայերի համար։

1900-ական թվականներին Ապիոնում մարտիրա հայեր չկային, բոլորն էլ ունեին սեփական հողամասեր ու մեծ մասամբ քարակերտ տներ։ Բնական ահի հետեանքով, այս դյուղի մեծամասնությունը նույնպես սակավահող էր դարձել, որի պատճառով անկախ սպառնացող ֆիղիկական վտանգից, շատ աղամարդիկ, ընտանիքները թողնելով հայրենի դյուղում, ստիպված էին պանդխտության դիմել։ 1860-ական թվերին, Ռուսաստան դաղթած առաջին համշենահայերի թվում եղել է ապիոնցի մի քանի ընտտնիք, որոնք ծովափ են դուրս եկել Նովոռոսիյսկի ու Տուապսեի միջև դտնվող Թինկինկա (Շափսուղա) կոչվող վայրում։

Ապիոնցիների գլխավոր զբաղումնքն էլ կաղնու այգիներն էին։ Կաղնուտներում ու տնամերձ հողերում անպակաս էին պտղատու ծառերը՝ տանձ, խնձոր, սալոր և յուրաքանչյուր ատն շուրջն անպայման՝ ծվաղի մշտադալար ծառերը։

Այստեղ էլ գլխավոր հացահատիկը լազուան էր։ Սննդամթերքների թվում անպակաս էր լոբկյան (լորի), սիվ բռնջարը (տերևավոր սև բանջար), լոնքակն ու փոխինդը։ Ապիոնցի դեղչկուհիները հմուտ ջուլհակներ էին։

Ապիոնը շրջակա՝ Սամերա, Ֆիրինծուտ, Զեփնցոց-գեղ հայկական դյուղերի մշակութային կենտրոնն էր։ Այստեղ էին գտնվում այդ դյուղերի դպրոցն ու եկեղեցին։ Դյուղի ս. Լուսավորիչ Եկեղեցին, հիմնված 1850 թ. Տրապիզոնի մոտակայքում, եզակի էր իր կամարով, որի մեջ բռնանքսիվայր փայլեր (փարչ, կճուճ) էին թաղված՝ արձադանքը ուժեղացնելու համար։ Ըստ ավանդության, այդ քարակերտ Եկեղեցին կառուցվել էր հիշյալ դյուղերի համատեղ ուժերով։ Եկեղեցու ներսում կտնանց համար կառուցվել էր ընդարձակ բարձր պատշգամբ-դահլիճ։

Ապիոնի բարձունքում, բլրակի վրա, կար ավերակ մի ուխտավայր, ուր հավատացյալները գնում էին ուխտի, ծվեններ կապկապում ծառերի ճյուղերին, մատաղ կտրում (ղոհաբերություն կատարում)։

Բացի հայերենից, ուսումնարանում դասավանդում էին թուրքերեն ու ֆրանսերեն լեզուներ։

1895 թ. ջարդ-թալանի օրերին, ապիոնցիք ևս փորձանքից ու կողոպուտից փրկվեցին շնորհիվ նույն Մուրադխան-օղլի Օսման բեկի շրջտհայացության ու հեռատեսության[7]։

---

[7] Դժվար է հավատալ, որ Օսման բեկը այդպիսի կարուկ միջոցների դիմած լինի զուտ մարդասիրական զգացմունքներով առաջնորդվելով, քանի որ քան տարի հետո, հայ ժողովրդի աննախընթաց արհավիրքի օրերին, 1915-ին, նա դարձավ հայ ժողովրդի ամենադարրարոտ պահիններից մեկը։

Ինչ վերաբերում է 1895 թ. նրա ավեհանձն վարմունքին, ականատեսներն այն բացատրում են հետեյալ կերպ։ Այդ սարսափելի օրերին Շանալի Շատրդադե բնակերն իրենց առաջնորդ Մինքաղ բեկի գլխավորությամբ զինված ուժերով պաշտպան են կանդնում շրջակա հայ դյուղերին։ Մինքաղ բեկը միաժամանակ սուրհանդակ է ուղարկում Ուղի՝ իր բարեկամ Օսման բեկի մոտ, որպեսզի նա պաշտպան կանդնի ու թույլ չտա իր հովանու տակ գտնվող հայ բնակչությանն ու դյուղերին որևէ ազետի ենթարկվել, ապատնալով, որ հակառակ տարադայում կգտանան ոխերիմ թշնամիներ ու հայերի փոխարեն ինքը վրեժառու կլինի։ Հայերին պաշտպանելու երկրորդ շարժառիթը, համաձայն վերապրած տեղացիների վկայություններին, եղել է Ապիոնի երիտասարդության կորուկ ահաևքն ու խիզախությունը։ Դյուղի քաջարի երիտասարդների մի խումբ (Սահեփան Կոչիկյան, Օվես Զեփնյան, Բորոս-Հայկ և Թոսլաք-Արշակ և այլոք) նամակ են գրում Օսման բեկին, խնդրելով պաշտպան կանդնել հարևան հայերին, որի համար ցմա՝ երախտապարտ կլինեն, իսկ եթե այդ քայլին

1915 թ. եղեռնին բռնադաղթի ենթարկված-ներից 19 հոգի (կանայք ու երեխաներ) փրկվել են Դերսիմի քրդական գյուղերում։

Սամերան Ապիոն գյուղի շարունակությունն էր, որի կենտրոնից մինչև Ապիոնի եկեղեցին մի ժամվա ճանապարհ էր։ Գյուղի դիրքը, բնակչության գրաղմունքը ոչնչով չէին տարբերվում հարևան Ապիոն, Ֆիրինծուտ գյուղերից։ Այս ղուտ հայաբնակ գյուղն ուներ 32 տուն, 224 անձ բնակչությամբ։ Աղգային ներքին կյանքով (դպրոց, եկեղեցի և այլն) Սամերան Ապիոն գյուղի անրաժան մասն էր։ 1895 թ. վերոհիշյալ հանդամանքների շնորհիվ, այս գյուղն էլ աղաավում է կողոպուտից ու ղոհար աալուց։ 1915 թ. եղեռնից մազապուրծ 15 հոգուց 7-ը փրկվեցին շնորհիվ Դերսիմի քրդերի։

Թուրքերը թենեսուր (կեղծ հավատադարձ) էին անվանում այն քրիստոնյաներին, որոնք իսլամը պաշտոնապես, առերես ընդունելուց հետո, դարձյալ հավատարիմ էին մնում իրենց նախկին հավատին։ Այդպիսիք համարվում էին Մուհամմեդի գավաճաններ և օրենքով դատապարտվում էին մահապատժի։

Համշենահայության և, առհասարակ, պոնտահայության արյունոտ դեպքերի ժամանակ, մահվան սպառնալիքի առկ առերես իսլամի կրոնն ընդունած հայերի մի մասը, որոշելով աղատ ղավանել իրենց հայրենի հավատը, թողնում էին իրենց գյուղերն ու հաստատվում այլ բնակավայրերում՝ խուսափելով հետապնդումից ու դաժան ղատաստանից։

Թենեսուր հայեր էին Ապիոնի, Սամերայի և այլ գյուղերի շատ հայ դերդաստաններ։

Սիսոխոր[8]։ Գտնվում է Սամերայի հյուսիսային կողմում, նույն՝ Ուղաաղի սարի արեելյան մասում, Տրապիզոնից՝ 5, Տրոնայից՝ 2,5 ժամ հեռավորության վրա։ Միսոխորում կանդուն էր մնացել Պոնտական կայսրության օրերից մնացած, կիրուքար կառուցվածքով, ամրակուռ հունական մի եկեղեցի։ Համշենից ու Սև-դետից այս վայրերը դաղթած հայերը այդ շենքը դարձնում են իրենց աղոթավայրը։ Երկար աարիներ Միսոխորի եկեղեցին միակն էր շրջակա հայ գյուղերում (Կալաֆկա, Սամերա, Ապիոն, Սիֆթեր և այլն)։ Ապիոնում եկեղեցի կառուցելուց հետո, Միսոխորի եկեղեցին մնում է Կալաֆկա և Միսոխոր գյուղերի հայ համայնքին։ Պաշտոնական արձանագրություններում այդ կառույցը հիշվում է որպես Կալաֆկա գյուղի երեք եկեղեցիներից մեկը՝ ս. Գևորդ անունով, հիմնված 1820 թ.։

Միսոխորը Համշենից դաղթած հայությյան առաջին հանգրվաններից մեկն է։ Սև-գետի արյունալի օրերին Ղուռուֆ-օղլու ղոհը դարձավ նաև այստեղ հաստատված հայերի ղգալի մասը։ 1895 թ. կոտորածից հետո աղգային ոգին պահպանածների մեծամասնությունը հեռացավ ուրիշ հայաշատ վայրեր կամ Ռուսաստան։

Տրոնան գտնվում է Կալաֆկա գետի ծովափնյա մասի արևմտյան կողմում, զեպի Բաթում տանող խճուղու վրա, Տրապիզոնից 2,5 ժամ արեվելք։ Տրոնան Յոմուրայի վիճակի վարչական կենարոնն էր՝ միդյուրանիսա ավանը։ Այստեղ կային փոքր շուկա, սրճարան, պանդոկ, գաբրնոց, պայտաու, հացի փուռ, խանութներ, կաղինի ընդունման կետ և այլն։ Տրոնայում ապրում էին թուրքեր՝ 40, հույներ՝ 20, հայեր՝ 13 տուն, որոնցից 5 տունը լուսիկցիք, 2-ը՝ Չոլաքցիք, 3-ը՝ էքշցիք, 2-ը՝ Իսրայելցիք և 1-ը՝ Յոմուրցի, շուրջ 90 անձ։ Գյուղն ուներ քառամյա հայկական գպրոց, հիմնված 1880-ական թվականներին։

Եղեռնից փրկված վեց հոգուց երեք պատանու փրկել-պահել էին թուրքերը, իսկ երեքը ազատվել էին ինքնապաշտպանության դիմած խումբերում։

Տրոնայով վերջանում է Կալաֆկա դեպի հովտում գտնվող հայկական գյուղերի ցանկը։

Կոխալի։ Կալաֆկա լեռան արեմտյան լանջերին՝ Տրոնային հաջորդում է Կոխալի գյուղը, Տրապիզոնից 3 ժամվա ճանապարհ, որտեղ ապրում էր 30 տուն թուրք և 10 տուն հայ բնակչություն՝ լուսիկցի, Ալաքցի, Սաղրցի և այլ աղգաառհմերից։ Կոխալիի հայերը աղգային ներքին կյանքով ամրողջովին կապված էին Քյան գյուղի հետ, որոնց հետ համատեղ ունեին դպրոց ու եկեղեցի։

Քյան։ Քյան գյուղը դրեթե շարունակությունն էր Կոխալի գյուղի և գտնվում էր Կալաֆկա լեռան հյուսիսարևմտյան լանջերին։ Տները դասավորված էին լեռան բարձունքներից մինչև Շանա գետը՝ Տրապիզոնից 3,5 ժամ հեռավորության վրա։ Գյուղի 25 տուն հայերից 22-ը Երեմցի, 2-ը Տեմերլի և մեկը Սաղրցի աղգաառհմերից էին։

Գյուղի քարաշեն դպրոցը կառուցվել է 1888 թ.։ Դպրոցը համայնական ուժերով կառուցել էին Կոխալի և Քյան գյուղերի բնակիչները։

1870-ական թվականներին Քյան, Կոխալի և

չդիմի, իրենք չեն կարող երաշխավորել նրա անձի անձեռնմխելիությունը։ Այսպես թե այնպես, շնորհիվ Օսման բեկի ջանքերի, 1895-ին Ապիոնի գյուղախմբի հայերը փրկվեցին զանգվածային թալանից, հրկիզում-ավերածությունից ու ղոհար տալուց։

[8] Այս գյուղը չպետք է շփոթել Յամպոլի դեպի միչին հոսանքում գտնվող նույնանուն բնակավայրի հետ։

[9] «Էջմիածին» ամսագիր, 1966, № 6։

Կալաֆկա գյուղերի հայ բնակչությունը միացյալ ուժերով Քիրելյուղ (Կևոասնոց) կոչվող լեռան պոպոթին, հինավուրց մատուռի տեղում, կառուցում է քարակերտ փառավոր մի եկեղեցի։ Համաձայն պաշտոնական տվյալների, ս. Փիլիպոս կոչված այս եկեղեցին հիմնվել է 1656-ին, րստ երեվույթին, մատուռի հինավուրց անվամբ։ Գյուղի անմատուռածածկ մի բլրակի վրա կար ավերակ մի սխտուավայր, ուր հավատացյալները ուխտի էին գնում, մոմ վառում, մատաղ անում, ծառերի ճյուղերին հագուստի կտորներ, տրեխ (չառուվա) կախում։

Քյան գյուղի Նալբանդլի (Կարապետ) վարժապետ Սրմանյանը 1900-ական թվականներին ամբողջ շրջանում միակ ուսուցիչն էր, որը հատկապես Հանդիսավոր օրերին հագնում էր համշենցիների ազգային տարազը՝ երկար, դեմքին քսվող վսիկևյով անդրավարտիք (շալվար), վրայից ըսպիտակ, երկար դոտի, սրունքներին՝ քուզլյուխա, վրայից՝ իշլուղ և կասկա, ղլխին՝ սպիտակ կուկուլա (բաշլոտ)։

Կալաֆկա (հայկական)։ Այս գյուղը գտնվում է Քյանից հարավ, Կալաֆկա լեռան հարավարևմտյան լանջերին։

Տրապիզոնից Կալաֆկա 5 ժամվա ճանապարհ է։ Գյուղն ունի 63 տուն հայերից 18-ը Ղուկասյի, 11-ը՝ Ձերմակցի, 3-ը՝ Պողոսցի, 16-ը՝ Երեմյի, 2-ը՝ Նուկուրցի, 4-ը՝ Արուքունցի, 4-ը՝ Քշցի և 4-ը՝ Դևմիրճցի աղղատոհմերից էին։ Հնաոքրքրական էին նաև սրանց աղղատոհմերին կցված փութ-անուններ։ Այսպես, Ձերմակյան Կարապետին անվանում էին «Շոթափ» կամ «Չոլթափ»՝ ցող թափող, չափաղանց աշխատասեր ու ժլատ, առավոտ վաղ դեռ ցողը չթափված աշխատանքի շտապող, «Կանսուղցիք»՝ արյուն չսիրողներ, ոխերիմ թշնամիներին ասանց արյունահեղության հաշտեցնողներ և այլն։

Կալաֆկայում դոյություն ունեին հետեյալ թաղերը. Էքշցոց՝ գյուղի ամենահեռավոր ծայրամասը, Ղուկասցոց՝ գյուղի կենարոնական մասում (Տանձուտ)։

Ինչպես Կալաֆկայի, այնպես էլ վերոհիշյալ Կոխալի, Քյան, Տրոնա գյուղերի հայերի մեծամասնությունը XIX դ. վերջերին սեփական հողամասեր ունեին, որը նրանց իրավունք ու հնարավորություն էր տվել քարաշեն, հիմնավոր տներ կառուցելու և սեփական անտեսություն հիմնելու։ Բնակչության հիմնական ու եկամտաբեր ղբաղմունքը կաղնուտների մշակումն էր, որոնց եղերքին և իրարից զգալի հեռավորությամբ աճեցնում էին նաև պտղատու ծառեր (տանձ, խնձոր, սալոր և այլն)։ Տնամերձ հողերում ունեին թղենի, ծաղնի և խաղողի որթեր, որոնք ազատ բողնում էին ծառերն ի վեր։ Յուրաքանչյուր ընտանիք սեփական կարիքները բավարարելու հետ ղրաղվում էր նաև դաշտամշակությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ, կաթնատնտեսությամբ։ Հավաքածուն բեև առաջին հայացքից աննշան, սակայն չափաղանց էական և օգտակար ղրաղմունք էր։ Ամեն ընտանիքի 3—10 փեթակ ունենալը համարվում էր պարտադիր ու անհրաժեշտ։ Կանայք հմուտ ջուլհակներ և ձեռագործ անողներ էին։

Բացի երկրագործությունից, Կալաֆկայում ղրաղվում էին նաև կղմինդրագործությամբ։ Ղուկասյան եղբայրների կղմինդրի արհեստանոցի համբավը տարածվել էր գյուղի սահմաններից շատ հեռու։ Հայտնի էր նաև կալաֆկացիների պատրաստած կոյծելին (փայտածուխը), որը քաղաքում վաճառվում էր ամենաբարձր դներով։ Ղուկասցիք միաժամանակ հմուտ դարբին-դիմագործներ էին։ Նրանց հետնորդներն այժմ ապրում են Ականպայի շրջանի Հայկաձոր գյուղում։

Կալաֆկացիներն սկզբնապես օգտվում էին Միսխորի հինավուրց քարակերտ հունական եկեղեցուց։ 1880-ական թվականներին Քիրելյուղ սարի գագաթին համայնական ուժերով նոր եկեղեցի կառուցեցին[10]։ Հին դերեզմանոցի մոտ (Տանձուտ թաղում) կար նաև փոքր մատուռ, որն, ըստ բանավոր վկայության, հիմնել են սևդետցիները։

Կալաֆկայում ուսումնարան դոյություն է ունեցել 1850-ական թվականներից։ Մինչև 1891թ. դասավանդումը կատարվել է հին մեթոդներով՝ առաջնություն տրվելով կրոնական առարկաներին։ Դրությունը հիմնովին փոխվում է հայտնի հասարակական դործիչ ու փորձառու մանկավարժ Մկրտիչ Գարադաշյանի՝ 1894 թ. այս դյուղը ուսուցչի պաշտոնով գալու օրից։ Նրան հաջողվում է կարճ ժամանակամիջոցում շուրջը համախմբել գյուղի առաջադեմ երիտասարդներին։ Նա դասավանդում էր քաղաքի գպրոցի ծրագրի մանկավարժական վերջին պահանջների համաձայն։ Աղջիկները տղաներին հավասար սկսում են գպրոց հաճախել։ Հասակավորների համար բաց է անում

[10] Ըստ «Էջմիածին» ամսագրում (1966, № 6) հրապարակված վկայների, Կալաֆկա գյուղում 3 եկեղեցի է եղել։ Հավանական է դրանցից մեկը Միսխոռոի եկեղեցին է, քանի որ Միսխոռը գյուղը եկեղեցիների ցուցակում բոլորովին չի հաշվվել, իսկ երկուսն այն մատուռներն են, որոնցից մեկը՝ Քյան, երկրորդը Կալաֆկա գյուղում էր գտնվում։ Հիշյալ ամսագրում այդ եկեղեցիները անվանված են ս. Լուսավորիչ (Քյանի մատուռը, հիմնված 1825-ին), ս. Գևորգ՝ հիմնված 1820 թ. (հավանաբար, Միսխորի եկեղեցին) և ս. Փիլիպոս՝ հիմնված 1650-ին (Քյանի մատուռը). ս. Պողոսը հիմնված է 1825 թ. (Քիրելյուղի եկեղեցին)։

գրագիտության երեկոյան գասընթացներ, կազմակերպում գինավարժության ուսուցում։ Դժբախտաբար նրան չի հաջողվում մինչև վերջ նվիրվել իր սիրած գործին։ 1895 թ. կոտորածին նա ղոհվում է քաղաքում՝ զենքը ձեռքին չարղարարների դեմ պայքարելիս։ Նրան հաջորդաբար փոխարինում են վերոհիշյալ Կարապետ Շալվարլին՝ Քյան գյուղից, տրապիզոնցի էդվարդ Հրաչյանը, համագյուղացի Պողոս Պողոսյանը (վերջին երկուսը Տրապիզոնի Ազգային վարժարանի շրջանավարտներ), վանեցի երիտասարդ ուսուցիչ Սուրեն Պարթեյանը և տրապիզոնցի Վահե Ճգնավորյանը, որը ինքնապաշտպանական խմբերի հետ սար բարձրանալով սպանդից փրկվեց։



4. Բանասաց Վարդան Պետրոսի Ղուկասյան (Կալաֆկա գյուղից)։

1895 թ. կոտորածի օրերին, շնորհիվ Շանայի Շատրրղագե թուրք բեկերի ղինված ուժերով հայերի պաշտպան կանգնելուն, ինչպես Շանա, այնպես էլ Կալաֆկա գյուղերը ղանգվածային թալանի ու ավերածության չենթարկվեցին։ Կալաֆկացիք ընտանիքներով լեռները բարձրանալով, ղինված ուժերով հսկում էին գյուղը։ Կասարաքսա և Արսեն թրքական գյուղերի հրոսակները Ճավգար-Ալիի գլխավորությամբ մտնում են Կալաֆկայի Տանձուտ թաղը, 2—3 աուն հրկիզում ու սկսում են թալանը։ Գյուղում մնացած պահապանները կրակում են թալանչիների վրա, որոնք խուճապի մատնված հեռանում են։ Իմանալով կասարվածի մասին, Միքթաթ բեկն իր երիտասարդ որդուն՝ Շեֆքեթ բեկին ուղարկում է Ճավղար-Ալիի մոտ, ղգուշացնելով, որ՝ «Ով համարձակվի իր շրջանի հայ գյուղերին մոտենալ, ոգջ չի վերադառնա»։

1915 թ. կալաֆկացի ասար երիտասարդից բաղկացած մի խումբ Հովհաննես (Կրակ-Նանես) Ղուկասյանի գլխավորությամբ, չենթարկվելով բռնագագթի մասին Տրապիզոնից արված կլտրուկ պահանջին, զենքը ձեռքին բարձրանում է սար, փայլուն էջեր գրելով յոմուրացիների զոյամարտերում։ Նրանց հետ էր նաև գյուղի ուսուցիչ Վահե Ճգնավորյանը։ Այդ խմբին են միանում Սրրղանալիի սալանգից փախած երկու կին ու մեկ աղամարդ։ Բռնագաղթից վերագարձած վեց հոգին փրկվել էին քրղերի շնորհիվ։

Շանայի գյուղախումբ։ Յոմուրայի վիճակում ապրող հայության ինչպես աշխարհագրական, նույնպես և տգգային կյանքի կենարոնը Շանայի գյուղախումբն էր՝ Կյուշանա, Մինկիլա, Սարալլար ու նրանց սահմանակից Կալաֆկա, Ապիոն գյուղերը, որոնց մեջ, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի ու վուտ հայարնակ լինելուն, առանձնահատուկ տեղ էր գրավում Կյուշանա գյուղը։ Շանա, Մինկիլա և Կյուշանա գյուղերը գտնվում էին Շանա գետի ծովափնյա մասում՝ մինչև Կյուշանա գետի ակունքները, Ուղտաղի լեռան ծովահայաց թեի հարավարեելյան լանջերին։ Կյուշտնա ու Ճոշարա գետերի միջև, ծովափից շուրջ երկու ժամ հեռու փռված է խիա անտառածածկ Արգուլալի սարը, որը եղեռնի սարիներին հիշարժան վայր դարձավ։ Այս սարից սկիզբ առնող բազմաթիվ աղբյուրներն ու վտակները թափվում են վերոհիշյալ գետերը։

Տրապիզոնից Շանա ու Փոքր Սամարուքսա (Սարալլար, Աֆյանձ) գյուղերը ասնող ճանապարհը բաժանվում է Գովաթայի կամուրջի արեմտյան կողմից։

Շոնա (Շուևա)[11]։ Գովաթայից դեպի Շանա գյուղը ասնող ճամփան անցնում է համանուն գետի ընթացքով։ Կամուրջից շուրջ կես ժամ հեռու՝ Մաղարա-օղի (Քարալրի առջև) կոչվող վայ-

---

[11] Թեև Կյուշանա և Մինկիլա գյուղերը նախկինում եղել են Շանայի թաղերը, սակայն նրանք մեծացել և ինքնուրույն գյուղեր էին դարձել։ Այնուամենայնիվ, պաշտոնական գրությունների շատ անգամ հիշվում են միայն Շանա անունով։

Հարկ է նշել նաև, որ Խուխա քաղաքի մոտ ևս կա համշենահայ Շոնա գյուղ։ Հավանական է, որ ինչպես այս երկու գյուղերի, այնպես էլ Յոմուրայի վիճակի Կյուշտնա գյուղերի հնագույն նախնիները գաղթել են Համշեն գավառի Կոշանա գյուղից։

րում, դեսի ափին բարձրացած մի ժայռակտորի վրա, մինչև մեր օրերը (1915 թ.) ցցված մնացել էին երկաթյա սյուներ և օղակներ։ Ավանդարար պատմում են, որ ժամանակին ծովը հասած է եղել այդ վայրերն ու վերոհիշյալ երկաթե ցից-օղակներին ամրացնում էին նավերը։ Այստեղ իրար են միանում Շանա գետի երկու ճյուղերը՝ Կյուշանա և Մեծ Սամարութսա գետերը։ Մաղարա-օղիից սկսում է բարձրանալ Բեկ-ատումի (Բեկի քայլ) կոչվող, սրբատաշ քարերից կառուցված, շուրջ մեկ մետր լայնքով քարուղին[12], որը մոտ 2 կմ երկարություն ունի և հասնում է մինչև Սինկիլա գյուղի սահմանը։ Դեսերի միացման տեղից ըսկըսում են Շանա և, մասամբ, Սարայլար գյուղերի՝ Յոմուրայի վիճակի ամենահարմարավետ ու արդասավոր հողամասերը։ Շատերը բեկերի նախորդները այս գյուղերի լավ յուղն հողամասերը թողնելով իրենց սերունդներին, հեռավոր ու դժվար մշտկելի անտառածածկ հատվածները ծախել են իրենց նախկին հայ մարաբաներին։ Շատ սյում հայերը սակավաթիվ էին՝ ընդամենը 7 ընտանիք։ Շանայի երկու թաղում (մեծ ու փոքր), բացի հայկից, ապրում էին թուրքեր՝ 21 տուն, այդ թվում Շաաբրլազադե բեկերի առհմից 5 տուն, և 8 առն հույներ։

Այս գյուղի սակավաթիվ հայկական համայնքը սարայլարցիների հետ համատեղ ուներ փառավոր եկեղեցի ու օրինակելի դպրոց։

Սարայլար[13]։ Ըստ երևույթին, այս գյուղում են իրենց առաջին ապարանքները կառուցել շրշանի կալվածատեր տղաները, որտեղից և այն ըստացել է իր կոչումը[14]։

Տրապիզոնի մոտակա հայկական ամենահիշարժան գյուղերից մեկը Սարայլարն էր, որն աչքի էր ընկնում նաև իր մշակութային կյանքով։ Այս գյուղում է սկսել իր հասարակական-մանկավարժական գործունեությունը անվանի բանաստեղծ Ս. Հայկունին։ Իր արկածալի կյանքի մեծ մասը այս գյուղում է անցկացրել Ս. Հայկունու «Հուսեփցի Աբրիամ» դրքի իրական հերոսը՝ Խլաո Աբրիամը։ Ս. Հայկունին Սարայլարի դպրոցում դասավանդել է շուրջ 8 տարի՝ 1864—1872 թ.։

Սարայլարի (Փոքր Սամարութսա) ս. Թեոդորոս եկեղեցին հիմնվել է 1837-ին, որն սկզբում եղել է հիմնավորց հունական փոքր մատուռ։ 1870-ական թվականներին, նույն վայրում, սարայլարցիները հարևան՝ Սֆյտնձ, Սինկիլա գյուղերի բնակչության մասնակցությամբ կառուցում են փառավոր քարաշեն եկեղեցի։ Շենքի կառուցման գործում ակտիվ մասնակցություն է ունեցել նաև գյուղի ուսուցիչ Ս. Հայկունին։

Սարայլարցիների, ինչպես նաև շանացիների տնտեսության հիմքը կաղնուաներն էին, որոնք այստեղ առատ ու բարձրորակ բերք էին տալիս։ Կաղնուտների մեջ ու եզրերին նոսր շարքերով աճեցնում էին պտղատու ծառեր՝ տանձ, սալոր, խնձոր ու խաղող, տնամերձ հողերում՝ թուզ, ծվուզ։ Ջափաղանց հարուստ էին Սարայլարում և հարևան գյուղերում աճող քաղցրահամ Սինոպ ու Յոմուրա տեսակի խնձորները։

Բացառիկ երեույթ էր Հովսեփյան Սարդսի՝ աարիների համառ փորձով ստեղծագրած մաչմուրգի (շադանակ) տեսակը։ Անտառային վայրի շագանակից նա սաացել էր մշակովի տնային շադանակ, որի պտղի յուրաքանչյուր հատիկը անառառայինի համեմատությամբ 4—5 անդամ մեծ և համեղ էր լինում։ Հովսեփյաննների թաղում այդ ծառերի հատուկ պուրակներ էին աճեցրել։

Հացահատիկներից գլխավորը եգիպտացորենն էր, որի հետ համատեղ մշակում էին նաև անհրաժեշտ բանջարեղենը՝ բանջար, լոբի, դդում, բոդկ, բազուկ (ճակնդեղ) և այլն։

Անասնապահությամբ, հավաբուծությամբ ու մեղվարուծությամբ զբաղվում էին ընտանիքի սննդի կարիքը բավարարելու սահմանում։

Սարայլարցիներն զբաղվում էին նաև շերամապահությամբ. նրանք մշակում ու բամբակախառն թելից թանկարժեք կաավելեն էին գործում։

Սինկիլա գյուղը գտնվում է Արդուլա սարի հարավարևելյան լանջերին, Կյուշանա գետի միջին հոսանքի արևմտյան ափին Տրապիզոն քաղաքից երեք ժամ հեռավորության վրա։ Գյուղի կենսարոնական մասը, որտեղ կառուցվել էին ուսումնարանն ու եկեղեցին, հարմարավետ հողամասեր ուներ, մնացյալը, հատկապես հարավը՝ կեսպի Կյուշանա, իրար թեք ու խորխորատներով կտրված վայրեր էին։ Շանա գետից Սինկիլա ձգվում էր Բեկ-ատումի կոչվող ճանապարհը։ Համշենահայերն այս վայրերն են փոխել XVIII դ.

---

[12] Սարայլար գյուղի նախկին բնակիչ Վալդանյան Արութը այս ճանապարհի շինարարության մասին պատմում է, որ ճանապարհը շինվել է իր պապի օրոք՝ 1850-ական թվականներին։ Շինարարությունը նախաձեռնել էր ժամանակի ամենահեղինակավոր կալվածատեր Շաաբրլազադե Ահմեդ բեկը։ Նա կարողացել էր ջրշակա գյուղերի բոլոր բնակիչներին՝ բուրք, հույն, հայ, անխտիր մասնակցել ճանապարհի շինարարությանը և, օրինակ ծառայելով, առաջին քարերը (մի քայլ) իր ձեռքով է անդադրել, այստեղից էլ ճանապարհն սաացել է այդ անունը։

[13] Սարայլարն ու նրա հարավարևմտյան մասում գտնվող Աֆյանձ գյուղը միասին կոչվում էին Փոքր Սամարութսա։ Բնև Սարայլար գյուղը վարչական բաժանումով Փոքր Սամարութսայի մի գյուղն էր, սակայն, իրականում այդ գյուղն այնքան սերտ էր կապված Շանայի հետ, որ համարվում էր նրա անբաժան մասը։

[14] Թուրքերեն սարայ՝ ապարանք, դղյակ բառից։

սկզբներին՝ Սև-գետից։ Տասնյակ տարիներ բեկերի հողերի վրա մարտեր լինելուց հետո, դարձել էին սեփականատերեր։

Ինչպես ասվեց, անցյալում Ծինկիլան Շանա գյուղի մի թաղն էր։ Տարիների ընթացքում այդ տեղի բնակչությունն աճել ու դարձել էր առանձին՝ համարյա ղուա հայարնակ գյուղ։ Եղեռնի նախօրյակին այստեղ ապրում էր միայն երեք տուն թուրք, իսկ հայերը 43 տուն էին։

Ծինկիլացիների ղրաղմունքն ու երկրադործական գործիքները նույնն էին, ինչ որ հարևան սարալլարցիներինը։

Դաշտամշակության համար անասունները մաքրելիս, ծառերի, փշերի ու թփերի մեջ ծինկիլացիք հայտնաբերում են հինաշուրց, ժողովրդի ասելով, ճենեվիղներից (Ճենովա) մնացած կիսավեր, քարուկիր կառուցվածքով եկեղեցի։ Ըստ ավանդության, քանի որ հայերը մարարաներ էին, խնդրում են կալվածատիրոջը՝ Շաարրղադե Ահմեդ բեկին՝ իրավունք առ շենքը դարձնելու աղոթավայր ու շրջակայքի հողամասը՝ գերեզմանոց։ Լսանալով բեկի համաձայնությունը, շրջակայքում ապրող հայերը հիմնում են ս. Գևորդ եկեղեցին (մոտավորապես XVIII դ. կեսերին)։ 1870-ական թվականներին գյուղում հիմնվել է ուսումնարան։ 1909 թ. չարանենդ մարդկանց ձեռքով հրդեհվեց գպրոցի կիսափայտաշեն շենքը։ Ուսումնասեր գյուղացիք միահամուռ ուժերով հին շենքի փոխարեն կառուցեցին բարեկարդ ու լուսավոր մի դպրոց։ Մեկ տարի աշակերտները հաճախեցին հարեան Կյուշանա ու Սարալլար գյուղերի դպրոցները։ Սկսած 1905 թ. գյուղի դասատուները հաջորդարար եղել են Կակոսյան Տիգրանը, Օդապաշյան Պետրոսը (Վեցմասա), Ղուկասյան Պողոսը։ Օդապաշյանը Ծինկիլայում պաշտոնավարած տարիներին Սարալլարի դպրոցում երգի դասեր էր տալիս։ Տիրատուրյանն ու Օդապաշյանը միանալով դիմադրական ուժերին, բարձրացան լեռները ու, հերոսաբար մասնակցելով գոյամարտերին, եղեռնից փրկվեցին։ Այստեղի բոլոր ուսուցիչներն էլ ավարտել էին Տրապիզոնի Աղդային վարժարանը։

1895 թ., շնորհիվ կյուշանացիների և ծինկիլացիների միասնության, ինչպես նաև Շաարրպաղե բեկերի՝ բացահայտորեն հայերին պաշտպան կանգնելուն, Ծինկիլան նույնպես թալանի չենթարկվեց ու ղոհեր չտվեց։

1915 թ. Մեծ եղեռնին, ծինկիլացիք ամրողջությամբ կանգնեցին բռնագադթի չենթարկվելու կողմնակիցների առաջին շարքերում։ Նրանք ընտանիքներով քաշվեցին լեռները, հարեան գյուղերի հետ կազմելով դիմադրական կազմակերպված ճակատ։ Միայն Տրապիզոն քաղաքի խարված դեկավարների հորդորների հետևանքով, նրանք էլ համաձայնվեցին ենթարկվել պետականորեն խոր մտածված, քողարկված բռնագաղթ-կոտորածին։ Ծինկիլացիներից մի խումբ երիտասարդներ, չենթարկվելով ընդհանուր ցուցումներին, մնացին հայրենի լեռներում մինչև վերջ պայքարելով վայրագ ջարդարարների դեմ, դարձան դոյամարտերի խիղախ մարտիկներ։

Կյուշանան Շանայի դյուղախմբի ամենահեռավոր ու լեռնային գյուղն էր՝ Տրապիզոնից 4 ժամ հեռավորության վրա։ Այն դոնվում էր համանուն դետի արևմուտքում՝ Ուզտաղի լեռան հարավարեելյան բաղուկի վերին լանջերին։ Հյուսիսում Ծինկիլայից սահմանազատվում էր անգրնդախոր ձորով, որն այդպես էլ կոչվում էր՝ Տերին-իրմաք (Տեր-ձոր)։ Հանդիպակաց արեելյան կողմում Կալաֆկա հայկական դյուղից բաժանված էր Կյուշանա գետով։ Արեմուտքում՝ թուրքախոսո հայկական Ճոշարա ու Աֆյոնձ գյուղերից սահմանագատված էր ատվարախիտ անտառներով ու այդիներով, հարավ-արեելքից Ուզտաղի լեռնեբով՝ Սամերա և Ապիոն հայկական գյուղերից։

Գյուղի մակերեսը, քիչ բացառությամբ, ձորերով ու բլուրներով (օղ) կտրտված, թեք լանջերից (պաուակ) է բաղկացած։

Կյուշանան ուներ չորս թաղ (մահալա)՝ Խաչատուրցոց թաղ՝ գյուղի հյուսիս-արեմուտքում, Ուզունցոց-օղ (անունը առացել էր թաղում հիմնականում Երկանյանների՝ Ուղունցոց ապդատոհմըն ապրելու պատճառով), Խաչի թաղ՝ գյուղի կենարոնական մասը, որտեղ կառուցվել էին դյուղի քարակերա վարժատունն ու եկեղեցին։ Ամենահեռավոր՝ Տերե-բաշի թաղը գանվում էր կենտրոնից մի ժամ հեռու, դետի վերին ակունքների մոտ, Ուղաաղի նախավերջին լանջերում։ Կյուշանա ու Ճոշարա դյուղերի արանքում դտնվող Խարմանլար (Կալեր) կոչվող բնակավայրը, թեպետ վարչապես ենթակա էր Ճոշարային, սակայն սդգային-մշակութային ներքին կյանքով Կյուշանայի անրաժան մասն էր կազմում։ Բացառիկ վայր էր Խարմանլարի և Կյուշանայի միջև տարածված, շուրջ 4 քառ. կմ ատրածությամբ Բարաքջիլիի փոս[15] կոչվող սարահարթը։

Տրապիզոնից Կյուշանա գնալու գրասայրին ճանապարհը անցնում էր Ծինկիլա գյուղով։ Բացի այդ, կար նաև լեռնային արահետ, որն անցնում

---

[15] Կենարոնի ու այս. քաղի իրարից բաժանող խիտ անտառածածկ զանգվածը նկատի ժամանակ ինքնապաշտպանության դիմած հարեան շանացիների ապահով ապաստարաններից մեկը գարձավ (Քաբաշլի քրթ., բառացի՝ սանրազործ)։ Փոս՝ համշենդու բարբառով՝ հարթավայր։

էր Հոշարա—Կրամիլա—Չինգանող գյուղերով ու իջնում ույղակի Տեղերմեն-ուերև դևսի դլխավոր կամուրջի մոտ։

Կյուշանատից լեռնային կարճ ճանապարհը ձգվում էր դեպի Հայկական լեռնաշխարհը, դեպի Նարեկ Հայր՝ Բարերդ, էրզրում։ Մինչև Բարերդ տարհևան անցնում էր հետևյալ վայրերով՝. Ուզաայ (1 ժամ)—Չաղթլի (2 ժամ)—Սիֆֆերի սար (3 ժամ)—Ուդուն-Կումարլուղ (Երկար-լաշուտ, 4 ժամ)—Սևլի-Կայա (Ալեձաղանքող, Աղվկուտ ապատաժ, 5 ժամ)—Սրղանլի (Նդինջնող, 7 ժամ)—Կիսիշկի գյուղ (8 ժամ)։ Կյուշանայից մինչև այսանլ (Կիսիշկի) սա առաջին մեծ հանգրվանն էր, որտեղ կային ձիերի ախոռներ, պալատներ, իանութիներ, սառնորակ աղբյուրներ։ Այնուհետև ճանապարհն անցնում էր Խային-Կևտուղ (9 ժամ)—Քուչակ-Նիֆել-Կադուրլի սարահարթ (10 ժամ)—Տաշ-բյուփրու (12 ժամ)—Չորսիւ-գյուղ (13 ժամ)—Յաւիսպ-գյուղ (14 ժամ)— Բոնարուղուղ (Հունարնակ գյուղ, 16 ժամ)—և Խարտակ-Բալախոր-Օձուս (Օձյուղ) գյուղերով, որտեղից շուրջ 24 ժամ հետո հասնում Բարերդ։

Կյուշանան անխառն հայարնակ գյուղ էր, 56 անից բաղկացած, որոնք հետևյալ ազգատոհմերից էին՝ Հուսևփցի, Խաչատուրցի, Օրսուղցի, Տերաևրցի, Նևեմցի, Պալսեցի, Չաքարցի, Երկանցի, Չևփնցի, Մուրադցի, Թոռլաքցի, Ղուկասցի, էքշցի, Հևրմակցի, Վարդանցի, Գահրիմոնցիւ

Կյուշանացիք ամրողջությամբ Համշենից ու Սև-դևտից փախած համշենահայեր էին, որոնց մի մասն ուղղակի այս գյուղն էր եկել, իսկ մյուսները նախ հիմնվել էին Ֆիրինծուա, Ատիոն գյուղերում, ապա փոխադրվել Կյուշանա[17]։

Թևսևա Կյուշանացիների մեծ մասը սակավահող էր, այնուամենայնիվ, արդեն XIX դ. վերջերին բնակչության դրեթե մեծամասնությունը սեփական հողամասեր էր ձեռք բերել, որի շնորհիվ հնարավորություն էին սացել հիմնավոր տրնտեսություն սահեցնելու, քարաշեն տներ կառուցելու։ Քարաշեն առն ունենալն անհրաժեշտություն էր ոչ միայն կենցաղային նկատառումներով, այլև պաշտպանողական տևսակետիւ Կային նաև չքավոր անտեսություններ, որոնք ապրում էին խղճուկ հյուղակներում։ Կյուշանացիք ևս հողը մշակում էին միայն ձևռքի դործիքներով (լևխտր, փեսատ և այլն) ու զբաղվում դյուղատնտեսությամբ նույն ձյուղերով, ինչ Տարևան Սինկիլա և Սարալլար գյուղերում։ Այստեղ ավելի էր զարդացած անասնապահությունը, քանզի կյուշանացիներից շատերը Ուղտաղի բարձունքներում ունեին սեփական խոտհարքներ, արոտավայրեր (մեզրե), ուր վաղ դարնան ու աշնան ամիսներին արածացնում էին անասուններին։ Մեծաքանակ ոչխար, այծ սլահողները սահավաթիվ էին, սակայն 3—10 ոչխար սլահելը սովորական երևույթ էր։

Կային տնահսություններ, որոնք, որպես օժանդակ աղբյուր, զբաղվում էին ածխադործությամբ, ջորեպանությամբ։ Կանանց համար ջուլհակությունը անհրաժեշտ ու պարտադիր պրաղմունք էր։

Կյուշանացիների առաջին համայնական շենքը եղել է ջրաղացը, որը XIX դ. կեսերին կառուցել էին Կյուշանայի ե հանդիպակաց Կալաֆկա գյուղի (այն ժամանակ հավիվ շուրջ 20 տուն) բնակիչները։ Այդ ժամանակից ի վեր, հավասարապես ջրաղացից օդտվում էին երկու գյուղի բնակիչները։ Ջրաղացում երբեք ո՛չ ջրաղացպան և ո՛չ էլ պահապան է եղել։ Այդպես էր մինչև վերջ (1915 թ.)։ Յուրաքանչյուր տնահսություն իր ե-դիսլտացորներ ինքն էր աղում և ևթե սպասող կամ հերթ չէր լինում, դուռը դրսից փակում (մանդալում) ու դնում էին՝ այնպես որ վայրի դաղաններ չմանեին ներս։ Ջլաղացի քարերը սրելը (կտոնելը) կամ այլ վերանորոդումներ կատարում էին միասնական ուժերով։

1908—1909 թթ., մեկ տարվա ընթացքում, սրբատաշ քարերով ղարդի նոր ու հարմարավետ շենք կառուցվեց՝ գյուղի առաջադեմ երիտասարդության ու ամրողջ բնակչության մասնակցությամբ։

Կյուշանացիների առաջին աղոթարանը եղել է հինավուրց մի փոքր, անշուք մատուռ՝ ուիտաեեղին։ 1890-ական թվականներին նույն վայրում կառուցում են քարակերա նոր եկեղեցի։ Բացի կյուշանացիներից, շինարարությանը մասնակցում են նաև հարևան Սինկիյա, Ակֆյանձ, Կալաֆկա գյուղերի բնակիչները։ Պաշտոնական ավյալներով, Կյուշանայի ս. Գևորդ եկեղեցին հիմնվել է 1774 թ.։ Այսպիսով, մինչև այս եկեղեցու կառուցումը, հարյուր ասրուց ավելի, որպես աղոթատեղի և ուխտավայր ծառայել էր հինավուրց մատուռը։

1895 թ. արյունալի օրերին, շնորհիվ շանացիների կազմակերպված զինված դիմադրության, հայրենասեր ու քաջ Չալուք Պողոսի (Հովսեփյան) հեղինակության ու Շաարրղաղե բևկերի հայա-

[16] Վայրերի հեռավորությունը հաշվված է Կյուշանա գյուղից։

[17] Տողերիս հեղինակի կարապետ և Մանաթ պապերը՝ մեկը հորս, մյուսն էլ մորս կողմից՝ Թոռլաքյաններ (թուրքերեն՝ pտղաr—պարթև, թիկնեղ) են եղել, որոնք ավանդաբար պատմում էին, որ իրենց նախնիները Համշենից Սև-ծով, ապա Ատիոն, որդ հետո Ֆիրինծուա գաղթած համշենահայեր են եղել, որոնք հետո հաստատվել են Կյուշանայում։

պաշտպան քաղաքականության, Կյուշանան, Մինկիլտան, Սարայլարը բոլորովին ղերծ մնացին թալանից ու կոտորածից, իսկ Կալաֆկան, Աֆյանձը, Ոշալան տնտնան վնաս ու ղոհ ունեցան։

1915 թ. եղեռնին Շանայի ու մոտակա գյուղերի զիմադրական ուժերի կենարոնը Կյուշանան էր։ Ձաչուք փոս կոչված վայրում, 20 տարի առաջ, 1895 թ. կոտորածի ժամանակ ապաստանել էին Կյուշանացիք։ Եղեռնից խուսափելու հաստատ որոշումով, նորից այստեղ քաշվել էին Կյուշանայի, Մինկիլայի, Սարայլարի և Աֆյանձի ամբողջ հայ բնակչությունն ու ղինված ուժերը։ Վերջին օրը, հավտաալով քաղաքից Նկոտ միամիա պատվիրակների թախտնձագին խնդրանքին, ընտանիքների մեծամասնությունը վերադարձավ տուն։ Այնուամենայնիվ, մի խումբ ըմբոստներ կտրականապես հրաժարվեցին ենթարկվել պետական հրամանին ու որոշեցին մնալ լեռներում։

Լեռներում ապաստանած 25 հոգուց 18-ը փրկվեց շնորհիվ շուրջ մեկ ամրի շարունակվող հայգուկային գոյամարտերի։ Բոնագրքի ենթարկվածներից չորս հոգի ազատվեցին քրղերի, երկուսը՝ թուրքերի օգնությամբ։

Աֆյանձ գյուղը գտնվում է Սարայլարի հարավում, Արգուլա լեռան արեմտյան լանջերին, Տրապիզոն քաղաքից չորս ժամվա ճանապարհ հեռավորության վրա։ Արեելքից՝ Կյուշանայից ու Մինկիլայից սահմանազատված է Արգուլայի լեռներով։ Եղեռնի նախօրյակին գյուղում ապրում էր 16 առն թուրք, 9 առն հույն, 28 առն հայ։ Հայերը Քյոսեցի, Թայսուղցի, Կակոսցի, Մավիցի, Վայիզցի, Գահրիմոնցի և Պողոսցի ազգատոհմերից էին։

Շուրջ 10 ամրի՝ 1886—1895 թթ. Աֆյանձում եղել է փոքր քարաշեն երկամյա վարժարան։ Նյութական անապահովության հետևանքով գրպրոցը փակվեց, և աշակերտությունը անցնելով շուրջ մեկ ժամից ավելի ճանապարհ, հաճախում էր Սարայլարի գպրոցը։

Աֆյանձի հայերը ևս սեփական հողամասեր ունեին. տների մեծ մասը քարաշեն էր։ Աշխատանքի գործիքներն ու ղրաղմունքը նույնն էին, ինչ հարևան Սարայլար գյուղում։

1895 թ. Աֆյանձի հայերը ևս աղեհից փրկվեցին շնորհիվ Շատըրղագե բեկերի հոգատարության։

Շանա ու Փոքր Սամարութսա (Աֆյանձ, Սարայլար) գյուղերում հնագույն պոնտացիների, հույների, ճենովացիների ժամանակներից մնացել էին րաղմաթիվ փոքր ու մեծ ուխտավայրեր ու մատուռներ։ Մեր օրերում՝ եղեռնի նախօրյակին, ղրանցից հայտնի էին միայն մի քանիսը. մեկը դտնվում էր Շանայի «Բեկի-քայլ» կոչված երթուղու (քարուղու) արևելյան կողմում, 20 մետր ճանապարհից հեռու, բարձունքի վրա։ Մի ուրիշ՝ ավելի մեծ մատուռ գտնվում էր նրանից 300 քայլ դեպի արևելք։ Սրանց պատերը ներսից անջինջ, փայլուն ներկերով նկարազարդված էին կրոնավորների նկարներով։ Երկուսն էլ մոտակա բնակիչների՝ հայերի և հույների պաշտած սրբավայրեր էին. այստեղ ուխտի էին գալիս, մոմ վառում, հագուստի կտորներ կախում ծառերից ու թփերից, մասաղ կատում։ Մի քանի այլ սրբատեղիների հիմքերի հետքեր ևս կային այդ մատուռների շրշակայքում ու Սարայլար գյուղում։ Ինչպես վերը հիշվեց, ուխտավայր-մատուռներ կային նաև Սարայլար և Կյուշանա գյուղերի եկեղեցիների տեղում։ Մի կիսավեր սրբավայր էր մնացել Արգուլա սարի գագաթին, որը գոյամարտերի ժամանակ մեր գլխավոր դիտակետն ու պաշտպանական պարիսպն էր։ Ամենամեծ ու ամրակուռ աղոթավայրը Մինկիլայի հինավուրց եկեղեցին էր։

Շանայի մոտերքում միակ գործող ուխտավայրը գտնվում էր Այաղմա կոչված հանքային ջրերի մոտ՝ Մեծ-Սամարութսա գետի գետտերասի մերձակայքում։ Ամեն ամրի Համբարձման օրը հույն քահանան այնտեղ ժամասացություն էր կատարում։ Մոտակա ու հեռավոր վայրերից րաղմաթիվ ուխտավորները՝ հայեր, հույներ ու թուրքեր էին հավաքվում։ Դավուլ-ղուտնայի նվագը, երգն ու պարը շարունակվում էր տմրոդզ օրը։

Յոմուրայի վիճակի հարավ-արեմտյան մասում՝ Ճոշարա և Մեծ-Սամարութսա ղետերի հովիտներում սփռված էին հայկական հեռավոր գյուղերը.

Զեֆանոզ[18] (Ստեֆանո)։ Տրապիզոնից արեվելք առաջին հայկական գյուղն էր, որտեղ տանող արահետը բաժանվում էր Տեղերմեն-աերե գետի արևելյան կողմից գետի հարավ բարձրացող լանջերով։ Կամուրջից կես ժամ հեռավորության վրա գտնվում է Քիրեզլուղի-ջուր կոչվող սառն աղբյուրը։ Այստեղից ճամփան ճյուղավորվում է գետի աջ՝ Զեֆանող, ձախ՝ Ճոշարա—Կյուշանտ գյուղերը։ Այդ աղբյուրից կես ժամ հեռու (հարավ) հատատավել էր Զեֆանող գյուղը, որի ներքին՝ Գասպարցոց թաղում է ծնվել մեծահռչակ րանաստեղծ Ս. Հայկունին (Ղազարյան)։ Այս թաղից կես ժամ վեր գտնվում էր գյուղի երկրորդ՝ Գալայճցոց

[18] Զեֆանող գյուղը քեպեթ վարչականորեն ենթարկվում էր Տրապիզոն քաղաքին, սակայն ազգային ու մշակութային կյանքով Յոմուրայի վիճակի անբաժան մասն էր։

թաղը։ Երկու թաղերում էլ կային քարակերտ սառն աղբյուրներ և անասունները ջրելու կառուցված[19]։ Ալյահեղի սառնորակ ու համով ջուրը ղեֆանույցիք էշերին բարձած ահագոններով փոխադրում էին Տրապիզոն և վաճառում։

Եղեռնի նախօրյակին Ջեֆանողում ապրում էր 20 տուն թուրք և 60 տուն հայ, որոնք պատկանում էին Դասպարցոց, Շախմախլիքցոց, Քերոցոց, Գալայճցոց, Համբարցոց աղգահոմեերին։

Շնորհիվ խմելու սառնորակ ջրերի, բարենպաստ կլիմայի ու քաղաքին մոտ լինելու՝ Ջեֆանողը արապիզոնցիների ամենահարգի ամառանոցն էր։ Տների մեծ մասը քարաշեն ու հարմարավետ էին։ Այստեղ իրենց սեփական դղյակ-ամառանոցներն ունեին քաղաքի մի շարք հայ հարուստներ։

Այս ամենը մեծ չափով խթանել էր Ջեֆանողում բանջարարուծության ու կաթնատնտեսության զարգացմանը։ Եկամտաբեր ու համատարած զրադմունք էր նաև այգեգործությունը և պաղատու այլ ծառերի մշակումը։

Գյուղի ս. Թադևոս քարակերտ եկեղեցին կառուցվել էր 1850 թ.։ Գյուղի դպրոցը ևս քարակերտ էր, հիմնված 1860-ական թվականներին։ Դպրոցն ուներ երկսեռ 48 աշակերտ՝ քառամյա դասընթացով։ Դասավանդումը կատարվում էր Տրապիզոնի Ազգային վարժարանի ծրագրով։ Դպրոցն ուներ փոքր դրադարան ու դիտողական պիտույքներ։

1895 թ. կոտորածի օրերին ղեֆանողցիների մեծամասնությունն ապաստան դասվ Տրապիզոնի վանքում (որը գանվում է գյուղի հանդիպակաց կողմում՝ մի ժամ հեռու). մի մասն էլ փախել էր հեռավոր լեռները։

Գյուղը թալանում ու հրկիզում են հարևան ճեպելօղլեցիք ու մասամբ էլ Կավարա գյուղի ավազակարարո թուրքերը։ «Հեռու անտառից տեսնում էինք մեր բոցավառվող անների երկինք բարձրացող կրակն ու ծուխը։ Մերոնի հայրս հանդրգնեց գյուղ գնալ, հուսալով, որ բարեկամ թուրքերի միջնորդությամբ կկարողանա փրկել տունը և այլևս չվերադարձավ։ Գյուղ վերադառնալիս նրա անշունչ մարմինը դատնք մեր մոխիր դարձած տան մոտ՝ ծվաղի ծառի տակ,—պատմում է մըղձավանջային այդ օրերի ականատես, ղեֆանողցի Հուսեփ քեհին։

Կավարա թուրքարնակ մեծ գյուղը դանվում է Ջեֆանողից մեկ ժամ հարավ։ Ճանապարհից շուրջ 20 րոպե արեելք ընկած էր 8 անից բաղկացած հայկական թաղը՝ Կուկուլցոց, Լուսիկցոց և Արզումանցոց ազգատոհմերից։ Հայերը զբաղվում էին գյուղատնտեսության նույն ճյուղերով, ինչ որ շրջակա գյուղերում։ Աշակերտները հաճախում էին Ջեֆանողի վարժարանը։

Կրոմիլան դանվում է Ջեֆանողից շուրջ մեկ, իսկ Տրապիզոնից երկու ժամ հեռավորության վրա։ Հայկական այս գյուղի երկու թաղերը գրավում էին Ջաթաղ-օղլի արևելյան լանջերը։ Գյուղն ուներ 38 տուն՝ մեծամասնությունը Ջիքարցոց, Եղրիցոց, Գոչյան, Սարդիսցոց, Մեղրիկցոց, Մավյան աղգատոհմերից։ Սա, Ջեֆանողից հետո, Տրապիզոնի արևելքում երկրորդ ամառանոցային գյուղն էր։ Կրոմիլացիք ևս սեփական հողամասեր ունեին, անները հիմնականում քարաշեն ու բարեկեցիկ էին։ Մշակելի սարածքի մեծ մասը սևահող ու բերքատու էր, ինչ որ բացառիկ երևույթ էր շրջակա գյուղերում։ Հողը մշակում էին ձեռքի գործիքներով (լեխար, փեսաա)։ Գըլխավոր հացահատիկը, ինչպես հարևան, նույնպես և այս գյուղում եդիպսացորենն էր, որին զուգընթաց մշակում էին նաև բանջարանոցային բույսեր՝ հատկապես լորկյա (սպիտակ մանր լորի), որը քաղաքում մեծ պահանջարկ ուներ։ Գլխավոր և արդյունավետ զբաղմունքը կաղնուաներն էին, որտեղ նոսր շարքերով մշակում էին նաև խնձորի, տանձի և այլ պաղատու ծառեր։

Հինավուրց քարաշեն ս. Աբգիս եկեղեցին գանվում էր գյուղից կես ժամ վեր՝ Խաչի-օղ կոչված վայրում։ Տրապիզոնի հունական կայսրության ժամանակից մնացած եկեղեցիներից դա երրորդն էր Յոմուրայի շրջանում, որը վերածվել էր հայկական-լուսավորչական եկեղեցու[20] (առաջին երկուսը Միսոխորի և Մինկիլայի եկեղեցիները էին)։

Կրոմիլայի վարժաաունը նույնպես քարակերտ ու լուսավոր շենք էր։

1895 թ. թալան-կոտորածի ժամանակ, կրոմիլացիների մեծ մասը ապաստանում է լեռներում, մի քանի ընտանիք՝ Տրապիզոնի վանքում։ Կրոմիլա գյուղը կողոպտել ու կրակի են ավել մոտակա Ծամպուր, Միկոնա և Կիլաա գյուղերի թուրք հրոսակները՝ ծամպուրցի ավազակապետ Օֆլի-օղլի Մուսաաֆայի առաջնորդությամբ։ Դիվահար թուրք բաշիրողուկները սպա-

[19] Միաձույլ քարից փորված 80—100 սմ երկարությամբ, 50—60 սմ խորությամբ ու նույն լայնքի քարե ավազաններ։

[20] 1800-ական թվականների սկզբներին Կրոմիլայի այդ եկեղեցուն սիրանալու համար շրջակա հայ և հույն բնակիչների միջև սաք բռնավեճ է սկսվում։ Մի կիրակի օր հույները՝ հույն, իսկ հայերն էլ հայ քահանաներով գնում են ժամասացության, բռնակռիվը վերածվում է սուրուդմփոցի։ Հույները փոքրամասնություն լինելով, ստիպված տեղի են տալիս։

նում ու անգամահատում են ծիրունի ա. Հովհաննես քահանա Մալչանին (Ջինչի աերաեր) և գառամյալ Սարգսյան ու Զիքարյան Օվակիմ պապերին, որոնք մնացել էին իրենց տներում, հույսները գրած «ամենակարող աստծուն» վրա։ Ջարկարարները թալանում են հայերի ողջ ունեցվածքը, անունգն ու հագուստը, անասուններըը և հրդեհում մի քանի տուն։

1895 թ. սարսափի օրերից հետո, ինչպես Տրապիզոնի գավառի բոլոր վայրերից, նույնպես և Կրոմիլայից բաղմաթիվ ընտանիքներ փախան Ռուսաստան՝ Արխապիա, Եկատերինոգարի (այժմ՝ Կրասնոգարի) մարդ, Ղրիմ։

Մեծ եղեռնից վերապրած ութ հոգուց երեքը փրկվել են ղենգի ուժով, հինգը՝ թուրք բարեկամների շնորհիվ։

Միևնույն: Կրոմիլայի Ջաթաղ օղից դեպի Ակաֆիա տանող արահետի աջ կողմում գտնվում է թուրքական Ուսմպուր գյուղը, ձախ կողմում՝ Մինասլի* հայկական փոքր գյուղը, որտեղ ապրում էր 10 տուն հայ (Հուսեփցի, Թաղաքչիցի, Երանոսցի, Փիլուսցի, Վարգանցի, Դիլենցի և Կակուլցի աղգատոհմերից)։ Մինասլի գյուղի միջով էր անցնում Մեծ-Սամարուքսա գետը, որը Սարայլար գյուղի մոտ միանում էր Փոքր-Սամարուքսա կամ Ճոշարա գետին։ Այս գյուղը ղուտ հայարնակ էր ու աղգային ներքին կյանքով ամբողջովին կապված սահմանակից Սկաֆիա գյուղին՝ որպես նրա անբաժան մաս։

Սկաֆիան (կամ Էսկաֆան) Ցոմուրալի վիճակի վերջին հայկական գյուղն է, որը Մինասլիից բաժանվում է խոր ձորով։ Գյուղը գտնվում է հարմարավետ սարահարթում։ Ի տարբերություն մոտակա գյուղերի, Սկաֆիայի տները շարված էին ճանապարհի ձախ կողմում, իրարից 40—50 մետր հեռավորությամբ։ Կար նաև տոհմական 2—3 գերդասան՝ կողք կողքի կառուցած բնակարաններով։ Այսպես էին, օրինակ Սորոսմաթյան (5 տուն) և Կուկուլյան (6 տուն) եղբայրների տները։ Այս անխառն հայաբնակ գյուղն ուներ 23 տուն՝ 169 շունչ (նաև՝ Ասլոնցի, Էղիկցի, Ջաքարցի աղգատոհմերից)։ Սկաֆիացի ու մոտակա գյուղերի հայերը նույնպես գաղթած համշենահայ սևգեղցիների սերունդներ էին։

XIX գ. վերջերին, Սկաֆիայի գրեթե բոլոր տնտեսությունները սեփական հողամասերի տեր էին և ունեին քարակերա տներ՝ ծածկված եղենու ծառից «քաշած» տախտակով (կավար, խատուտուկ)։ Համեմատաբար մնացել էին նախնական շրջանում կառուցված խզեկոն (կերանակատ) տներ՝ ծածկը (ծածուկը) սլեթ կոչված տախտակիկներից։

Ակաֆիացիների ու մոտակա Մինասլի, Մանգելեր գյուղերի հիմնական եկամտաբեր կրաղմունքը նույնպես կաղնուաներն էին։ Սեփական կարիքների համար մշակում էին նաև տանձ, խնձոր, կեռաս, բալ, սալոր (տոսուն), որոնց ծառերը ցրված էին կաղնու այգիներում։ Եաղոգի վակերն առանց էտելու թողնում էին ծառերն ի վեր։ Մշտագալար ծվաղենին անպակաս էր բոլոր տների շուրջրոլորը։ Այստեղ ես գլխավոր հացահատիկը եգիպտացորենն էր, որի հետ համատեղ մշակում էին անհրաժեշտ բանջարանոցային բույսեր՝ լոբի, բանջար, շաղգամ (շաղգամ) և այլն։ Ինչպես համշենցիների բոլոր գյուղերում, այստեղ ես ամեն տուն ուներ իր փոքր, ցանկապատով պատսպարված տնամերձը (ածուզը), որտեղ ածեցնում էին կանաչեղեն՝ պոտաս, սոխ, սխտոր, պղպեղ, լոլիկ, ամրուկ և այլն։

Կաթնատնտեսությունը, հավարուծությունն ու մեղվարուծությունը խիստ անհրաժեշտ ու անտեսության անբաժան մասն էին կազմում և գրանցով կրաղվում էին գլխավորապես ընտանիքի կարիքները բավարարելու սահմաններում։

Կանանց համար, ինչպես ամենուրեք համշենահայ գյուղերում, ջուլհակությունը պատվավոր ու պարտադիր ղրաղմունք էր։

Լծկաններով հող մշակելն ընդունված չէր նաև այս գյուղում։ Նահապետական լեխտրն ու փետտան էին հիմնական գյուղատնտեսական գործիքները (աղ. VI)։ Մոտակա հայկական փոքր բնակավայրերի ու թաղերի (Մանդելեր, Մինասլի, Տուռնացոց-օղ, Տերտերցոց-գեղ) աղգային-մշակութային կենարոնը Սկաֆիա գյուղն էր։ Այստեղ էին գտնվում քարաշեն գպրոցն ու եկեղեցին։ 1880-ական թվականներին հիշյալ գյուղերի միացյալ ուժերով կառուցվում է Սկաֆիայի քարակերտ ս. Լուսավորիչ հոյակապ եկեղեցին[21]։ Մինչ այդ հավատացյալները հաճախում էին Կրոմիլայի եկեղեցին։ Եկեղեցին կառուցել էին գերեզմանոցի մոտ գտնվող մատուռի տեղում։

Մինչև 1880-ական թվականները, գյուղի վարժատունը տեղավորված էր սարսոմաթցիների տան մեծ սենյակում։ Վերջացնելով եկեղեցու շինարարությունը, վերոհիշյալ գյուղերի համատեղ ուժերով կառուցվում է Սկաֆիայի քարաշեն գպրոցը։ XIX գ. վերջերից ուսումնարան սկսում են հաճախել նաև աղջիկները։

* Գյուղի հիմնագիրը եղել է Մինասցի Երիդոր պապը, որի անունով էլ բնակավայրը կոչվել է Մինասցոց-թաղ, ապա՝ գեղ։

[21] Համաձայն պաշտոնական արձանագրությունների՝ այն կառուցվել է 1819 թ.։ Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1966 թ. № 6։

1895 թ. Սկաֆիայի, Մինասլիի ու մոտակա բնակավայրերի ու թաղերի հայերը իրենց կյանքը փրկեցին, թաքնվելով մոտակա անտառներում։ Այդ գյուղերը հիմնովին կողոպտեցին ու ավերեցին մոտակա Միկանոյ, Մամպուր, Կիլատի թուրքական գյուղերի հորդաները։ Սկաֆիայի 23 անից միայն երկուսը չէին հրկիզել։

Ինչքից ու անից ղրկված հայ գյուղացիներին մեկ տարվա ընթացքում մեծ աջակցություն են ցույց տալիս Տրապիզոն քաղաքի հայկական բարեգործական ու կրոնական հիմնարկները։

Այդ տրյումալի օրերից հետո հիշյալ գյուղերից ես շատ ընտանիքներ թողնում ու հեռանում են Ռուսաստան։

Տերտերցոց-գեղ (Քեշիշցոց-մաիլա)։ Կրոմիլայի Չաթաղ-օղից դեպի հարավ-արևելք՝ Ճոշարա գնացող արահետի վրա, առաջին հայկական բնակավայրն էր՝ 8 առն՝ 60 շունչ բնակչությամբ, բոլորն էլ մի՝ Տերտերցոց աղդատոհմից սերված։

Տուտնացոց-օղ բնակավայրը Տերտերցոց-գեղից բաժանվում էր խոր ձորակով. այստեղ երկու թաղերն ունեին իրենց առանձին համայնական ջրաղացները։ Ամառվա ամիսներին ձորակի ջուրը ցամաքում և ջրադացները չէին աշխատում։ Թաղն ուներ 11 առն՝ 89 շունչ բնակչությամբ՝ Թաթոսցի, Սրուքյունցի, Չեփնցի, Աբրյոմցի, Դեմիրչցի, Օվակցի, Հուսեփցի աղդատոհմերից։

Բացի երկու անից, Տուտնացոց-օղի աներն ես իրար մոտ-մոտ էին կառուցված։ Գյուղի ներքևում, Ճոշարա գետի արևմտյան ափին, Աֆյանճ գյուղի հանդեպ դերանակապ, ամրաշեն մի առն կար, որը ժամանակին սավարախիա անառոի մեջ միակն էր։ Այս տունը կառուցել էր Ս. Հայկունու դրքի[22] իրական հերոս Ալաո Աբրիոմը, որտեղ և ապրում էր նրա ընտանիքը։ Եղեռնի նախօրյակին այդ տանն էր բնակվում Աբրիոմի թոռը՝ Կարապետն իր որդի Սեդրակի հետ։ Կարապետի եղբայրը ընտանիքով փախել էր Ռուսաստան ու բնակվելով հաստատվել Անապայի մոտակա գյուղերում։

Տերտերցոց-գեղի ու Տուտնացոց-օղի բնակիչները ևս սեփական հողամասեր ունեին ու զբաղվում էին դյուղատնտեսության նույն ճյուղերով, ինչ որ Սկաֆիա գյուղում։ Մշակվող հողերի ու այգիների մեծ մասը դտնվում էր լեռների թեք լանջերին։

1905—1908 թթ. այս երկու թաղերն ունեին իրենց վարժառունը։ Նյութական միջոցների սղության հետևանքով 1908 թ. վարժառունը փակվում է, որից հետո Տերտերցոց թաղի աշակերտները սկսում են հաճախել Սկաֆիայի, իսկ Տուտնացոց-օղի աշակերտները՝ Ճոշարայի դրպրոցը։

1895 թ. մղձավանջային օրերին Օֆլի-օղլի Մուսաֆան իր ավազակախմբով ավերի ու թալանի ենթարկելով Սկաֆիա, Մինասլի ու մոտակա այլ գյուղերի հայերի աները, շարժվում է դեպի Կյուշանա։ Տուտնացոց-օղում նրա դեմ դուրս են դալիս Շատրըղադե բեկերի զինված ուժերը, որի շնորհիվ անվնաս են մնում Տուտնացոց-օղի հայոց աներն ու ունեցվածքը։

Ճոշարա։ Տուտնացոց-օղից նեղ կիրճերի ու ձորերի միջով անցնող արահետով կես ժամից Ճոշարա դյուղի թուրքաբնակ Ճամե-Մահալեսի թաղն է։ Այս թաղում ապրում էին միայն երկու առն հայեր (Օվակյան եղբայրները)։ Թաղի տներ խիտ շարված էին ճանապարհի երկու կողմում, կենտրոնում՝ մզկիթը։

Թուրքական թաղին հաջորդում էր հայաբնակ էլմալուղ (Խնձորուա) թաղը, 15 տուն բնակչությամբ։ Էլմալուղին սահմանակից էր Հուսեփցոց թաղը, 13 առն բնակչությամբ։ Երկու թաղում էլ ապրում էին միայն Հուսեփցիք (Հովսեփյաններ)։ Գյուղի միջով հոսում է Ճոշարա դետը, որն սկիզբ է առնում շուրջ երեք ժամ հեռու դտնվող Չաղրըլի լեռներից։

Հուսեփցոց թաղի արևելյան կողմում գտնվում էր խիտ ծառերով ու թփերով ծածկված լայնանիստ, բնդարձակ մի քարածայր, որի բնդերքում, հեռվից րոլորովին աննկատելի, հսկայական մեծուքյան մի քարայր կար։ Ծայրի արևելյան բարձունքից, դժվարանցանելի կածաններով, ծառերից ու թփերից բռնելով մոտենում էին քարանձավի նեղլիկ ու ցածր մուտքին։ 7—8 քայլ սողալով հասնում էին քարանձավի մութ ու բնդարձակ խորշին։ Քարայրը րավականին մեծ էր, ուղ-ուղ նեղ, ոլորապտույտ անցքերով։ Քարայրի հակագիր կողմում կար աննկատելի ելք[23]։ Մեծ եղեռնին Ճոշարայի ինքնապաշտպանության գլխավոր ապատանը այս քարայրը դարձավ։

Ճոշարայի ամենահետավոր հայարնակ Թարմանլար թաղը դանվում էր Կյուշանայի սահմանամերձ դեղեցկանիստ սարահարթում՝ Հուսեփցոց թաղից կես ժամ հարավ-արևելք։ Այնտեղ ապրող հինդ առն հայերը (րոլորը Տերտերցոց

---

22 Ս. Հայկունի, Հուսեփցի աղդատոհմ և սասրօրինակ ավազակ Աբրիոմ, Վաղարշապատ, 1905։

23 Այդ քարայրում եղել եմ 3—4 անգամ, ընկերներիս հետ, մի անգամ էլ մեր անմոռաց ուսուցիչ Եղվարդ Հրապյանի առաջնորդությամբ։ Մեզ ուղեկցում էին Ճոշարացի մեր ընկերները, որոնց հաճախակի զրոսավայրն էր։ Մեր գյուղից՝ Կյուշանայից մինչև քարայրը մեկ ու կես ժամվա ճանապարհ էր (Բ. Թ.)։

ազգատոհմից) թևակետ վարչապես ենթարկվում էին Ճոշարային, սակայն աղգային-մշակութային ներքին կյանքով (դպրոց, եկեղեցի) կյուշանայի անրաժան մասն էին կազմում։ Ճոշարայի հիշյալ 4 թաղում ապրում էր 35 տուն հայ բնակչություն։ Գյուղի քարաշեն, փոքր դպրոցը գտնվում էր Խընձորուտ թաղում։

Յոմուրայի վիճակի արեմուտքում Ճոշարան վերջին գյուղն էր։ Տրապիզոն գնում էին լեռնային արահետներով՝ անցնելով Տուտնացոց-օղ—Ջաթաղ—Կրոմիլա—Ջեֆանող երթուղով։

1895-ի աղետից Ճոշարացիք ևս փրկվեցին Շատրդաղե բեկերի հովանավորության շնորհիվ։

Մեծ եղեռնից փրկվեց ընդամենը 7 հոգի՝ ապաստանելով մոտակա լեռներում։

Վերոհիշյալ Սկաֆիա, Մինասլի, Տերաերցոց-գեղ, Տուտնացոց-օղ, Ճոշարա հայկական գյուղերը մտնում էին Մեծ-Սամարուքսա կոչվող գյուղախմբի մեջ, որի հյուսիսային սահմանները հասնում էին Սե ծով՝ Տրապիզոնի ու Կովաթայի կողմերը։

Սամարուքսայի ծովափնյա հեռավոր գյուղերում բնակվում էր ասկավաթիվ հայ բնակչություն։

Կերասիա։ Տեղերմեն-աերե դեպի ալ ափին, Բաթում տանող խճուղու երկու կողմում փռված այս գյուղում ապրում էին Թուրքեր, հույներ և միայն 6 տուն հայ։

Խոց։ Կերասիայի շարունակությունը կազմող այս գյուղում ապրող 5 հայ բնանիքները Թուրք կալվածատերերի մարարաններն էին։

Կուխիա։ Գյուղի բնակչության մեծամասնությունը Թուրքեր ու հույներ էին և միայն 7 տուն՝ հայ։

Դպրոցական երեխաները 1—1,5 ժամ ճանապարհ անցնելով, Սարայլարի վարժատունն էին հաճախում։

Բացի վերոհիշյալ գյուղերից, րսա պաշտոնական վարչական բաժանման, Յոմուրայի վիճակին էին ենթարկվում նաև Տեղերմեն-աերե գեսի ձախափնյա լեռնալանջերում սփռված հայարնակ Ջիղակսա, Նորաձանա ու Վերանա գյուղերը, որոնք, սակայն, իրենց աշխարհագրական դիրքով ամբողջովին կապված էին Տրապիզոնի քաղաքամերձ հայկական գյուղերի հետ, որոնց մասին խոսվում է այդ բաժնում։

Ճեվիզլուղի վիճակի՝ Յոմուրային սահմանակից ներքոհիշյալ գյուղերում նույնպես ապրում էին ասկավաթիվ հայ ընտանիքներ։

Մանգելեր։ Սկաֆիայից հարավ-արեմուտք ընկած Թուրքական այս գյուղի առանձին մի թաղում ապրում էր 10 տուն հայ։ Մանգելեր գյուղը գտնվում էր Տրապիզոնից 3 ժամ հեռու։ Մինչև Լանսայի կամուրջը ճանապարհն անցնում էր Տրապիզոն—Էրզրում խճուղով, կամրջից մինչև հայկական թաղը՝ էլմպուղ գյուղի միջով։ Ազգային-մշակութային կյանքով Մանգելերի հայերը կապված էին Սկաֆիա գյուղի հետ։

1895 թ. մանգելերցի հայերը ևս հիմնովին թալանվեցին։ Մի բարեկամ Թուրքի միջնորդությամբ հրդեհի չենթարկվեց միայն 4 տուն։

Էլմալուղ Թուրքական գյուղը գտնվում է Մանգելերից հյուսիս, Տեղերմեն-աերեի աջ ափին։ Այստեղ ապրում էին 2 տուն հայ մարարաններ։

Ալասա։ Սկաֆիա հայկական գյուղից մեկ ժամ հարավ-արեմուտք, Սսիր-օղլիի քարե կամուրջից մեկ ժամ հարավ-արեելք, գեղեցկատեսիլ սարահարթին սփռված Թուրքական այս գյուղն ուներ 4 թաղ։ Այսնե թաղում ապրում էր 19 տուն Թուրք և 2 տուն հայ բնակչություն։ Արմենուհի թաղն, րսա ավանդության, անունն ստացել էր հանուն իր պաապի սիրուն դոհված Արմենուհի անունով հայ գեղջկուհու։ Թաղում կիսավեր գրության մեջ մնացել էր հինավուրց ընդարձակ հայկական դերեզմանոց՝ բաղմաթիվ տապանաքարերով։ Երրորդ՝ կենարոնական թաղը կոչվում էր Փրասասոյե, որաեղ ապրում էին դավանափոխ Թրքախոս հայեր։ Նրանց մի տոհմին մինչև վերջին սարիները (Մեծ եղեռնը) «Միմիջ-օղլի, Տյոնմիշ-օղլի» էին անվանում, այսինքն՝ Միմիջյաններ-Դարձածյաններ (դավանափոխներ)։ Այս թաղի Թուրքական շքեղ մզկիթի՝ նախկինում հայկական եկեղեցի լինելը հաստատվում էր այն փաստով, որ շենքը երկու դուռ ուներ՝ կտնանց ու աղամարդկանց, մինչդեռ Թուրքական մզկիթներր միայն մեկ դուռ են ունենում։ Գյուղի կենարոնում կանդուն մնացած այս հինավուրց եկեղեցին և Արմենուհի Թաղի հայկական դերեզմանոցն անխոս վկաներ էին հնում այդ վայրերի հայկական բնակավայր լինելուն։ Գյուղի արեելյան, դժվար մշակելի պառակներում ապրում էր 8 տնից բաղկացած Օհանցիների աղդատոհմը։ Թաղը այդպես էլ կոչվում էր՝ Օհանցոց-դեդ։ Ամբողջ գյուղում ընդամենը բնակվում էր 10 տուն հայ։

Գեղեցիկ է Օլասայի աեղադրությունն ու բրնությունը։ Գյուղը չրջապատված էր եղևնու, մայրիի, մաշմուրդի, խողկաղնու ընդարձակ անառաններով։ Գյուրիչ էր գյուղի միջով վազող առնորակ դեառակը, որի ջուրը բավարարում էր միաժամանակ աշխատող երկու չրադացների։

Օլասայի հայերը, շատ Թե քիչ հողագործության աեր լինելով, ունեին քարակերա տներ ու բավարար անասնություն՝ կապինի և պաղաաու այդիներ։ Թևակետ այսաեղ էլ հիմնական հացահատիկը եղիպտացորենն էր, սակայն ղդալի աա-

րածութիւն էին գրաւում նաև ցորենն ու գարին։ Օլասայի հայերի մեծ մասը մոտակա լեռնալանջերում սեփական խոտհարքներ ու արոտավայրեր (մեղրներ) ունէին, զբաղվում էին անասնապահութեամբ ու կաթնատնտեսութեամբ։ Առատ ու որակյալ էր նաև այս դյուղի մեղրը. եղակի չէին 100—150 փեթակ ունեցող ընտանիքները։

Ցոմուրայի շրջանի արեմուտքում Օլասան ամենահեռավոր ու վերջին քիչ թե շատ հայտրնակ դյուղն էր։ Այդ դյուղից էր անցնում դեպի Զիղակսա—Վերանա—Մալա առնող լեռնային արահեար, որեղից անցել են Համշենից ու Սև-դեպից դեպի Մալա, Օրդու, Սամսոն և այլուր դաղթող հայերի բաղմաթիվ քարավանները։

Օլասան Ցոմուրայի շրջանում առաջին դյուղն էր, որեղ լայնորեն օդագործում էին նահապետական արորը։ Հողը մասամբ հերկում էին նաև լեխարերով, իսկ ապխանելն ու ցանքսը հիմնականում՝ արորով։

1895 թ. Օլասայի դրեթե բոլոր հայերի անունը ամրողջովին թալանեցին ու հրկիղեցին հարևան Սիկանոյ և Մանդելեր դյուղերի հորդաները։

Սիկաճոյի գյուղախումբն ընկած է Օլասայից մեկ ժամ հարավ՝ Սիկանոյի լեռնալանջերին։ Դրանք իննն են՝ Աշաշա-մահալասի, Միխոխոր, Զևլան, Սիկանոյ, Ցանիկա, Մեսարիա, Սիսեռա, Հելլաջի, Խումարա՝ ընդամենը շուրջ 700 առուն քնակչութեամբ։ Սիկանոյ դյուղի միջով անցնում է համանուն դետ, որը, սկիզբ առնելով Զաղրրլիի սարերից, Օլասա դյուղի մոտ միանում է Գալիանի դետին ու թափվում Տեդերմեն-աերեն՝ Ցսիր-օդլիից քիչ վերև։ Ըստ ավանդության, հնում Սիկանոյում միայն հայեր ու հույներ են ապրել։ XVIII դ. սկզբներին Ղուռուֆ-օդլու ենիչերական հրոսակները յաթաղանի սպառնալիքի տակ սաիպել են հայերին ու հույներին ընդունելու մահմեդական դավանանքը։ Հայերի մեծամասնությունը թողնելով հայրենի օջախը, հեռացել է, իսկ փոքրամասնությունն ընդունելով մահմեդական կրոնը, մնացել իրենց դյուղերում։ Հավաստիորեն հայերից շատերի հետնորդները մինչև մեր օրերը (նախահեղեռնյան տարիներ) պահպանել էին իրենց հայկական անվանումները՝ Խաչիկ-օդլի, Ջատիկ-օդլի, Խաչերես-օդլի, Վարդերես-օդլի, Գալուստ-օդլի և այլն։

* *
*

Այսպիսով, կարելի է ասել, որ XIX դ. վերջերին Տրապիզոնի դավառի (բացի Օրդու դավառակից) ամենահամախմբված ու կաղմակերպված հայկական բնակավայրերը Ցոմուրայի վիճակի դյուղերն էին, որոնցից հատկապես աչքի էին բնկնում Շանան, Կյուշանան, Սինկիլան իրենց հարակից դյուղերով։

Նույն թվականներին այդ շրջանի հայ բնակչության կատարյալ մեծամասնությունը սեփական հողամասերի տեր դառնալով, իրավունք ու հնարավորություն սատցավ քարակերտ տներ կառուցելու, անտեսության հիմնելու, դյուղատնտեսությամբ զբաղվելու։

Մեր դարի սկզբներին Ցոմուրայի վիճակի հայկական դյուղերի բոլոր ուսումնարաններն ու եկեղեցիները կրթալուսավորական ու հայապահպան մեծ դործ էին կատարում։

Տղաներին հավասար պարտադիր էր դարձել աղջիկների զրագիտությունը։ Այդ վեհ դործի առաջին խթանողներից ու նախաձեռնողներից մեկը 1864—1872թթ. Սարայլար դյուղի դպրատուն, հետադայում երևելի բանաստեղծ Ա. Հայկունին է եղել։

1895 թ. մղձավանջային օրերին Ցոմուրայի արեելյան կողմի հայկական դյուղերը (Կալաֆկա-Ապիոն դյուղախումբ) չնչին զոհեր ու վնասներ ունեցան, իսկ Շանայի դյուղախումբը (Կյուշանա, Սինկիլա, Սարայլար) բոլորովին անվնաս մնաց շնորհիվ կաղմակերպված դիմադրության և թուրք հեղինակավոր անձնավորությունների հայապաշտպան քաղաքականության։

Նյութական մեծ վնաս ու զոհեր ունեցան Ցոմուրայի վիճակի արևմտյան հայկական դյուղերը (Ակաֆիա, Մինասլի, Կրոմիլա, Զեֆանող)։

1860-ական թվականներից սկսած արտադաղթը Ցոմուրայից դեպի Ռուսաստան առավել մեծ թափ սատցավ հատկապես 1895 թ. դեպքերից հետո։

6. ՏՐԱՊԻԶՈՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՄԵՐՁԱՒՈՒ ՀԱՄՇԵՆԱՀԱՅ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ.

Տրապիզոն քաղաքը, ելևերիոս պատմադրի վկայությամբ, Տրապիղոն քադաքր հիմնվել է Սինոպից դաղթած հույների կողմից մ. թ. ա. 756 թ., Հռոմից՝ 300, իսկ Կ. Պոլսից շուրջ 100 տարի առաջ։ Տրապիղոնի հիմնադիրները նախ հաստատվել են Աթինա քաղաքի մոտ, սկսել շինարարությունը, սակայն տեղի աննպատա դիրքի պատճառով տեղափոխվել են նոր վայր ու հիմնադրել Տրապիղոն քաղաքը։ Նախկին վայրը այդպես էլ կոչվում է՝ Էսկի-Տրապիղոն (Հին-Տրապիղոն)[24]։ «Տրապիղոն» անունն առաջացել է հին քաղաքի տեղանքի սեղանաձև դիրքի պատճառով՝ հունա-

[24] Մ. Բժշկյանց, Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծովն Վենետիկ (Ս. Ղազար), 1819, էջ 61—71։

րեն ποռպեզ (սեղան) բառից։ Քաղաքը պաշտպանված է, նախ, բնական ամրություններով. հարավից շուրջ 200 մետր բարձրությամբ գեղատեսիլ Բող-Թեփե ապառաժն է, որի դագաթին կա ընդարձակ հարթավայր։ Արեելքից պաշտպանված է Տեղերմեն-աերե դեռով, արեմուտքից՝ Զադրոս դեռով, հյուսիսից՝ Աե ծովով։ Հնադույն ժամանակներից այն ամրացված է եղել բերդապարիսպներով, որոնց ավերակները մնացել էին մինչև մեր օրերը։ Բող-Թեփե ապառաժի լանջին կա հինավուրց վիմափոր հունական ուխտավայր, ուր բարձրանում էին ապառաժի սաորոտից մինչև վանքը փորված քարե 350 ասաիճանով։

Քաղաքում առանձնացված հայկական թաղեր քիչ կային։ Շատ թաղերում հայկական տները խառն էին հունականների հետ՝ մեծ մասամբ շրջապատված թուրքերով։ Իրար մոտ ու բավականին համախմբված հայկական թաղեր էին Իսկենդեր-փաշա (Աու-յոլի), Ենի-մահլա, Ֆրենդ-մահալեսի, Ենի-Թուրքաբ։ Բավականին հայեր բնակվում էին Ուզուն-սուքաք, Քուչուք-մեյդան (Կյավուր-մեյդանի), Հաջի-դասիմ, Զեյթունլուդ, Արեֆիլ-պոյի թաղերում՝ մեծ մասամբ հույների հետ խառը։ Կային նաև քաղաքի այլ փողոցներում ցրված ու փոքր խմբերով համախմբված հայարնակ տներ։

Ընդարձակ, բարձր պարսպապատ հայկական գերեզմանոցը գտնվում էր քաղաքի արեելյան կողմում՝ վանքի ճանապարհին (Աղ. IV, նկ. 2)։ Այդ հողամասը արապիղոնցիների բարերար, հայորդի Սահփանոս Շամսեդդինի (Արևելցու) նվերն էր։ Բացի վանքի ու գերեզմանոցի հողերից, Ս. Շամսեդդինը քաղաքի կենարոնում մեծ հողամաս էր գնել ու նվիրել հայերին։ Այդ հողերում կառուցվել էր շուրջ 40 խանութ ու այլ շենքեր։ Աղգային կալվածքների ամբողջ հասույթը տարեկան 1000 ոսկու էր հասնում. այդ դումարով ոչ միայն աղգային մարմինների բոլոր ծախսերն էին հոգում, այլև մեծ հատկացումներ էին արվում դպրոցներին ու կրթական հիմնարկներին։

Տրապիզոնի քաղաքարնակ հայերի ղդալի մասն իրեն համարում էր անեցիների սերունդ։

5. Տրապիզոնի գավառի ուսուցչական համագումարի մասնակիցները (1914 թ.)։

Դրանում նրանք մասամբ իրավացի էին, քանի որ անեցիների գանգվածային դաղթերից հետո (XI—XII դդ.) Տրապիզոնում հաստատված հայ բնակչության մեծամասնությունն արդեն անեցի էր։ Թավրիզ—Տրապիզոն առեւտրակարավանային հայանի ճանապարհը խթանել էր նաև պարսկահայ (աճեմաճայ) դաղթօջախի ստեղծմանը, որի անվանի ներկայացուցիչներից մեկն էր Սահփանոս Շամսեդդին-Արևելցին։

Եթե ընդունելու լինենք, որ մինչ թուրքերի

կողմից Տրապիզոնի գրավելը (1461 թ.) աեղի հայ բնակչությունը հիմնականում անեցի էր, ապա ի՞նչը կարող էր խթան հանդիսանալ տրապիզոնահայերի ինքնուրույն, նոր բարբառի ստեղծմանը, բարբառ, որն ղգալիորեն տարբերվում է ինչպես համշենահայերի, այնպես էլ անեցիների և, առհասարակ, Շիրակի բարբառից։ Թվում է, որ տրապիզոնահայ բարբառն առաջացել է ինչպես հնագույն ժամանակներից այսաեղ հաստատված հայության, այնպես էլ հետագայում համշենահայերի, անի-շիրակացիների, պարսկահայերի և այլ վայրերից Տրապիզոն գաղթած հայության բարբառների միահյուսումից։

Ինչ վերաբերում է համշենահայերին, որոնք իրենց հայրենի վայրերից՝ բուն Համշենից գաղթել էին շուրջ երեք դար առաջ, գրեթե միշտ հիմնականում գյուղական վայրերում համախմբված ղանգվածներով բնակվելով, պահպանել ու պահպանում են իրենց բնորոշ, ինքնուրույն բաբբառը, ինչպես այժմ Աբխազիայում ու Կրասնոդարի երկրամասում։

Թուրքերի կողմից Պոնտոսը գրավելուց հետո, անեցիների գաղթը դեպի Տրապիզոն գագաթնակետին է։ Դրանից հետո ու հատկապես XIX գ. ընթացքում ու մեր գարի սկզբներին քաղաքի հայ բնակչության թիվն ավելանում է Տրապիզոնի մոտակա Կյոմուշխանե, Բարերդ, Երզնկա, Շապին-Գարահիսար, Էրզրում, նույնիսկ Վան ու այլ քաղաքներից և գլխավորապես շրջակա գյուղերից տեղափոխված ընտանիքների հաշվին։

Շրջակա համշենահայ գյուղերից Տրապիզոն աեղափոխվածների թիվը տարեցտարի աճում էր, որն հանգեցրեց այն բանին, որ աեղի հայ

6. Տրապիզոնի Մահակ-Մեսրոպյան վարժարանի վերջին շրջանավարտներն իրենց ուսուցիչների հետ (1913—1914 թթ.)։

բնակչության գերակշռող հատվածը գարձավ համշենահայությունը։

Տրապիզոնի քաղաքամերձ բնակավայրերի թվում նշված են այն գյուղերը, որոնցում ապրում էին թեկուզ փոքր թվով հայեր։ Այդ գյուղերն էին՝ Արղալիա, Մելեքրիա (վանքապատկան հողեր), Պարյան, Ջուքուրչաիր, Տիվրանող, Թոծ, Մունգա, Անիֆա, Տելի-բալթա, Կրոպի, Սիսեռա, Մահմագ են։ Բացի տյս գյուղերից, որոնք վարչականորեն ենթարկվում էին քաղաքին, նպատակահարմար է նշել նաև Ծոմուրալի

վիճակին ենթակա Զիղակա, Նոխածանա ու Վերանա հայկական դյուղերը, քանդի դրանք աշխարհագրական տեղադրությամբ ու աղդային ներքին կյանքով քաղաքամերձ դյուղերի անխղելի մասն էին կազմում։ Քաղաքամերձ այդ դյուղերը գտնվում են Տրապիզոն քաղաքի հարավ-արևմտյան մասում, Տեղերմեն-աերե դեպի արևմտյան ափերից բարձրացող լեռնալանջերում ու սարահարթերում և արեմտյան կողմից սահմանակից են Ազչեպազաի (Պլասանա) վիճակին, հարավից՝ Գարա-օրմանի լեռնաշղթային։

Քանի որ քաղաքի բնակչությունը գյուղատնտեսական մթերքներ (բանջարեղեն, միրգ են) մատակարարողները հիմնականում այս գյուղերն էին, նրանց գրաղմունքներում գյուղատնտեսության այդ ճյուղերը կարևոր աեղ էին գրավում։ Բարձր մակարդակի վրա էր գտնվում նաև ծխախոտագործությունը։

Մելեթրիա գյուղը գտնվում էր քաղաքի հարավում բարձրացած Բող-Թեփե սարի ու հայկական գերեզմանոցից մինչև վանքապազական հոդերը տարածված հողամասերում։ Բնակչության մեծամասնությունը 1880-ական թվականներին Սև ծովի կովկասյան ափերից նահանջող թուրքական բանակի հետ փախած չերքեզներ էին, հողերի մեծ մասի տերը չերքեզների ցեղապետ Տոքսան-օղլի Հաջի Աուլեյմանն էր, որը թուրք իշխանությունից նվեր էր սացել քաղաքամերձ այս բերրի հողատարածությունը։ Գյուղում ապրող 6 տուն հայերը (հինդը՝ Ֆասուլցոց, մեկը՝ Ճիտարցոց աղդատահմերից) Տոքսան-օղլու իրավազուրկ մարարաններն էին, որոնք իրենց մշակած ծխախոտի 50%-ը պարտավոր էին հանձնել հողատիրոջը։

1895 թ. արյունահեղ օրերին Մելեթրիայի հայերին իր ապարանքում ապաստան է տալիս չերքեզ էմտուլլահ էֆենդին։ Մելեթրիայից ղոհվում է միայն Ֆասուլցիների պապը, որին սպանում են Տիվրանով գյուղից տուն վերադառնալիս։

Մելեթրիտցին կից էին Տրապիզոնի ս. Ամենափրկիչ վանք ընդարձակ կալվածքերը (Աղ. IV, նկ. 1), որտեղ ապրում էր 10 տուն հայ վարձակալ (երկուսը՝ Օտապաշցի, երեքը՝ Թորոսցի, երեքը՝ Զոլաքցի ու մեկական տուն Թերկցի ու Հուսեփցի ազգատոհմերից)։ Վարձակալներն օգտարվում էին վանքի բնակելի և օժանդակ շենքերից. վերջինները հիմնականում ծխախոտի բարեկարգ չորանոցներ էին։ Այստեղի բնակչության գլխավոր գրաղմունքը ծխախոտագործությունն էր։

1905—1907 թթ. վանքի սենյակներից մեկը հատկացվել էր վարժատանը, ուր երկու տարի դասավանդեց Տրապիզոնի տղդային վարժարանի շրջանավարտ Պետրոս Մարդարի Օտապաշյանը։ Աշակերտների թվի պակասության պատճառով, դպրոցը գործեց միայն երկու տարի։

1895 թ. տաղնապալի օրերին այս վանքը մոտակա հայ բնակիչների անտրիկ ամրոցը կարճավ։

Վանքում ապաստանել էր Պարյան, Զեֆանող, մասամբ Կրոմիլա դյուղերի ու վանքի կալվածքներում ապրող շուրջ 400 հայ։

Պարյան դյուղը Մելեթրիայի ու վանքի կալվածների չարունակությունը կազմող քաղաքամերձ հայանի ամառանոցային վայրն էր. դանվում է քաղաքից մեկ ու կես ժամ հեռու։ Այստեղ ապրում էր 17 տուն թուրք, 22 տուն հայ՝ Պալլցի, Պոդոսցի, Նոյսեսցի, Զոլաքցի, Օվակիմցի աղգատոհմերից։ Մշակվող հողերի ու անասունների մեծ մասը Մուրաթան-օղլի Զիա բեկի ու Հաջի Դերվիշ-օղլի Մահմուդ աղայի սեփականությունն էր։ Հայերից 8 տուն մարարաններ էին, իսկ մնացյալները սեփական հողամասեր ու քարաշեն աներ ունեին։

Վարելահողը մշակում էին ձեռքի գործիքներով (լեխտր, փեսաա են) ու արորներով (Աղ. VI—VII)։ Զրաղվում էին հիմնականում ծխախոտագործությամբ և սյգեգործությամբ (կաղնուտ և այլ պաղտաու ծառեր)։ Մշակում էին լավագույն տեսակի տանձ, խնձոր, կեռաս, դեղձ, խաղող։ Տները շրջապատված էին ծվաղի մշատղալը ծառերով՝ ոչ միայն համեղ ու առողջարար պտուղի, այլ նաև հողմերից աները պաշտպանելու համար։ Քաղաքի ու վանքի մոտ լինելը մեծ աղդակ էր նաև բանջարանոցային բույսերի մշակմանը։ Պարյանցիները միաժամանակ լավ անասնապահները էին։ Ամառը կովերը քշում էին 1—2 օրվա ճանապարհ հեռու դանվող արոտավայրերը (Արդանլի, Կրըոմ, Յափաղ)։ Հավաքուծությունը տնտեսության անրաժան մասն էր։ Կաթնատնտեսությունից և դյուղատնտեսության այլ ճյուղերից ստացված մթերքների ու բերքի գգալի մասը, իսկ ծխախոտի ու կաղինի բերքը համարյա ամբողջովին վաճառում էին քաղաքում, վանքում ու հովիկներին։

Բացի դյուղատնտեսությունից, առանձին անհատներ զրաղվում էին չորեպանությամբ (չալաղար), որոնք պետական ու մասնավոր բեռներ էին տանում ներքին դավառները՝ Բարերդ, Էրզրում, Երզնկա, նույնիսկ՝ Վան։

Վանքի մոտ ապրելու շնորհիվ, պարյանցիք սեփական եկեղեցի ունենալու կարիք չեն զդացել։

Գյուղում ուսումնարան գոյություն է ունեցել

1850—1895 թթ.։ 1893—1895 թթ. պարյանցիք կառուցեցին գպրոցի քարակերա ու լուսավոր երկհարկանի շենք։ Սակայն աշակերտներին գոնե մեկ տարի չի հաջողվում սովորել նոր շենքում։ 1895 թ. արյունալի օրերին առաջին շենքը, որ հրկիզում են թուրք բարբարոսները, լուսավորության օջախը՝ գպրոցն էր։ Դրանից հետո պարյանցիք այլևս գպրոցական շենք կառուցելու ձեռնամուխ չեն լինում։ 1,5—2 ժամ հեռավորությամբ ճանապարհ անցնելով, աշակերտությունը գնում էր քաղաքի աղգային վարժարանը կամ հեռավոր այլ գյուղեր։

1895 թ. փորձության օրերին, ինչպես վերը հիշվեց, պարյանցի հայերի մեծ մասը, Կոճաման Սարգսի ղեկավարությամբ, ապաստանեց Տրապիզոնի մերձակա ս. Ամենափրկիչ վանքում ու փրկվեց։

Կատարված վայրագությունների սարսափահար, պարյանցի հայերից շատերը նույնպես թողնելով հայրենի օջախը, փախան Ռուսաստան։

Խսախլոզ կամ Ջոfուր-չախր։ Պարյանից կես ժամ հարավ-արեելք գանվող այս գյուղում ապրում էր 5 տուն հայ՝ Օատպաշցի, Առաքելցի, Օվակիմցի, Թոփալցի, Ղաղարցի աղգատոհմերից. բոլորն էլ թուրք աղաների մարթարաններ։

Տիվրանոզ գյուղը գանվում էր Խաիլողից կես ժամ հարավ, որտեղ բնակվում էր 30 տուն թուրք ու 5 տուն հայ՝ Կյուրեղյան, Սիմոնյան, Ջուլաքյան ազգատոհմերից, որոնցից միայն Կյուրեղյանները սեփական հողամասեր ունեին։ Ամենահարուստ կալվածատերերը Ջիա-բեկ, Շապար-բեկ ու Իրահիմ-բեկ եղբայրներն էին։

Ծանր ու գաժան էր մարթարանների ապրուստար։ Խաիլոզցի Օատպաշյան Հուսեին, որն ընտանիքով երկար տարիներ Ջիա-բեկի մարթարան է եղել, պատմում է. «Բեկը տպիում էր մեզ խոպան հողերը փորել 70—75 սմ խորությամբ։ Երեք հոգով քով-քովի կանգնած, կրզիա փետաններով (երկայր, ծոնար փեսաա) փորում, արմատներից ու քարերից մաքրում էինք մշակվելիք հողամասը, քարերով արահ եզրերին պատ էինք բարձրացնում։ Եթե ղրա կարիքը չկար, տպիում էր խոր փոսեր փորել, քարերը լցնել մեջը, վրան 70—75 սմ հող թափելով, հավասարեցնել վարելահողի մակերեսին։ Եթե մի քիչ խախտում անգամ նկատեին, աշխատավարձից կգրկեին, նորից փորել կտային, հաճախ էլ մարթալին կհեռացնեին տնից ու հողից»։ Իրավաղուրկ մարթան տպիված էր լուռ ու անարդաունչ կատարել աղայի բոլոր պահանջները, այլ կերպ նրան, ընտանիքով հանգերձ, սպառնում էր անապատան մուրացիկի կյանք։

Տիվրանազոմ չափազանց գժվար էր վառելանյութի հարցը։ Երկու-երեք ժամ հեռու անտառներից շալակով վառելիք (փայա) էին բերում։ Փոքր մաս էին կազմում բեռնակիր անասուններ (էշ, ձի) ունեցողները։ Մխախոտի ցողունները չորացնում ու որպես վառելանյութ էին օգտագործում։

Գյուղացիների զբաղմունքն ու հող մշակելու եղանակը ոչնչով չէր տարբերվում պարյանցիներից։

Թոծ գյուղը գանվում էր Տրապիզոնից երկու ժամ հարավ և ուներ հարմարավետ հողամասեր։ Քաղաքից Թոծ տանող արահետն անցնում էր Բող-Քեփե, Պարյան, Տիվրանող, Ջյուրմելա[25] գյուղերի միջով։ Գյուղն ուներ 21 տուն բնակիչ, որոնցից 5 թուրք, 16 հայ՝ Ներսեսցի, Օվակցի, Կապոնցի, Թոփալցի, Էմեքսուղցի, Երեմցի, Եղդարցի, Մաահլցի աղգատոհմերից։ Թոծի հայերի մեծամասնությունը սեփական վարելահողերի տեր էր, տները ցրված էին, հիմնական զբաղմունքը ծխախոտագործությունն էր։ Քաղաքից համեմատաբար հեռու լինելու պատճառով բանջարաուծությունը երկրորդական տեղ էր գրավում։ Սակավ էին նաև պաղատու ծառերը։ Թանկարժեք կաղնու մշակումը նոր էր մուտք գործել։ Հողը մշակում էին արորներով ու մասամբ ձեռքի գործիքներով (լեխարով)։

Տիվրանոզի նման, այս գյուղում էլ ծանր էր վառելիքի հարցը։ Անտառները 2—3 ժամ հեռու էին գանվում։

1895 թ. կոտորածի, սարսափների հետեանքով Ռուսաստան փախչող ընտանիքներից բացի, սակավահողությունը նույնպես սպիում էր ոմանց պանգխանության գիմելու, ուրիշներին՝ ջորեպանությամբ գրաղվելու։ Ջորեպանների ամենաշահավետ, բայց և վտանգավոր ղբաղմունքը ծխախոտի վաճառքն էր։ Նրանք վաճառվելիք ծխախոտը անում էին Հայաստանի տարբեր գավառները՝ Բարերդ, Երզնկա, Կարին ու այլ վայրեր, թանկ գնով վաճառում։ Մխախոտի մանավոր վաճառքը Թուրքիայում խիստ արգելված էր, ուստի շատ անգամ ջորեպանները գինված ընղհարման էին ենթարկվում պետական հսկիչների հետ։

Գյուղում գպրոց ու եկեղեցի չկար։ Դպրոցհասակ երեխաները, անցնելով 1—1,5 ժամվա

[25] Ջյուրմելայում ապրում էր 30 տուն թուրք ու 20 տուն հայ։ Այս գյուղի հույն բարեկամների աջակցությամբ, եղեռնից փրկվեցին հետագայում Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Արման Կոջիկյանն ու եղբայրը։

ճանապարհ, գնում էին Տելի-բալթա գյուղի դպրոցը։ Մինչև 1910 թ. այս գյուղը Մալայի քահանա Տեր-Արսեն Սարյանի ծուխն էր։ Ամենօրյա անտուների միջով, 3—4 ժամվա ճանապարհը նա անցնում էր մենակ՝ դոտու սակ սարճանակն ու դանակը խրած։ Շատ անգամ մինչև գյուղի սահմանը գալիս էր ծպտված՝ մոլլայի հագուստով։

1895 թ. մղձավանջային դեպքերի օրերին, Թոծի հայերը ապաստանում են մոտակա լեռներում։ Երեկոյան թուրք հարեանները, Մուրիմանյանների մարաբա (Տրապիզոնցի Մարիմանյաններն այստեղ ունեին իրենց ամառանոցն ու կալվածքը) Մահմուդ-օղլի Գահրիմանի գլխավորությամբ հոյերին բաժանում են իրենց անների վրա, ապասաան առլիս ու պաշտպանում այս կողմերը խուժած չարդարարներից։ Հայերի տների մեծ մասը թալանվեցին կամ հրկիզվեցին։

Մեծ եղեռնին, բացի Մկրահիչ Ներսիսյանի (Մոլլա Մկրտիչ) ընտանիքից, ամբողջ գյուղը Ենթարկվեց բռնագաղթի (Աղ. III, նկ. 1, 2)։ Մկրտիչը ընտանիքով հեռացավ լեռներն ու միանալով դիմադրական ուժերին, հոշակվեց իր կատարած սխրանքներով։ Մեծ եղեռնից փրկվեցին ու Ռուսաստանում ապաստանեցին շուրջ 21 թոծեցի։

Մանդա գյուղը դտնվում էր Թոծից մի ժամ հարավ-արեելք, որաեղ ապրում էր 35 տուն թուրք, 18 տուն հույն և միայն 3 տուն հայ՝ բոլորն էլ Հրեշտակյաններ։ Մեծ եղեռնից աղատված Հրեշտակյան Միսակի չորս որդիները փրկվել են շնորհիվ հարեան հույների։ Նրանց մեծ եղբայրը, վաստակավոր ուսուցիչ, այժմ Թոշակառու Վարդան Հրեշտակյանն ապրում էր Կիրովականում։

Ս.Անիֆա գյուղը դտնվում է Տրապիզոնից 2,5 ժամ հեռու, որի արեելյան սահմանները հասնում էին Տեղերմեն-աերե դեափն։ Քաղաքից գյուղ՝ մինչև Խոշօղլան, դնում են Տրապիզոն—Էրզրում խճուղով, այդաեղից արահետ թեքվում էր արեմուտք։ Երկրորդ ուղին անցնում էր Բող-Թեփե—Պարյան—Տիվրտնող—Մանդա—Խոտիլող—Անիֆա դծով։ Խոշօղլանում, խճուղուց ջուրջ 150 քայլ դեպի Անիֆա (արեմուաք), հողի ընդերքից ցայտում էր բուժիչ հանքային ջուր։ Անիֆայի բնակչության մեծամասնությունը թուրք էր։ Այսաեղ էին ապրում շրջանի ամենահարուստ կալվածատերերը, որոնք իրենց պահելով լավադույն հողամասերը, դժվարամշակ ղանդվածները ծախել կամ կապալով ավել էին մարարաններին։ Գյուղի 250 տուն հայերը հիմնականում ապրում էին առանձին, աղդակցական թաղերով՝ Թուխալցոց, Օտապաշցոց, Կապոնցոց, Վարդանցոց, Ավետցոց, Ոսկանցոց աղդասահմերը։

Անիֆայի ծայր արեմայան թաղը Տելի-բալթան էր, որի բնակիչները տորինների բնթացքում տճել ու առանձին բնակավայր էին կաղմել։

1895 թ. Անիֆայի հայերի մեծամասնության աները կողոպտվում են, մի քանի առն է միայն փրկվում՝ շնորհիվ բարեկամ թուրքերի։

Տելի-բալթա (Գիժ-աապար)։ Շուրջ 18 տուն ունեցող ղուտ հայաբնակ այս գյուղը (նախկինում՝ Անիֆայի մի թաղը) դանվում էր քաղաքից 3 ժամ հեռու։ Տրապիզոնից Տելի-բալթա տանող ճտնապարհն սկսվում էր քաղաքի արեմայան կողմից ու անցնում Քիրեղխանա, Կալմեն գյուղերի միջով։ Գյուղի հիմնական աղդատոհմերից էին Եղղարցիք, Բաղդասարցիք, Տելիբալթացիք, Ավետցիք, Կարաքյահյեցիք, Ավետցիք, Աարեցիք և այլն։

Անիֆայում ու Տելի-բալթայում զբաղվում էին գյուղատնտեսության նույն ճյուղերով, ինչ Թոծ գյուղում։

Հարտկից հայ գյուղերի (Անիֆա, Թոծ) մշակութային կյանքը կենտրոնացած էր Տելի-բ...լթայում։ Այստեղ էր դանվում քարտշեն դպրոցն ու ս. Լուսավորիչ եկեղեցին (հիմնված 1855 թ.), որը պաշտոնական կբություններում հիշվում է Անիֆա գյուղի անունով[28], եկեղեցուց 300 քայլ հեռու կար ընդարձակ ճահիճ, որի մոա կառուցված քարաշեն աղբյուրը կոչվում էր Եղբի-Բաղդատ-սուի։

Տեղացիների վկայությամբ, գյուղի դպրոցը հիմնվել է 1850-ական թվերին։ 1900-ական թ.թերին գյուղի ուսուցիչը խավարամիտ ու կիսագրագետ մի մարդ է եղել, որը գյուղացիների սնոտիապաշտությունից օգտվելով, դրրացություն, դուշակություններ է արել, հմայիլներ գրել, իրեն «օգնություն» դիմողներից փող ու առատ մթերքներ շորթել։ Ուսման դործն ղգալի չափով բարելավվում է նրան փոխարինող Բաղդասար Ավետիսյանի օրոք։ Մշակութային վերելքն սկսվում է հատկապես 1908 թվականից, Տրապիզոնի Աղդային վարժարանի շրշանավարտ, եռանդուն ու աղդանվեր երիտասարդ Լևոն Ջամուրճյանի՝ դպրոցի դասատու դառնալու օրից։ Լևոնը ամբողջովին նվիրվում է բնակչության լուսավորության վեհ դործին։ Դասավանդումն ու աշակերտների դասաիարակությունը կատարվում է քաղաքի վարժարանի ծրադրով ու մանկավարժական հիմունքներով, վերացվում են ծեծն ու խիստ պաահիժները։ Նրա ջանքերի շնորհիվ ավելսնում է

[28] Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1966, № 6։

դպրոց հաճախող աղջիկների թիվը, որը մինչև այդ եղակի երևույթ էր։ Գյուղի երիտասարդության համար լեռներ դարձավ իսկական դաստիարակ։ Անդրագեանների համար ձրի դասընթացներ բաց արեց, ղրույցներ ու ասուլիսներ կազմակերպեց։

1895 թ. աղետներից տեւլիբալթացիք փրկվեցին շնորհիվ իրենց հայապաշտպան թուրք հարևանների։ Մեծ եղեռնից վերապրած ու Ռուսաստանի փոխադրված 13 հոգուց 9-ր դիմադրական խմբերի մասնակիցներ էին։

Կրոպկ։ *Տրապիզոն քաղաքից 4 ժամ դեպի հարավ գանվող այս գյուղի անները աարածված էին Գալեյճուկ լեռան արևելյան լանջերին։ Քաղաքից Կրոպկ գնալու երեք ճանապարհ կար, տոաջինն ու գլխավորը Տրապիզոնից Խոշողլու—էյլրումի խճուղով, այնտեղից Անիֆա ու Կալեմեն գյուղերի միջով հասնում էր Կրոպկ։ Կրոպկ տանող կարճ ճանապարհն անցնում էր Տրապիզոնի արեմուտքից՝ Ջանոզա կամուրջից դեպի հարավ։ Արահետն անցնում էր Սովուք-սու (այստեղ կա սառն աղբյուր), Փելիթլուղ (Խողկաղնուա), Դաոլուղ՝, Մահմադ (Քիրքորցոց-ջուրը), Ենգրելեղի-օղ ու Գալեյճուկ-սար կոչվող վայրերով ու գյուղերով։ Գալեյճուկն այս շրջակայքի ամենարարձր սարն է։ Նրա գագաթից բացվում է ղմայլելի տեսարան. հյուսիսում ծփում է լայնատարած Սև ծովը՝ կապույտ կամարով, արևելքում՝ Յոմուրայի լեռներն են, հարավում՝ Շահինկայա (Արծվաժայռ) ապառաժը, արևելքում՝ Մալայի անծայրածիր անտառածածկ սարերն ու գյուղերը։ Ենգրելեղ-օղից (որը Թուխալցոց թաղի բարձունքում գտնվելու պատճառով կոչվում էր նաև Թուխալցոց-օղ) մոտ 200 քայլ հարավ-արևելք, Ալթիբարմաք (Վեցմատ) եղրայրների սան մոտ, կար ղանգվածեզ քարից կերտած սառն աղբյուր, երկու կուռնիով ու փայտե վագոլ՝ ջրավազաններով։*

Տրապիզոնից Կրոպկ տանող երրորդ ճանապարհն անցնում էր Տրապիզոն—Բող-Թեփե վանք—Պարյան—Տիվրանող—Անիֆա—Կալեմեն—Կրոպկ երթուղով։

Կրոպկի սահմաններն էին՝ արեմուտքում Գալեյճուկ սարը, որն այն բաժանում էր հայկական Վերանա գյուղից, արևելքում՝ Սիսեռա, հարավում՝ Նոխածանա, հյուսիսում՝ Կալեմեն[28] գյուղերը։

Ջուտ հայկական այս գյուղն ուներ 21 տուն բնակչություն, բաղկացած Հրեշտակցի, Մավիցի, Կակոսցի, Ֆունտուքցի, Պույուքցի, Թուլումչի, Դասպարցի, Կապոնցի, Ալթիբարմաքցի և այլ աղգատոհմերից։

Քաղաքամերձ ամենատաուշագեմ ու կազմակերպված գյուղերից մեկը Կրոպկն էր, եղեռնի նախօրյակին ուներ բարձրադույն ու միջնակարգ կրթություն ստացած երիտասարդ ուժեր (էջմիածնի ճեմարանավարտ Ֆնտքյան Երվանդը, Տրապիզոնի Աղգային վարժարանի սաներ Հայկ ու Ներսես Ֆնտքյաններըր, աշուղ Նեյնին կամ Մուրթաֆ Ակոփը[29], Վարդգես Մավյանը և այլք)։

Բնակչության մեծամասնությունը սեփական կալվածքներ ուներ, որը նրանց հնարավորություն էր տվել կատուցելու քարաշեն բարեկարգ տներ և սահմծելու շատ քիչ հիմնավոր տրնտեսություն։ Շատերն ունեին սեփական մեծ ու փոքր անասուններ։ Բնակչության գլխավոր զբաղմունքը կաղնուտներն էին։ Առատ բերք էին տալիս նաև պաղատու այգիները։ Այսաեղ ևս հացահատիկներից ամենատարածվածը լաղուտն (եգիպտացորենն) էր։ Թույլ էր զարգացած ծխախոտագործությունը։ Գյուղատնտեսության տյլ ճյուղերով (կաթնատնտեսություն, հավարուծություն, մեղվաբուծություն) զբաղվում էին ընտանիքի սննդի պահանջը բավարարելու չափով միայն։

Առողջարար լեռնային կլիմայի, եղևնիների ու մայրիների բուրումնավետ անասուների և սառնորակ աղբյուրների շնորհիվ Կրոպկն լավագույն ամառանոցներից մեկն էր։ Տրապիզոնի հայ հարուստներից ոմանք այսաեղ ունեին իրենց բարեշեն ամառանոցները։

---

27 Դաուլուղ գյուղի բնակիչները, ձմեռը հատուկ փորված հորերում ձյուն էին կուտակում և ամառը էշերին բարձած առնում քաղաք վաճառելու։

28 Կալեմենում ապրում էր 70 տուն թուրք, 20 տուն հույն։

29 Կրոպկում ապրող Ֆնտքյան աղգատոհմի մի սերընդին իրենց արհեստի պատճառով (ձիասպասք պատրաստող) մուրթաֆ էին անվանում։ Համագյուղացիները Մուրթաֆ Ակոփի մասին պատմում են, որ Ակոփը չափազանց զրավիչ արտաքինով, վայելուչ երիտասարդ է եղել, գուրեկան ձայնով ու հիանալի քամենչե նվագող։ Մի անգամ հարևան թուրքերը հրավիրում են նրան հարսանիք և առաջարկում առանձին սենյակում (կանանոցում) կանանց համար նվագել ու երգել։ Մահմեդական օրենքի կարգով, Ակոփի աչքերը կապում են, որպեսզի ոչ կանայք իրեն տեսնեն և ոչ էլ ինքը՝ կանանց։ Ուրախության տաք պահին մի հանգուցյալ կին մտաբերում է Ակոփի աչքերի կապը քանդում է ու այդպես շարունակում են ուրախ հանգեսը։ Գյուղի թուրք բոլոր տների միանուագար աղջիկը սիրահարվում է Ակոփին։ Աղջկա ծնողները առաջարկում են Ակոփին ընդունել մահմեդական կրոնը, ամուսնանալ իրենց աղջկա հետ ու տեր գառնալ իրենց հարստությանը։ Ակոփը չի համաձայնվում և վախենալով թուրքերի վրեժխնդրությունից, փախչում է Ռուսաստան ու հաստատվում Սոչիում։ Այստեղ նա գառնում է բոլորի կողմից հարգված ու սիրված աշուղ։ Շատ անգամ մասնակցում է աստանդական աշուղների մրցումներին ու միշտ հաղթող գուրս գալիս։ Նեյնին մահացավ Սոչիում 1949 թվականին։

Քարակերա ուսումնարանն ու եկեղեցին կանվում էին գյուղի կենարոնում, բավական ընդարձակ հարթավայրում։ Ս. Աստվածածին եկեղեցին հիմնվել է 1843 թ.։

1895 թվականին, հարեան թուրքերի հետ ունեցած բարի հարաբերությունների շնորհիվ, գյուղը թալանի չենթարկվեց և գոհար չունեցավ։ Հայերի գլխավոր պաշտպանները եղել են Մահմուգ-օղլի Մեհմեդ ու Թոփչի-օղլի Էմեր աղաները։ Կրոպիում թալանվել ու հրկիզվել էին միայն քաղաքի հարուստների ամառանոցները։

Քաղաքամերձ գյուղերից միայն կրոպցի եբրիտասարդությունը համեմատարար կազմակերպված ընդգիմացավ բռնագաղթին ու, լեռները բարձրանալով, իր շուրջը համախմբեց շրջակա գյուղերի գիմագրական ուժերին՝ փայլուն էջեր գրելով աղատագրական գոյամարտներում։ Եղեռնից փրկվեց ու Ռուսաստան անցավ շուրջ 25 հոգի, որոնցից 15-ը գոյամարտերի ակտիվ մասնակիցներ էին։

Սիսեռա։ Կրոպիից արեելք գանվող հունական այս գյուղում բնակվում էր 5 տուն հայ՝ Մաահլցի ագգատոհմից։ Մաահլյանների սերունդը հայանի երկաթագործներ ու պայտառներ էին[30]։ Մեծ եղեռնից փրկված հինգ Մաահլյանները աղատվել էին հույն գրացիների աջակցությամբ։

Մահմատ գյուղը գանվում է Տրապիզոնից հարավ-արեմուտք, 4 ժամ հեռու և քաղաքին ենթակա գյուղերից վերջինն էր։ Նրան սահմանակից Աղրիա գյուղը Ագչեապատի (Պլատանա) վարչական շրջանի մեջ էր մտնում։ Մահմատի բնակչության մեծամասնությունը թուրք էր։ 10 անից բաղկացած հայկական առանձին թաղը գանվում էր գյուղի վերին սարահարթում։ Այստեղ ապրում էին Ասլոնցիք, Ներսեսցիք, Սարեցիք, Կանսուղցիք։ Գյուղն առատ էր սառը ջրերով։ Վարելահողերը սեւ ու արգասավոր էին։ Գլխավոր զբաղմունքը կաղնու այգիների (կաղնուտ) մշակումն էր։

Մահմատի դպրոցականները հաճախում էին Տելի-բալթայի դպրոցը։

Աւղալիան Տրապիզոնի արեմուտքում քաղաքամերձ միակ հայկական գյուղն էր, քաղաքից 2 ժամ հեռու։ Բնակչության մեծամասնությունը (շուրջ 100 տուն) թուրք էր։ 22 տուն հայեր բնակվում էին իրար մոտ, երկու թաղերում՝ Ջոլաքցոց ու Բողատվանցոց։ Վերջիններին ժողովուրդը քսակոլ (կարճ թե) էր հորջորջում։ Բոլոր անասնությունները սեփական հողամասեր ունեին։ Հիմնականում զբաղվում էին ծխախոտագործությամբ ու բանջարարությամբ։ Արանք համրավավոր սոխ, սխտոր, լոլիկ, լոլեկի մանր սերմացու ունեին (արփաջուղ), սմրուկ մշակողներ ու վաճառողներ էին։ Արղալիայից Աև ծովի կովկասյան ափերը (Առչի, Աուխում) գաղթող համշենահայերը այժմ էլ հմուտ բանջարարություններ են։ Կաթնաանասնությամբ պարապողները ամռանը անասունները տանում էին հեռավոր ուրոտավայրեր՝ Ինջեսու և Ֆիսերա։

Գյուղն ուներ սրբատաշ քարերով կառուցած հոյակապ եկեղեցի, հիմնված 1843 թ., ս. Հարությոն անունով։ Եկեղեցու ներսի պատերն ու խորանը գարգարված էին կրոնական բնույթի յուղանկարներով։

Եկեղեցու արեմտյան պատին կից կառուցվել էր նույնպես քարաշեն ղպրոցը։ Այս գյուղը Վերանայի քահանայի ծուխն էր։

1895 թ. թուրք հարեաններն իրենց աներում ապաստան են տալիս հայերին, որի շնորհիվ ղոհեր չեն լինում, սակայն հիմնովին կողոպտվում են։ Այդ գեպքերից հետո Արղալիայից շատերը փախչում են և ապաստանում Ռուսաստանում։

Արղալիայով վերջանում է վարչականորեն քաղաքի հետ կապված մերձավոր հայկական գյուղերի ու բնակավայրերի ցանկը, սակայն, ինչպես վերն ասվել է, այս գյուղերից անբաժանելի էին Յոմուրայի վիճակին ենթակա Զիղակա, Նոխաձանա, Վերանա գյուղերը։

Զիզակա (Իզակա) գյուղը գանվում է քաղաքից 4 ժամ հեռու, Գարա-օրմանի ծովահայաց վերին լանջերին։ Քաղաքից Զիղակա տանող միակ ու հարմարավետ ճանապարհը մինչեւ Եսիր-օղլի անցնում էր էրգրումի խճուղով, ապա Նոխա[31] գյուղի միջով (հարավ-արեմուտք) ու մի ժամից բարձրանում Զիղակա։ Գյուղի ծայրամասերի առանձին թաղերում ապրում էր 10 տուն թուրք և 3 տուն հույն։ Հայերը 42 տուն էին, որոնցից 10-ը՝ Ռահանցի, 6-ը՝ Թորոսցի, 4-ը՝ Էքրշցի, 4-ը՝ Մանկուրսուղցի, 6-ը՝ Մալխասցի, 3-ը՝ Շիշմոնցի (Շիշմանյան), 4-ը՝ Ինջեցի (կամ Իսահակցի) ու 5 տուն Թերղցի։

Ի տալբերության համշենահայ մյուս գյու-

[30] 1900-ական թվականներին ընտանիքով Սոչի փոխադրված Մաահլյան Միխակը շրջանում հոչակված դարբին էր։ Տեղին է հիշել, որ Մաահլյանները միաժամանակ առամնաբույժներ (ատամ քաշողներ) էին։ Տակավին սովետական կարգերի առաջին տարիներին շրջակա գյուղերում ատամնացավից պատապողները դիմում էին Միխակին։ Նա ծողնում էր իր պայտառությունն ու ձշտապ օգնությանս հասնում տառապողին։ Հատկանշական է, որ առամ քաշելու համար նա վարձատրություն չէր վերցնում. ըստվից տառապողներին օգնելը սեպագ (բարեգործություն) էր, ասում էր նա։

[31] Նոխասայում բնակվում էր 15 տուն թուրք և 10 տուն հույն։

ղերի, ղիզակսացիների անները շարված էին իրա-րից 40—50 մետր հեռու, գյուղի գլխավոր փողոցի երկու կողմերում։

Ղիզակսայում մարարա հայեր չկային։ Բոլորն ունեին սեփական հողամասեր ու մեծ մասամբ՝ քարաշեն տներ։ Համարյա բոլոր արհեստանոցները քիչ թե շատ սեփական անասունների աղբ էին։ Գյուղն ուներ քարակերտ, բարեկարգ հինգ աղբյուր։

անխախտ մշակում էին կանեփ, որից ստացած թելից կտավեղեն, թոկ և այլ գործվածքներ էին հյուսում։

Կաղնուտներում և անտառային հողամասերում աճեցրած պաղտատու ծառերից ստացված բերքը, բացի կաղինից, օգտագործում էին ղուտ սեփական կարիքները բավարարելու համար։ Սեփական գրաստի (ձի, էշ) սակավության պատճառով, քաղաք մրգ տանելը ձեռնտու չէր։ Ամբողջ գյու-

7. Գրիգոր Սյունեի նվագախումբը (Տրապիզոն, 1909—1911 թթ.)։

Ղիզակսացիների գլխավոր ու ամենատեսակարար ղրաղմունքը կաղնուտներն էին, որոնցից ստացված բերքը համարյա ամբողջությամբ վաճառում էին։ Գյուղից 2—3 ժամ հեռու գտնվող ընդարձակ արոտավայրերը (մեղրե) անասնապահության և կաթնատնտեսության լայն զարգացման հնարավորություն էին տալիս։ Ամառվա ամիսներին անասուններին այդ վայրերն էին տանում։ Մեծաքանակ ոչխարի հոտ ունեցողներ չկային։ Յուրաքանչյուր ընտանիք միս և բուրդ ստանալու համար պահում էր 5—10 ոչխար։ Ձավազանց սակավ էին այծ պահողները։ Գլխավոր հացահատիկը եգիպտացորենն էր, որի հետ համատեղ մշակում էին լոբի՝ հիմնականում վաճառքի համար։ Զբաղվում էին հավարուծությամբ ու մեղվապահությամբ։ Բոլոր տնտեսություններն

ղում երեք էշ և երկու ձի կար։ Տնտեսության ամբողջ բեռը փոխադրում էին շալակով։ Բացի կաղինից, որ վաճառքի էին տանում վարձու փոխադրական միջոցներով (շորի), քաղաք տանելիք ու այնտեղից բերելիք ամբողջ բեռը նույնպես համարյա շալակով էին կրում։

Բոլոր կանանց համար պատավոր ու միաժամանակ պարտադիր զբաղմունք էր ոսկայնանկությունը։

Գյուղի քարաշեն շքեղ ս. Գեորգ եկեղեցին հիմնվել է 1855 թ.[32]։

[32] Ավանդարար պատմում են, որ եկեղեցու շենքի կառուցմանը մասնակցել են գյուղի բոլոր աշխատունակ մարդիկ։ Բացի որմնադիրների, քարտաշների աշխատավարձից, ամբողջ շինանյութը՝ գերան, տախտակ, քար և այլն, պատրաստել ու շինհրապարակ վայրն են հասցրել համայնական

Գյուղի շրջակայքում մնացել էր երկու ավերակ և մեկ գործող հինավուրց ուխտավայր։ Ավերակներից մեկը գտնվում էր գյուղից մեկ ժամ վերև, Վավերա լեռան կատարին, երկրորդը՝ գյուղի հարավային ծայրամասում։ Վերջինից 400 քայլ արեւելք «Այ-Պավլե» հունական ուխտավայրն էր, որի առնական օրը հունիսի 7-ն էր։ Այդ օրը հույն քահանան պատարագ էր մատուցում, հավաքվում էին բազմաթիվ հույն և հայ ուխտավորներ, ղոհաբերություններ կատարում (մատաղ կտրում), երգում ու պարում։ Տոնախմբություններ մասնակցում էին նաև մոտակա գյուղերի թուրք բնակիչները։

Տեղացիների վկայությամբ, Ջիղակսայում դպրոցը հիմնվել է 1850-ական թվերին, քանդի շեն շենքը կառուցվել է 1870-ական թվերին, գյուղացիների համայնական ուժերով։ Աղջիկ երեխաները դպրոց հաճախել սկսել են 1908 թ. տաճկական խարուսիկ սահմանադրությունից հետո։ Մինչ այդ, շրջապատված լինելով թուրք աղդաբնակչությամբ, սարսված էին աղջիկներին դպրոց ուղարկելուց հրաժարվել։

1895 թ. զիղակսացի հայերը դազանային կոտորածի է ավերի ենթարկվեցին։ Գյուղը թալանել են Օլասու և Նոխսա գյուղերի հրոսակները։ Հաջի-օղլի Իսեինի և Ջոլաք-Ահմեդի դլխավորությամբ 16 տուն հիմնովին հրկիզվել, մոխրակույտի էր վերածվել։ Բնակիչները փրկվել էին մոտակա անտառներում ապաստանելով։ «Սուա ներման լուրն առնելով, երբ անտառներից տուն

8. Տոնական օր Տրապիզոնում։ «Թրքրոան պար»։ 1908 թ.։

նրանց պապերը տատաճանաչությունն ու Ավետարան կարդալը սովորել էին այդ թվերին, գյուղի քահանայի մոտ։ Նոր ուսումնարանի քարա-

---

ուժերով։ Որմնաքարերը պատրաստել են 1,5 ժամ հեռու գտնվող Վերանա յուղի քարհանքում։ Տաշած քարերի փոխադրման օրերին գյուղը տոնական տրամադրության մեջ է եղել։ Յուրաքանչյուր հավատացյալ ձգտել է որքան կարող է շատ ու ծանր քար փոխադրել, եռանդուն մասնակցություն ունենալ «աստծո տան» կառուցմանը։ Ամենածանր քարերը կշռել են շուրջ 150—120 կգ։ Սերնդե-սերունդ ցույց էին տալիս քարերը, որոնք տեղադրվել էին եկեղեցու մուտքի դռան։ Եկեղեցու միակտուր 6 մ հաստությամբ մաշմուրքի տախտակից դուռը չինել ու զարդաքանդակել էր հեռավոր Մինասլի գյուղացի, հռչակված ատաղձագործ վարպետ Հուսեփը։ Հինգ ժամվա ճանապարհը, առանց հանգստանալու, այդ ծանրակշիռ դուռը շալակին, գյուղ էր բերել էքշյան Վարդանը,—վկայում են համագյուղացիները։

վերադարձանք, տների միայն լերկ պատերն էին մնացել. բարբարոսները չէին թողել մի հատ հավ կամ հորթ, սարել էին ամբարների վերջին հատիկ լաղուան ու կաղինը»,—վկայում են ականատեսները։

Անօթևան մնացածները ժամանակավորապես բնակվում են հարևանների տներում, մարագներում։ Մոտակա Լիմլի գյուղի առաքինի թուրքերից շատերը ևս իրենց հայ բարեկամներին արամադրել էին ընակելի շենքեր, անկողին, սնունդ։ Այդպիսիներից հիշատակման արժանի է Մուսա օղլի Իրրահիմը, որ ոչ միայն ինքը օդնեց, այլև հորդորեց ուրիշներին՝ հետևելու իր օրինակին։ Թալանից տուժածներին շոշափելի աջակցություն ցույց ավեցին նաև հայկական բարեդործական

ու կրոնական հիմնարկութիւններու։ Բնակչութեան համար մեծ բարերախտութիւն էր նաեւ, որ թալանչիները չէին հասցրել վնասել դյուղի ցանքսերը։ Շնորհիվ քրտնաջան աշխատանքի, 1—2 տարի չանցած, ավերված շինութիւնները նորից վերականգնվեցին ու վերսկսվեց շատ թե քիչ տանելի կյանքն ու աշխատանքը։

Թալանից հետո շատ ընտանիքներ իրենց փրկութիւնը դտան ոուսական հողում (Աուխումի, Սոչիի շրջաններ և այլուր)։

Մեծ եղեռնից փրկվածներից չորսը միացան ինքնապաշտպանութեան դիմող խմբերին, որոնցից Համբար Ռահանյանը (Գալայճի) հոչակվեց իբրեւ խիղախ ու ձեռնհաս հայդուկային ղեկավար։

Նոխածանա դյուղը գտնվում է Տրապիզոն քաղաքից 5 ժամ հարավ գտնվող Գարա-օրմանի լեռնապարի մի թեր կագմող Վիվերա լեռան ծովահայաց լանջին։ Արեեելքում Զիգակա դյուղից բաժանված է Տիլկող-րողագի կոչվող խոր ձորով ու րլուրով, արեմուտքում Վերանա դյուղն է, հյուսիսում սահմանակից է Լիմլի թուրքական դյուղին, որին հաջորդում է Կրոպի հայկական դյուղը։ Տրապիզոնից Նոխածանա դնալու ճանապարհը նույնն է, ինչ որ Մահմաա դյուղինը։ Մահմաա դյուղից արահետը բարձրանում էր Գալեյճուկ սարը, ապա Վերանայի մոտից անցնելով, հասնում Նոխածանա։

Դյուղը բաղկացած էր իրարից կես ժամ հեռու գտնվող երկու թաղից՝ Ռահանցոց (արեեելյան) ու Ծղղարցոց. առաջին թաղի հողամասերը խիստ թեք ու քարքարոտ էին, երկրորդինը՝ համեմատաբար հարմարավետ ու բերքատու։ Երկու թաղերն էլ ապահովված էին լեռնային վճիտ ջրերով, որոնց ակունքների մոտ կառուցվել էին քարե կամ փայտե ավազաններ, իսկ ջուր լցնելու և խմելու համար՝ փայտե վագեր։ Ծղղարցիների մեծ մասը սեփական անտառների տեր էր և ապահովված շինանյութերով ու վառելիքով։ Երկու թաղը միասին 26 տուն էր, 181 անձ բնակչութեամբ, որոնցից 6-ը՝ Ծղղարցի, 3-ը՝ Թոմանցի, 8ը՝ Ռահանցի, 4-ը՝ Մինասցի, 3-ը՝ Նուգարցի և մեկական տուն Ծթոմցի ու Կուլակցի։

Այստեղ կաղինի մշակումը նոր էր մուտք դործում։ Բացի կաղինից, մյուս դրադմունքները նույնն էին, ինչ հարեան Զիդակա դյուղում։ Այստեղ ես վաս էին ապահովված գրասով։

Նոխածանայում դպրոց հիմնվել է 1850-ական թվականներին։ Մինչև 1910 թ. դպրոցի շենքը փոքր ու ողորմելի մի կառույց էր։ Այդ թվին միացյալ ուժերով կառուցվում է բարեկարգ գպրոց՝ հիմքը (ցոքոլ) քարից, մնացածը՝ մաշմուրքի հղկված տախտակից։ Բուրքական դյուղերով շրջապատված լինելու հետևանքով, աղջիկներին դպրոց ուղարկելը հնարավոր է եղել միայն 1908 թ. հետո։

Նոխածանայի ս. Խաչ (ս. Հովհաննես) եկեղեցին հիմնվել է 1843 թ.։ Ավանդության համաձայն, դյուղի առաջին բնակիչները վարելահողի համար անասունները մաքրելիս հայտնաբերում են մի ավերակ եկեղեցի, որի դռան քարի վրա հայերեն տառերով փորագրված էր՝ ս. Խաչ։ Ավերակը դարձնում են աղոթավայր, իսկ շուրջը՝ գերեզմանոց։ Ապագայում նույն վայրում կառուցում են հոյակապ քարաշեն եկեղեցի. հիշարժան քարը տեղադրում են նոր շենքի դռանն ու եկեղեցին անվանում ս. Խաչ։

Նոխածանայի հայկական ավերակ եկեղեցին ու Օլասա դյուղում մղկիթի վերածված փառավոր հայկական եկեղեցին անհերքելի վկաներ են ավելի հետովոր անցյալում Պոնտոսում հաստատված բազմամարդ հայկական գաղթօջախների։

1895-ի արյունահեղ օրերին Նոխածանայի հայերը մարդկային ու նյութական կորուստներից փրկվում են շնորհիվ աչալուրջ ու հեղինակավոր թուրք հարեաններ Լաղ-օղլի Քամիլի ու Բայրաքտար-օղլի Էմինի։ Մոտակա Աալգոյ դյուղի թուրք խուժանը, քաջալերված պետական հրամանով, արշավում է դեպի Նոխածանա։ Էմինն իր համադյուղացիների հետ դիմադրում է մոլեգնած ամբոխին, տախտում նրանց վերադառնալ իրենց տներն ու դարավոր հարեանների հետ բարեկամութիւնը չխղել։ Հրոսակների դեկավարները, տեսնելով Էմինի վճռականութիւնը, տուտուիտուտ հետանում են։ Էմինը չորս օր իր գինակիցներով պահպանում է դյուղը՝ փրկելով դյուղացիներին կոտորածից ու թալանից։ 1915-ին Նոխածանացիք նույնպես ամբողջութեամբ ենթարկվեցին բռնագաղթի։ Վերապրածներից հայտնի են միայն չորսը։

Վերանա։ Տրապիզոնի հարավ-արեմուտքում, Գալեյճուկ լեռան արեմյան լանջերին հիմնված այս դյուղը քաղաքամերձ դյուղերից վերջինն էր։ Նրանից արեմուտք սկսվում էր Ագչեապատի (Պլատանա) վիճակը։ Տրապիզոն քաղաքից Վերանա 5 ժամվա ճանապարհը անցնում էր նույն ուղիով, որով գնում էին Նոխածանա։ Այս երկու դյուղերի մեջտեղում ապրում էր 15 տուն թուրք։

Դյուղի 25 տունը, աղգակցական թաղերով իրարից 100—200 քայլ հետովորութեամբ, կառուցվել էր ճանապարհի երկու կողմում։ Այստեղ ապրում էին Արրիոմցոց, Էմեքսուգցոց, Գահրիմանցոց, Աալեցոց, Մինալցոց, Սարգիսցոց ու

ամենավերջում հոչակավոր շորեպան Նուպտր-Խաչանի (Դավիթ-Խաչան) կամ Խաչանցոց աղգատոհմերը։ Խաչտն քեռու տունը ընտրող նահապետական ընտանիք էր։ Նրա հարկի տակ ապրում էր 4 ամուսնացած ու 5 գեռատի տղա և ազջիկ, ընդամենը՝ 22 շունչ։

Վերանտցիք սեփական հողամասերի տեր էին։ Գլխավոր զրաղմունքը կաղնուաներն էին։ Գյուղտնտեսության մնացած ճյուղերը համարյա նույնն էին, ինչ Զիզակսա գյուղում։ Այստեղ ավելի գարգացած էր անասնապահությունը, հատկապես՝ խաշնարածությունը։ Մեծաքանակ ոչխար էին պահում Մինալցիք։ 1896-ին Ռուսաստան փոխադրվելով, Մինալ-Խաչանը մինչև իր կյանքի վերջը ոչխարի հոտ էր պահում։

Վերանացիների գպրոցն ու եկեղեցին կառուցվել էին գյուղի կենարոնում, 600—700 քայլ իրարից հեռու՝ առանձին վայրում։

Սերոբ Սարգսյանի վկայությամբ, գյուղի դպրոցը հիմնվել է 1850-ական թվերին։ Նրա պապը, ապագայում ա. Մաղաքիա, որը սովորել էր Տրապիզոն քաղաքում, գյուղի առաջին գասատուն է եղել։ Երկհարկանի քարակերա շենքի առաջին հարկը՝ ձմեռվա փայտի պահեստ, անձրև օրերին աշակերտների խաղասրահն էր։ Առաջին առաջագեմ ուսուցիչը Սղգային վարժարանի շրջանավարտ, արապիղոնցի Միսակ Կամպուրյանն (Քուքունջյան) է եղել։ Կամպուրյանն, իր իսկ վկայությամբ, մանկավարժական աշխատանքն առաջին անգամ սկսել է այս գյուղում, ուր դասավանգել է 1896—1899թ թ., կիրառելով քաղաքի գպրոցի ուսումնական ծրագիրն ու մեթոդները։

Վերանայի շքեղ ս. Սարգիս քարակերա եկեղեցին հիմնվել է 1850-ին։ Մինչ այդ, հավատացյալների աղոթավայրը Կուկուլ-քար սարի հինավուրց ուխտավայրն էր։ Վերանայի քահանայի իրավասությանն էին ենթարկվում նաև Նոխատնա և Զիղակսա գյուղերի ծխերն իրենց եկեղեցիներով։

Վերևում հիշված Կուկուլ-քար ուխտատեղին գտնվում էր Վերանա, Իլէ և Աղրիտ գյուղերի միջև բարձրացած Կուկուլ-քար կոչվող լեռան կատարին։ Դա միաձույլ, հսկայական մեծությամբ պատվանգանավոր քարե սեղան էր, մակերեսը շուրջ 15—16 մետր շրջագծով։ Կարծես թե հեքիաթային ածղահանները այն կարել ու գրել էին այդ բարձր լեռան կագաթին։ Դա բնության գեղատեսիլ ու հմայիչ մի պարկե էր, որը դասելով «սասածո հրաշալիքների» թվին, հավատացյալները ուխտավայր էին դարձրել։ Այդ քարի շնորհիվ սարն էլ կոչվել էր Կուկուլ-սար (Կուկուլ-գաղ)։ Ամեն տարի օգոստոսի 7-ին Վերանայի քահանան ժամատացություն էր կատարում այդ մատուռում։ Հեռավոր ու մոտիկ վայրերից բազմաթիվ ուխտավորներ ու ղվարճասերներ էին հավաքվում, ամբողջ օրը ղհոլ-ղուռնայի, քամանչու մեղեդիների ղուգակցությամբ կերուխում անում, երգում ու պարում։ Տոնախմբությանը, բացի հայերից ու հույներից, մասնակցում էին նաև շրջակայքում ապրող թուրք բնակիչները։

1895 թ. լեռները քաշվելու շնորհիվ վերանացիները գոհար չունեցան։ Թուրք խուժանը թալանում է բոլոր տներ։ Մեծ եղեռնից աղատված 12 հոգուց յոթը Դավիթ-Խաչանի գլխավորությամբ քաշվել էին լեռներն ու միացել հայդուկային խմբերին։

Ամփոփելով վերն ասվածը, կարելի է նշել, որ Տրապիզոնի քաղաքամերձ հայկական գյուղերն ու բնակավայրերը հիմնվել էին թուրքական գյուղերի բնակչության հետ խառն կամ շրջապատավել նրանցով։ Համախմբված հայարնակ գյուղերի բացակայությունը գգալիորեն խոչընդոտում էր աղգային ուրույն կյանք վարելուն և ողջամիտ ինքնապաշտպանություն կազմակերպելուն։

7. ԱԳՋԵԱՊԱՏԻ (ՊԼԱՏԱՆԱ) ՎԻՃԱԿ

Այս շրջանն անմիջական շարունակությունն էր Տրապիզոնի քաղաքամերձ գյուղերի։ Վարչական կենարոնը Պլատանա գողարիկ քաղաքն էր։

«Պլատանա» նշանակում է բարգենի։ Ըստ ավանգության, հին ժամանակներում հույն ատղացիք պաշտում էին այդ ծառը։ Տրապիզոնից չորս ժամ արևմուտք, ծովափնյա գեղանիստ այս քաղաքը գտնվում է լայնարձակ ու ապահով ծովածոցի ափին։ Այստեղ արդյունտհանվում է որակյալ ձիթապտուղ և աշխարհահռչակ ծխախոտ։ Ագջեապատի վիճակի վարչական կենտրոնը (միտրանիսա-վայրը) լինելով, շրջանը հայտնի էր նաև համանուն հորջորջմամբ՝ Պլատանայի միղուրլուղություն (ջրջան, վիճակ)։ Քաղաքի չորս թաղում (Ուրումլուք, Իֆթիլածա, Կոծակիա, Քիլիսե-Կրանի) բնակվում էին հույներ, հինգերորդում (Ճամե-Կրանի)՝ թուրքեր։ Այստեղի 12 առն հայերն ղրաղվում էին արհեստներով ու առևտրով և աղգային-մշակութային կյանքով (ղպրոց, եկեղեցի և այլն) կապված էին Պլատանայի քաղաքամերձ Ղալինոս (Ջոլաքցոց-գեղ) բնակավայրի հետ։

Այս շրջանի հայկական գյուղերը սփռված էին իրարից լեռներով ու ձորերով անջատված երկու գետերի՝ Սերայի և Սաթարիայի հովիտներում։ Սերայի հովտի բնակիչները հիմնականում ըղ-

րադրվում էին անասնապահությամբ, ղաշտամշակությամբ, երկրորդներն՝ ծխախոտագործությամբ։

Սերայի գյուզախումբ։ Բացի ծովափնյա հովտային նեղ շերտից, այս շրջանը բաղմաթիվ ձորերով ու բլուրներով կտրտված, խիստ լեռնային երկիր է, տոողջարար կլիմայով ու առնորակ ջրերով։ Սերա գետն սկիզբ է առնում ծովափից շուրջ 50 կմ հեռու բնկած Խուրչան կոչվող լեռնապարից ու ծովն է թափվում Տրապիզոնից 2 ժամ արեմուտքում։ Կոկանա գյուղի մոտ (ծովից 3 ժամ հեռու) Սերային միանում են երկու վտակ՝ Ջավուրտի և Գալայճի անվամբ. սրանցից մի ժամվա ճանապարհ դեպի հյուսիս, Կալոյնա գյուղի մոտ՝ Իլեյի վտակը։

Այս երեք վտակները սկիզբ են առնում Սերա գետի արեելյան կողմի լեռներից։ Շրջանի գյուղերը ծվարել են այդ գետակների հովիտներում ու ստրալանջերին։

Տրապիզոնից մինչև Սերա գետը երթուղին անցնում էր Սամսոն քաղաքը տանող խճուղով։ Քաղաքից կես ժամ հեռու, ճամփեղերին, հնագույն ժամանակներից մնացած հոմական շքեղ Այա-Սոֆիա վանքն է, որը թուրքերը մղկիթի էին վերածել։ Այստեղից կես ժամ հեռու, Հաջի-Բեշիր վայրում կար քարակերտ ադրյուր, որը միակն էր մինչև Սերա գետը։

Գետափնյա հարմարավետ ու արդասաբեր հոդերը դրավել էին թուրք կալվածատերերը։ Հայկական գյուղերը բնկած էին հեռավոր լեռների դժվար մշակելի լանջերին ու սարահարթերում։ Սերա գետի ծովափնյա առաջին բնակավայրը թուրքարնակ Սերա գյուղն էր, որտեղ հիմնականում զրաղվում էին ծխախոտագործությամբ։ Գյուղի կալվածատերերի սեփականությունն էր կամուրջից 100 քայլ հեռու դտնվող երեք ջրաղացը։ Գետի արեմտյան կողմի երկրորդ գյուղը Ասորն էր, որի բնակչության մեծամասնությունը թուրք էր։ Առանձին թաղում ապրում էր 40 տուն հույն. սրանք կենդանի վկաներն էին անցյալում այս վայրերում լայնորեն տարածված հույն ժողովրդի։ Այդ են վկայում նաև Սերա գետի շրջանում հնագույն ժամանակներից պահպանված բաղմաթիվ ավերակ ուխտավայրերն ու բնակավայրերի հետքերը։ Ասոր գյուղի հույներն ունեին ուսումնարան և հինավուրց Ենդրելեղ կոչված ամրակուռ եկեղեցի։ Եկեղեցու մոտ կանդուն էր մնացել հրնագույն մատուռ-մասունքարանը։ Հույն բնակիչների վկայությամբ, մատուռի ներսում փորվել է խոր կրապատ հոր, որը հատկացված է եղել դերեղմաններից հանած մասունքներն ամփոփելուն։ Մատուռը դուռ չուներ։ Նշխարները ներս գցելու համար որմի մեջ թողնված էր փոքր անցք։ Ականատեսների պատմելով, մատուռի ներսում ղպալի քանակությամբ մասունք էր կուտակվել։ Մատուռի աջակողմյան պատի մեջ, մոմ վառելու համար, նկարաղարգված խորշ էր փորված։ Մասունքարանը հավատացյալների սրբավայրն էր։ Եկեղեցին կառուցվել էր դեպափի կողքից ուղղահայաց բարձրացած ժայռի գագաթին։ Ասոր դյուղից հետո իրար հաջորդում էին թուրքարնակ Ֆաքալեն, Բոտոմի, Կալոյնա, Մայեր, Մանկանա, Կոկանա գյուղերը, որոնցից միայն Մանկանայում էր բնակվում 6 տուն հայ մարարա։ Այս գյուղերի հանդիպակաց կողմում՝ Սերա գետի արեելյան ափերին տարածվել էին թուրքարնակ Սուղա, Տեմենի դյուղերը։ Ծովափից մինչ Կոկանա, շուրջ երեք ժամվա ճանապարհ, 1—3 կմ լայնությամբ լավագույն հողամասերը թուրք կալվածատերերի սեփականությունն էին, որոնցից ամենահեղինակավորներն ու հարուստներն իրենց ապարանքներ կառուցել էին Կոկանա դյուղում։

Միվրիկա։ Կոկանայի դեմ ու դեմ, գետի արեելյան ափին, Ջավուրդի և Գալայճի գետերի միջև բնկած էր Սերա գետի ավաղանում ապրող հայերի առաջին հայարնակ այս գյուղը։ Որպես բացառություն Սերա գետի հովտում սփռված հայկական այլ գյուղերից, Միվրիկայի հողամասերի մեծ մասը արդավանդ դաշտավայր էր։

Գյուղի 23 տուն բնակչությունից 12-ը՝ Սոաքելցի, 8-ը՝ Կանսուղցի, 3-ը՝ Մրվոնցի (Մրվանյոն) ու մեկը Քիլիմջցի աղգատոհմերից էին։

Միվրիկայի հայերի մեծամասնությունը, սեփական տնտեսության տեր լինելով, քարակերտ տներ ու բարեկարդ օժանդակ շենքեր (ծխախոտի չորանոց, կորոպ և այլն) ուներ։ Բնակիչների գրեթե կեսը ծխախոտագործությունն էր։ Հիմնական հացահատիկը եգիպտացորենն էր, որի հետ միաժամանակ մշակում էին անհրաժեշտ բանջարանոցային բույսեր՝ լոբի, բանջար, դդում և այլն։ Անասնարուծությամբ, կաթնամշակությամբ և հավարուծությամբ զրաղվում էին սեփական կարիքները բավարարելու սահմաններում։

Քարակերտ եկեղեցին ու դպրոցը կառուցվել էին դյուղի կենտրոնում։ Եկեղեցին հիմնվել է 1870-ական թվականներին[33]։

Ուշադրավ է այն փաստը, որ Միվրիկացի քե՛ կանանց և քե՛ տղամարդկանց տարազը տարբերվում էր այդ շրջանի մյուս դյուղերի տարազից։ Միվրիկացիք հագնում էին ժամանակի նորաձև հագուստներ՝ լազի, զիպկա, չուխա և այլն, մինչդեռ այլ դյուղերում հիմնականում

[33] «Էջմիածին» ամսագրում (1966, № 6) այս գյուղի եկեղեցին չի նշված. բան երևույթին, ուրիշ գյուղի անունով է արձանագրված։

պահպանվել էին համշենցիների աղգային հատուստի ձևերը։

Տեղացիների վկայությամբ, 1895 թ. կոտորածի օրերին ծիվրիկացիք թալանի ու կոտորածի չենթարկվեցին շնորհիվ գյուղի մեծահոգի թուրք աղայի։

Տետեճի։ Թուրքաբնակ այս գյուղում բնակվում էր երեք աուն հայ, որոնք աղգային կյանքով կապված էին Ծիվրիկտ գյուղի հետ։

Կապարոն, Կատավոլ, Իլոնա։ Կալոյնա գյուղի հարավարեմյան լեռնալանջերում իրար էին հաջորդում հայարնակ Կապարոն գյուղը՝ 16 աուն բնակչությամբ, Իլոնան՝ 35 աուն թուրք և 5 աուն հայ բնակչությամբ և Կատավոլ հայարնակ գյուղը՝ 10 աուն բնակչությամբ։ Կատավոլում մեծամասնությունը միենույն (Յանուքյան) աղգանունից էին։ Վերոհիշյալ երեք գյուղերի հայերը, փոքըր բացառությամբ, մարարաներ էին, որոնք ըղրաղվում էին ծխախոտագործությամբ։

Կապարոն (Ղաբայոն) գյուղի ս. Մեսրոպ փայտաշեն եկեղեցին հիմնվել է 1886 թ.։ Կապարոնում էր գանվում նաև այս երեք հայկական բնակավայրերի փայտաշեն գպրոցը։

Լաղանաձ Սերա գետի հարավարեմյան կոգմում, ղուտ հայկական գյուղերից մեկն էր՝ 35 աուն բնակչությամբ։ Սրեմուաքից նրան հարևան Վարա-Վաղանա թուրքաբնակ գյուղը 70 աուն բնակչություն ուներ։ Ինչպես Սերա գետի հովտի ամբողջ հայ բնակչությունը, այնպես էլ լաղանացիք Համշենից ու Սև-գետից գաղթած հայեր էին՝ Մաճկալցի, Զեքուչցի, Դեմիրչցի, Ֆերմոնցի, Թոփալցի, Թոփ-Սաքալցի, Բաբիկցի աղգանուններից, որոնցից ամենաբազմամարդը Մաճկալցոց աուխն էր։

Վաղանացի հայերի մեծամասնությունը սեփական հողեր ուներ, որոնք գնել էին Վարա-Վաղանայում ապրող հարուստ կալվածատիրոջից։

Բնակչության գլխավոր ըղրաղմունքը և եկամրի աղբյուրը կաթնատնտեսությունն ու անասնապահությունն էր։ Առանձին ընտանիքներ 10—30 կով և 1000—1500 գլուխ ոչխար ու այծ ունեին։ Հաշնարածները ամռանն իրենց հոտերով գնում էին հեռավոր արոտավայրեր՝ մինչև Բաիխարման (Զիղանա սարի մոտերքը)։

Երկրագործական հիմնական գործիքները լեխարն ու փետատն էին։ Սրոր օգտագործողները եղակի բնատնիքներ էին։

Կային նաև ղուտ ջորեպանությամբ ըղրաղվողներ, որոնք ջորիների քարավաններով բեռներ էին փոխադրում նույնիսկ մինչև Երզնկա, Կարին և այլուր։

Գյուղի ս. Լուսավորիչ եկեղեցին՝ հիմնված 1860-ին, հինավուրց (ըստ երեույթին հունական) աղոթատեղի մոտ էր կառուցված։

Տեղացիների վկայությամբ, գյուղի փայտաշեն, բարեկարգ ուսումնարանի շենքը կառուցվել էր 1870-ական թվականներին։

1895 թ. սագնապալի օրերին թուրք հրոսակները գյուղի տների մեծ մասը կողոպտեցին ու հրկիզեցին։ Բարեկամ թուրքերի շնորհիվ փրկվեց մի քանի տուն միայն։

Միմերա։ Սերա գետի հովտի հարավարեմըտյան կողմի ամենահնավոր հայկական գյուղը Միմերան է՝ լաղանային սահմանակից, Պլատանայից 6 ժամ հեռու։ Գյուղի տոնածին թաղերում ապրում էին շուրջ 70 տուն թուրք և 43 տուն հայ։

Բնակչության մի մասը սեփական անտեսության տեր էր, մյուսները՝ մարարաներ։ Լեռնային այս գյուղի բնակչության հիմնական ըղրաղմունքը անասնապահությունն ու կաթնատնտեսությունն էր։ Անվանի էր Միմերայի մեղրը։ Այստեղ արոր գոյություն չուներ։

Գյուղն ուներ քարաշեն ուսումնարան։

Մեծ եղեռնից փրկված 4 հողուց երկուսը ապաստանել էին Դերսիմի քրգական գյուղերում, երկու երեխայի վերցրել էին թուրքերը։

Բուտևազ փոքրիկ գյուղը Կոկանայից գեպի Մալա բարձրացող կածաններով կես ժամ հեռավորության վրա է՝ 6 տուն թուրք և երեք տուն հայ բնակչությամբ։

Մեղրիկցոց-գեղ (Մեղրիկլի)։ Կոկանայից մեկ ու կես ժամ հարավ-արևմուտք, իրարից ձորերով ու բլուրներով բաժանված լեռնալանջերին հիմնրվել էին Մեղրիկլի, Թարաքճիլի, Կյունեյ հայաբնակ գյուղակները կամ թաղերը (մահալները), որոնք թեև քիչ բնակչություն ունեին, սակայն մեծ մասամբ «գեղ» (գյուղ) էին անվանվում։ Մեղրիկլիում բնակվող 7 անից հինգը Մեգրիկցոց, երկուսը Պապիկցոց աղգաանունից էին՝ բոլորն էլ թուրք կալվածատերերի մարարաներ։

Թարաքճիլի գյուղն ուներ 7 տուն բնակչությամբ՝ Դուգուքչի, Թոփալցի, Թոփ-սաքալցի, Պապիկցի ու Ջանֆերցի աղգանուններով։ Ըստ ավանդության, այս գյուղում ապրող մեծաաոհմ Թոփսաքալցիք ավանդաբար սանր պատրաստողներ են եղել, այդ պատճառով էլ գյուղը կոչվել է Թարաքճիլի (Սանրագործ)։ Թարաքճիլիի բոլոր հայերը մարարաներ էին։

Կյունեյի (բառացի՝ արեգունի, արեահայաց) բոլոր անտեսությունները մինչև 1908 թ. կոկանացի Ուչինչի-օղլի կալվածատերերի մարարաներ էին, որոնք պարտավոր էին տատցած բերքի (լորի, եգիպտացորեն և այլն) 20—30 տոկոսը հանձնել հողատիրոջը։ 1908 թ. հետո մի քանի

ընտանիքի հաջողվում է հոգամասեր գնել, ինքնուրույն տնտեսություն հիմնել, քարաշեն տներ կառուցել։

Կյունեյում բնակվում էր ընդամենը 12 տուն հայ՝ Կապաստալցի, Ջանֆերցի, Ուղցի աղգատոհմերից։

1895-ի դեպքերի ժամանակ գյուղի տների մի մասը թալանվում է։ Բնակչությունը կոտորածից մազապուրծ է լինում լեռներում ապաստանելով։ Մեծ եղեռնից փրկվեցին շատ քչերը։

Քիրլիցոց-օղ (Քիրլի) գյուղը հիմնված է Բուռնագ և Կյունեյ գյուղերի միջև ընկած պառակներում։ Այստեղ ապրում էր 11 տուն հայ (Սիմավոնցի, Պահարացի, Լուսպարցի և Տերտերցի աղգատոհմերից)։ Սիմավոնցիք այստեղ տեղափոխվել էին Յոմուրալի Սիֆթեր գյուղից։ Բացի Սիմավոնցի եղբայրներ Քիրքորից ու Սվետիսից, որոնք սեփական կալվածներ ունեին, մնացյալները մարաբաններ էին։

Աղրոյ հայարնակ գյուղը գտնվում էր Բուռնաղից կես ժամվա ճանապարհ դեպի Մալա (Հարավ), Կյունեյից արեելք։ Ըստ ավանդության գյուղն այս անունն ստացել էր հինավուրց հունական ուխտավայր Այա-Ղորղոր անունից։ Այն ուներ 21 տուն՝ 225 շունչ բնակչություն (Թոփալցի, Պահարցի, Ուղցի, Օվանեսցի կամ Սյուրմենցի, Կլիճցի և այլ աղգատոհմերից)։

Ընդհատուկ Թոփալ-Մկրըը 1820-ական թվականներին առաջինն է եղել Աղրոյում բնակություն հաստատող հայերից։ Ուչինչի-օղլի ըհկերը, որպեսզի իրենց անտտոածածկ տիրույթները կարճ ժամանտկում մշակելի դարձնեն ու առավել եկամուտ ստանան, Մկըրին չնչին վարձաարությամբ հողամասեր են տալիս, որպեսզի նրա միջնորդությամբ ուրիշ հայ ընշաղուրկ մարարանների դալթակղեն ու տեղափոխեն իրենց կալվածները։ Մի քանի տարվա ընթացքում, բազմաթիվ հայեր տեղափոխվում են Աղրոյ ու մոտակա գյուղերը։ Շնորհիվ այդ շահավետ դործարքի, Ուչինչի-օղլիք դառնում են շրջանի ամենահարուստ կալվածատերերը։ Տրապիղոնում նրանք տարիներ անց կառուցում են փառավոր դղյակներ։

Սյս ու շրջակա՝ Կյունեյ, Քիրլի, Մեղրիկլի, Քիրլիցոց-օղ գյուղերի մարարանները հիմնականում զրաղվում էին ծխախոտաաղործությամբ, ինչպես նաև՝ անասնարուծությամբ, դաշտամշակությամբ (տոնանմնտպես եդիպտացորեն և բանջարանոցային մշակույթներ), հավարուծությամբ։

Հողերը մշակում էին ձեռքի դործիքներով։ Արորով դաշտավայր հերկողները եզակի, ունեոր ընտանիքներ էին։

Գյուղի քարաշեն ս. Լուսավորիչ եկեղեցին կառուցվել էր 1870-ական թթ., նույն վայրում, ուր եղել էր հին հունական ուխտավայրը։ Եկեղեցու շենքը փառավոր կառուցվածք ուներ։ Խորանն ու պատերը պատկերաղարդված էին կրոնավորների նկարներով։

Աղրոյի առաջին վարժապետը, որին հիշում են, եղել է տ. Մկրտիչ Սարյան քահանան։ 1870-ական թվականներին աղրոյցիք, մոտակա գյուղերի (Կյունեյ, Քիրլի, Մեղրիկցի, Թարաքճիլի) բնակչության մասնակցությամբ կառուցեցին քարաշեն դպրոց։ Սյս գյուղը վերոհիշյալ գյուղերի մշակութային կենտրոնն էր։ 1895 թ. գյուղը թալանի չի ենթարկվում և ղոհեր չի տալիս։

Մալա։ Սերա գետի ընթացքում հիմնված հայկական գյուղերի առաջնեկը, ամենահեռավոր ու բաղմամարդ, հայաբնակ Մալա գյուղն էր։ Մալան դանվում է Տրապիղոն քաղաքից վեց ժամ հեռու, Սերա գետի միջին հոսանքի դեղաահիլ լեռնադաշտում, Խուչան սարի ու համանուն ապառաժի ստորոտում։ Մալայից շուրջ երկու ժամ հեռու դտնվող 150 մետրից բարձր, ղառիթափ այս ապառաժի ղագաթից արծաթավարս կալլյակներով թափվում է հեռավոր լեռներից սկիզբ առնող Սերա գետի դլխավոր վտակը՝ Խուչան դետակը։ Խուչանի ջրվեժը, համշենցիների արտահայտությամբ՝ ցրոցրոնը, իր դեղեցկությամբ ու բարձրությամբ եղակի է Տրապիղոնի շրջակայքում[34]։ Խուչան ցրոցրոնից շուրջ մեկ կիլոմետր արեելք, նույն ժայռի վերեից թափվում է Միմպա (15—20 մետր բարձրությամբ) փոքր ջրվեժը, որը դետակ դառնալով, Մալայից կես ժամ դեպի հարավ-տրեելք, միանում է Խուչան ջրվեժի ջրին։ Խուչանի փեշերի ամրողջ լայնածիր տարածությունը ծածկված է լաշի, խաչի ծաղիկ (ղոլի, մեղրածաղիկ) և խընկարբույր այլ ծաղիկներով ու թփերով։ Տրապիղոնից մինչև Մալա երթուղին անցնում է Հաջիրսեիկր—Սերա—Մանկանա—Կոկանա—Բուռնաղ—Աղրոյ վայրերի ու դյուղերի միջով։ Աղրոյ ու Մալա դյուղերն իրտրից բաժանված են Ղողտա կոչվող անդնդախոր ձորով։

Մալայի երկու թաղերի՝ Փոքր ու Մեծ Մալաների միջով հոսում է սառնորակ լեռնային

---

[34] Խուչան ապառաժի մասին հիշվում է այագիսի առասպել։ Իբր թե ապառաժի բարձունքի հակայական քարայրում պահված է անհաչիվ գանձ, երե կ. Պոլիսը աղետի ենթարկվի, այդ հարստությամբ կարելի է վերակառուցել այն, իսկ երե Մալա դյուղն ավերվի՝ կ. Պոլիսը ուժ չի ունենա այն վերաշինելու։

վտակ։ Դեզատեսիլ է, մանավանդ, Փոքր Մալտյի գիրքը։ Քարաշեն տները իրար մուտ շարված էին փողոցի հյուսիսային կողմում։ Ճանապարհի հարավային կողմը աանձի ու խնձորի ծառերի համաարած այդիներ էին։ Թեպետ այդիները անհատ տնտեսությունների սեփականություն էին, սակայն առանց ցանկապատերի էին, ինչը որ դյուղական պայմաններում հաղվադեպ երեույթ էր։ Գյուղի համերաշխ նահապետների հիմնած այդ կարգը սերնդե-սերունդ անխախտ պահպանվում էր։ Այգին բոլորի, մանավանդ ջահելների, սրոսավայրն էր։ Երկու թաղն էլ ապահովված էր լեռնային ղուլալ աղբյուրներով։ Իր ղիրքի, լեռնային կլիմայի և սառն, առողջարար ջրերի շնորհիվ Մալան անփոխարինելի ամառանոց էր։ Տրապիզոնի ունեոր հայերից շատերը ամաոր դաչխ էին այս դյուղը։

9. Բանասաց Մինաս Սարյան (Մալա դյուղից)։

Համաձայն սերնդե-սերունդ ավանդած բանավոր պատմության, համշենահայերի՝ այս վայրերում նոր հիմնավորված ժամանակ, համաատրած անտառներում բնակիչները հայանարերել են հին անեղի հետքեր, դանաղան իրեր ու դործիքներ, այդ թվում նաև մի երկաթյա ծեփիչ (սվազիչ), որը հունարեն մալա է կոչվում։ Մալացիների համողմամբ, իրենց դյուղը «Մալա» կոչվել է հենց այդ դործիքի անունով։

Մալայի հարավային կողմում անծայրածիր հողատատրածություններ ու լեռնային արոատավայրեր են։ Մալացիների մոտակա մեզրեե (դյուղամերձ արոատավայր)՝ Մոտուրան դանվում է դյուղից երկու ժամ հեռավորության վրա։ Նրան հաշորդում են Գայնար-սու (եռացող ջուր, դյուղից 5 ժամ հեռու), Արախուշ (7 ժամ հեռու), Ուղունչաիր (9 ժամ հեռու), Քուրքա (10 ժամ հեռու), Նախ-խարման (11 ժամ հեռու), Կյավուլ-ատղ (15 ժամ հեռու) և այլ ամառանոցային արոատվայրերը։

Համաձայն բանավոր ավանդապատումների, Մալայի նախնիները իրենց այս նոր բնակավայրում հիմնվել են Համշենի ոդրեըդակտն օրերից անմիջապես հետո (1650-ական թվականներից)։ Խուճապի մատնված համշենահայ դաղթականների մի խումբ. կանդ է առնում դարերով անմարդարնակ այս խուլ անառաների մոտ։ Նրանց առաջին ապաստարան-բնակավայրը եղել է Մալայից շուրջ երկու ժամ հեռու դտնվող Դեմորանի լայնաատրած քարայրը (մաղարաե)։ Մաղարայի շրջակայքը հարուտա է վայրի մրգատու ծառերով ու թփերով[35] (ատնձ, խնձոր, առմուն՝ սալոր, մաշմուրք, մեր-հավող՝ հաղարջի թուփ, րալ և այլն)։ Սկզբնական շրջանում փախստականների գլխավոր սնունդը եղել են այդ պտուղները, անատառներում որսած վայրի դազանները, բազմատղան րույսեր ու ծառերի փշուկներում կուտակված վայրի մեղուների մեղրը։

Բանավոր ավանդությունը հավաստում է, որ հենց այդ ժամանակներից էլ հիմնվել է Մալա հայաբնակ դյուղը, և ատրիների ընթացքում այդ դյուղից շատ ընտանիքներ ատաիճանարար սփրովել են Սերա դետի հովտի շրջակա բնակավայրերում։

Հետավոր լեռների մեջ կղզիացած մալացիք ավելի քան երկու հարյուրամյակ խաղաղ ու ապահով կյանք են վարում։ Ավանդությունը նաև հավաստում է, որ Մալայի առաջին բնակիչներից ամենատհեղինակավոր Լուսապար պապը դիմում է Տրապիզոնի վալիին և իրավունք ստանում անատառներում բնակություն հաստատելու՝ առանց կախում ունենալու անհատ կալվածատերերից։ Ըստ երևույթին դրանով է բացատրվում մալացիների՝ վաղ ժամանակներից սեփական անատության տեր լինելը։

* * *

Մալացիների մեջ պահպանվել է մի հին ավանդություն, որը կարելի է անվանել «Մալայի ողբերդություն»։ Հարկ ենք համարում այն ներկայացնել հենց այս բաժնում[36]։

---

35 Տեղացիների վկայությամբ, այս քարանձավում, անհրաժեշտության պարագայում, 500—600 մարդ կարող է ապաստանել։ Մեր օրերում այն խաշնարածների ապահով փարախն էր։

36 Մեջբերումը Ս. Հայկունու «Հուսեփցի աղգատոհմ և ատրօրինակ ավազակ Արրիոմ» գրքից, էջ 9—10։

1750-ական թվականներին մալացիք իրենց ողջամիտ ու շրջահայաց տոհմապետ Հուսեփ պապի իևլահաս ղեկավարությամբ համերաշխ ու հանգիստ կյանք են վարել։ Հարյուր տարին բոլորած ալեհեր ծերունին դյուղի ղեկավարությունը հանձնում է իր մեծ որդուն։ Այդ րանը զայրացնում է փառամոլ ու շահադեա Զաքար-օղլուն, որը հավակնություն ուներ Հուսեփ պապից հետո դյուղի տանուտերը (մուխթարը) դառնալու։ Իր նենդ նպատակին հասնելու միտումով, նա կամովին մահմեդական դավանանքն ընդունելով, նշանակվում է դյուղի մուխթար։

Մեկ օր Զաքար-օղլին մի խումբ ենիչերինների հետ գյուղ է դալիս կրկնակի աուրք (վերկի) հավաքելու։

—Ծո, չուն,—զայրացած ասում է Հուսեփ պապը,—ես քո րերոն օսկոր նետեցի, որ օսկորը կրչթիս՝ չատի դաս, ինձիկի խածիս, չոն լօմո՜ն, քուրքրցար, հիմիկճակ էլ դաս իմ վրա շեռ [կրրպարտություն] ձգիս, քեղի վո՞վ ասաց, օր իմ էրես էլլիս,—ասելով անմիջապես «էղալի» հրացանը պարպում է նրա վրա։ Զաքար-օղլին ապաչվում է դեաին։

Զաքար-օղլու ղինակից ենիչերինները, տեսնելով ղինված մալացիներին, սաքսափահար փախչում են։

Մի քանի օր անց, Պլատանալի ու Տրապիզոնի այլ վայրերից ենիչերիների ու մոլեռանդ մահմեդականների բազմամարդ մի հրոսակախումբ խուժում է Մալա դյուղը։ Հուսեփ պապը իր հարազատներով դիմադրում է։ Անհավասար կռվում նահատակվում է Մալայի նահապետ, Հուսեփ Մեծ պապը։ Մոլեռանդ խուժանը անողոք կոտորում է և՛ մեծերին, և՛ փոքրերին, չխնայելով անդամ կանանց ու ծերունիներին։ Ազատվում են նրանք, ովքեր կարողանում են լեռները փախչել։ Հատկապես բարբարոսաբար հաշվեհարդար են տեսնում Հուսեփ պապի ընտանիքի հետ։ Հողոտում են օրորոցի երեխաներին, կանանց ու երիտասարդներին։ Ապանվում է Հուսեփ պապի մեծ որդին՝ Նահապետը։ Ուրիշների հետ լեռները փախչելով, ազատվում է Հուսեփ ղպղի միջնեկ որդին՝ Օվանեսը, որը իմանալով, որ իրենց ընտանիքից ոչ-ոք չի մնացել, լեռնելեռ անցնելով, հասնում է Շանա։ Այս Օվանեսի թոռն է Ա. Հայկունու «Հուսեփցի Արրիոմ» պատմվածքի իրական հերոս Խելաո Արրիոմը։

Հուսեփ պապի փոքր որդուն՝ Մովսեսին, ուրիշ երեխաների, պատանիների ու աղջիկների հետ, րռնությամբ առնում են Պլատանա և հավատափոխ անում՝ թուրքացնում։ Պատանի Մովսեսին ամուսնացնում են մի հարուստ թուրք ազդկա հետ։ Պլատանալի բարձունքում նրան հատկացնում են ընդարձակ կալվածներ և արգելում հայրենի դյուղը վերադառնալ։ Ս. Հայկունու վկայությամբ, նրա սերունդները Մուսլի-օղլիներ էին հորջորջվում, որոնք 1880-ական թթ. շուրջ 200 տուն կլինեին։ Նույն թվականներին Շանա փախած՝ Հուսեփ պապի միջնեկ որդի Օվանեսի սերունդը՝ Հովսեփցիները, շուրջ 160 տուն էին՝ ամենարազմամարդ աղդատոհմը շրջակա դյուղերի մեջ։

Եղեռնի նախօրյակին մալացիներն ունեին 89 տուն՝ 1009 անձ բնակչությամբ, որոնցից 28 տունը՝ 328 շունչ, ապրում էին Փոքր Մալայում։ Մալայսմ ապրող ազդատոհմերն էին Ուղցիք, Մալխասցիք, Մարաիրոսցիք, Թոփալցիք, Փելիքցիք, Խուշփուլցիք, Տատուրցիք, Սարյանցիք, Պահարցիք, Խաչատուրցիք, Քյայհացիք, Կանսուպցիք և այլն։

Ուպլյան Հովսեփի վկայությամբ իր Նահապետ պապը երկու եղբայրների՝ Արութի ու Պողոսի հետ Մալա դյուղը փոխադրվել են Յոմուրայի Ուղ դյուղից, նրանց ազդանունը Թոռլաքյան էր։ Նոր դաղթավայրում, ծննդավայրի անունով դարձել են Ուղցիներ (Ուպլյան)։

Ընտանիքների անդամների միջին քիվր պարդ վկայում է, որ Մալայում մինչև մեծ եղեռնը պահպանված է եղել նահապետական ընտանիքների բարքը։ Խուշպալ Ակորի ընտանիքը բաղկացած էր 36 շնչից, Մալխաս Պողոսինը՝ 18։ Առաջիններն ունեին 2000-ից ավելի ոչխար ու այծ, 5—6 ջորի, մեղվի 100—150 փեթակ, մեծ քանակությամբ հավ։

Մալացիների դլխավոր զբաղմունքը անասնապահությունն ու կաթնամշակությունն էին։ Քաղաքում մեծ համբավ էին վայելում Մալայի յուդն ու պանիրը։ Հացահատիկներից առաջնությունը արվում էր լաղուսին, որի հետ համահաեդ, նույն հողամասում մշակվում էին բանջարեղեն-ընդեղեն։ Առատ ու որակյալ էր Մալայի մեդրը։ Հավարտությամբ լիովի բավարարում էին ընտանիքի հավկիթի ու մսամսի պահանջները։

Հողերը հիմնականում հերկում ու մշակում էին լեխարով, փետտաով. արորը հատուկենա մարդիկ էին օդտադործում։

Մալայի ս. Գեորդ եկեղեցին հինավուրց ուխտավայր էր, որը դանվում էր դյուղից մեկ ժամվա ճանապարհ դեպի հարավ-արեելք։ Եկեղեցին կատուցվելուց հետո այս շենքը մնացել էր որպես ուխտավայր։

Այս դյուղի բարեկարդ քարակերա դպրոցը կատուցվել էր Փոքր Մալայում, որտեղ դասավան-

գում էին հիմնականում Տրապիզոնի Ազգային վարժարանի շրջանավարտներ։ Աշակերտների թիվը շուրջ 80—90 էր, որի չնչին մասն էին նազմում աղջիկները։ Օրիորդները հիմնականում սկսել էին հաճախել դպրոց 1908 թ. հետո։

Փոքր ու Մեծ Մալա թաղամասերն ունեին իրենց համայնական ջրաղացը, որից օգավում էին ընդհանուր կարգով՝ առանց ջրաղացպանի։

Հեռավոր լեռնաշխարհի մեկուսացված այս կյուղում լայնորեն զարգացած էին արհեսաներն ու անայնադործությունը։ Զանազան արհեսանեւրի մեջ հմաացած վարպեաները բավարարում էին ոչ միայն իրենց, այլև շրջակա գյուղերի երկրագործական, անայնի կահույքի և այլ իրերի պահանջը։



10. Հակոբ Մուրադյան («Համշենցի հայերը» աշխաության հեղինակը). (մահ. 1914 թ.)։

1895 թ. աղեաններից փրկվելու մասին վերապրողները պամում են հեևյալ ճակաագրական միջադեպը։ Թալանի օրը, Մալայից շուրջ մեկ ու կես ժամ դեպի Տրապիզոն դանվող Բոտոմի թուրք գյուղացի, աղքաա Քյոռ-Իսեին Մալայի անաառներից էշին փայտ բարձած վերադաոնում էր աուն։ Տան մոա հանդիպում է մի մեծ խումբ ղինված թուրքերի, որոնք չավուշի ղեկավարությամբ դնում էին Մալա՝ հայերի հեա «հաշիվ աեսնելուն»։ Իմանալով նրանց նպաակը, Քյոռ-Իսեին մոաենում է չավուշին, բարեում ու լրջորեն ղգուշացնում, թե՝ «Ո՞ւր ես դնում այս փոքրաթիվ խմրով, հայերին դուրբա՞ն (դոհ) դառնալու։ Ես նոր անցա Մալայի միջով, ոաից գլուխ ղինված, բոնել են գյուղի մուտքը, որաեղից-որաեղ թնդանոթ ճարել ու դրել բլրի (օղի) վրա։ Իզուր մի ղոհվի ու այս մարդկանց մեղքի առակ մի մարիր»։ Չավուշը հավաաալով Իսեի խոսքերին. իր մարդկանցով վերադաոնում է Տրապիզոն ու այդ մասին հայտնում վալիին։ Վալին հրամայում է ըմրոսաներին պատժելու համար հաջորդ օրը ձիավորների մի վաշտ ուղարկել Մալա։ Բարերախաբար, նույն երեկոյան, սաանալով ջարդի ղաղարեցման մասին կարդադրությունը, նա դյուղ է ուղարկում 3—4 ձիավոր, պարգելու գործի էությունն ու հայանելու ներման մասին։ Նույն չավուշը 4 ձիավորով հասնում է Մալա։ Գյուղում նրան դիմավորում են 3—4 ծերունի։ Բնակիչները ապասաանել էին լեռներում։ Համոզվելով, որ Քյոռ-Իսեին իրեն խաբել է, վերադարձին նրան հեան առնելով, ներկայացնում է վալիին։ Քյոռ-Իսեին իր պաասորաած հագուսաններով պաավի կանդնելով վալիի առջև, կլուխը խոնարհած ասում է. «Ձերը ձեղ երկար կյանք տա, ես այդ հարեանների մեջ ծնվել ու մեծացել եմ, նրանց ադ ու հացով ընաանիք պահել, մի օր վաառություն չեմ աեսել նրանցից։ Ուղեցի մի բանով օգնած լինել։ Վերեն ասաված, ներքևր դուք, ինչպես ուզում եք վարվեցեք հեարա»։ Այսպիսով, մի խղճուկ թուրքի հնարամություն շնորհիվ, ամբողջ մի դյուղ փրկվում է կոտորածից ու կողոպուաից։

Պանծալի անցյալով մալացիք, հավաաալով Տրապիզոնի խարված հայ ղեկավարների ցուցումներին, ամրողջությամբ ենթարկվեցին բրոնադադրի։ Եղեռնից վերապրած 13 հոդուց մեծամասնությունը փրկվեցին քրդական դյուղերում։

Սալախոր։ Մալայի հանդիպակաց լեռներում, Սերա դեսի արևելյան լանջերին հիմնված Սալախոր հայաբնակ գյուղն ուներ 17 աուն՝ 127 անձ բնակչությամբ (Սարյան, Ջորունցի, Ղոնղաքչցի, Դավիթցի, Թորոսցի աղդաանհմերից)։ Սալախորցիք բախաակից ու «հասակակից» էին մալացիներին։ Սրանց նախնիներն էլ սկզբնապես ապասաանել էին վերը հիշված Դեմորանի քարայրում։

Տրապիզոնից Սալախոր ասնող ուղին բաժանվում էր Կոկանա դյուղից, ուր ղեսի վրա փայաե կամուրջ էր ձգված։

Ըսա ավանդության, դյուղի առաջին բնակիչներ անաառներ մաքրելիս դեել են սալախոր («կաղաղապար»՝ կացնի կոթաոի անցք պարասաելու համար)։ Այդ դործիքի անունով էլ գյուղն սաացել է իր անունը։ Համշենցի դարրինիներից շաառր այսօր էլ այդ կադապարին հունարեն բառով «սալախոր» են ասում։

Այս դյուղի ղրաքմանքներն ու երկրագործական գործիքները նույնն էին, ինչ որ մալացիներինը։ Սալախորցիների մեծամասնությունը մարարաներ լինելով, փոքր բացաոությամբ, փայաաշեն աներ էին կառուցել։

Դպրոցական աշակերտները, մեկ ու կես ժամ-վա ճանապարհ կտրելով, հաճախում էին Մա-լայի դպրոցը։

Սալախորի հայերին 1895 թ. ավերից ու կոտորածից փրկեց իրենց հարեան, աղգութեամբ թուրք Թութունջի-օղլի Զեյթին աղան, որն իր կողմնակիցներից զինված մի խումբ կազմելով, գյուղը պաշտպանեց թալանչիներից։

Ախըրճուկ բնակավայրը գտնվում է Սալա-խոր գյուղից հարավ-արեելք՝ Դեմորան բլրի կոգմը, Գալայճի գետի ակունքի մոտ։ Այստեղ ապրում էր մի քանի տուն հայ, որոնց նախնի-ները նույնպես նախապես տպաստանել էին Դե-մորան բլրի վրա գտնվող նույնանուն մեծ քա-րայրում։

Լիկոս հայարնակ գյուղը գտնվում է Սալա-խորի գետուգեմ, գետի տրեեյան լտնջերին. այն ուներ 144 շունչ՝ 20 տուն բնակչութուն (Ֆեր-մոնցի, Դավիթցի, Քյուրտյան, Սարյան, Տաշչիցի, Արզումոնցի աղգատոհմերից)։

Լիկոսցիները նույնպես հիմնականում զբաղ-վում էին տնասնապահութեամբ, կաթնամշակու-թեամբ ու մասամբ գաշտամշակութեամբ։

1895 թ. լիկոսցի հայերը զոհեր չեն ունեցել։

Գյուղն ուներ քառամյա փայտաշեն վարժա-տուն։

Վերին-Զավուտի հայարնակ գյուղն ընկած էր Լիկոսին գեմուգեմ, Զավուտի գետի վերին՝ արեելյան ափին, ուներ 17 տուն բնակչութուն, որոնց մեծամասնութունը նույնպես մարարտներ էին։

Ներքին-Զավուտի։ Վերին-Զավուտիից մի ժամ հարավ, նույնտնուն գետի արեմտյան տափին է գտնվում նախկինում հայարնակ այս գյուղը, ընդամենը 18 տուն (Ֆիլիպցի, Տթոռացի, Դավիթ-ցի, Ղազարցի, Ուղցի աղգատոհմերից)։ Գյուղի ամենաբազմամարդ նահապետական ընտանիքը Ֆիլիպցոց Օվակիմինն էր՝ 33 շունչ, որոնք ապ-րում էին մի հարկի տակ, ունեին հազարից ավե-լի ոչխար, 40 կթան կով և տյլ տնասունևներ։

Սշակերտները հաճախում էին Լիկոսի գըպ-րոցը։ 1895 թ. տյս երկու գյուղերն էլ թալանվե-ցին։

Վերին և Ներքին-Զավուրաի գյուղերից եղեռ-նից վերապրողների մասին տվյալներ չկան։

Լուսինյ հայարնակ գյուղը գտնվում է Ներ-քին-Զավուտիի հանգիպակաց կոգմում, Զա-վուտի գետի աջ ափին, ուր ապրում էր 18 տուն հայ, մեծ մասը Սարյան աղգատոհմից։

1895 թ. տյս գյուղը թալանվեց ու մասնա-կիորեն հրկիզվեց։

Մեծ եղեռնից փրկվողների մասին տվյալները չկան։

Կապան (Կապան) հայարնակ գյուղը գտնվում էր Լուսինոյից հարավ (1,5 ժամ), լեռան վերին լանջերին, 22 տուն բնակչությամբ՝ մեծամասնու-թյունը Տերտերցի, Արղումոնցի, Պահարցի աղգա-տոհմերից։

Մգչեապատի վիճակի հարավարեեյան կոգմի վերջին գյուղը Կապոնն էր։ Նրան սահմանակից Վերանտ գյուղը ենթտրկվում էր Յոմուրալի վի-ճակին։

Բնակչության զգալի մասը սեփական հողա-մաս ուներ։ Զրաղվում էին անասնապահությամբ, կաթնամշակությամբ։ Գլխավոր հացահատիկը եգիպտացորենն էր, որի հետ միասին մշակում էին անահության անհրաժեշտ կանաչեղենն ու րնգեղենը։

Գյուղն ուներ փառավոր քարաշեն եկեղեցի ս. Սարգիս անունով, հիմնված 1875 թ.։ Եկեղե-ցու մոտ կառուցվել էր գպրոցը, հիմնամասր քարից։

1895 թ. կոտորածին գյուղը գրեթե տմրող-ջովին թալանվեց։

Տրապիզոնից Կապոն ճանապարհն անցնում էր Տրապիզոն—Սերա—Կոկանա ուղիով, ապա Կոկանայից Զավուտի գետի րնթացքով՝ Լուսի-նոյ—Կապոն։

Համշենցիք կապոն անվանում են Խուչ, ա-պառաժ վայրերին։ Գյուղի հյուսիս-արևելքում գտնված անղնգախոր ձորերի՝ կապոնների պատ-ճառով էլ գյուղն ստացել է իր այդ տնունը։

Իլե գյուղը գտնվում է Լուսինոյից մեկ ժամ-վա ճանապարհ արևելք։ Իլե և Կապոն գյուղերն իրարից բաժանված են անտառածածկ լեռներով ու րլուրներով։ Բնակչության մեծամասնությունը (շուրջ 200 տուն) թուրք էր։ Հայերը (19 տուն) րնակվում էին առանձին թաղում։ Գյուղի միջով անցնող համանուն գետը Կալոյնայի մոտ թափ-վում է Սերա գետը։ Հայկական թաղը գտնվում էր գյուղի հարտվային սարահարթերում։ Վարե-լահողերը սևահողային ու արգավանդ էին։ Սերա գետի հարավ-արևելքում Իլեն նախավերջին գյու-ղըն էր, որտեղից Տրապիզոն տանող ճանապարհն անցնում էր Տրապիզոն—Մահմատ ուղիով (5 ժամ)։

Իլե գյուղը հարուստ էր անտառներով։ Հո-գերը մշակում էին արորով, լծատրով ու փետուտ-ներով։ Իլեցիների գլխավոր զրաղմունքը ևս ա-նասնապահությունն ու կաթնամշակությունն էր։ Հացահատիկներից առաջնայինը եգիպտացորենն էր։ Յորեն ու գարի ցանում էին ձավարեղենի

համար։ Սեփական կարիքները բավարարելու համար մշակում էին ծխախոտ։ Պաղատու ծառերից մշակում էին ատանձենի, խնձորենի, բալենի, ընկուզենի։ Տների շուրջ կողմը անպակաս էին ծվաղի ծառերը։

Իլեցի հայերն ունեին քարակերա գպրոց։ Շրջապատված լինելով թուրք բնակչությամբ, աղջիկներն այստեղ ղպրոց չէին հաճախում։

Մոտակա եկեղեցին գտնվում էր Վերանա գյուղում։ Իլե, Աղրիա ու Վերանա գյուղերի միջտեղում էր գտնվում Կուկուլ-քար կոչված ուխտատեղին։

Աղրիաք սահմանակից է քաղաքամերձ Մահմաա գյուղին (Տրապիզոնից 5 ժամվա ճանապարհ)։ Մահմաա գյուղից այն բաժանված էր փոքր ձորակով։ Վարչականորեն թեպետ ենթարկվում էր Պլաանայի (Սգչեապատի) վիճակին, սակայն աշխարհագրական գիրքով ու աղգային կյանքով ամրողջովին կապված էր հարակից քաղաքամերձ հայկական գյուղերին՝ Մահմաա, Կրոպի, Վերանա։ Արեմուտքից մեկ ժամվա ճանապարհով բաժանված էր Իլե գյուղից։ Աղրիաի հայերը գաղթել էին Սև-գետի աղեսալի ստերին, այնտեղ եզած նույնանուն՝ Աղրիա գյուղից։ Հին Աղրիաի մասին Ս. Հայկունին հաղորդում է. «Սանթալից 3 ամպոլիի ջրի հետ [գետի ընթացքով] իջնելով կպասահենք Կոպալլի ու Մեղրե հունական հովտավայրերուն, ուստի և 0,5 ժամից Աղրիա թուրքացած հայ գյուղին կհասանենք, որ թերևս քաղաք եղած լինի, ուստի հայ գյուղացվոց մեջ «Գնացիր Աղրիա քաղաք, գողցար օխար հաս ավանակ» առածն հորինված է»[37]։ Այս հին բնակավայրից գաղթած հայերը, հիմնվելով նոր բնակավայրում, ի հիշատակ իրենց ծննդավայրի գյուղն անվանել են Աղրիա[38]։

Աղրիացի հայերի հողամասերը դժվար մշակելի, ղառիվար տեգեր էին։ Գյուղի կենարոնում վիթխարի ընկուզենու հովանու տակ կար սառն աղբյուր։ Գյուղի հարավային հարմարավետ հողերում գտնվում էր թուրքական բաղմամարգ թաղը։ Առանձին թաղում բնակվում էր 10 տուն հույն։ Աղրիատում բնակվող 10 տուն հայերը՝ Կանսուղցի, Մրվոնցի, Սիմոնցի ու Սարեցյան ազգատոհմերից էին։

1895 թ. աղրիացիք լեռներում ապաստանելով, կոտորածից փրկվեցին։ Տները կողոպտվեցին։

Եղեռնից աղատվածներից շատ քչերն են հայտնի։

Աղրիատվ վերջանում է Ագչեապատի վիճակի՝ Սերա գետի հովտում եղած հայկական գյուղերի և բնակավայրերի ցանկը։

Սաքարիայի դյուղախումբ։ Պլաանայի քաղաքամերձ հողերը պատկանում էին քաղաքաբնակ կալվածատերերին, որոնց մեծ մասը ղրաղվում էր նաև առեարով ու վաշխառությամբ։ Նրանց մոտ եղած մարարանները ենթարկվում էին եոակի շահագործման։ Մարարաններից շատերն իրենց մնացած հատուկով, հնարավորություն չունենալով բնատնիքի տարեկան սննդի ու հագուստի պահանջը գոնե նվազագույն չափով բավարարելու, ստիպված էին դիմելու հողատեր վաշխառուներին՝ ապառիկ սննդամթերք (եգիպատացորեն, ալյուր և այլն), հագուստեղեն վերցնելու։ Ապառիկ տատացած ապրանքի արժեքը պարտավորվում էին վերադարձնել 25—50 % հավելումով։ Այսպես, օրինակ, մի կոտ եգիպատացորենը (6 օխա) կանխավճարով արժեր 4 ղուրուշ (34 կոպեկ), իսկ ապառիկ գնելիս վճարում էին 5—6 ղուրուշ (40—48 կոպեկ)։ Մարարան պարտավոր էր իր ուժերով ու միջոցներով մշակած ծխախոտի 50 %-ը սեփական փոխադրական միջոցներով (հիմնականում շալակով) տանել հողատիրոջ մոտանը՝ քաղաք։ Սակայն գրանով էլ չէին բավարարվում վաշխառուները։ Մարարան իրավունք չուներ իր բաժին ծխախոտը վաճառելու։ Նա պարտավոր էր իր բաժինն էլ հանձնելու առևտրական-վաշխառուին։ Ադան վաճառում էր իրավազուրկ մարարայի ապրանքն ու ինքը հաշիվ տեսնում նրա հետ։ Այստեղ էլ բոլոր մեքենայություններր ձեռք էին առնվում՝ ապրանքը բարձրորակի գնով վաճառում և մարարայի հետ ցածր գնով հաշիվը մաքրում։ Բացի հողերից տացած օգուտներից, հայերին շահագործելու ավելի «շահավետ» միջոցներ էլ էին հորինվել. րոնագաղթից խուսափելու համար, յուրաքանչյուր անձից կորղելով երեք և ավելի ուակի, կաղմակերպում էին նրանց փախուստ-տեղափոխությունը։

---

[37] «Արարատ», 1895, № 7—8, էջ 239—248, 293—297։

[38] Աղրիա անվան կապակցությամբ Ն. Ֆնեաքյանը հետեյալ ավանգությունն է դրի առել. «Մանավ մը (հատահատիկ ու գլխավորարար լաղուտ, գարի և աղ վաճառող), կոկիկ օրավարձի խոստումով, Տրգատ գագը հրավիրած էր ամրարներ շինելու։ Սակայն 20 օրվան աշխատանքին փոխարեն առաջարկած էր իշաբեռ մը աղ, որ խոստումին մեկ տասներորդն ալ չէր գոցեր։ Հյուսնը հետեելով պապենական իմաստուն խրատին, թե «Ծողեն մազ մըն ալ փետիս՝ էլի շահ է»—համաձայնած էր և գյուղին ծայրը պատահած ղրկիցներուն ձրի բաշխած էր ապի կեսեն ավելին։

«Աղ էրիտ, աղ էրիա [ապավ]» բառերը արագ ըրչած էին թաղեթաղ և ջատ չանցած, ամենաղգի գրացիներ վազած, առած էին ձրի նվերն ու լիաբերան օրհնած՝ «շեն մնա, աղ էրիտ»։ Ահա այս «էրիտ» բառը կրկնվելով դարձած էր Աղրիա։

Որքանով է հիշտ այս ավանդությունը, չենք դիտեր, ըստ ավյալներու, Համշենի (Սյուրմենեի) ղրջանին մեջ այդ անունով գյուղ կա։ (Հ. Հովակիմյան (Արշակունի), Պատմություն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967, էջ 915)։

Ակնհայտ է, որ հոմտրյա ճորտային վիճակում գտնվող մարարա պահելը առավել ձեռնտու էր, քան այդ հողամասերի վաճառքից ստացված միանվագ գումարը։ Իրենց հաշիվը լավ գիտցող Պլատանալի հողատեր վաշխառուները, տեր գառնալով քաղաքամերձ լավագույն հոգոմտասերին, չէին համաձայնվում մի թիզ իսկ վաճառելու։

Հարյուրավոր տուրիներ այսպիսի ծանր պայմաններում ստիպված էին տոկալ հայրենի բրնձօրրանից՝ Համջենից ու Սև-գետից ճոդոպրած համջենահայերը։ Նրանց միայն չնչին տոկոսն էր սեփական հողամաս ձեռք բերել և ինքնուրույն տնտեսություն ստեղծել։

Պլատանալի մերձակայքում ապրող համշենահայերը հիմնականում համախմբված էին Սաթարիա գետի հովտում, որն սկիզբ է առնում Պլատանալից 25—30 կմ հարավ՝ խոերների լեռնեբից, անցնելով ձորերով և հովիտներով, Պլատանալի արեւելքում թափվում էր Սև ծովը։

Կրո-գյուղը Սաթարիայի գետարերանից շուրջ 20 կմ հեռու, գետի երկու ափերի սարալանջերին սփռված բնակավայր էր։ Սյստեղից հարավ սկսվում էին անմարգարնակ, անտառածածկ լեռները ու արոտավայրերը։ Գյուղն ուներ 13 տուն հայ ու 10 տուն հույն բնակչություն։ Բոլոր հայերը թուրք աղանների մարարաներն էին։ Զրագվում էին տնասնապահությամբ, գաշտամշակությամբ, բանջարարուծությամբ, մասամբ էլ՝ մեզվապահությամբ։ Եգիպտացորենին համատեղ մրշակում էին նաև լորի, որն առաս ու որակյալ բերք էր տալիս։ Լորու զգալի մասը վաճառում էին։

Սաթարիա գետի արեեւյան ափերին, Կրոգյուղից ցած, իրար հաջորդում են հետևյալ գյուղերը.

Աշռուա։ Այստեղ բնակվում էր 7 տուն թուրք, 17 տուն հայ (Բողչան ու Քյայհեցի աղգատոհմերից)։ Հայերից միայն մեկ ընտանիք սեփական հոգամաս ուներ։ Բնակիչների գլխավոր զրաղմունքն անասնապահությունը, կաթնամշակությունն ու գաշտամշակությունն էր։ Ոխախոտագործությամբ զրազվում էին գետափնյա վայրերում։

Ապերա։ 5 տուն թուրք և 17 տուն հայ բրնակչություն ուներ այս գյուղը (Վեզիրցի և Քյայհեցի աղգատոհմերից)։ Բնակչության գլխավոր զրաղմունքը ծխախոտագործությունն էր։ Տրապիզոնի վանքը այգ գյուղում ուներ իր կալվածները, որոնք վարձով մշակում էին մարարաներր։ Բոլոր հայերը մարարաներ էին։

Ներսեսցոց-զեզ։ Այստեղ ապրում էր 7 տուն թուրք և 15 տուն հայ՝ մեծամասնությունը Նոյսեսցի (Ներսեսյան) աղգատոհմից, որոնցից 4-ր սեփական տնտեսություն ուներ։ Բնակչության գլխավոր զրաղմունքը ծխախոտագործությունն էր։

Գալայճցոց-զեզ։ Այստեգ ապրում էր 8 տուն թուրք և 23 տուն հայ բնակչություն, որոնց մեծամասնությունը Գալայճցի աղգատոհմից էին։ Հայերի չնչին տոկոսր սեփական կալվածներ ուներ. բնակչության հիմնական զրաղմունքը ծխախոտագործությունն էր։

Գալայճցոց գյուղում կար փայտաշեն եկեղեցի և գպրոց, որոնք սպասարկում էին նաև հարևան գյուղերին։

Սաթարիա գյուղը գտնվում էր ծովափնյա հարթավայրում։ Այստեղ բնակվում էր 20 տուն թուրք ու 15 տուն հայ մարարա (Կարնեցի, Զոլաքցի, Սեֆերցի, Վեզիրցի աղգատոհմերից)։

Սաթարիա գետի արեմտյան ափերին, վերից վար հերթականությամբ սփռված էին հետևյալ գյուղերր.

Թաքոսցոց-զեզ։ Կրո-գյուղին հարավից սահմանակից այս գյուղում բնակվում էր 6 տուն թուրք և 13 տուն հայ մարարա։ Հայերի մեծամասնությունը Թաքոսցոց աղգատոհմից լինելու պատճառով գյուղն ստացել էր այս անվանումր։ Բացի Թաքոսցիներից, այստեղ բնակվում էին նաև Ավետցիք, Էմիքսուղցիք։ Գյուղի հարավային հողամասերում գլխավորապես ծխախոտ էին մրշակում, իսկ միջին և բարձր լեռնալանջերին, ուր կլիմայական պայմանները հնարավորություն չէին տալիս որակյալ ծխախոտ ստանալու, զրազվում էին անասնապահությամբ, կաթնամշակությամբ և գաշտամշակությամբ։

Խարոսլի։ Ըստ բանավոր ավանդության, այս գյուղի հայերի նախնիները գաղթել էին Սև-գետի համանուն բնակավայրից։ Գյուղում բնակվում էին 5 տուն թուրք և 15 տուն հայ մարարաներ (Տերտերցի, Գարագյողցի, Զոլաքցի, Քյոյհեցի աղգատոհմերից)։ Բնակիչների հիմնական զրաղմունքը ծխախոտագործությունն էր։

Միհասցոց-զեզ։ Գյուղում բնակվում էր 6 տուն թուրք և 20 տուն հայ, որոնց մի մասը սեփական տնտեսության տեր էր։ Սյստեղ կար բրեկարգ փայտաշեն զպրոց, ուր հաճախում էին նաև շրջակա գյուղերի հայ գպրոցականներր։

Սրանց գլխավոր զրաղմունքը նույնպես ծխախոտագործությունն էր։

Էմեբսուզցոց-մահալա։ Այս գյուղի 12 տուն հայ մարարաների մեծամասնությունը Էմեքսուզցոց աղգատոհմից էին։ Հիմնական զրաղմունքը ծխախոտագործությունն էր։

Սբսուզցոց-մահալա։ Սյստեղ ապրում էր 2

ատն թուրք և 10 ատն հայ, որոնք մարարաներ էին՝ Օքսուղցոց ազգատոհմից։

Կարենցոց-մահալա։ Բնակիչներից 3 ատունը թուրք, 8-ը՝ հայ մարաբաներ էին, մեծամասնությունը կարնեցյան ազգատոհմից։ Հիմնական զբաղմունքը ծխախոտագործությունն էր։

Ղալինոս կամ Ջոլաֆցոց-գեղ։ Քաղաքի հարավարևմտյան ծայրամասում ընկած ղուա հայարնակ այս գյուղը բացառություն էր Պլատանայի մերձակա հայ գյուղերի մեջ։ Տարիներ առաջ գյուղացիները ձեռք էին բերել սեփական հողամասեր, սահմանել բարեկարգ անասնություն, իսկ շատերն ունեին նաև քարաշեն տներ։ Գյուղն ուներ 26 ատուն՝ մեծամասնությունը Ջոլաքցոց ազգատոհմից։ Զբաղվում էին ծխախոտագործությամբ և բանջարարուծությամբ։ Զարգացած էր նաև պաղարուծությունը։

Գյուղի քարակերտ ս. Աստվածածին եկեղեցին հիմնվել էր 1850 թ.։ Եկեղեցու ներքին պատերն ու խորանը ղարղարված էին փայլուն ներկերով նկարված կրոնավորների նկարներով։

Բարեկարգ փայտաշեն ղպրոցը հիմնվել էր 1840-ական թվականներին։

Կոնդակչոց-գեղը գանվում էր Պլատանայից շուրջ երկու ժամ հարավ-արեելք, Կոլոնիմա գետի արեմտյան հովտում։ Ուներ 16 ատուն՝ բոլորն էլ Կոնգակչոնց ազգատոհմից։ Զբաղվում էին ղաշաամշակությամբ, անասնապահությամբ, ծխախոտագործությամբ։

Վերոհիշյալ բոլոր գյուղերում արոր գոյություն չուներ։ Վարելահողերը մշակում էին լեխարով, թոնար ու ցոնքի փետատներով։

Գրեթե բոլոր հիշյալ գյուղերում թուրքախոսն բնակչություն լինելու հետևանքով, աղջիկ երեխաներին գպրոց չէին ուղարկում՝ նույնիսկ զուտ հայարնակ Ղալինոս գյուղում։

Նույն պատճառով խնջույքներում ու հարսանիքներում, մինչև թուրք ինքնակոչ հյուրերի հեռանալը, աղջիկներն ու գեղսաի հարսները առանձնանում էին իրենց հատկացված սենյակներում կամ մատանում։ Միայն թուրքերի հեռանալուց հետո նրանք կարող էին մասնակցել պարերին ու խնջույքներին։

Բացի Ղալինոսից, որտեղ սրբությամբ պահպանվել էր մայրենի բարբառը, մնացած գյուղերում բնակիչները համարյա բոլորը թրքախոս էին գարձել։ Քահանան սահպված էր աղոթագրքերը կարգալ հայերեն ու թարգմանել թուրքերեն։ Առանց թարգմանելու պատարագ մատուցում էին միայն Ջոլաքցոց (Ղալինոս) գյուղում։

Բացի հեռավոր անասատամերձ գյուղերից, մնացածների համար չափազանց ծանր էր վառելափայտի հարցը։ Հողատեր բեկ-աղաները մի օխա ծխախոտ սատանալու համար մշակության հարմար բոլոր հողամասերում ծառերն ու թփերը անխնա արմատախիլ անել էին տալիս։ Գյուղացիք երկու-երեք և ավելի ժամվա ճանապարհ էին կարում՝ մի շալակ փայտ հայթայթելու նպատակով։

8. ՏՐԻՊՈԼԻՒ (ԹՐԻՊՈԼԻ) ԳԱՎԱՌԱԿ

Պլատանայից արևմուտք մինչև Տրիպոլիի սահմանը, շուրջ 50 կմ տարածություն գրավող երկրամասում հայ բնակչություն լինելը չի հիշվում։

Բեյուք-լիման։ Հին անունը եղել է Հիերոն կամ Տոռն-օոռս (Հունարեն՝ Սրբազան լեռ)։ Պլատանայից 56 կմ արեմուտք ընկած ծովափնյա բնակավայր է։ Նախաեղեռնյան տարիներին այստեղ ապրում էին 25 ատուն հայեր, որոնք ունեին սենյակ-վարժատուն։

Էլևի (էլեղու, Կյուրե կամ Գոռոլա)։ Գանվում էր Բեյուք-Լիմանից 20 կմ արեմուտք ընկած ծովափնյա տեռա հարթավայրում։ Էլեիից 10 կմ (6 մղոն) արեմուտք՝ Հալքալավա վայրում ծովն է թափվում ջրատար խուրշուղ գետը։ Էլեիի բնակչության մեծամասնությունը թուրք էր, բնակչության թվով երկրորդ տեղը գրավում էին հույները։ Ավանում ապրող 60 ատուն հայերը Թամղարայից ու Գարահիսարից էին գաղթել։ Ավանի առեատուրն ու արհեստագործությունը հիմնականում հույների ու հայերի ձեռքին էր։ Հայերն ունեին բարեկարգ տարրական քառամյա գպրոց։

Ավանի ս. Լուսավորիչ եկեղեցին հիմնվել է 1860 թ.։

Էլեիի աշքի ընկնող ու բազմամարդ ազգատոհմերն էին Ջորյան, Աշըգյան, Մաղմանյան, Կոթիկյան[39], Հովիվյան և այլն։

Տրիպոլիե Էլևիից 24 և Տրապիզոնից 90 կմ հեռու բնակած նավահանգստային քաղաք է։ Հին անունը Էսքոպոլի էր, որ նշանակում է եոաքաղաք։ Ունի առողջարար կլիմա և սառնորակ ջուր։

1908 թ. պաշտոնական ավյալների համա-

[39] Էլևիում է մեծացել ու նախնական կրթությունն ստացել ՀՍՍՀ ժողովրդական դերասան, հանգուցյալ Արման Կոթիկյանը։ Էլևիի մասին տեղեկությունները հաղորդել է հիմնականում Ա. Կոթիկյանը։

ձայն քաղաքն ուներ 57.477 բնակիչ, որոնցից 15.000-ը՝ թուրք, 9000-ր՝ հուլն, 726-ը՝ հայ[40]։

Հայերի քարտկերտ ս. Լուսավորիչ եկեղեցին հիմնվել է 1820 թ.։

1914 թ. տվյալներով[41] հայերն ունեին հրնդամյա երկսեռ գպրոց ու մանկապարտեզ։ Աշակերտների թիվը (ղպրոցում՝ շուրջ 100, մանկապարտեզում՝ 100) ընդամենը 200 հոգի էր։ Ղպրոցն ուներ 300 օսմանյան ոսկի բյուջե, որից 30-ը վճարում էր եկեղեցին, մնացյալը՝ աշակերտները։

1915 թ. Տրապիզոնի հայերի հետ միաժամանակ բոնագաղթի ենթարկվեցին նաև Տրիպոլիի հայերը։

9. ԿԻՐԱՍՈՆԻ (ՓԱՌՆԱԿԻՍ) ԳԱՎԱՌԱԿ

Կիրասոն։ Հույներն այս քաղաքն անվանում են նաև Քիռասոս (Կեռաս)։ Տբիպոլիից Կիրասոն 69 կմ, Տրապիզոնից՝ 153 կմ է։ Քաղաքը գեղատեսիլ գիրք ունի, բարեկարգ տներով ու փողոցներով, երկու կողմից շրջապատված ապառաժներով։ Կիրասոնը համանուն գավառակի կենտրոնն էր, ուր նստում էր գայմագամը[42]։

1909 թ. պաշտոնական տվյալներով գավառակն ուներ 108.500 բնակչություն, որից 98.000-ը՝ գյուղերում, իսկ 16.000-ր՝ քաղաքում։ 1911 թ. տվյալներով, Կիրասոն քաղաքում ու շրջակա գյուղերում բնակվում էր 3500 հայ, որոնցից 200-ը (38 տուն)՝ գյուղերում։ Հայերի մեծամասնությունը Շապին-Գարահիսարից, Թամզարայից ու մոտակա վայրերից էին այստեղ գաղթել[43]։

Հիշված և այլ վայրերից դեպի ծովափ՝ Կիրասոն ու շրջակա բնակավայրերը, հայերի գաղթը առանձնապես մեծ թափ է սաանում Կիրասոն—Շապին-Գարահիսար խճուղու կառուցումն ավարտվելուց հետո՝ 1880-ական թվականներից սկսած։

Կիրասոնը հայտնի էր հատկապես կաղինի արտահանությամբ։ 1910 թ. տվյալներով, ամբողջ նահանգի արտահանած կաղինի շուրջ 50%-ը տվել էր Կիրասոնը՝ ավելի քան 400.000 դանթար[44]։ Կիրասոնը համարվում է Կիրասոնե կոչված լավագույն տեսակի կաղինի հայրենիքը։ Սև ծովի կովկասյան ափերին՝ Սուխումի, Սոչիի և այլ շրջաններում կաղինի այդ տեսակի տարածողները եղել են այս կողմերից Ռուսաստան գաղթած հայերն ու հույները։

1914 թ. Կիրասոնի հայկական Սղգային վարժարանն ուներ 330 երկսեռ աշակերտ, 16 ուսուցիչ, 800 ոսկի բյուջե։ Բյուջեն հայթայթվում էր՝ 350 ոսկին՝ աշակերտներից, 130-ը՝ աղգային կալվածներից, մնացածը եկեղեցական տուրք էր։ Վարժարանն իր մանկապարտեզով հանգերձ ուներ իննամյա գասընթաց։ 1912—1914 թթ. Կիրասոնի Ազգային վարժարանն ապրում էր ծաղկման շրջան։ Դպրոցն ապահովված էր որակյալ ու նվիրված ուսուցչական կազմով։ Հոգաբարձություն գործում մասնակցություն ու աջակցություն էր ցույց տալիս գպրոցի աշխատանքին։ Ուսումնարանի տեսուչը՝ վանեցի Սարգիս Բարսեղյանը բարձրագույն կրթություն ստացել էր Շվեյցարիայում։ Նրա հետ Շվեյցարիայում սովորել էր ֆրանսերեն լեզվի ուսուցչուհի Պերճուհի Բարսեղյանը (տեսուչի կինը)։ Վանեցի Արսեն Հացագործյանը վերջացրել էր Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանը։ Հարգված ու սիրված ուսուցիչ էր նաև վանեցի Բարունակ Կտպուտիկյանը։ Վարժարանն ուներ քառաձայն երգչախումբ, գրական, թատերական խմբակներ[45]։

Կիրասոնի հայերն ունեին երկու եկեղեցի։ Քաղաքի կենտրոնի ս. Գ. Լուսավորիչ կոչվող քարտկերտ շքեղ եկեղեցին հիմնվել է 1838 թ.։ Երկրորդ եկեղեցին՝ ս. Սարգիսը՝, ժայռափոր հինավուրց հունական աղոթատեղի էր եղել, որը հայերը հույներից գնել էին շուրջ 100 տարի առաջ։

1895 թ. արյունոտ օրերին Կիրասոնի հայությունը կոտորածից ու թալանից փրկվեց չնորհիվ քաղաքի գինվորական հրամանատարի, «որն իր ձիուն վրա նստած, հայկական թաղերու մեջ կը շրջեր իր թիկնապահներովս,—հայտնում է ականատեսներից մեկը։

1915 թ. բոնագաղթն սկսվեց հունիսին, որի հետևանքով գրեթե իսպառ հայաթափ արվեց այս գավառակը[46]։

Բուլանճըք։ 27 կմ Կիրասոնից հեռու փոքր ավան, որը Կիրասոնի գայմագամությանը ենթակա Բուլանճըք վիճակի կենտրոնն էր։ Կիրակի ու շաբաթ օրերը այստեղ տոնավաճառի օր էր, ուր

---

40 Հ. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 422։

41 «Ազատամարտ», 1914, № 1492, «Ուսուցչական համագումար Տրապիզոնին մեջ»։

42 Ներկայումս Կիրասոնը համանուն նահանգի կենտրոնն է, որին միացված է նաև Շապին-Գարահիսարի գաւառը։ (Տե՛ս «Ժամանակակից Թուրքիա», էջ 12)։

43 Հ. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 465։

44 Մեկ դանթարը հավասար է 35,156 կգ։

45 «Ազատամարտ», 1914, № 1492։

Բարունակ Կապուտիկյանը հայ անվանի բանասաեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հայրն է։

46 Աւրշակունի (Հ. Հովակիմյան), նշվ. աշխ., էջ 477։

գալիս էին Կիրասունի և Օրդուի գավառակների բնակիչները։

Բուլանճրքում բնակվում էր շուրջ 45 տուն հայ, մեծ մասը սեփականատեր։ Ունեին փայտաշեն գպրոց։

Գյուղի ս. Նիկողայոս եկեղեցին հնուց մնացած, քար ու կրով կառուցված շենք էր։

Պազար-սուի (Սալղուճա)։ Երեք ժամ Բուլանճրքից արեւելք գտնվող այս գյուղն ուներ 25—30 տուն հայ բնակչություն, որոնք բոլորն էլ մարդարաներ էին։

10. ՕՐԴՈՒԻ ԳԱՎԱՌԱԿ

Սրդուն (Գոթորիա) Կիրասունից 77, Տրապիզոնից 167 կմ արեմուտք բնակած ծովափնյա քաղաք էր, հիմնված պատմական Գոթորիա քաղաքի վայրում։ Մ. Բժշկյանը այս քաղաքի մասին գրում է, որ՝ «Առաջ հոս բնակութիւն չկար. մեր օրը ձեռամբ Մահտեսի Ավետիք Տրապիզոնցի իշխանին՝ բնակութիւն շինվեցավ ամենայն աղգաց։ Օրդուին լեռան վրա հին բերդին ավերակը կերեա. ուր երկաթյա դուռ կա, որ շատ սանդուխքով վար կիշնի մինչև դեպրը»[47]։

Քաղաքի արեւելյան եզերքին ծով թափվող Բոքլի-տերե փոքր գետի ջուրը ամռանը չորանում էր, ջրաղացները չէին աշխատում։ Նրանցից մի ժամ արեւելք գտնվում է Ճիվելի կամ Մելեթի գետը։ Քաղաքի տները տարածված էին Բոզ-թեփե լեռան լանջերին ու հարավարեւելյան սարորտներին։

1908 թ. պաշտոնական ավյալներով գավառում բնակվում էր 130.800 մարդ, որից 103.16-ը թուրք, մահմեդական վրացի, չերքեզ, լազ, հույն ու պարսիկ էին, 17069-ը՝ քրիստոնյա հույն, իսկ 10.315-ը՝ քրիստոնյա հայ։ 1911 թ. Օրդու քաղաքում ապրում էր շուրջ 3000 հայ[48]։ Օրդու քաղաքի հայերի գլխի մասը գաղթել էր Թամզարայից, Շապին-Գարահիսարից և Կիրասունից։ Վերջին սարիներին ղգալի թիվ էին կազմում շրջակա գյուղերից քաղաք փոխադրվողները։

Հայերը ակնառու տեղ էին գրավում քաղաքի տնտեսական կյանքում։ Արհեստավորների մեծամասնությունը հայ էր։ Կային մասնագետ հացագործներ, պղնձագործներ, թիթեղագործներ, կոշկակարներ, ոսկերիչներ, երկաթագործներ, սաղաձագործներ, որմնադիրներ և այլն։ Ոստայնանկությունը համարյա հայերի մենաշնորհն էր։ Գործում էին ամեն տեսակի կտավեղեն, երեսսրբիչներ, բաղնիքի խավլիկներ, պեշքամոլ (վերջտոմոլ)։ Զկնորսությունը տղամարդկանց սիրած զբաղմունքն էր։ Ջանասեր արհեստավոր լինելու շնորհիվ Օրդուի հայերը, մեծ մասամբ բարեկեցիկ կյանք էին վարում։ Քաղաքի առեւտուրը գտնվում էր երկու մրցակից աղղությունների՝ հայերի և հույների ձեռքին։

XIX դ. վերջերին Օրդուի շրջանի հայ գյուղացիները, Տրապիզոնի ու Կիրասունի շրջաններից բերելով կաղինի սունկեր, այս կողմերում հիմք են դնում կաղինի (կաղնուա) մշակությանը։ Այդ եկամտաբեր պտուղը արտասովոր արագությամբ տարածվում է դավառակի շատ գյուղերում։ 1900-ական թվականներին կաղնուաներն այնքան շատացան, որ կաղինը դարձավ շրջանի արտահանվող առաջին ապրանքներից մեկն ու ժողովրդի հարստության գլխավոր աղբյուրը։

Օրդու քաղաքի տնտեսական կյանքն ակնառու վերելք է ապրում առանձնապես 1880-ական թվականներից հետո՝ Օրդու—Սեբաստիա խճուղու կառուցման շնորհիվ։ Այդ ժամանակվանից, հատկապես 1908 թ. դգալիորեն ավելանում է Սեբաստիայի նահանգից Օրդու տեղափոխվող հայերի թիվը։

Օրդուն ուներ 6-ամյա երկսեռ դպրոց և 6-ամյա մանկապարտեզ, որտեղ սովորում էր շուրջ 600 երեխա ու պատանի։ Աղջիկների դասարանը աղաներից առանձին էր՝ նույն շենքի երրորդ հարկում։ Դպրոցն ուներ 17 ուսուցիչ, շուրջ 1000 ոսկի բյուջե, որից 50 ոսկին դպրոցին կից կտդնուտից սացվող եկամուտն էր, 100-ը՝ եկեղեցին էր վճարում, իսկ մնացածը աշակերտներից դանձվող ուսման վարձն էր։

Օրդուի հայ բողոքականներն ունեին իրենց դպրոցը՝ շուրջ 60 աշակերտով ու փորձառու ուսուցիչներով։ Օրդուի ս. Միսակ եկեղեցին հիմնվել է 1834 թ.։

Բոզ-թեփեն Օրդուին մերձակա՝ հայերի առաջին ու գլխավոր բնակավայրն էր։ Քաղաքի ցածրադիր թաղերի բնակիչներից շատերի համար ամառանոցային վայր էր։ Տարիների ընթացքում զգալի թվով հայեր հաստատվել էին նաև Օրդու քաղաքի Զեյթուն-մահալեսի, Աարայ-մահալեսի, Տաղպալր և այլ թաղերում։

1850-ական թվականներից Բոզ-թեփեում ապրող շուրջ 150 տուն հայերն ունեին «Մովսեսեան» կուչված դպրոցը։

Համշենից ու Սև-դեհից գաղթած համշենա-

[47] Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 53։

[48] Աբրահամեան (Հ. Հովակիմյան), նշվ. աշխ., էջ 488—489։

Հայերի մի զգալի հատվածը հանդրվանել էր Օրդու գավառակի լեռնային մասերում։ Տեղի թուրք կալվածատերերը սիրահոժար թույլատրում էին աշխատասեր համշենահայերին բնակվելու անծայրածիր լեռնածածկ հողամասերում։ Համշենցի շինականները դառնում են թուրք հողատերերի իրավազուրկ մարդանները։ Տարիների ընթացքում կալվածատերերի միայն չնչին մասը համաձայնեց իրենց հողամասերից ծախել հայ մարդանեներին։ Նրանց ձեռնտու չէր զրկվել մշտական եկամտի տղբյուրից։ Այդ էր պատճառը, որ Օրդու գավառակում տպրող համշենահայերի մեծամասնությունը մինչև Մեծ եղեռնը այդպես էլ մնացել էին իրավազուրկ մարդաներ։

Շրջանի 68 հայկական գյուղերն ու բնակավայրերը, մեծ մասամբ անխառն, զուտ հայկական էին՝ հիմնված քաղաքից 1—45 կմ հեռու։

Տեփե-քազլուի վիճակ։ Օրդուից հարավ-սրեհմուտք, Կիրասոնի գավառակին սահմանակից այս վիճակում գանվում էին հայկական հետևյալ բնակավայրերը.

Պաապաբ-սու։ Գտնվում է Օրդուից 5 ժամ ապեևք՝ խճուղու մոտ, ուներ 25 տուն հայ բնակչություն։

Օզ-գաբա։ Կիրասոնի գավառակին սահմանակից գյուղ, 46 տուն բնակչությամբ։ Ունեին փայտաշեն դպրոց և եկեղեցի։

Խազմոնք։ Օրդուից 3,5 ժամվա ճանապարհ հարավ-արեևք՝ երկու ժամ Օրդու—Կիրասոն խրճուղով, ապա 1,5 ժամ դեպի լեռները բարձրացող արահետով։ Օրդուից մինչև Բաղմոնք բոլոր գյուղերում թուրքեր էին բնակվում։ Բաղմոնքում ապրում էր 25 տուն հայ մարդաու։ Գլխավոր զբաղմունքը գաշաամշակությունն ու անասնապահությունն էր։

Սարիջուզ։ Բաղմոնքին սահմանակից գյուղ էր, Օրդուից 4 ժամվա ճանապարհ հարավ-արեվելք, նույն երթուղու վրա, Մելեք դեսի արեելյան լեռնալանջերին։ Ուներ 18 տուն հայ բնակչություն. մեծամասնությունը սեփական հողամաս ուներ։ Գլխավոր զբաղմունքը կաղնուաներն էին։ Զբաղվում էին նաև ծխախոտագործությամբ, դաշտամշակությամբ, անասնապահությամբ։ Մեղու պահում էին միայն սեփական կարիքները բավարարելու նպատակով։ Ամեն տուն աճեցնում էր պտղատու ծառեր՝ տանձենի, խնձորենի և այլն։ Տների շուրջ անպակաս էին ծվաղի ծառերը։ Կաննեփի մշակումը բոլոր ընտանիքների անհրաժեշտ պահանջն էր, որից սառցված թեևով կտավենին ու այլ իրեր (թոկ, պարկ և այլն) էին պատրաստում։

Հոդերը հիմնականում հերկում էին արորներով, հետագա մշակումը կատարելով փետատներով։ Լծկան անասունը եղն էր։ Միայն որպես հեծկան ու բեռնակիր անասուն օգտագործում էին ձի։

Գյուղն ուներ փայտաշեն եկեղեցի ու դպրոց, որոնք սպասարկում էին նաև հարևան Բաղմոնք, Թոքմաք-տյուղի և Թոփալ-դեղ բնակավայրերին։

Թոխմսիֆ-տյուզի։ Սարիջուղից կես ժամ հարավ-արեևելք, Օրդուից 4,5 ժամ հեռու գտնվող գյուղ, որտեղ ապրում էր 6 տուն հայ։

Թոփալ-զեզ։ Սարիջուղից մեկ ժամ հարավ-արեմուտք գտնվող հայարնակ գյուղ, 15 տուն բնակչությամբ, որոնց մի մասը մարդաներ էին։ Զբաղմունքները նույնն էին, ինչ Սարիջուղ գյուղում։

Քիրեզ-աերի վիճակ։ Գտնվում է Օրդուի հարավարևելյան սարալանջերին, քաղաքից 3—8 ժամ հեռավորության վրա։ Վիճակի վարչական կենտրոնը Քիրեզ-աերե գյուղն էր։ Այս վիճակի հայարնակ գյուղերն էին.

Ջոխաումբ՝ Օրդուից շուրջ 3 ժամ հեռու, մոտ 100 տուն թուրք և 65 տուն հայ բնակչություն ունեցող գյուղ էր։ Հայերի մեծամասնությունը բնակվում էր առանձին թաղերում և մեծ մասը մարդա էր։ Գյուղն ուներ փայտաշեն եկեղեցի ու դպրոց։ Զբաղվում էին այդեզործությամբ (գըլխավորապես կաղնի), ծխախոտագործությամբ, դաշտամշակությամբ, անասնաբուծությամբ և հավարուծությամբ։ Հողերը հերկում էին հիմնականում արորով։

Ցոխուշ-ախպիև Օրդուից 4, Ջոքաումից մեկ ժամ հարավ ընկած թուրքական գյուղ է, որի առանձին թաղում ապրում էր 17 տուն հայ՝ մեծամասնությունը մարդա։

Կապաճ-քեփեև Օրդուից հինգ, Ցոքուշ-տիպիից մեկ ժամ հեռու գտնվող գյուղ է, բնակչությունը խառը (թուրքեր՝ 45 տուն, հայեր՝ 22 տուն, մեծ մասը՝ մարդաներ)։

Ջամ-քաշիև հայարնակ գյուղ էր, Օրդուից 5 ժամ, Կապաճ-քեփեից մեկ ժամ հարավ-արեմուտք, ուներ 35 տուն բնակչություն, փայտաշեն դպրոց ու եկեղեցի։

Խոյանիև Ջամ-քաշիից մեկ, Օրդուից 7 ժամ հեռու բնակած մեծ գյուղ էր, մեծամասնությունը թուրքեր։ Հայերը 60 տուն էին, մեծամասնությունը՝ մարդաներ։ Գյուղն ուներ փայտաշեն դպրոց և եկեղեցի։

Ցոքուշ-տիպի, Կապաճ-քեփե, Ջամ-քաշի և Խոյանի գյուղերում բնակչության զբաղմունքները նույնն էին, ինչ Ջոքաում գյուղում։

Քիրեզ-աերեև Օրդուից ութ, Խոյանիից մեկ ժամ հեռու, զուտ հայարնակ մեծ գյուղ էր՝ 110

տուն բնակչությամբ, որոնց շուրջ 60%-ը մարաբաններ էին։ Հողը սև, հեշա մշակելի ու արգավանդ էր, որը հերկում էին արորով։

Բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունը, կաթնամշակությունը, դաշտամշակությունն ու մեղվարուծությունն էին։ Գլխավոր հացահատիկը եգիպտացորենն էր, որի շուրջ 75%-ը կազմում էր շուտ հասնող տեսակը, և որին տեղացիք 40 օրական էին անվանում։

Հետաքրքիր է, որ այս գյուղում պանիր պատրաստելու սովորություն չկար։ Ծուղն սառնում էին մածունից։ Սեր հավաքելու համար կաթնատաշտեր չէին օգտագործում։ Մածունից յուղ սառնալուց հետո, մնացած թանը եփում, քաթանե առպրակներով քամում, ապա դնում էին ծանր մամուլի տակ. ստացված շոռային զանգվածին չեբելիֆ էին անվանում, որն ուտում էին պինդ վիճակում կամ լուծում ջրով ու թանի փոխարեն օգտագործում։

Քիրեզ-աերեի ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցին կառուցվել է 1849 թ.։

Մինչև 1905 թ. գյուղը դպրոցի շենք չի ունեցել։ Երեխաները սովորում էին մի տան կից սենյակում։ 1905 թ. համայնական ուժերով կառուցում են դպրոցի փայտաշեն, ընդարձակ շենք։

Մուսա-կրաները (Մուսե-քըրֆ) Քիրեզ-տերեին արևելքից սահմանակից, Օրդուից 8 ժամվա ճանապարհ հեռու, հայաբնակ գյուղ էր, որն ուներ 27 տուն բնակչություն, մեծամասնությունը՝ մարաբա։

Քյոֆներ-բելը Օրդուից 8 կմ հեռու, Քիրեզ-տերեից հարավ-արևմուտք ընկած հայաբնակ գյուղ էր, 22 տուն բնակչությամբ, որոնցից միայն 5—6 տուն սեփական հողամասեր ունեին։

Ս. Խաչ անունով փայտաշեն եկեղեցին հիմնրվել էր 1819 թ.։

Քել-թեփե (Թեփե)։ Քիրեզ-աերեին հարավից սահմանակից այս գյուղում ապրում էր 20 տուն հայ մարաբա։ Ս. Լուսավորիչ փայտակերա եկեղեցին հիմնվել էր 1814 թ.։

Ջալմոնը Օրդուից 9 կմ հեռու, Քել-թեփեին սահմանակից հայաբնակ գյուղ էր, որի 25 տուն բնակիչների մեծ մասը մարաբաներ էին։

Մուսա-կրան, Քյոքներ-րել, Քել-թեփե և Ջամոն գյուղերի բնակչության զբաղմունքներն ու վարելահողերը մշակելու եղանակները նույնն էին, ինչ Քիրեզ-աերե գյուղում։

Ջավուշլարի վիճակի գյուղերը գտնվում էին Բոզլի գետի աջ և ձախ լեռնալանջերին։

Գուշ-ջերեն գյուղի սահմանն սկսվում էր Օրդու քաղաքի արևելյան կողմից։ Բնակիչների մեծամասնությունը թուրքացած վրացիներ էին, որոնք գաղթել էին Սև ծովի կովկասյան ափերից (Բաթումի շրջանից՝ 1760-ական թվականներին)։ Գյուղի հարավային՝ առանձին թաղում ապրում էր 28 տուն հայ մարաբա, զբաղվում էին անասնապահությամբ, կաթնամշակությամբ, դաշտամշակությամբ ու ծխախոտագործությամբ։

Ջավուշլարը Օրդուից 2 ժամ հեռու, Գուշ-ջերենին սահմանակից հայարնակ գյուղ էր՝ 48 տուն բնակչությամբ, մեծամասնությունը՝ մարաբաներ։ Զբաղվում էին ծխախոտագործությամբ։ Գլխավոր հացահատիկը եգիպտացորենն էր. համատեղ մշակում էին նաև բանջարեղեն։ Կանեփի մշակումը բոլոր անտեսություններում անհրաժեշտ պահանջ էր։ Հողը մշակում էին արորով, լեխտորով, փետատով։ Վարելահողերը արգավանդ սեահողեր էին։

Փայտաշեն ս. Լուսավորիչ եկեղեցին հիմնվել էր 1814 թ.։

Ունեին փայտաշեն վարժարան՝ վեցամյա դասընթացով։ Աղջիկները դպրոց հաճախել սկսել էին վերջին տարիներին։

Կույա-ֆյոյը Ջավուշլարին սահմանակից, Օրդուից երեք ժամվա ճանապարհ հեռու հայարնակ գյուղ էր, որտեղ ապրում էին 18 տուն հայ մարաբաներ։

Սեաբցոց-գեյը Ջավուշլարի դյուգախմրում հայաբնակ փոքր գյուղ էր, որն ուներ 25 տուն բնակչություն և տարրական վարժարան։

Ալաջա-սաղաջ (Ալաջա-սաղում)։ Ջավուշլարին արևմուտքից սահմանակից գյուղ։ Ուներ 26 տուն հայ բնակչություն, որոնցից մի քանիսը սեփական հողամասեր ունեին։ Գյուղի ս. Լուսավորիչ փայտաշեն եկեղեցին հիմնվել էր 1864 թ.։ Ունեին չորսամյա վարժատուն։

Յոնուզ-ֆյոյը Ջավուշլարի արևելքում հայաբնակ փոքր գյուղ էր, ուր ապրում էին 15 տուն հայ մարաբաներ։

Գըզըլ-հիսար։ Յոնուզ-քյոյից մեկ ժամ հարավ, լեռնային գյուղ, որտեղ ապրում էր 25 տուն հայ՝ մեծամասնությունը մարաբաներ։

Դերեվին (Թեյնեվի) Յոնուզ-քյոյին հարավ-արևմուտքից սահմանակից, 20 անից բաղկացած հայարնակ գյուղ էր, որտեղ մեծ մասը մարաբաներ էին։

Գաւրալուղ։ Դերեվիին սահմանակից, Օրդուից 4,5 ժամ հեռու այս գյուղում ապրող 45 տուն հայերի մեծ մասը սեփական հողամասերի տեր էր։ Գյուղն ուներ փայտաշեն դպրոց ու եկեղեցի։

Ուչմե-ֆյոյ գյուղը գտնվում էր Գաւրալուղի արեմուտքում, որտեղ ապրող 13 տուն հայերի մեծամասնությունը մարաբաներ էին։

Ջավուշլարի վիճակի բոլոր գյուղերում, հողի

մշակման հղանակներն ու ղրաղմունքները նույնն էին։

Մեծ Մեզ վիճակ։ Այգ կոչումն ստացել է Օրգու կավատակի կենտրոնում (Թուրքերեն՝ մեծ Մեզ) դանվելու հետևանքով։ Վարչական կենտրոնը (միղուրանիստը) Սայաջի գյուղն էր, որի պատճառով այն շատերին հայտնի էր նաև Սայաջի գյուղախումբ (վիճակ) անունով։ Վիճակի սահմանն սկսվում էր Օրղուից 4 ժամ հարավ-արեելք ընկած Աք-յաղի գյուղից ու հասնում Ախրաստիայի նահանգի սահմանին (Օրգուից շուրջ 9 ժամ)։ Վիճակի մակերևույթը հարուստ է անտառածածկ լեռներով (հատկապես հարավում), սարահարթերով ու պատակներով։ Վարելահողերն արգավանգ են ու հեշտ մշակելի։ Վիճակի հայաբնակ գյուղերն ու թաղերը հետևյալներն էին.

Ա.ֆ–յաղի։ Օրղուից այստեղ երթուղին անցնում էր Բոզլի-տերեի կամուրջից, տպա թեքվում հարավ՝ Չավուշլար, Թեյնելի (մեծ գյուղ) և Տերելի գյուղերի միջով։ Աք-յաղի և Տերելի գյուղերի միջով հոսում էր Տերելի գետը։ Աք-յաղին Օրղուին մոտակա ամենաբազմամարդ հայաբնակ գյուղը էր։ Գյուղում բնակվում էր շուրջ 80 տուն հայ, 30 տուն թուրք։ Հայերի ղգալի մասը սեփական հողամասերի տեր էր։ Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերն էին տյգեգործությունն (կաղնուտ) ու ծխախոտագործությունը։ Հացահատիկներից առաշնությունը տրվում էր եգիպտացորենին, որին համատեղ նույն հողամասում մշակում էին նաև տնտեսության անհրաժեշտ բանջարեղենն ու ընղեղենը։ Ցանում էին նաև գարի, հաճար։ Անփոխան կարիքները բավարարելու տեսմանների ղրաղվում էին նաև անասնապահությամբ, կաթնամշակությամբ ու կոնեփի մշակմամբ։

Հողերը վարում, մշակում էին արորով, լեխտրով ու փեսատով։ Այստեղ և Օրգուի մի շարք գյուղերում տարածված էր լեխարի ավելի պարզ ձևը, որը հայտնի էր թեթե (թեթի) կամ Օրդուի լեխար անունով։ Տեղացիների վկայությամբ, Աք-յաղիից արեմուտք լեխար գործածողները եղակի էին։

Աք-յաղիի հայերն ունեին վեցամյա ղպրոց և եկեղեցի՝ երկուսն էլ փայտաշեն։ Աղջիկները ուսումնարան սկսել էին հաճախել միայն վերջին տարիներին։

Զորլընգը Աք-յաղիից մի ժամ հարավ ընկած հայաբնակ գյուղ էր։ 55 տուն բնակչությամբ՝ մեծ մասը մտրարաներ։ Ղրաղմունքներն ու տնտեսության եղանակները նույնն էին, ինչ որ Աք-յաղիում։

Գյուղում կար փայտաշեն եկեղեցի և վեցամյա գպրոց։

Զըմըշլի։ Զորլընգին արեելքից սահմանակից հայաբնակ փոքր գյուղ էր՝ 16 տուն բնակչությամբ. մշակութային կյանքով Զորլընգիի անրաժան մասն էր։

Սայաջիև (Սայաջլի) Օրգուից 4,5, Աք-յաղիից 1,5 ժամվա ճանապարհ հարավ ընկած հայաբնակ մեծ գյուղ էր։ Գյուղն ուներ շուրջ 105 տուն բնակչություն։ Ջգալի տոկոս էին կազմում սեփական հողամասեր ունեցողները։

Այստեղ էլ բնակչության ղրաղմունքներն ու երկրագործական գործիքները նույնն էին, ինչ որ Աք-յաղիում։

Գյուղի ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցին հիմնվել էր 1854 թվականին։

Ուներ թեև փայտաշեն, սակայն բարեկարգ գպրոց։

Գաուրեճուղը Սայաջիին արեմուտքից հարեվան հայաբնակ գյուղ էր, որն ուներ 64 տուն բնակչություն, որի շուրջ 80%-ը սեփական հողամաս ուներ։ Գրեթե բոլոր տնտեսությունների գլխավոր ղրաղմունքը կաղնու այգիների մշակումն էր։ Պաղատու ծառերից մշակում էին նաև խնձորենի, տանձենի, կեռասենի և այլն։ Թութն այստեղ չէր հասունանում։ Հիմնական հացահատիկը եգիպտացորենն էր. որպես ըղղուացու կամ, ինչպես ասում էին՝ «բերընփոխ» համար ցանում էին նաև ցորեն, գարի, հաճար։ Բանջարեղեն (րոնջար, րողկ, շաղգամ) ու լորի առատորեն ստացվում էր եգիպտացորենի արտերում, ղղում՝ արաերի եզրերին։ Գետնախնձորով ու կարտոֆիլով (կոստիլ) ղրաղեցված հողամասերում սերմացուն նորոգում էին 3—4 տարին մեկ անգամ։ Կոնեփը մշակում էին ոչ միայն սեփական կարիքների, այլ նաև վաճառելու համար։ Ջարգացած էր անասնապահությունը (կով, ոչխար). կային 500—1500 ոչխար ունեցողներ։ Հարգված ու եկամրարեր ղրաղմունք էր մեղվարուծությունը։ Կային 50—200 փոռիֆ (մեղվի փեթակ) ունեցողներ, որոնք ստացած մեղրի մի մասը շուկա էին հանում։

Երկրագործական հիմնական գործիքներն էին արորը, լեխտրը, փետատը։

Գյուղն ուներ փայտաշեն եկեղեցի և բարեկարգ գպրոց։

Ջիքուլլուղը գտնվում էր Սայաջիի արևմուտքում և ուներ 26 տուն հայ բնակչություն։ Հողակլիմայական պայմաններն ու ղրաղմունքները նույնն էին, ինչ հարևան՝ Գաուրնճուղ գյուղում։

Գյուղն ուներ քառամյա գպրոց ու եկեղեցի (երկուսն էլ փայտաշեն)։

Ա.ճմեհա-վազը հայարնակ գյուղը գանվում է Չիբուքլուղի հարավ-արեմուտքում. ուներ 22 տուն բնակչություն, մեծ մասը՝ մարաբաներ։ Չիբուքլուղն ու Ահմեհա-վազը Օրդուից 4,5 ժամ հեռավորության վրա էին։ Գյուղի աղբյուրի վազը (ավազանը) Ահմեհա անունով մեկն էր շինել, որի անունով էլ կոչվում է գյուղը։ Զբաղմունքները նույնն էին, ինչ նախորդ երկու գյուղերում։

Էրինճոտ։ Չիբուքլուղից կես ժամ հարավ, հայաբնակ լեռնային դյուղ, 45 տուն բնակչությամբ, բոլորը Ավետիսյան աղգասահմից. մեծամասնությունը մարաբաներ էին։

Գյուղն ուներ քառամյա փայտաշեն դպրոց։

Էլուկբեկ-կրան։ Լեռնային դյուղ Էրինճուղի արևելքում. ուներ 26 տուն հայ բնակչություն, որի մի մասը սեփական հողամասի տեր էր։

Էրինճուղում և Էլուրեկ-կրանում կադինի մշակումը նոր էր սաբաժվում։ Գյուղատնտեսության առաջնակարգ ճյուղերը անասնապահությունը, կաթնամշակությունն ու դաշտամշակությունն (հիմնականում եգիպտացորեն) էին։ Հավաբուծությունը, ինչպես ամենուր, այստեղ ևս արնատեսության անրաժան մասն էր կաղմում։ Լայնորեն սարաժված էր եգիպտացորենի և կանեփի մշակությունը, որոնց մեծ մասը վաճառքի էին հանում։ Մեղվարուծությամբ հողում էին դլխավորապես բնատնիքի պահանջը։

Կուզ-ֆյոյին (բառացի՝ Սմսակ զյոտ) դրանըվում է Օրդուից 6, Էրինճուղից մեկ ժամվա ճանապարհ գեպի հարավ։ Լեռների դոդում ծվարած այս գյուղն ուներ 10 տուն բնակչություն՝ բոլորը մարաբաներ. դլխավոր դրաղմունքներն էին անասնապահությունն ու գաշտամշակությունը։

Բուլքոճ։ Էրինճուղից մեկ ժամվա ճանապարհ հարավ-արևելք բնակած թուրքական դյուղ է, շուրշ 70 տուն բնակչությամբ, որից բացի առանձին թաղում ապրում էին նաև 24 տուն հայ մարաբաներ։ Զբաղվում էին անասնապահությամբ, կաթնամշակությամբ, դաշտամշակությամբ։

Գյուղն ուներ սարրական վարժաուն։

Կյունաուղլի։ Բուլքոճից մեկ ու կես ժամ հարավ, Օրդուից 7,5—8 ժամվա ճանապարհ հեռու, բարձր լեռնային հայարնակ դյուղ, որաեղ ապրում էին 12 տուն հայ մարաբաներ։

Ջոճկալ-քել։ Կյունաուղլիին սահմանակից, գեպի հարավ բնակած այս լեռնային դյուղում ապրում էին 10 տուն հայ մարաբաներ։

Խոջ-օղլի։ Օրդուից մինչև այսաեղ 8 ժամվա ճանապարհ է, որաեղ ապրող 50 տուն հայ բնակչության մեծ մասը մարաբաներ էին։ Դլխավոր դրաղմունքը անասնապահությունն ու դաշտամշակությունն էր։ Կանեփը մշակում էին ինչպես սեփական կարիքների, այնպես էլ վաճառելու համար։ Արտերի մեծ մասը ավազախառն սևահողեր էին ու բերքատար։ Հերկը կատարում էին արորով, մասամբ լնխալով, իսկ ցանքսը՝ արորով ու փեսատով։

Խոջ-օղլիի ս. Թորոս եկեղեցին հիմնվել է 1853 թ.։ Շենքը փայտաշեն էր։ Գյուղն ուներ վեցամյա դպրոց։ Աղջիկները դպրոց էին հաճախում։

Խոջ-օղլի դյուղը մոտակա հայկական գյուղերի աղգային-մշակութային կենտրոնն էր։

Գյոզ-էորեն (Կուշչ-ուրեն)։ Խոջ-օղլիից մի ժամվա ճանապարհ հարավ, հեռավոր լեռնային գյուղ, ուր ապրում էր 46 տուն հայ, մեծ մասը՝ մարաբաներ։ Զբաղվում էին անասնապահությամբ ու կաթնամշակությամբ։

Գյուղի փայտաշեն ս. Աստվածածին եկեղեցին հիմնվել է 1869 թ.։

Ունեին փայտակերա դպրոց, քառամյա դասընթացով։

Խոջ-կելուր՝ Գյոզ-էորենին հարավից սահմանակից, 20 տուն բնակչությամբ հայարնակ գյուղ։

Սալլաք։ Սերասահայի նահանգին սահմանամերձ այս գյուղում ապրում էր 20 տուն հայ, որոնց մի մասը սեփական անահսության տեր էր։

Գյուղն ուներ փայտաշեն դպրոց՝ չորս սարվա դասընթացով։

Գարա-կյոզ։ Սալլաթի արեելքում հայարնակ փոքր գյուղ, որաեղ ապրում էին 12 տուն հայ մարարաներ։

Կոշաջի։ Սալլաթի հարավ-արեմուտքում դրանըվող այս գյուղում բնակվում էր 34 տուն հայ, մեծամասնությունը մարարաներ։

Յազլուղ (բառացի՝ Ամառանոց)։ Սալլաթից հարավ-արեելք սահմանագլխային փոքր գյուղ, ուր ապրում էին 18 տուն հայ մարարաներ։

Այս հեռավոր լեռնային գյուղերում (Խոջ-կելուր, Սալլաթ, Գարա-կյոզ, Կոշաջի, Յաղլուղ) դրլխավոր գբաղմունքն ու եկամտի աղբյուրը անասնապահությունն ու կաթնամշակությունն էին։ Դաշտամշակությամբ, հավաբուծությամբ, բանջարաբուծությամբ դրաղվում էին սեփական կարիքները հողալու համար։ Տարածված ու եկամտաբեր գրաղմունք էր մեղվարուծությունը։ Սաացված որակյալ մեղրի գդալի մասն ու մեղրամոմը վաճառում էին։ Կանեփի մշակումը բոլոր արնատեսությունների անհրաժեշտ գրաղմունքն էր։

Բաշ-չարոսզի վիճակի գյուղերը դրավում են Մելեթ դեսի վերին՝ հարավարեելյան լեռնային շրջանները՝ Օրդուից 10 ժամ հեռու ընկած Կրրմա գյուղից մինչև Սերասահայի նահանդի սահմանները։ Օրդուից Կրրմա երթուղին անցնում էր Գուլջերեն, Էոջելի, Յարաղլի, Չավուշլար, Պահաոն,

Սևակ, Ուղուն-Մահմատ, լագրևի մահմեդական վրացիների ու քուրքական գյուղերի միջով։ Այս գյուղախմբի հայարնակ գյուղերը հետևյալներն էին.

Կլրմա գյուղում ապրող 15 տուն հայերը բոլորն էլ մարթաններ էին։ Գյուղատնտեսության ճյուղերն ու զաշտավայրերը մշակելու եղանակները համարյա նույնն էին, ինչ Խոջ-օգլի գյուղում։ Ս. Գեորգ եկեղեցին կառուցվել է 1869 թ.։ Գյուղն ուներ քառամյա գպրոց։

Էֆյուզ-էտբեները գտնվում է Կրմայի հյուսիս-արեելյան կողմում։ Այստեղ բնակվում էին 23 տուն համշենահայ մարթաններ։ Աղգային-մշակութային կյանքով Կրմա գյուղի անբաժան մասն էր։

Գըզ-լիմանը Կրմայիև հարավից սահմանակից հայարնակ գյուղ էր՝ 18 տուն բնակչությամբ, որոնցից չորսն ուներ սեփական հողամաս։

Կալա-ոխպի։ Կրմայից մեկ ժամվա ճանապարհ հարավ՝ հայարնակ լեռնային գյուղ։ Ուներ 35 տուն բնակչություն՝ մեծամասնությունը մարթաններ։

Ձաքաղ։ Կալա-ախպիի հարավ-արեելքում գտնվող հայարնակ գյուղ, որն ուներ 30 տուն հայ բնակչություն։ Մի մասը սեփական անասնություն ուներ։

Գյուղն ուներ փայտաշեն գպրոց։

Ձամուրլիե գտնվում է Ձաքաղից մի ժամվա ճանապարհ հեռու. այս գյուղերն իրարից անջատված էին անտառածածկ լեռներով։ Գյուղում ապրում էին 28 տուն հայ մարթաններ։

Բաշ-չարաագ։ Սերասախալի նահանգին սահմանամերձ հայարնակ գյուղ։ Ուներ 46 տուն բնակչություն, որի մեծ մասը սեփական անասնություն ուներ։ Գյուղն ուներ փայտաշեն գպրոց և եկեղեցի։

Լազ-ըելի։ Բաշ-չարաագին հարեան հայաբնակ փոքր գյուղ՝ 10 տուն բնակչությամբ։

Գաշ-աղըզ (Գաուշա-աղըզ)։ Բաշ-չարաագից մեկ ժամվա ճանապարհ հարավ-արեմուտք է նրան սահմանամերձ լեռնային գյուղ, որտեղ բնակվում էին 12 տուն հայ մարթաններ։

Տոնծ-գյոլ (Տուզ-գյոլ)։ Բաշ-չարաագից մեկ ժամվա ճանապարհ հարավ-արեելք, սահմանամերձ հայարնակ գյուղ։ Ուներ 28 տուն բնակչություն, որոնցից մի քանիսը սեփական հողամաս ուներ։

Վերոհիշյալ Կալա-ախպի, Ձաքաղ, Ձամուրլի, Բաշ-չարաագ, Գաշ-աղըզ, Տոնծ-գյոլ գյուղերի բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունն (կով, ոչխար) ու կաթնամշակությունն էին։

Ձումաչի վիճակը գտնվում է Մլեթի գետի վերին հասանքի հարավարեմտյան լեռնաշխարհում՝ Տեղերմեն-աերե գյուղից մինչև Ձոմաշ գյուղը (Սերասախալի նահանգի սահմանը), որը վիճակի վարչական կենտրոնն էր։ Վիճակում հիմնված հայարնակ գյուղերն էին.

Տեղերմեն-աերե։ Օրգուից մինչև Տեղերմեն-աերե 9 ժամվա ճանապարհը անցնում էր Թեյ-նելի, Աք-յագի, Ուղուն-Մահմատ, Գայա-ախպի գյուղերի միջով։ Գյուղում ապրում էին 12 տուն հայ մարթաններ։

Շըխլար։ Տեգերմեն-աերեից մեկ ժամվա ճանապարհ հարավ։ Այստեղի 18 տուն հայերի մեծամասնությունը սեփական հող ուներ։

Կաթըր-ֆյոյի։ Շրխլարից մեկ ժամվա ճանապարհ հեռու։ 15 տուն հայ բնակչությամբ գյուղ՝ մեծամասնությունը մարթաններ։

Փամբուխլուղ։ Օրգուից 10 ժամվա ճանապարհ հեռու, Կաթըր-քյոյից արևմուտք բնկած գեղանիստ գյուղ։ Ուներ 38 տուն հայ բնակչություն, որոնցից շատերը սեփական հողի ու անասնության տեր էին։

Գյուղում կար փայտաշեն գպրոց ու եկեղեցի։

Քյոմուրճի։ Փամբուքլուղից հարավ-արեմուտք բնկած 20 տուն հայ բնակչությամբ փոքր գյուղ։

Ֆոտոճա։ Քյոմուրճիից մեկ ժամ հարավ դանվող գյուղ, որտեղ բնակվում էին 12 տուն հայ մարթաններ։

Տոլեյթոմ։ Ֆոտոճալից մեկ ժամ հարավ, Օրգուից 12 ժամվա ճանապարհ հեռու գյուղ, որն ուներ 12 տուն հայ բնակչություն։

Ձոմաշ։ Օրգուից 13 ժամ հեռու, Տոլեյթոմից մեկ ժամ հարավ, Սերասախալի նահանգին սահմանամերձ գյուղ։ Այստեղ ապրող 82 տուն հայերի մեծ մասը սեփական անասնություն ուներ։

Գյուղում կային բարեկարգ փայտակերտ 6-ամյա գպրոց ու եկեղեցի։

Շրջանի հարավային գյուղերում (Տեգերմեն-աերե, Շրխլար, Կաթըր-քյոյի, Փամբուքլուղ, Քյոմուրճի) արագ թափով ասրածվում էր կաղինի մշակութիլունը, որն արգեն հիմնավոր տեղ էր գրավել անասնության մեջ։ Բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, ինչպես նաև՝ գաշամշակությունը, հավարուծությունն ու մեղվարուծությունը։ Մշակվող հացահատիկներից ամենաատրածվածը եգիպատցորենն էր, որին համատեղ մշակում էին նաև անհրաժեշտ բանջարեղեններ։

Շրջանը հարուստ էր նաև ղանաղան պատուղներով՝ տոմոն (սալոր), տանձ, խնձոր, ըալ և այլն։

վարելահողերը հիմնականում արորներով էին հերկում։

Բերշեմպեի վիլայեթը գրավում էր Օրգուի գավառակի հարավարեմյան մասը։ Վարչական կենտրոն Բերշեմպե ավանը գտնվում էր Օրդուից 7 կմ արևմուտք՝ Վոնայի ծովախորշում։ Մ. Բժշկյանի համողմամբ, Գոգիորա պատմական քաղաքն այս վայրերում է եղել։

Բերշեմպեն Օրդու գավառակի ամենահնդարձակ ու բազմամարդ գյուղախմբերից մեկն էր։ Բնակչության մեծամասնությունը թուրքեր, մահմեդականացած վրացիներ, լազեր ու չերքեզներ էին, որոնք դրավել էին ծովափնյա լավագույն հողամասերը։

Շրջանի հայերի շուրջ 80%-ը մարաբաներ էին, գյուղերը՝ ցրված վիճակի զանազան մասերում։ Շրջանում լայնորեն տարածված էր կանեփի մշակումը, որից առաս ու որակյալ բերք էին ստանում։

Բերշեմպե ավանում ապրող 22 տուն հայերն զբաղվում էին արհեստներով ու առեւտրով։

Յավուզլար։ Բերշեմպեից երեք ժամ հարավ-արեելք հարմարավետ ու բերքառատ հողամասերով հարուստ հայարնակ գյուղ։ Ուներ 15 տուն բնակչություն, մեծամասնությունը՝ մարաբաներ։ Գլխավոր ապրանքային մշակույթը կանեփն էր, որի մեծ մասը վաճառում էին։ Զարգացած էր անասնապահությունն ու կաթնամշակությունը։ Բացի եգիպտացորենից, որին համատեղ աճեցնում էին նաեւ բանջարեղեն ու լոբի, մշակում էին նաեւ ցորեն, դարի, հաճար։ Հավաբուծությունը բավարարում էր ոչ միայն ընտանիքի ձվի պահանջը, այլեւ մասամբ ապահովում որակյալ մսեղենով։ Քիչ անտեսություններ կային, որոնք առնվազն 5—10 մեղվի փեթակ չունենային։ Կային նաեւ մասնագետ մեղվապահներ, որոնք ունեին 50—100 փորիք (փեթակ)։ Ինչպես համշենցիների մյուս գյուղերում, այստեղ եւս կանաչեղենի համար ամեն տուն ուներ ցանկապատված ածուզ (անամերձ պարտեզ), ուր տարին բոլոր անպակաս էր պոասն ու ըռլը (բազմացողուն սոխ)։ Վարելահողերը հիմնականում հերկում էին արորով։

Գյուղում կար փայտաշեն դպրոց ու եկեղեցի։

Պոզ-թեփեն գտնվում է Բերշեմպեի ու Օրգուի միջեւ եւ ուներ շուրջ 45 տուն հայ բնակչություն, մեծամասնությունը՝ մարարաներ։ Հայերն ունեին քառամյա փայտաշեն գպրոց։

Գառա-օլուք գյուղը գտնվում է Բերշեմպեից 4 ժամ հեռու՝ լեռնալանջերին ու սարահարթերին ծվարած։ Այստեղ ապրող 58 տուն հայերի չնչին առկոսն ուներ սեփական հող։ Գյուղի դերակշռող մասնաստանությունը գրադմունքը անասնապահությունն (կով, ոչխար) ու կաթնամշակությունն էր։ Գյուղատնտեսական մնացյալ ճյուղերն ու հող հերկելու միջոցները համարյա նույնն էին, ինչ որ Յավուզլար գյուղում։

Գյուղն ուներ փայտաշեն գպրոց ու եկեղեցի։

Ալպելեճ Գարա-օլուքին սահմանակից փոքր գյուղ էր, 12 տուն հայ բնակչությամբ, բոլորն էլ վարձակալ-մարարաներ։ Մշակութային-տնտեսական կյանքով սերտորեն կապված էին Գարա-օլուքի բնակչության հետ։

Էսեֆյուզ։ Գարա-օլուքից հարավ-արեելք բնակած հայարնակ (14 տուն) գյուղ։ Այս և նախորդ գյուղն անցյալում Գարա-օլուքի թաղերն էին։ Բնակչության բազմանալու շնորհիվ այդ թաղերը վերածվել էին առանձին գյուղերի։

Ասուլ (Էյյուլ)։ Բերշեմպեից 6 ժամ հարավ-արեելք հայարնակ գյուղ, որի 50 տուն հայ բնակչության մեծամասնությունը մարարաներ էին։ Բացի մեղվարուծությունից, որն առաջնային տեղ էր գրավում այստեղ, գյուղատնտեսության մյուս ճյուղերը նույնն էին, ինչ որ Գարա-օլուքում։

Գյուղում կային փայտաշեն դպրոց և եկեղեցի։

Կաղջի-ուրեն։ Բերշեմպեից 8 ժամվա ճանապարհ հարավ-արեելք ընկած հայարնակ այս գյուղում ապրող շուրջ 48 տուն հայերը, չնչին բացառությամբ, մարարաներ էին. վարելահողերը սևահող էին և բերքառատ։ Հացահատիկներից առաջնությունը տրվում էր եղիպտացորենին։ Գյուղատնտեսության մեջ դերակշռող ճյուղերը անասնապահությունն (հիմնականում ոչխար և այծ) ու կաթնամշակությունն էին։

Գյուղի ս. Հակոբ եկեղեցին հիմնվել է 1863 թ.։ Ունեին քարակերտ 6-ամյա դպրոց։

Դարբջա-սալջար (Դարբճ-սալջի)։ Բերշեմպեից 6 ժամ հարավ-արևմուտք ընկած հայարնակ գյուղ, որն ուներ 40 տուն բնակչություն և, որի շուրջ 25%-ը սեփական անտեսություն ուներ։

Գյուղի ս. Աստվածածնա եկեղեցին հիմնվել է 1861 թ.։ Գյուղն ուներ փայտաշեն դպրոց՝ քառամյա դասընթացով։

* * *

Մոտավոր պատկերացում կազմելու համար այն արհավիրքի ու մղձավանջային ահրիների մասին, որ ապրեցին համշենահայերն ու պոնտահայերն, առհասարակ, հարկ ենք համարում լոկ մեկ գավառակի օրինակով՝ ընդհանուր գծերով ու համառոտակի նկարագրելու այն աղետալի

ՕՐԴՈՒԻ ԳԱՎԱՌԱԿ

կրթական և կրոնական օջախներ (սխեմատիկ քարտեզ)



վիճակը, որ տպրեցին Օրդուի շրջանի հայերն առանձնապես։

Դեռես XIX դ. երկրորդ կեսից սկսած Օրդու գավառակում և հատկապես քաղաքում հաստատված համշենահայերի մի խումբ, հետզհետե լով հնռավոր լեռնային շրջանները, անցնում է Սեբաստիա նահանգի սահմանը։ Տեղի թուրք կալվածատերերը շահադիտական նպատակներով և «սիրահոժար» ընդունում են հայերին իրենց անօգյրածիր անտառածածկ կալվածները, որպես մարտարանոց։ Շատ չանցած, համշենահայերի տասնյակ ընտանիքներ փոխադրվում են Օրդուին ու Սամսոնին սահմանակից Նիքսար և Թոքատ գավառների մոտակա լեռնաշխարհը, մշտական կապ պահպանելով իրենց նախկին բնակավայրերում մնացած հարազատների ու բարեկամների հետ։

Ավելի ուշ, 1860—1870-ական թվականներին Օրդու գավառակից համշենահայերի պատկառելի մի ղոնգված գաղթում է հեռավոր Նիկոմեդիա՝ Իզմիթի և Պրուսայի գավառները։

Համարյա նույն ժամանակներից սկսվում է Օրդու գավառակի համշենահայերի դաղթ-փախուստը դեպի Ռուսաստանի կովկասյան մերձսեծովյան երկրամասերը։

Ինչպես Օրդու քաղաքի, այնպես էլ ոդջ գավառակի հայ բնակչության 1895 թ. ադեսալի օրերին փրկվեց շնորհիվ տեղի թուրք կառավարիչների ու ղորապետների շրջահայաց ու վճռանձն վերաբերմունքի։ Դրան մեծ չափով օդնեց նաև հայերի ու հարևան աղդերի՝ մահմեդական վրացիների, չերքեղների, մասամբ՝ թուրքերի փոխադարձ բարիդրացիական հարաբերությունը։

Սակայն, դնալով, փոթորիկն ստանում էր ավերիչ թափ ու անկասելիություն, որը բոնադաղթի անվան ամբ պետք է վերածվեր աննախընթաց եղեռնի։

Օրդուի հայերը բոնադաղթի ենթարկվեցին Տրապիղոնի հետ միաժամանակ, 1915 թ. հունիս ամսին։ Հինդ օր առաջ հայտարարվեց «աքսորի» օրը։ Մոլորված բնակչությունը նախադդալով աղետը, խելակորույս խուճապի մատնվեց։ Ճշնաժամային այդ օրերին հայ ղեկավարներն ու հեղինակավոր անձինք, հավատալով թուրք կառավարության վերադաս մարմինների խոստումներին, կուրորեն ենթարկվեցին պետական հրամանին։ Ոչ ոք չէր հավատում, որ սա դրեթե վերջըն է։

Հարեան դավառների՝ Ֆաթսայի և Ունյեի հայերը հիշելով Համշենի ու Սև-դետի ողբերդական օրերի ավանդապատմությունը, նպատակահարմար գտան առերես բնդունելու մահմեդականությունը, միայն թե փրկվեն բնաջնջումից։ Նրանք Հարություն էֆ. Օքտուղյանի ստորագրությամբ Օրդուի հայ ղեկավարությանը են հանձնում, որ սրանք այդպես վարվենն։

Օրդուցիների խնդրանքը, սակայն կտրականապես մերժվում է թուրքական իշխանությունների կողմից։ Բոնադաղթի նախընթաց օրերին Օրդու քաղաքում հավաքեցին ու բանտարկեցին տղամարդկանց։ Մի քանի օր հետո նրանցից շատերին (շուրջ 80—100 հոդու), արյունուշտ պահակախմբի հսկողությամբ, չորս-չորս շղթայակապ քաղաքից դուրս են հանում, հայտարարելով, որ իբր Մոսուլ են աքսորում. հետագայում պարդվեց, որ բոլորին սրախողխող են արել։

Առաջին հերթին «աքսորեցինս՝ շարքից հանեցին քաղաքի անվանի մարդկանց ընտանիքներին, որոնց տղամարդկանց բանտարկել ու սպանել էին։ Դրանից հետո, ամեն օր մեկնում էր թշշվառների հաջորդ կարավանը՝ շրջապատված ղինված թալանչի-բարբարոսներով։ Դժբախտների հետիոտն թափորն անցնում է Մելեթ-Մեսուրեե (Համիախե)—Սուջեհերին ուղիով՝ մինչև էլպերի, որը և դարձավ Օրդուի հայերի վերջին հանդրվանն ու սպանդավայրը։ Երեխաներից կենդանի են մնում միայն նրանք, որոնց վերցնում-փախցնում են շրջակայքի թուրք բնակիչները։ Թուրք բաշիրդողուկները առհանդում ու տանում են նաև հայ դեղեցկուհիներին ու ջահել հարսներին։ Մնացյալները գաղանարար հոդոտվում, նահատակվում են մարդակերպ դաղանների ձեռքով[49]։

Սքսորի նախօրյակին բաղմաթիվ երեխաների ծնողներից անջատեցին և մի քանի օր հետո նրանցից շատերին ջրահեղձ արեցին։

Այդ ահեղ օրերին բարյացկամ վերաբերմունք ցուցարերեցին հայերի նկատմամբ վրացիները։ Վրացի Ջաքըր-Ահմեդ բեկին հաջողվում է բանտարկյալների վերջին խմբին՝ 50—60 հոդու վերցնել իր հսկողության տակ։ Գրաստ է վարձում և իր ղինված ուժերով անվտանդ ու հանդիստ հասցնում Սերաստիա՝ Եփրատի ափը։ Նա իր ապարանքում փրկում է նաև մի քանի հայ երեխաների։ Վրացի Բալոդի Հյուսեին ու Բարա Ջատե էֆենդիները հայրական հոդատարությամբ խնամեցին ու պահպանեցին բոնադաղթի ենթարկված հայ բարեկամների երեխաներին և պահ թողած դանձերն ու դոհարեղենը։

Օրդու քաղաքի հետ միաժամանակ, սկսվեց դավառի հայերի «աքսորի»-բնաշնջումը։ Մոլորված ու անօդնական համշենահայ շինականների մեծ մասը, ուրիշ հույս ու ելք չունենալով, իրենց

[49] Ահրակաեի (Հ. Հովակիմյաե), նշվ. աշխ., էջ 519—522։

բախտը հանձնելով ճակատագրին, ստիպված ենթարկվեցին գահիճների նենգ հրամանին։ Թաքված ժողովրդին՝ մեծ ու փոքրին, կորաքամակ ծերունուն և օրորոցի մանկիկին հավաքելով գյուղախմբի վարչական կենտրոնը, ոստիկանների և բանտերից աղաամած ոճրագործների «հսկողությանն» տակ քշեցին Մելեքի ճամփով, վայրի քրմծիծաղով հուսադրելով, թե «գնում եք Մոսուլ, այնտեղ ձեզ կսպասե խաղաղ ու ապահով կյանք»։

Հայերին «աքսորելու» համար դյուղ ներխուժած ենիչերիները դյուղացիներին անխղճորեն ծեծում էին, որպեսզի սրանք ցույց տան փախրտականների ու ղենքի տեղը։ Առանձնապես անողոք էին այն անձանց հանդեպ, որոնցից հույս ունեին ոսկի շորթել։ Օրինակ, Գատրնճուղ դյուղի քահանա Տեր-Սահակ Վարդիկյանին ամբողջ մի օր ավինով ու դանակով խողխողելով և մաս-մաս կարաաելով առնջամահ արեցին։ Ջօդնեցին ալեհեր ծերունու երդումներն ու ոսկի չունենալու հավաստումները։

Այնուամենայնիվ, Օրդուի դավառակի դյուղերից ու հենց Օրդու քաղաքից առանյակ երիտասարդներ կտրականապես դեմ կանդնեցին բռնադատիչին։ Չհավատալով թուրք «ղեկավարներին» նենդամիտ երդումներին ու խոստումներին, նրբանք բարվոք համարեցին հայրենի լեռներում ապաստանելով՝ թշնամու դեմ ճակատ-ճակատի կռվելն ու մեռնելը, քան թե թշնամու առաջ ծնկի գալը կամ ողորմածություն խնդրելը։

Գոյամարտիկներին մասնակցած վրիժառուներից ոմանք ղարձան հայդուկային ջարժման անձնվեր ու անվանի առաջնորդներ։ Նրանցից շատերը արիաբար կռվելով նահանջեցին ու իրենց համար խաղաղ հանդրվան գտան Ռուսաստանի կովկասյան-մերձսևծովյան երկրամասերում։

1918 թ. աշնանը առաջին աշխարհամարտում Թուրքիայի վերջնական պարտությունից հետո, եղեռնից փրկված հայ բնակորներն սկսեցին ասիճանաբար վերադառնալ իրենց երբեմնի բնակավայրերը։ Օրդու քաղաքում սահմծվեց որբախնամ հանձնախումբ և որբահավաք մարմին, որի հայանվեր ու հայրենանվեր աշխատանքի շնորհիվ կաղմակերպվեց որբանոց։

Որբահավաք խմբի անդամները իրենց հետ վերցնելով լեռներում աղատված հայշենսի մի քանի երիտասարդների, շրջում էին շրջանի գյուղերում և հայտնարերված բոլոր որբերին հավաքում որբանոց։ Փոքրիկներից շատերը չէին հիշում ոչ ծնողների և ոչ էլ իրենց անունները։ Տարակույս չկա, որ մեծ թվով մանկիկներ մնացին իրենց որդեդրող թուրքերի մոտ։

Շնորհիվ ձեռք առնված դործուն միջոցների, կարճ ժամանակամիջոցում Օրդուի հայերի թիվը հասավ շուրջ 2000-ի։

Անհնար եղավ թուրքերի հետ ամուսնացած կանանց ու աղջիկների մեծ մասին էա վերցնել, քանի որ թուրք իշխանություններ ամեն կերպ խոչընդոտում էին այդ գործին։

Օրդուի վերածնված հայկական համայնքն ընարեց իր աղդային վերադաս մարմինը՝ քաղական խորհուրդը, որը վերանորոդեց եկեղեցին ու դպրոցը։

Եղեռնից փրկված աանջահար ու հյուծված խլյակներին բժշկական օգնություն ցույց աալու նպատակով, բացվեց դարմանատուն (դեղատուն)։

Սակայն կարճատե եղավ նորաորդրոջ համայնքի կյանքը։ 1922—1923 թթ., երկրում աիրող նոր կարդերի հետանքով, եղեռնից վերապրող խլյակներն սաիպված եղան թողնել հայրենի երկիրն ու ցրվել ամբողջ աշխարհով մեկ։ Քաղաքի բնակիչներից ղդալի մի հատված դաղթեց Ֆրանսիա ու հատատավեց Մարսել քաղաքում։

Գյուղացիների մեծամասնությունը դաղթեց խորհրդային երկիր՝ Արխաղիա և Կրասնոդարի մարղ։

Որբանոցները փոխադրվեցին Պոլիս ու այլ երկրներ։

Ականատեսների վկայությամբ, 1959 թ. Օրդուում բնակվում էր ընդամենը 250 հայ՝ առանց դպրոցի ու եկեղեցու։ Ս. Աստվածածին եկեղեցին հիմնովին քանդվել էր, գերեղմանոցը գետնին հավասարվել։ Սաացված վերջին կցկտուր տեղեկությունների համաձայն, ներկայիս Օրդուում բնակվող սակավաթիվ հայերը երբեմն են դարձել, աղդանունները ստիպված դարձրել թուրքական։

11. ՍԱՄՍՈՆԻ (ՃԱՆԻԿ) ԳԱՎԱՌ

Թերշեմպեով վերջանում էր Նախկին Տրապիզոնի վավառի սահմանն ու սկսում Սամսոնի (Ճանիկ) վավառը։

Գավառի Ճանիկ կոչվելու մասին կան աարբեր բացատրություններ ու ենթադրություններ։ Ոմանք այդ անունը կապում են Վասպուրականի Ճանիկի շրջանի հետ, ենթադրելով, թե անցյալում՝ պարսկա-արարական աիրապետության ժամանակ, Հայաստանից Պոնտոս դաղթած հայերի մի հոծ դանդված հիմնվել է Սամսոնի շրջանում ու երկիրը անվանել Ճանիկ։ Ուրիշների կարծիքով, այդ անունը կապվում է պատմական Ճանեք (Կող-

բիս, Լադիսլաո) կամ Ղանիք աշխարհի հնաւ։

Սակայն, ինչպես հայտնի է, Սամսոն գավառ Ղանիկ կոչվել է համշենահայերի այգ վայրերը գալթելուց (XVII գ.) գեռես շատ առաջ, ուստի և սխալ են վերոհիշյալ կարծիքները։ Համշենահայերի այն հատվածը, որը բնակություն է հաստատել այստեղ, հենց երկրամասի անունով էլ սատցել է իր՝ ճանիկցի կամ ճենիկցի անվանումը։

Արևելքից արեւոտոք Սամսոնի գավառի հայարնակ շրջաններն էին՝ Ֆաթսա (Ֆատա), Ունիե, Թևրմե, Չարշամպա, Պաֆրա ու Կավախ գավառակները։

Ֆաթսա գավառակ։ Օրգուից Ֆաթսա 87 կմ է։ Այս երկու քաղաքների միջև ընկած Վոննա և Յասոն վայրերում բնակվող հայերի վերաբերյալ ավյալներ չունենք։ Ֆաթսան ծովափնյա գեղանիստ փոքր քաղաք է էլեքճի գետի աջ ափին։ Ունի հարմար բնական նավահանգիստ։ Գետաբերանը փոքր նավերի համար նավարկելի է։ Գետից քիչ հեռու հանքային ջրեր ու բաղնիք կար։

1908 թ. մարգահամարի համաձայն քաղաքն ուներ 36.964 շունչ բնակչություն, որից 33.364 թուրք, 2404 հույն և 1175 հայ, այդ թվում՝ 289 րոդոքական։ 1914 թ. քաղաքի շուրջ 1800 շունչ հայ բնակչությունն ուներ 6-ամյա վարժարան ու քարակերա ս. Աստվածածին եկեղեցի, հիմնված 1859 թ.[50]։

Հայերը գրաղվում էին առևտրով ու արհեստներով։ Կային նաև ծառայողներ ու պետական պաշտոնյաներ։ Քաղաքի գատախաղը Հայոցքի Արթին աղան էր։ Հայտնի վաճառականներ էին Գարակյողցիք ու Օքսուղցիք։

Ֆաթսա գավառակն ուներ շուրջ 80 գյուղ։ Բնակչության մեծամասնությունը թուրքեր և. Կովկասից փախած մահմեդական վրացիներ ու չերքեզներ էին։ Շրջանի ասորեր վայրերում հիմնվել էին հայարնակ գյուղեր, որաեղ ապրող բնակչության գերակշիռ մեծամասնությունը Համշենից ու Սև-գետից գաղթած հայերի հետագա սերունդներն էին։ Դրանք էին.

Չիքուֆլոզ գյուղը Ֆաթսայի հարավ-արևմուտքում՝ երեք ժամ հեռավորության վրա։ Ֆաթսայից Չիրուքլուղ տանող ուղին անցնում էր մահմեդական վրացիների Արդուլի և. Ֆաթել գյուղերի միջով։ Գյուղն ուներ 110 տուն, որոնցից 30-ը Համալցի, 20-ը՝ Օսապաշցի, 12-ը՝ Փեհլևոնցի, 5-ը՝ Գալենչցի, 6-ը՝ Դավիթցի, 11-ը՝ Մաթուլցի, 8-ը՝ Վարելցցի, 6-ը՝ Մանուկցի և 4-ը՝ Վաշոնցի աղգատոհմերից։

Հողամասերի մեծ մասը սեփականական էր ու արգասաբեր։ Հողը հերկում ու ցանում էին հիմնականում արորներով (կարա-սափան), գարուփոս վայրերը՝ փետաններով։ Լեխար գոյություն չուներ։

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերն էին դաշտամշակությունը (եգիպտացորեն, կանեփ, ցորեն, գարի), անասնապահությունը և կաթնամշակությունը։ Կանեփը մշակում էին սեփական կարիքների և վաճառքի համար։ Բանջարաբոստանային կուլտուրաներ (սև բոնշար, լոբի, գդում և այլն) աճեցնում էին եգիպտացորենի արտերում։ Պահում էին չափավոր քանակությամբ մեղվափեթակներ։ Հավաբուծությամբ բավարարում էին ընտանիքի՝ ձվի ու մասամբ մսեղենի պահանջը։

Բեռները հիմնականում փոխագրում էին երկանիվ սայլերով, որոնց լծում էին 1 կամ 2 ղույդ եղ։ Ձի պահում էին հեծնելու համար. հաղվագեպ պարագաներում օգտագործում էին որպես բեռնակիր։

Գյուղի փայտաշեն եկեղեցին հիմնվել էր 1849 թ.։

Ունեին փայտաշեն վարժատուն՝ քառամյա գասընթացով։ Իգական սեռը ղպրոց չէր հաճախում։

Չինարլը Չիրուքլուղին հարակից հայարնակ գյուղ էր։ Ուներ 60 տուն բնակիչ՝ մեծ մասը Մաթուլցի, Թոմանցի, Լորկեցի (Լոբյան), Վարելճցի աղգատոհմերից։ Երկրագործական գործիքներն ու ղրաղմունքները նույնն էին, ինչ Չիրուքլուղ գյուղում։ Ունեին քառամյա ղպրոց։

Գայա-ախպի (Գայա-արախ) գյուղը գանվում էր Ֆաթսայից երեք ժամվա ճանապարհ հարավ-արեելք։ Այստեղ բնակվում էր 45 տուն հայ՝ մեծ մասը մարարաներ։

Խալաշլի։ Գայա-ախպիի հարակից հայարնակ գյուղ, ուներ 35 տուն բնակչությամբ։

Բաջանալ։ Գայա-ախպիին հարավից սահմանակից փոքր գյուղ, 15 տուն բնակչությամբ։

Հիշված երեք գյուղերի ղպրոցն ու եկեղեցին գանվում էին Գայա-ախպի գյուղում։ Ս. Կարապետ եկեղեցին հիմնվել էր 1799 թ.։ Աղջիկները ղպրոց չէին հաճախում։

Երեք գյուղի ղբաղմունքներն ու աշխատանքային գործիքները նույնն էին, ինչ որ Չիրուքլուղ գյուղում։

Կյուենեյ։ Ֆաթսայից մի ժամ հարավ, հայարնակ գյուղ, 15 տուն բնակչությամբ։

Բորու-Ֆյոյ։ Ֆաթսայից 2 ժամ արեելք, հայաբնակ գյուղ՝ 40 տուն բնակչությամբ։ Ունեին տարրական վարժատուն։

[50] Հ. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 720։

Յազ-քեւիե: Բորու-քյոյից մեկ ժամվա ճանապարհ հարավ, հայաբնակ գյուղ: Այսաեղ ապրում էին 30 աուն հայ մարարաններ:

Յազ: Հարեան այս գյուղն ուներ 40 աուն հայ բնակչություն:

Ախլաթը Բորու-քյոյին հարավ-արեմուտքից սահմանակից փոքր գյուղ էր, ուր ապրում էին 15 աուն հայ մարարաններ:

Բորու-քյոյի, Յազ-քեւիե և Ախլաթ գյուղերի բնակիչների ղրաղմունքներն ու երկրագործական միջոցները ոչնչով չէին աարրերվում Ջիրուքլուղից:

Տաղ-օլուղ գյուղը գանվում է Ֆաթսայից 6, Ախլաթից 2 ժամ հեռու, սարահարթերում: Գյուղն ուներ 50 աուն հայ բնակչություն: Տաշ-օլուղի և Սխլաթի միջև գանվում է թուրքական Յուրմելի գյուղը: Առհասարակ, այս կողմերի վարելահողերը հեշա մշակելի ու բերքառա էին:

Այսաեղ լայնորեն ղարգացած էր անասնապահությունն ու կաթնամշակությունը: Կային մեծաքանակ ոչխար ու կով պահողներ, ձիերի երամակներ ունեցողներ:

Բացի գլխավոր հացահատիկից՝ եգիպտացորենից, մշակում էին նաև գարի, ցորեն, հաճար: Ինչպես ղանաղան բանջարեղենը, այնպես էլ կոսաիլը (գեանահինճոր, կարառոֆիլ) մշակում էին եգիպտացորենի արաերում՝ համաաեղ:

Կանեփը մշակում էին սեփական կարիքները բավարարելու ու վաճառքի համար:

Կաղինի մշակումն այսաեղ նոր էր աարածվում:

Գյուղի փայտաշեն եկեղեցին պաշտոնական արձանագրություններում չի հիշվում:

Գյուղն ուներ փայտաշեն քառամյա գպրոց:

Քեսուանե-յոխուշի: Տաշ-օլուղից մեկ ու կես ժամ հարավ, հայաբնակ լեռնային այս գյուղում ապրում էին 25 աուն հայ մարարաններ: Գլխավոր գրաղմունքն անասնապահությունն էր:

Թեփելուղը Ֆաթսայից 9 ժամ, Քեսուանե-յոքուշից մեկ ու կես ժամ հարավ, հայաբնակ գյուղ էր, որն ուներ 20 տուն բնակչություն:

1895 թ. և, հաակապես, 1915 թ. եղեռնի ժամանակ, շնորհիվ հարևան այլազգիների և հաակապես մահմեդական վրացիների հեա ունեցած բարեկամական կապերի, Ֆաթսա. գավառակի հայերը գրեթե չաուժեցին: Համեմաաարար խաղաղ պայմաններ աեղծվելուց հեաո, վերապրողների զգալի մասը գաղթեց Սովեաական Միություն, մասամբ էլ՝ արաասահման:

Ունիեի գավառակը աարածված էր Ֆաթսայի ու Թերմեի գավառակների միջև, ծովափից մինչև Սերասեայի սահմանները. վարչական կենարոնը Ունիեի քաղաքն էր, որը գանվում էր Ֆաթսայից 30 կմ արևմուաք՝ Սեւ ծովի աիին: Անցյալում դավառակը հայանի էր նաև Պոլիմոնական Պոնտոս անունով:

XVII—XVIII դդ. Համշենից ու Սեւ-գեակից գաղթած համշենահայերի պաակառելի մի հաաված հանգրվանելով այս գավառակում, բնակությունն է հասաաում ծովափից 3—4 կմ հարավ՝ մեծ մասամբ լեռնային ու աորգջարար կլիմայով երկրամասում:

Գավառակի բնակչության գլխավոր գրաղմունքներն էին՝ գաշաամշակությունը, անասնապահությունը, աչգեգործությունը (կաղնուաներ) և մասամբ՝ շերամապահությունն ու մեղվարությունը: Այսաեղ ևս հիմնական հացահատիկը եգիպտացորենն էր, որի հեա համաաեղ մշակում էին նաև անհրաժեշա բանջարեղեն ու ընգեղեն: Ամենաշահավեա ու աարածված գրաղմունքը, կանեփի և մասամբ կաավաաի մշակումն էր, որոնցից սաացած բերքի մեծ մասը արաահանում էին:

Սամսոն գավառում, Ջարշամպայից հեաո, ամենարաղմամարդ ու համախմբված հայարնակ շրջանը Ունիեի գավառակն էր:

Թուրքական ւգաշտոնական վիճակագրական սվյալների համաձայն 1908 թ. գավառակն ուներ 62900 բնակիչ, որոնցից 53800 թուրք, 4200 հույն և 4720 հայ էին: Հայերի թիվն առնվաղն 100%-ով պակաս է ցույց արված: 1911 թ. աղգայինների սվյալներով, գավառակում (քաղաքն ու գյուղերը միասին) բնակվում էր 9000 հայ[51]: Եղեռնի նախօրյակին այդ թվի 10000-ից ավելի լինելն աներկրա է:

Գավառակի հայարնակ վայրերն էին.

Ունիե (հուն. Ինեո): 1914 թ. այս քաղաքն ուներ շուրջ 2000 աուն բնակչություն, մեծամասնությունը՝ թուրքեր ու հույներ: Հայերը հաշվվում էին մոա 250 աուն (1500 անձ), որոնց ղգալի մասը գաղթել էին Սերասեիա, Թոքաա, Նիքսար և այլ գավառներից. կային նաև շրջակա գյուղերից աեղափոխվածներ[52]: Քաղաքի առևարականների և արհեսաավորների շրջանում ղգալի աեղ էին գրավում հայերը:

Ունիեցի հայերն ունեին ս. Մինաս անունը կրող քարակերա շքեղ եկեղեցի, հիմնված 1819 թ., որը հիմնովին վերակաուցվել էր 1835-ին և որի մասին արձանագրված է եկեղեցու հյուսիսային ճակաին ղեաեղված մարմարյա քարին:

---

51 Հ. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 717:

52 Նույն աեղում:

Ունիեցիք ուսումնարան ունեցել են 1850-ական թվականներից, ուր սինչև 1890-ական թվականները սովորում էին միայն արական սեռի երեխաները։ 1893-ին օր. Նաղլուկը հիմնեց Հրիոբգաց գպրոց, ուր հաճախում էր շուրջ 50 աշակերտուհի։ 1900 թվականից քաղաքի ուսումնարանը գառնում է երկսեռ, որը կոչվում էր Մեսրոպյան վարժարան և որտեղ սովորում էր շուրջ 195 երեխա, որոնցից 75-ը՝ աղջիկ։

Ունիևի գավառակն ուներ հայարնակ հետևյալ գյուղերը.

Զաթալ-բուղարի վիճակը գանվում է Ունիեի Հարավարեելյան կողմում, Ճեվիզ-աերե գետի հովտում։ Կառավարիչը (միդյուրը) նստում էր քաղաքից մեկ ժամվա ճանապարհ հեռու Զաթալ-բուղար գյուղում։

Ուչ-Ֆյուփրին Ունիե քաղաքից 3 ժամվա ճանապարհ հեռու, թուրքական մեծ գյուղ էր, որի առանձին թաղում բնակվում էր 16 տուն հայ։

Ի՛մուզ-Ֆյոյ։ Ունիեից 3 ժամ հեռու, քաղաքին մոտակա առաջին անխառն հայարնակ այս գյուղն ուներ 55 տուն բնակչություն, որի մեծամասնությունը էքսուղցի, Գարաքյահցի, Արթինցի, Մաղլումցի աղգասահմաններից էին։ Ունիեից մինչև էքուղ-քյոյ՝ համատարած թուրքական գյուղեր էին։ Այս գյուղի հայերի մեծամասնությունը Ֆյոչեբեներ[53] (մարգարաներ) էին։ Զբաղվում էին գաշատմշակությամբ (եգիպտացորեն, ցորեն, գարի)։ Եգիպտացորենից բացի, մշակում էին նաև բանջարեղեն, լոբի։ Առաջնակարգ ղբաղմունք էր կանեփի ու մասամբ էլ կտավատի մշակումը. ըստացված բերքի մեծ մասը վաճառում էին։ Մեծ պահանջարկ կար առանձնապես կտավատի սերմի։ Մխախոտագործությամբ զբաղվելը պետության կողմից արգելված էր։

Հողերը հերկում էին արորով (հարթավայրերում՝ կարա-սափոն արորով), լափաղ-արորով ու փետտաններով (պտոակ վայրերում՝ լանջերում)։

Յուրաքանչյուր գերգատան, սեփական կարիքները բավարարելու նպատակով, ղբաղվում էր նաև անասնապահությամբ ու կաթնամշակությամբ։

Գյուղն ուներ փայտաշեն գպրոց ու եկեղեցի։

Զալ-բաղազ։ էքուղ-քյոյին հարավից սահմանակից հայարնակ այս գյուղում ապրում էր 15 տուն հայ, որոնք իրենց աղգային, մշակութային կյանքով կապված էին էքուղ-քյոյ հայարնակ գյուղի հետ։

Լախանա։ Զալ-բողաղին արեելքից հարեան հայաբնակ թաղ՝ 12 տուն բնակչությամբ։

Քելագ (Քելեզ)։ Գանվում է ճեիղ գետի աջ ափին, Ունիե քաղաքից 4 ժամ հարավ-արեելք։ Ունիեից Քելաղ գնալու երթուղին անցնում էր Կուռնա և Թեփե թուրքական գյուղերի միջով։ Գյուղը բաղկացած էր 4 թաղից՝ Քելաղ, Գորգմաղլի կամ Սըրթիցոց-գեղ, Մենկենե կամ Արմենակցոց-գեղ ու Կյունեյ։ Բոլոր թաղերում միասին բնակվում էր 153 տուն հայ, որոնց շուրջ 25—30%-ն ուներ սեփական հողամաս։ Քելաղի առանձին մասերում հայերի հետ գուռ-գրկից ապրում էին փոքրաթիվ թուրքեր։

Քելաղի հայերն ղբաղվում էին գյուղատնտեսության նույն ճյուղերով, ինչ որ էքուղ-քյոյում, այն տարբերությամբ, որ այստեղ ավելի շատ հողամասեր էին հատկացված կտավատին։ Կանեփ մշակում էին գլխավորապես սեփական կարիքների համար։ Այստեղ ես մասամբ ղբաղվում էին շերամապահությամբ։ Մետաքսի թելը օգտագործում էին անալնագործության մեջ։

Մենկենեում (թաղամասում) կար իջեանատուն (իան)։ Գյուղի եկեղեցին ու վարժատունը (երկուսն էլ փայտաշեն) կառուցել էին Կյունեյ թաղամասում։ Եկեղեցին կոչվում էր ս. Գեորգ, հիմնվել էր 1861 թ.։

Բալլուղ։ Ունիեի վիճակում հատատված համշենահայերի առաջին բնակավայրերը եղել են Բալլուղն ու նրանից 3 ժամ հարավ գտնվող Ցաղ-բատան գյուղը։ Ունիեից Բալլուղ 4 ժամ գնում էին Նիքսարի խճուղով, ապա երկու ժամ՝ արահետով գետի արեելք։ Բալլուղն Ունիեի շրջանի ամենահին ու բաղմամարդ հայարնակ գյուղը էր, 185 տուն բնակչությամբ։ Գյուղի թաղերը կաղմավորվել էին ըստ աղգակցական կապերի ու նրանցից յուրաքանչյուրը ստացել էր գլխավոր աղգատոհմի անունը՝ Հեքիմցոց, Ուսացոց, Գալայճցոց, Գարագյողցոց, Տարախացոց, Գալուստացոց, Լորեկցոց-գեղ, Տերենա (Մալխասցոց-գեղ), Թորոսցոց, Մրզգեսցոց, Կոնգաքցոց և այլ թաղեր։

Ի տարբերություն Ունիեի շրջանի հայկական այլ գյուղերի, բալլուղցիների մեծամասնությունը սեփական հողամասերի տեր էր։ Այդ տոթիվ բնակչության մեջ մնացել է այսպիսի ավանդություն. ոմն արապիզոնցի Նուրի-փաշա, որի սեփականությունն էին Բալլուղի հողամասերը, աղգակից թուրք հակառակորդներից վրեժ լուծելու համար գիմում է իր բալլուղցի մարգարաների օգնությանը։ Քաջարի բալլուղցիք ակտիվորեն վիճակում են իրենց կալվածատիրոջը։ Հակառակորդները խոնարհվում են Նուրի-փաշայի ուժեղ։ Ըստ էս հատուցում, Նուրի-փաշան Բալլուղի իր

---

[53] Այս գավառակում վարձակալված գյուղացիներին (մարգարաներին) Ֆյոչեբեն էին անվանում։

կալվածներից ընգարձակ հողամասեր է նվիրում հայ վարձկան-մարարաններին։

Գյուղատնտեսական ճյուղերն ու աշխատանքային գործիքները նույնն էին, ինչ որ Քելաղ գյուղում։ Վերջին տարիներին լայն թափով տարածվում էր կաղինի մշակումը։ Գյուղը հարուստ էր նաև պտղատու ծառերով՝ խնձորենի, տանձենի, ծվաղենի և այլն։

Ինչպես հիշյալ գյուղերում, այնպես էլ Բալլուղում կաթից սեր զատելով կարագ ստանալու սովորություն չկար։ Կարագը պատրաստում էին մածունը խնոցու մեջ հարելով։

Բալլուղի փայտաշեն գպրոցն ու եկեղեցին ւտնվում էին Ուստցոց-գեղում։ Եկեղեցին հիմնվել էր 1779 թ., որը կրում էր ս. Աստվածածին անունը։

Գյուղն ուներ 7-ամյա ղպրոց։ Բալլուղի ղըպրոցն ավարտողներից մի քանի հողի ղասավանդում էին շրջանի ասրրական գպրոցներում։ Աղչիկները գպրոց սկսեցին հաճախել 1908—1910-ական թվականներից։

Ֆեհերիտ։ Բալլուղին հարավից սահմանակից այս գյուղում ընակվում էր 20 տուն համշենահայ քյոչերի։

Փաշա-ֆյոփրու։ Բալլուղին հարավ-սրեմուտքից սահմանակից թուրքական գյուղ, ուր ապրում էր 28 տուն հոյ սեփականասեր գյուղացի։

Թեֆ-ֆիրեզի վիճակի գյուղերը ընկած են Բալլուղից հարավ, Նիքսարի խճուղու երկու կողմերում՝ մինչև էքինջուղ, Փելիթ-յաթաղ գյուղերը։ Վիճակի վարչական կենտրոնը Թեք-քիրեզ թուրքական գյուղն էր։ Հայերն այստեղ ապրում էին գյուղի առանձին թաղում։

Թեֆ-ֆիրեզ (Քիրեզ) մասամբ հայաբնակ գյուղը գանվում էր Ունիեից 6 ժամ հեռու, Նիքսար տանող խճուղու վրա։ Լեռնային արահետներով քաղաք կարելի էր հասնել 5 ժամում։ Գյուղըն ուներ 29 տուն՝ 235 հայ բնակչություն՝ Թահմազյան, Պոյրազյան, Տրապիզոնյան, Տելիկյավուրյան, Ապիոնյան, Նալբանգյան, Ջլալյան, Թումանյան ազգատոհմերից։

Գերզաստանների շուրջ 50%-ն ուներ սեփական տնտեսություն։ Զբաղվում էին գյուղատնտեսության նույն ճյուղերով, ինչ Բալլուղում։

Թեքքիրեցիների շահավետ, օժանդակ զբաղմունքներից մեկն էլ կոմեշներ լծած երկանիվ սայլերով Նիքսարից ու Թոքատից ընկուզի ֆյոքուղ (կոճղ) Ունիե տեղափոխելն ու այստեղից աղ, շաքար և այլ ապրանքներ հիշյալ քաղաքները տեղափոխելն էր։ Սայլապանների առաջնորդը կոչվում էր արաբաջի-բաշի։ Կարավանը հասնում էր շուրջ 30—40 սայլի։ Ունիեից մինչև Նիքսար հասնում էին 4 օրում։ Յուրաքանչյուր սայլի բեռը հասնում էր 1000—1200 օխայի (1200—1500 կգ)։ Ամեն սայլի համար վարձատրում էին 3—4 օսմանյան ոսկի։

Տնտեսության ներքին բեռները նույնպես այդ սայլերով էին փոխադրում։ Թեք վայրերում օգտագործում էին սահնակներ՝ իղականեր (կըզախ՝ ամառային սահնակ)։

Ամրողջ գյուղում միայն 3—4 հարուստ ընտանիք հեծնելու ձի ուներ։ Բնակչության մեծամասնությունը Ունիե քաղաք երթեկում էր հետոտն։

11. Բանասաց Ջաւիկ Խաչատուրի Թումանյան (Ունիեի շրջանի Թեք-քիրեզ գյուղից)։

Թեք-քիրեզի ս. Խաչ եկեղեցին հիմնվել է 1885 թ.։

Գյուղն ուներ քառամյա վարժատուն։

Յաղ-բասանը Թեք-քիրեզից երկու ժամ արեելք ընկած, նախկինում մեծ հայկական գյուղ էր, որն ուներ եկեղեցի ու վարժատուն։ Ինչպես վերը նշվեց, Յաղ-բասանն ու Բալլուղը եղել են Ունիեի շրջանում համշենահայերի հիմնած առաջին բնակավայրերը. սակայն Յաղ-բասանի կալվածասեր Խուլիս էֆենդին այնպիսի ծանր պայմաններ է սահմանում հայ մարարանների համար, որ նրանք ստիպված են լինում իրենց քրտնաջան աշխատանքով ծառ ու թփերից, քարերից մաքրած և մշակած հողամասերը թողնել ու գնալ ուրիշ բնակավայր։ 1900-ական թվականներին այնտեղ կանգուն էին մնացել միայն ս. Հակոբ եկեղեցին ու գերեզմանոցը, որոնցից օգավում էին մոտակա գյուղերի հայերը։ Եկեղեցին հիմնվել է 1799 թ.։ Գյուղում ցիր ու ցան մնացել էր հավիվ 8—10 տուն հայ։

Կոզբիկ (Կոզբուբ)։ Թեք-քիրեզից երկու ժամ-

ՈՒՆԻԵԻ ԵՎ ՓԱԹՍԱՅԻ ԳԱՎԱՌԱԿՆԵՐ

կրթական և կրոնական օջախներ (ամենամոտիկ քարտեզ)

Հեղինակ՝ Բ. Գ. ԹՈՌԼԱՔՅԱՆ
Խորհրդատու՝ Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
Քարտեզագիր՝ Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

վա Հանապարհ Հարավ-արևելք ընկած հայաբնակ գյուղ, որի առանձին՝ Թուխլուղ կոչված թաղում բնակվում էր իր սիրագործություններով հռչակված Մինասցոց աղգապահմը։ Թեք-քիրեղի ու Կողրիկի միջև գանվում էին թուրքական Կուլուրլուղ և Գըզըլջա-քեսե գյուղերը։ Կողրիկում բնակվող 64 առն հայերի ղգալի մասը սեփականատեր էր։

Գյուղատնտեսության ճյուղերն ու աշխատանքի գործիքները նույնն էին, ինչ Բալլուղում։

Կողրիկցիք ունեին ղպրոց ու եկեղեցի, երկուսն էլ փայտաշեն։ Ս. Աստվածածին եկեղեցին հիմնվել է 1885 թ.։

Ալի-Վաբազ։ Բալլուղից և Փաշա-քյոփրուից հարավ թուրքական մեծ գյուղ, որի շորս՝ Օղավարան, Սարի-ղեղ (Ալեքսանցսց-գեղ), Աղոթոն (Բոլբապցոց-կեղ), Ալի-Վարաղ թաղերում բնակվում էր 55 առն հայ՝ մեծամասնությունը քյոշերև։

Յար-բաշի։ Բալլուղից մեկ ժամ հարավ-արևելք ընկած, մոտ 300 առն ունեցող թուրքական մեծ գյուղ, որի մեկուսացված թաղում ապրում էր շուրջ 50 առն հայ քյոշերե ու սեփականատեր։ Ունեին փայտաշեն ղպրոց ու եկեղեցի։ Զբաղվում էին գյուղատնտեսության նույն ճյուղերով, ինչ Բալլուղում։ Հայկական թաղի բնակչության մեծամասնությունը Դասպարցիք լինելու պատճառով, այն հայտնի էր նաև Դասպարցոց-գեղ անունով։

Դյուղի ղպրոցն ու եկեղեցին գտնվում էին այդ թաղում։

Գարա-առմոտ։ Կողրիկից հարավ ընկած թուրքական գյուղ, շուրջ 100 առն բնակչությամբ, որի առանձին թաղում ապրում էր 18 առն հայ մարաթա։

Կասլա-առշ։ Թեք-քիրեղից 2 ժամ հարավ-արեելք արխավական բաղմամարդ գյուղ, որի առանձրն թաղում բնակվում էր 40 առն հայ, մեծ մասամբ Գարագյողյան աղգապահմից, հայերն ունեին փայտաշեն ղպրոց ու եկեղեցի։

Լրխեի։ Կապա-տաշլին սահմանակից արխավական գյուղ, լրխնիցիները թուրքական բանակի հետ փախել էին Արխաղիայի Գուգասուտայի շրջանի Լրխնի գյուղից ու նոր բնակավայրն անվանել հայրենի գյուղի անունով։ Այս գյուղի առանձին թաղում ապրում էր 15 առն հայ՝ Մինասցոց ազգատոհմից։

Քյոխլուղի վիճակ։ Թեք-քիրեկից երկու ժամ դևպի հարավ-արևմուտք ընկած խիտ լեռնային գյուղ է Քյոխլուղը, որտեղից մինչև Ունիե լեռնային արահետներով 5 ժամվա ճանապարհ է, իսկ խճուղով՝ 8 ժամվա։ Ունիե գավառակի ամենահամախմբված և բաղմամարդ հայաբնակ գյուղն էր։ Քյոքլուղն ուներ հետեյալ թաղերը՝ Թեքե-քամի, Սեյլան, Մինասաիր, Տյուղ-Թարլա. Սուֆլար, Էյրի-բել, Օղան և Ցամուրջուք, որոնք փաստորեն վերածվել էին ինքնուրույն գյուղերի։ Ամբողջ այս գյուղախմբում բնակվում էր 300 տնից ավելի հայ (բազմամարդ գերդաստաններն էին Գարաքյանցիք, Թահմաղցիք, Զելթունցիք, Գրպաշցիք, Ապիոնցիք, Ավճցիք, Զաքրցիք, Կրիմցիք, Բոլրաղցիք և ուրիշներ)։

Քյոքլուղցի հայերի մեծամասնությունը սեփական հողամաս ուներ, ուսաի և հնարավորություն՝ հոսսատում տնտեսություն հիմնելու։ Համարյա բոլոր սեփական հողամաս ունեցողները նաև կաղնուտների տեր էին։ Բացի կաղինի այգիներից, գյուղատնտեսության մնացյալ ճյուղերն ու երկրագործական գործիքները նույնն էին, ինչ վերոհիշյալ գյուղերինը։

Գյուղի փայտաշեն ս. Կարապետ եկեղեցին հիմնվել է 1863 թ.։

Քյոքլուղն ուներ բարեկարգ 7-ամյա ուսումնարան, երեք բարձրագույն կրթությամբ փորձառու ուսուցիչներով։ Բացի մայրենի լեզվից, դասավանգում էին նաև ֆրանսերեն ու թուրքերեն։

Էֆեեոպր Քյոքլուղից 1,5 ժամվա ճանապարհ հարավ-արեմուտք (Նիքսարի խճուղուց 1 ժամ արեմուտք) ընկած լեռնային գյուղ էր, որտեղ բնակվում էր 45 առն քյոշերե և սեփականատեր հայ։

Զբաղմունքները նույնն էին, ինչ Քյոքլուղում։ Կաղինի մշակումը նոր էր մուտք գործում այսաեղ։ Դյուղի ս. Կարապետ եկեղեցին հիմնվել է 1863 թ.։

Յազրգ-բեյլեի վիճակի գյուղերը տարածված էին Ունիեի ամենահարավային, Սերաստիա նահանգին սահմանամերձ բարձր լեռնային գանգվածներում։ Վիճակի վարչական կենտրոնը Յազրգ-բեյլե թուրքական գյուղն էր, որը գանվում է Նիքսարի սահմանի մոտ։ Այս շրջանում կային հետեյալ հայարնակ գյուղերը.

Փելիք-յաթաղը (Փլիք-յաթաք) գտնվում է Ունիեից 10 ժամ հեռու, Նիքսարի խճուղու արեմտյան կողմում։ Այսաեղ բնակվում էր 55 տուն սեփականատեր ու քյոշերե հայ։ Զբաղվում էին գաշտամշակությամբ (հիմնականում եգիպտացորեն), անասնապահությամբ (ոչխար, կով), կաթնամշակությամբ, հավարուծությամբ, մեղվաբուծությամբ։ Առաջնակարգ ու եկամտարեր ղրաղմունքը կանեփի մշակումն էր, որի բերքի մեծ մասը վաճառում էին։

Ինչպես Ունիեի շրջանի համարյա բոլոր գյուղերում, այնպես էլ Փելիք-յաթաղում գեանախնձորի և կարտոֆիլի համար առանձին հողա-

մասեր չէին զբաղեցնում, այլ մշակում էին համատեղ՝ միևնույն արաերում։ Արաերը մեծ մասամբ սևահողային ու փխրուն էին։ Հողը մշակում էին արորով (կարա-սափան) ու փետատներով։ Բեռ փոխադրելու հիմնական միջոցը խղակն էր (ամառային սահնակը)։

Գյուղի ս. Խաչ եկեղեցին հիմնվել է 1863 թ.։ Ունեին քառամյա վարժատուն։

Մելիֆ-թեփեն Փելիֆ-յաթաղին հարևան հայարնակ գյուղ էր, որի 25 տուն հայ բնակչության մեծամասնությունը քյոչերե էր։

Զբաղմունքները նույնն էին, ինչ Փելիֆ-յաթաղում։

Քիրփլուղ (Քիփրիչիֆ)։ Սա գյուղ էր, որն ուներ 60 տուն հայ բնակչություն՝ մեծամասնությունը սեփականատեր։ Գյուղի հողամասերն ու տները տարածված էին Նիքսարի խճուղու երեվելյան կողմում։

Այստեղ գլխավորապես զբաղվում էին անասնապահությամբ ու կաթնամշակությամբ։ Կային մեծաքանակ (1000—1500) ոչխար, 40—50 կով պահողներ։ Կանեփր մշակում էին սեփական կարիքների և մասամբ վաճառելու համար։

Գյուղի ս. Գևորգ եկեղեցին հիմնվել է 1863 թ.։

Գյուղն ուներ վարժատուն և մեկ ուսուցիչ։

Գարաւոնի վիճակը գանվում է Ունիեի շրջանի հարավ-արեմուտքում։ Այս շրջանի հայկական գյուղերն էին.

Ջաֆալ։ Ունիեից 4 ժամվա ճանապարհ գեպի հարավ-արևմուտք, որտեղից Ջաքալ գնալու ուղին անցնում էր հունաբնակ Տուղլի-սու և թուրքական կութլիջ գյուղերի միջով։ Գյուղում ապրող 38 տուն հայերի մեծ մասը սեփական հողամաս ուներ։ Հայանի ու բաղմամարդ աղգաատհմեր էին Հայթյանցիք, Թահմազցիք։

Գյուղն ուներ փայտաշեն վարժատուն։

Գարամոն (Կարմառն)։ Այս գյուղը գանվում է Ունիեից հինգ, Ջաքալից մեկ ժամ հարավ-արևմուտք, որտեղ նստում էր վիճակի կառավարիչը՝ միդուրր։ Գյուղի Խաչի-գեղ և Գայա-սիպի թաղերում բնակվում էին 25 տուն հայ սեփականատերեր ու փոքրաթիվ քոչերեներ։

Սա Ունիե գավառակում համշենահայերի հաստատած առաջին բնակավայրերից մեկն էր։ Գյուղի բաղմամարդ աղգաատհմերն էին՝ Թուլբուցիք, Թահմազցիք, Կարմիրցիք, Վարդանցիք, Մումցիք, Մադիլցիք և այլն։

Գարամոնում ու շրջակա Ջաքալ, Վեզերցոց (Կապաք-կելիշ) գյուղերում ամենատարածված ու շահավետ զբաղմունքը կաղինի այգիների մշակումն էր։ Զարգացած էին նաև անասնապահությունն ու կաթնամշակությունը. պահում էին կով, ոչխար, մասամբ էլ գոմեշ։ Գրեթե բոլոր բնակիչներն ունեին 5—10, ոմանք էլ՝ մինչև 50 գլուխ ոչխար։ Հացահատիկներից առաջնությունը տրվում էր եգիպտացորենին. համատեղ մշակում էին նաև բանջարեղեն, լոբի։ Ինչպես Գարամոնում, այնպես էլ Ունիեի բոլոր գյուղերում կարտոֆիլի և դեհնախնձորի մշակման համար առանձնապես շատ հողամասեր չէին զբաղեցնում. մի անգամ տնկած կարտոֆիլից տարիներով բերք էին տանում։

Արաերը հերկում էին սլապենական արորով, իսկ խիստ ղառիվար, պատակ վայրերը՝ փետատով։

Փոխադրական տարածված միջոց էր կրկախը (սայլատահնակ), որին լծում էին 1—2 զույգ եղ։

Մոտակա գյուղերի մշակութային կենտրոնը Գարամոնն էր։ Ս. Լուսավորիչ փայտաշեն եկեղեցին հիմնվել է 1807 թ.։

1908 թ. գյուղն ուներ 7-ամյա վարժատուն, որտեղ, բացի մայրենի լեզվից, դասավանդում էին նաև ֆրանսերեն ու թուրքերեն։ Շրջակա գյուղերի տարրական դպրոցներն ավարտողներից շատերը ուսումը շարունակում էին Գարամոնի դպրոցում։

Հատկանշական է, որ հարևան թուրք գյուղերից 15 աշակերտ թուրքերեն գրել-կարդալ սովորելու համար հաճախում էին այս դպրոցը, որովհետև իրենց գյուղերում դպրոց գոյություն չուներ։

Կապաք-կելիշ (կամ Վեզիրցոց-գեղ)։ Գարամոնից մեկ ժամ արեմուտք գանվող այս գյուղում ապրում էր 7—8 տուն հույն ու 45 տուն հայ սեփականատեր, որոնց մեծամասնությունը Վեզիրցի աղգատհմից լինելու պատճառով գյուղը կոչվում էր նաև այդ անունով։

Աղգային-մշակութային կյանքով (դպրոց, եկեղեցի) վեզիրցիք սերտորեն կապված էին Գարամոն գյուղի հետ։

Վեզիրցիների գյուղատնտեսության բնագավառի զբաղմունքներն ու աշխատանքի գործիքները նույնն էին, ինչ Գարամոնում։

Թերմեի զավառակ։ Գավառակի ծովեզրյա հողերի մեծ մասը ճահճային հարթավայրեր էին, խիստ վատառողջ կլիմայով։ Ճահճուտները համաժողովրդական աղետի, ճահճատենգի սպրյուռ էին։ Մովափից 2—3 ժամ հեռու սկսվում են լեռնալանջերն ու բարձր անտառածածկ սարերը, բարերար կլիմայով ու սառնորակ ջրերով։

Շրջանի աչքի րնկնող բարձունքներն են՝ Գնալի-սարը՝ քաղաքից 6 ժամ հեռու, Թևրմե գետի ակունքին մոտ. Քերիշ-սարը՝ համանուն հու-

նական գյուղի մոտ՝ Ջարշամպալի և Թերմեի միջև, ծովից 4 ժամ հեռու. Թաղ-տաղին՝ քաղաքից 12 ժամ հարավ. Ջիլարի-սարը՝ ծովից 4 ժամ հարավ, Չանկեղիշը՝ Թերմեից 3 ժամ հարավ-արևմուտք։

1908 թ., պետական մարգահամարի տվյալներով, գավառակն ուներ շուրջ 23.400 բնակչություն, որից 20.600 թուրք, 800 հույն և մոտ 2000 հայ։ Հայերի թիվն այստեղ ևս, նեղգամտորեն, հոգակի բիչ ի ցույց տրված[51]։

Մշակելի սևահողերը, քիչ բացառությամբ, փխրուն ու բերքատու են, ղժվար մշակելի հողատասեր հայվայեպ են։

Գավառակի ծովափնյա ջրարբի հարթավայրերի բնակչության հիմնական զբաղմունքը բրնձի մշակումն էր. միջին գոտիներում մշակում էին կաղին, կանեփ։ Անասնապահությունն ու կաթնամշակությունը, ինչպես նաև մեղվաբուծությունը աոանձնատես զարգացած էին բարձրագիր վայրերում։ Թերմեի բրինձը մեծ հուշակ էր վայելում տրտաքին շուկաներում։

Գավառակի հայաբնակ վայրերն էին.

Թերմե քաղաքը (հունարեն «Թհերմոս»—«ջերմուկ» բառից) գտնվում է Ունիեից 30 կմ դեպի արևմուտք՝ Սև ծովի ափից կես ժամ հեռու, Թերմե (հնում՝ Թերմոնդոն) գետի աջ ու ձախ հովիտներում։ Հեղեղների ժամանակ, երբ գետի մակարդակը խիստ բարձրանում էր, ջրատածակ «փողոցներում» նավակներով էին երթևեկում։ Քաղաքն ունի բնականից հարմար նավահանգիստ, որը հնում Հերակլյան էր կոչվում[52]։

Թերմեն համանուն գավառակի վարչական կենտրոնն էր, որտեղ նստում էր գավառակապետը (գայմագամ)։ Քաղաքն ուներ մոտ 4000 բնակչություն՝ մեծ մասը հույներ ու թուրքեր. հայերը հաշվվում էին շուրջ 660 շունչ[53]։ Թերմե քաղաքի և Սերաստիայի նահանգի միջև հաղորդակցության հարմար ճանապարհների բացակայության պատճառով հայերն այս կողմերը քիչ էին երթևեկում, ուսաի և սակավաթիվ էին։

Հայերի կիսաքարաշեն ս. Աստվածածին եկեղեցին հիմնվել է 1875 թ.։ Ունեին փայտաշեն երկսեռ վարժատուն։

Թերմե գետի արևելյան հովտում գտնվում էին հետևյալ հայարնակ գյուղերը.

Գոճամաե–բաշիի վիճակում՝ նույնանուն գյուղը գտնվում է Թերմեից հարավ-արևելք 4 ժամ հեռավորության վրա և երթուղին անցնում է չերքեզական Սարայքոյ, Ըղըլը-տաղ, Իլնե-գաղա, ապա՝ թուրքական Բաղլամուճ, Շոխլի, Իսկութ-բաշի ու նորից չերքեզաբնակ Հյուսեին-բաշի, Ենիքոյ ու Գոճաման-բաշի գյուղերով ու հասնում հայաբնակ Գոճաման-բաշի բնակավայրը։ Բացի հայաբնակ գյուղից, մնացյալները տեղավորված են ցածրադիր ճահճուտ հարթավայրերում, որոնք ունեն խիստ վտասողջ կլիմա, սակայն չափազանց նպաստավոր՝ բրնձի մշակման համար։ Հայկական Գոճաման-բաշի գյուղը փոված էր սարահարթում ու մասամբ պառակ վայրերում։ Դաշտավայրերի մեծ մասը սևահողային է՝ փխրուն ու բերքառատ։ Հարթավայրային վարելահողերը հերկելու հիմնական միջոցը չաթալ (երկխոփ) ու, մասամբ, յափաղ-արորն էր։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ Թերմեից գնալի արևելք ընկած շրջաններում (Օրգու, Տրապիզոն) չաթալ-արոր բոլորովին գոյություն չունեը։ Ջառիվար ու խորդուբորդ հողամասերը հերկում էին նահապետական արորով (կարա-սափան) ու փետատներով։

Գյուղն ուներ 65 տուն բնակչություն՝ մեծամասնությունը քյոշեբե։ Կային նաև հարուստ կալվածատերեր (մեկ-երկու հոգի), որոնց հողամասերում բնակվում էին 10—15 տուն կապալառուներ (քյոշեբե). այդ հարուստները պաշտոնյաններ էին և ունեին սեփական ջրաղաց, ջրկոպալ (կանեփաթակ), գինկ (բրինձը կեղևահան անելու գործիք) և այլն։

Բնակչության առաջնակարգ ու շահավետ ըղբաղմունքներից կարևոր տեղ էր գրավում բրնձի մշակությունը։ Քանի որ հայկական այս գյուղը բարձրավանդակում էր գտնվում, հայերն այլազգիներից՝ հարևան թուրքերից, չերքեղներից կապալով հարթավայրային ճահճուտ վայրերում ջրարբի հողամասեր էին վերցնում բրինձ մշակելու համար։

Գյուղում զարգացած էր այգեգործությունը (կաղնուտներ), անասնապահությունը (կով, ոչխար, մասամբ՝ գոմեշ), ղաշաամշակությունը (նգիպտացորեն, ցորեն, գարի), հավաբուծությունը, մասամբ էլ մեղվարուծությունը։ Կաղնուտներում ու տնամերձ հողերում, սեփական կարիքների համար, մշակում էին տանձ, խնձոր, կեռաս, թութ։ Տների շուրջը անպակաս էին ծվակի ծառերը՝ թե՛ որպես համեղ ու առողջարար ուրգաաու և թե՛ որպես կանաչ պատնեշ՝ շենքերը հողմերից պաշտպանելու համար։ Կանեփ մշակում էին տնայնագործության ու վաճառքի համար։

Գյուղի ս. Հակոբ եկեղեցին հիմնվել է 1846 թ.։ Ունեին փայտաշեն 6-ամյա վարժատուն։ Աղջիկները գրերոց չէին հաճախում։

---

[51] Հ. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 716։

[52] Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 49։

[53] Հ. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 716։

Ջենիկ-գյոլ: Դոճաման-բաշիից շուրջ 2 ժամ հարավ-արևելք հայաբնակ այս գյուղն ուներ 22 տուն բնակչություն, մեծամասնությունը քյոչեբեներ, վարձակալներ: Գյուղում կար քառամյա վարժատուն, ուր հաճախում էին նաև հարևան՝ Գրպաշցոց ու Քիրեզլուղ գյուղերի գպրոցականները: Աղջիկներին վարժատուն չէին ուղարկում: Այդ գպրոցն ավարտողներից՝ ցանկացողներն ուսումը շարունակում էին Գարամոն գյուղի 7-ամյա ուսումնարանում, որը գտնվում էր մեկ ժամ հեռավորության վրա: Գարամոնն ու Ջենիկ-գյուլը իրարից բաժանված էին թուրքական Սոմանղրա գյուղով: Հիշյալ հայկական գյուղերի բնակիչները հաճախում էին Գարամոնի եկեղեցին և օգտվում նրա ծառայություններից: Տեղացիներից ոմանք վկայում են, որ այդ գյուղերը վարչապես Լնթարկվում էին ոչ թե Թերմեի, այլ Ունիեի գավառակին:

Քիրեզլուղ: Ջենիկ-գյուլին հարավ-արևմուտքից սահմանակից այս գյուղն ուներ 18 տուն հայ բնակիչ, որոնք ազգային-մշակութային կյանքով կապված էին Ջենիկ-գյուլին:

Գրպաշցոց-գեղը գտնվում էր Ջենիկ-գյուլի հարավ-արևելքում. ուներ 15 տուն բնակչություն՝ բոլորը Գրպաշյան աղգաառհմից: Ազգային կյանքով՝ Ջենիկ-գյուլի անբաժան մասն էր:

Մեշելուղ: Գրպաշցոց գյուղից շուրջ կես ժամ հարավ լեռնային գյուղ էր, առողջարար կլիմայով ու սառնորակ ջրերով: Ուներ 16 տուն բնակիչ, բացի երկուսից, մնացածը քյոչերեներ էին: Հանդերը անահողային էին ու բերքատու:

Հիշյալ 4 գյուղերի՝ Ջենիկ-գյուլի, Քիրեզլուղի, Գրպաշցոց-գեղի ու Մեշելուղի բնակչության դխավոր զբաղմունքը գաշտամշակություն ու անասնապահություն էր: Սեփական կարիքների ու վաճառելու համար մշակում էին կանեփ ու կաավատ: XX գ. սկզբներից մեծ ղարկ է արվում կաղնուանների աճեցմանը: Խորգուրորգ արաերը հերկում էին պալենական յափաղ-արորով, հարթավայրերը՝ չաթալ-արորով: Կարաոֆիլն ու բանջարեղենը մշակում էին լաղուաի արաերում՝ համատեղ: Բնակավայրերը մեծ մասամբ լանջային լինելու պատճառով, որպես փոխադրամիջոց հիմնականում օգտագործում էին կըղախները (սալլ-սահնակներ):

Բացառություն չէին հեծկան ձի ունեցողները. ըստ կարիքի ձին օգտագործվում էր նաև որպես բեռնակիր անասուն:

Ջելֆիղար: Գտնվում է Մեշելուղ գյուղից մեկ ժամ հարավ-արևմուտք: Ուներ 17 տուն հայ բնակչություն՝ մեծ մասը քյոչերեներ:

Թերմե գետի արևմտյան հովիտ հայկական գյուղերն էին.

Մադիկոց-գեղ: Թերմե քաղաքի հարավարևմըլյան արվարձաններին մոտ այս փոքր թաղում ապրում էր 12 տուն հայ՝ բոլորը Մագիլյան ազգաառհմից:

Հոյլանը (Հոյլոճ) գտնվում էր Թերմեից 4,5 ժամ հարավ-արևմուտք (Հոյլանի ու Թերմեի միջև բնակվում էին թուրքեր, քրգեր, չերքեզներ): Գյուղի երեք թաղերում՝ Ջաքրցոց-գեղում, Վերին ու Ներքին-Հոյլաներում բնակվում էր 75 տուն քյոչերե ու սեփականատեր հայ: Վերին-Հոյլանում մեծամասնությունը Ապիոնցի, Նուխեսցի (Ներսեսյան), Տրապիզոնցի, Ներքին-Հոյլանում՝ Ապիոնցի ու Տրապիզոնցի, Ջաքրցոց թաղում՝ Ջաքրցի աղգաառհմերից էին:

Ապիոնցիք գաղթել էին Տրապիզոնի մոտակա Ապիոն գյուղից, իսկ Տրապիզոնցիք՝ Կալաֆկա գյուղից և, ի հիշատակ իրենց ծննգավայրերի, աղգանունները փոխել էին՝ Ապիոնցի և Տրապիզոնցի: Բանավոր ավանդության համաձայն, Ապիոնցիների նախնիները եղել են Մալիտսյան, Տրապիզոնցիներինը՝ Ղուկասյան:

Հոյլանցիների կենցաղը, զբաղմունքներն ու երկրագործական գործիքները ոչնչով չէին տարբերվում դոճամանբաշցիներից, միայն այստեղ բրինձ ավելի շատ էին մշակում: Բացի այդ, հոյլանցիք մեծ սիրահարներ էին հեծկան ձիերի. բացառություն էին այն ընտանիքները, որոնք վարգուն (ռեհվան, ռահվան) ձիեր չունեին: Երկու կողմի հարսանքավորները (հարսնաո, հարսնեղբայր) իրենց ընարյալ ձիերով էին մասնակցում հարսանեկան առնակաաարություններ, մի բան, որը Տրապիզոնի, Օրգուի շրջաններում միայն երազանք էր:

Հոյլանի մոտակա թուրք, չերքեղ, մահմեդական վրացի գյուղերի հարուստները պահում էին մեծաքանակ կով, ղոմեղ, ձիերի իլխիներ (երամակ):

Հոյլանցի կապալառու հայերի մեծ մասը բնակվում էր հարուստ կալվածատերերի հողամասերում՝ գեպի Թերմե բնկած Մեգրե գյուղում:

Գյուղի ս. Երրորգություն եկեղեցին հիմնվել է 1893 թ.:

Գյուղն ուներ փայտաշեն վարժատուն: Աղջիկները գպրոց չէին հաճախում:

Կապալաղ: Հոյլանին հարավ-արևմուտքից սահմանակից հայարնակ այս գյուղն ուներ 25 տուն բնակչություն՝ մեծ մասը սեփականատեր (Թուհմաղցի, Սարօղլիցի, Ջաքրցի, Գարա-գյոզցի, Շալճցի, Ջեյթունցի աղգաառհմերից):

Այստեղ բնակիչներն զբաղվում էին գյուղատնտեսական նույն ճյուղերով, ինչ հարևան Հոյլան գյուղում:

Կարաջալի: Հոյլանին հարավից հարեան հայարնակ մեծ գյուղ, որտեղ բնակվում էր 68 անից ավելի հայ քյոչևբե ու սեփականատեր: Գյուղը բաղկացած էր ագգակցական թաղերից, որոնք էին՝ Գարագյողցոց, Մինասցոց, Ղուկասցոց, Մաղիքցոց, Բոնտոնցոց, Գրպաշցոց կամ Կալին էտեթին թաղերը:

Այստեղ զբաղվում էին գյուղատնտեսական նույն ճյուղերով, ինչ Հոյլան և Գոճաման-բաշի գյուղերում, բացի բրնձի մշակումից, քանի որ գարաջալցիք ջրարբի վայրերից հեռու էին ապրում: Դրա փոխարեն ավելի տարածված էր կանեփի մշակումը: Այս գյուղը ևս հարուստ էր հեծկան ձիերով:

Գյուղն ուներ փայտաշեն եկեղեցի[57] ու գերեզման: Այստեղ ևս աղբիկները զրկված էին ուսումից:

Ջուրել: Գարաջալիից հարավ-արեելք ընկած այս գյուղում սպրում էր 24 տուն հայ սեփականատեր և քյոչևբե: Ջուրելում բաղմամարդ ազգատոհմ էին Գասումցիք:

Ճախսար: Գարաջալիի հարավ-արեմուտքում ընկած տյս գյուղում բնակվում էին մեծ մասամբ ունեոր սեփականատեր՝ 28 տուն հայ:

Ջուրելցիք ու մախաթցիք մշակութային կյանքով սերտորեն կապվուծ էին Գարաջալի գյուղի հետ: Հիշված գյուղերը հարուստ էին կաղնուտներով:

Կյոնեյճուկ: Մախաթին հարավից սահմանակից այս գյուղում բնակվում էր 36 տուն հայ քյոչեբե և սեփականատեր, մեծամասնությունը՝ Անտոնյան աղգատոհմից: Զբաղմունքը նույնն էր, ինչ վերևհիշյալ գյուղերում:

Թերս-յաթաղ: Ջուրելից մեկ ժամվա ճանապարհ գեպի հարավ-արևելք հայաբնակ այս գյուղն ուներ 23 տուն բնակչություն՝ մեծամասնությունը քյոչեբե (Զեյթունյան, Գարագյահյան սերգստոհմերից):

Գլխավորապես զբաղվում էին կանեփի մշակությամբ ու արտահանությամբ[58], անասնապահությամբ (կով, ոչխար), հավարուծությամբ: Կաղնուտներ նոր էին սկսում մշակել:

Ուչ-բուղար: Ջուրելից 1, Թերմեից 6 ժամվա ճանապարհ հարավ ընկած հայաբնակ գյուղ, առողջարար կլիմայով, սառնորակ ագբյուրներով: Գյուղն ուներ 40 տնից ավելի ընակչություն, որի շուրջ 30%-ը սեփական հողամաս ուներ: Բոլոր սեփականատերերի գլխավոր ու շահավետ զբաղմունքներից մեկը կաղնուտների մշակումն էր: Գյուղատնտեսական մնացած զբաղմունքները նույնն էին, ինչ որ Թերս-յաթաղում:

Գյուղն ուներ փայտակերտ դպրոց ու եկեղեցի:

Գարա-գույա: Հայաբնակ գյուղ Գարաջալիից երկու ժամվա ճանապարհ դեպի հարավ, համանուն (Գարա-գույա) լեռների լանջերին: Ունի առողջարար կլիմա և սառնորակ ջրեր: Գարաջալիից այս գյուղը տանող արահետն անցնում է վրացական (մահմեդական) Ճալաբուրդ գյուղի միջով:

Այստեղ բնակվող շուրջ 70 տուն հայերի մեծամասնությունը սեփական հողամասի տեր էր: Գյուղի բաղմամարդ ազգատոհմերն էին Ապոնցիք, Զեյթունցիք, Շալճեցիք, Թահմազցիք:

Գյուղատնտեսության առաջնակարգ ճյուղերն էին այգեգործությունը (կաղնուտներ), կանեփի մշակությունը, անասնապահությունն ու հավարուծությունը: Առատ ու որակյալ էր մեղրը: Համարյա բոլոր ընտանիքներն ունեին 5—20 փեթակ, կային նաև 100—150 փեթակ ունեցողներ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ինչպես Գարա-գույայում, այնպես էլ մոտակա Սուլիջև, Լյում-գաղի և այլ գյուղերում պանիր պատրաստելու սովորություն չկար: Յուղն ստանում էին մածունը ինոցիների մեջ հարելով: Թանը կիսաեփ անելուց հետո, քամում ու շեֆերեկ (չորթան) էին պատրաստում կամ այն եփելով թանձրացնում և լցնում էին սակառների մեջ ու աստիճանարար օգտագործում որպես համեղ ու զովացուցիչ ըմպելիք:

Կաթնեղեններից միայն յուղն էին վաճառում: Յուղը պահելու, մանավանդ վաճառելու համար լցնում էին 2—5 օխտնոց շաստինակները:

Անասունները ամռանը հեռավոր արոտավայրեր ուղարկելու կարիք չկար, քանի որ իրենց բնակավայրի շուրջ-բոլորը պատկառ արոտավայրեր էին:

Թեպետ Ճանիկի գավառում, սովհասարակ, սպարծված էր հացը սաջով թխելը, այս գյուղերում, ընդհակառակը, հացը թխում էին փոռերի մեջ, ինչպես ընդունված էր Տրապիզոնի մերձակա գյուղերում:

Գյուղի ս. Նշան փայտաշեն եկեղեցին հիմ-

---

[57] «Էջմիածին» ամսագրում (1966, № 6) Գարաջալի և Ուչ-բուղար գյուղերի եկեղեցիները չեն հիշատակվում: Նրանց նախընթաց սարիներին Գարաջալիի եկեղեցու քահանան Տ. Դանիել Վարելճյանն էր: Իսնագալթի նախօրյակին գյուղ եկած Քուրթ պինվորականները նրան առաջարկեցին օրինակ ծառայել հավատացյալ հայերին ու առաջինն ընդունել մահմեդական հավատը: Քերմեոսնդ քահանան վճռականորեն ընդդիմացավ: Բարբարոսները ժողովրդի աչքի առաջ որաթողեցին նրան:

[58] Տեղացիների հավաստումներով, ամբողջ գավառում առաջին եկիսուի արոր (չաթալ արոր) հնարողն ու պատրաստողը եղել է գյուղին վերաբնակեցրած ուտուա հայկի պապը՝ իրենց տարեկան ուտուա Ակորը:

նըվել է 1863 թ.։ Գյուղն ուներ նաև փայտակերտ բարեկարգ 7-ամյա գպրոց։

Սուլիջա (Սուլիջե)։ Գարա-գայային հարավից անմիջական սահմանակից հայաբնակ այս գյուղը ծվարել էր գեղեցկանիստ սարահարթում, Ձեշիլ-իրմաք (հնում՝ Ալիս) գետի աջ ափին։ Թերմեից Սուլիջա 10 ժամվա ճանապարհ է։ Գյուղը բաղկացած էր բազմամարգ հինգ թաղերից՝ Աղակելիշ, Յոնա, Կոմփար, Խարմանլար, Ստորըլուղ։ Բոլոր թաղերը միասին 80 տնից ավելի ընակչություն ունեին (բոլորն էլ սեփական հողամասերի տեր)։

Վաբելահողերի բերքատվությունը, երկրագործական գործիքներն ու աշխատանքի եղանակը նույնն էին, ինչ Գարա-գայա գյուղում, տյն տարբերությամբ միայն, որ սուլիջացիք բոլորը սեփականատեր լինելով, յուրաքանչյուր ընտանիք մեծ թե փոքր տարածությամբ կաղնուա ուներ։

Մշակութային կյանքով Սուլիջա և Գարա-գայա գյուղերը մի ամբողջություն էին կազմում։ Համատեղ ուժերով ու միջոցներով պահում էին եկեղեցին ու գպրոցը, որոնք կառուցել էին Գարա-գայա գյուղում[9]։

Ամպար-թեփե։ Սուլիջայից մեկ ժամվա ճանապարհ գետի հարավ ընկած այս գյուղում տպրում էր մոտ 20 տուն հայ քյոչեբե ու սեփականատեր։ Գյուղում կար տարրական դպրոց։

Քել-թեփե։ Ամրար-թեփեին արևմուտքից հարևան հայաբնակ այս գյուղում ընակվում էր 20 տուն հայ քյոչեբե ու սեփականատեր։

Թուխուլ։ Քել-թեփեից գետի հարավ, Սեբաստիայի նահանգին սահմանամերձ հայաբնակ փոքր գյուղ. ուներ 16 տուն բնակչություն՝ մեծ մասը Վարելճյան աղգապահմից։

Արզու-տաղի։ Թերս-յաթաղին հարավից սահմանակից այս գյուղում բնակվում էր շուրջ 30 տուն սեփականատեր ու քյոչերե հայ։

Սրման-ֆյոյի։ Արղու-տաղիի հարավ-արևելքում հայաբնակ փոքր գյուղ, որն ուներ 23 տուն բնակչություն։

Էլում-դաղի։ Գարա-գայայի արևելյան, Ուչբաղարի հարավային մասում գտնվող այս գյուղը Թերմեի գավառակում ամենամեծ ու բազմամարգ հայաբնակ գյուղն էր, որն ուներ շուրջ 100 տուն։

Գյուղատնտեսական ղբաղմունքներն այստեղ գրեթե նույնն էին, ինչ Թերս-յաթաղ գյուղում։

Գյուղի ս. Գևորգ եկեղեցին հիմնվել է 1804 թ.։

Գյուղն ուներ 8-ամյա ուսումնարան, որտեղ բացի մայրենի լեզվից, գասավանգում էին նաև ֆրանսերեն ու թուրքերեն։ Շըջակա գյուղերի ատրրական գպրոցներն ավարտողներից ցանկացողները էլում-գաղիում շարունակում էին իրենց ուսումը։ Այնուամենայնիվ, նույնիսկ այս գյուղում, աղջիկները ղրկված էին ուսումնառությունից։

Շնորհիվ Սամսոնի գավառակի թուրք ղեկավարների ողջամտության, ինչպես նաև՝ այս կողմերի հայ, թուրք և մահմեգականությունը բըռնությամբ ընգունած վրաց ու չերքեղ ժողովուրգների բարիգրացիական հարաբերությունների ու հովանավորության, Սամսոն քաղաքում և, առհասարակ, ողջ Թերմե գավառակում բնակվող հայերն աղատվեցին 1895 թ. մղձավանջից ու սասպանքներից։ Հայերին կոտորելու և թալանելու մասին Սուլթանի (Համիգի) տված հրամանը ուղղակիորեն չկատարվեց։

1915 թ. եղեռնի ժամանակ Թերմեի գավառակի ողջ հայությունը փաստորեն բռնագաղթի ենթարկվեց ու ճանապարհին մեծագույն մասը ղաղտնաբար կոտորվեց։ Բռնագաղթից կամ կոտորածից մազապուրծ ևղած շատ տղամարդիկ միացան լեռներում ու անտառներում ապաստանած հայդուկային խմբերին, որոնցից շատերը հետագայում անցան Ռուսաստան՝ Սև ծովի կովկասյան ափերը։

Ջարշամպայի գավառակ։ Գավառակի կենտրոն Ջարշամպա քաղաքը գտնվում է Թերմեից 51 կմ արևմուտք, Ծշիլ-իրմաքի (Իրիս գետ) աջ ափին, գետաբերանից 4 ժամվա ճանապարհ ղեպի հարավ, գետի երկու ափերին. հայկական ու հունական թաղերը գետի ձախ ափին էին, իսկ թուրքականը՝ աջ։ Գետի երկու ափերն իրար հետ կապված էին հսկայական՝ շուրջ 400 մ երկարությամբ ու լայնանիստ, բայց և խարխուլ փայտե կամրջով։

Ջարշամպա քաղաքի հայկական համայնքն ուներ շուրջ 300 տուն բնակչություն, ս. Աստվածածնի կոչված եկեղեցի և Մամիկոնյան-Շուշանյան աղգային վարժարանը, որոնք տղգային-մշակութային մեծ աշխատանք էին կատարում։

Գավառակի երկրորգ մեծ ու ջրառատ Սպտալ գետը, ծովափից մոտ մեկ ժամ հորով, ձախ ափից միանում է Ծշիլ-իրմաքին։

Աչքի ընկնող անտառածածկ բարձունքներն են՝ Տաշլի-յաթաղը, Սայ-քիրեղը, Արփա-չուղարը, Թուխալլին, Թեքուր-տաղը և այլն։ Գավառակի ա-

---

[9] Այն փաստը, որ երկու գյուղերի ս. Նշան եկեղեցին «Էջմիածին» ամսագրում (1966, № 6) հիշվում է Սուլեխ (Սուլիջա) գյուղի անունով, ստիպե է տալիս կարծելու, որ մոտավոր անցյալում Գարա-գայա գյուղն, ըստ երևույթին, Սուլիջա մայր-գյուղի թաղամասերից մեկն է եղել։

ասինյալ շրջանի յայնատարած հարթավայրերը, Զարշամպա քաղաքով հանդերձ, խիստ վատասողջ կլիմա ունեն։ Հարճասանդր (դող, մալարիա) հոմատարած պատուհաս էր։

Հայշենահայերի ստվար մի հատվածի վերջին հանդրվանը եղել է Զարշամպա գավառակը և, հատկապես, նրա Կուրշումլի գյուղախումբը (վիճակ)։ Հետագայում այստեղից նրանք սփրոված են դեպի աբեմուաք՝ Սինոպ գավառն ու նրանից հարավ՝ Սերաստիայի նահանգի սահմանամերձ Հեյրեզ ու այլ վայրեր։

Լեռնային բնությանն ու կլիմային վարժված համշենահայերի մեծամասնությունը հիմնականում հաստատվում են հենց այդպիսի վայրերում ու միայն փոքրաթիվ մասը՝ Զարշամպա քաղաքում։ Ճանիկ (Սամսոն) գավառի ամենաբազմամարդ ու համախմբված հայկական համայնքը կենտրոնացած էր Զարշամպա գավառակում։

Հայաբնակ գյուղերն ու թաղերը սարածված էին ամբողջ գավառով մեկ՝ գլխավորապես եշիլիրմաք ու Ապասլ գետերի ավազաններում, քաղաքից 2-ից 12 ժամ հեռավորության վրա։ Թեպետ հայերն ընդհանրապես բնակվում էին առանձին գյուղերում համախմբված, սակայն շըրջապատված էին թուրքական և այլազգի գյուղերով։ Քաղաքին ամենամոտ հայաբնակ գյուղերը գանվում էին Կուրշումլիի վիճակում։

Ինչպես ամբողջ նահանգում, այստեղ ևս վիճակը բաժանված էր գյուղախմբերի, թաղապետական համայնքների (օյմաքների), որոնց դիկուվարը նույնպես «բնաբովիչ» թաղապետն (մուխթաբ) էր, որը սովորաբար ավյալ շրջանի ազդեցիկ հարուստներից մեկն էր լինում։

Գյուղախմբերը շատ անդամ համընկնում էին քահանայական ծխերին։ Յուրաքանչյուր օյմաք բաղկացած էր լինում 3—10 մեծ ու փոքր գյուղերից։

Տեղացիների վկայությամբ, Զարշամպա գավառակի հայաբնակ գյուղերը գանվում էին հետևյալ օյմաքներում (յուրաքանչյուրը մեկ թաղապետի ենթարկվող գյուղախումբ)՝ Սըթմա-սու, Կաթրոնլի, Ադշակյունեյ, Կապաճեիղ, Սղլուճ, Ցայլաճյուղ, Օքսուղցոց կամ էյուք-սերե, Կոնաքյուղ, Կուրբաթ, Ջիֆթ-իչի, Մարթիլ (Մարթել), Թեքուլ, Գափու-դայա, Քեսաանե-քիրիշ, Էքրիսերե, Ուլու-բուղար, էրինճուղ, Օրթա-օյմաք ու Ջաթաղ՝ ընդամենը 20 գյուղախումբ։

Կուրշումլիի վիճակ։ Կուրշումլի (Խուշումլի) բնակավայրն իր շրջակա գյուղերով դարձել է այս դավառակը փախչող համշենահայերի առաջին հանգրվանը։ Մ. Բժշկյանը հաղորդում է. «Խուշումլիի ավան [գյուղախումբ—Բ. Թ.] մոտ է Զարշամպային, բնակիչներր հայ են, Համշենու եկած և ասևնրը գինվոր գրված են որդոց որդի, և ունին տորապետ հայ իշխան, որ ղիրևնք կկատավարե, մարդե ահ չունին, միայն Տերեբևկիին հետ պատերազմ կերթան և ղորավոր մարդիկ են»[50]։ Նույնը հաստատում են ավանդությունները։

Վիճակի գյուղերը սփռված են Ապասլ գետի երկու ափերին, քաղաքի մոտակայքից մինչև հեռավոր ակունքներր։ Վիճակի վարչական կենտրոն Կուրշումլի գյուղը դանվում է քաղաքից 4 ժամ հեռու, Ապասլ գետի արևմտյան ափերին։



12. Բանասաց երվանդ Թորոսի Թորոսյան (Չարշամպացի)։

Էյրի-սերեի գյուղախումբ։ Էյրի-սերե։ Գրանրվում է Ապասլ գետի վտակ Գյուղ-դայայի աջ ափին, Զարշամպայից 2 ժամ դեպի հարավ։ Էյրի-սերեի շրջակայքի հայկական բնակավայրերր, ուրոնք նախկինում նրա թաղերն էին, բաղմացել ու առանձին գյուղերի էին վերածվել։ Դրանք էին՝ Էյրի-ֆիրիշ, Գուշ-գայա, Գաւու-գայա, Վատելճոց-գեղ, Տումբալաճոց-գեղ, Ուսուօղլիճոց-գեղ, Սելվիճոց-գեղ, Թոգլճոց-գեղ, Քյուղլիճոց-գեղ բնակավայրերր։ Էյրի-սերեում ամբողջությամբ վերցրած բնակվում էր շուրջ 300 անից ավելի համշենահայ։ Սեփական հողամասեր ունեցողները շատ քիչ էին (25—30 տուն)։

Զբաղվում էին ծխախոտագործությամբ, կաթնամշակությամբ, դաշտամշակությամբ։ Վայն սարածված էր կանեփի մշակությունը, որի զգալի մասը վաճառում էին։

Էյրի-սերեի ս. Երրորդություն եկեղեցին հիմնրվել է 1853 թ. Տումբալաքցոց-դեղում։ Դպրոցր նույնպես այստեղ էր դանվում. հաճախում էին նաև աղջիկներր։

Սըթմա-սույի գյուղախումբ։ Այս դյուղա-

[50] Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 49։ Բանասեր Ս. Հայկունին նույնպես Խուշումլի է անվանում այս ավանը։

խումբը դտնվում էր Զարշամպայից 2 ժամ հարավ-արեմուտք դեղատեսիլ մի սարահարթում։ Զարշամպայից մինչև հայկական Սրբմա-սու դյուղը ճանապարհն անցնում էր համանուն չերքեզական մեծ գյուղի միջով։ Ներքին ուներ 68 տուն սեփականատեր համշենահայ բնակչություն։

Վարելահողերն ավազախառն-սեահող, հեշտ մշակելի ու արգավանդ էին։ Գլխավոր գբաղմունքներն էին ծխախոտագործությունը և եգիպտացորենի մշակությունը. համապատասխան աճեցնում էին անհրաժեշտ բանջարեղեն ու ընգեղեն (լորկա, բանջար, գգում, խըլար՝ վարունգ, շողգում՝ շաղգամ, բողկ)։ Քիչ քանակությամբ ցանում էին նաև ցորեն, գարի, հաճար։ Պահում էին հիմնականում խոշոր եղջերավոր անասուններ, գլխավորապես գոմեշ, քանի որ շրջանը հարուստ էր գոմեշին հարմար արոտավայրերով (գետափնյա ու ծովամերձ ճահճուտներ)։ Մեղվարուծությունը թույլ էր զարգացած։

Սակավաթիվ էին այն ընտանիքները, որոնք հեծկան ձիեր չունեին։

Հողերը հերկում էին չաթալ-արորով (հարթավայրերում) ու կարա-սափանով (զառիվար վայրերում)։

Փոխագրական գլխավոր միջոցները երկանիվ սայլերն ու կրգախներն էին (վերջինները՝ թեք վայրերում)։

Գյուղի ս. Խաչ եկեղեցին հիմնվել է 1829 թ.։ Ուներ քառամյա վարժատուն։ Աղջիկները ուսումից զրկված էին։

Կասը-կիրիշ։ Սրբմա-սուին հարակից փոքր գյուղ, որն ուներ 20 տուն բնակչություն՝ Աթմաճեցի, Գեորգցի, Սարգիսցի աղգատոհմերից։

Կաթրոնկի։ Սրբմա-սուից մի ժամ հարավ-արեմուտք, հարմարավետ գիրքով ու սաոր ջրերով այս գյուղում բնակվում էր 38 տուն համշենահայ՝ Բիրլուք-բաշցի, Քեշիշցի, Ճյուվելեկցի, Կասլիտոնցի, Փոլագցի, Գարարաճակցի, Թեքնեճցի, Կրճյան ու Սլթիկուլակցի աղգատոհմերից։

Զբաղմունքներն ու երկրագործական գործիքները նույնն էին, ինչ ասվել է Սրբմա-սուի մասին։

Գյուղն ուներ տարրական վարժատուն։ Իգական սեռը ուսումնարան չէր հաճախում։

Աղջակյունեյ։ Կաթրոնկիին արեելքից սահմանակից հայկական գյուղ. հողամասերը հասնում են մինչև Ապաալ գետ։ Գյուղի 30 տուն բնակիչներից 8-ը Հալաճցի, 5-ը՝ Ուսա-օղլիք, 4-ը՝ Փոլագցի ու 9-ը՝ Քինոսցի աղգատոհմերից էին։ Թուրքական սահմանագրությունից հետո (1908 թ.) համարյա բոլորն էլ սեփական անասության տեր էին գարձել։

Զբաղմունքները նույնն էին, ինչ Սրբմա-սու դյուղում։

Գյուղի ս. Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1849 թ.։

Ուներին տարրական գպրոց։

Կյողչեխյոյ (Կյոխչեխյոյ)։ Աղջակյունեին հարավից ստհմանակից ղուտ հայարնակ գյուղ էր, որն ուներ 80 տուն բնակչություն՝ մեծամասնությունը քյոչերներ։

Գյուղի ս. Աստվածածին եկեղեցին հիմնվել է 1849 թ.։

Ուներին տարրական վարժարան։

Զամմաղ։ Զարշամպայից 2 ժամ հարավ, Ապատալ գետի աջ ափին, Աղջակյունեին հանգիպակաց լեռնային գյուղ, բարերար կլիմայով ու ղուլալ ջրերով, որն իր Թաթուլցոց թաղով հանդերձ ուներ 60 տուն բնակչություն՝ սեփականատերեր ու քյոչերներ։

Գյուղն ուներ տարրական վարժարան։

Ուլու-բուղարի գյուղախումբ։ Գանվում էր Զարշամպայից հարավ-արեմուտք, չորս ժամ հեռավորության վրա, Ապաալ գետի աջ ափին։ Կենտրոնական գյուղը Թորոսցոց-գեղն էր (թաղը), որտեղ ապրում էր շուրջ 50 տուն համշենահայ, բոլորն էլ Թորոսցոց գերգաստանից։ Այս գյուղը պաշտոնապես հայտնի էր Ուլու-բուղար անունով։ Գյուղախմբի երկրորդ բակամարդ թաղը (գյուղը) Թորոսցոց-գեղին հարավ-արեելքից հարեան Ղազարցոց-գեղն էր, որտեղ ապրում էր շուրջ 40 տուն համշենահայ, մեծամասնությունը՝ Ղաղարցոց գերգասանից։ Այստեղ էր գտնվում գյուղախմբի հայկական վարժարանը։ Կուկուլցոց-գեղը գանվում էր Ղաղարցոց-գեղի արեելքում՝ շուրջ 45 տուն համշենահայ բնակչությամբ՝ գերազանցապես Կուկուլցոց գերդաստանից։

Ուլու-բուղար (կամ՝ Թորոսցոց-գեղ) գյուղախմբի հողերը պետական էին և աղգարնակչությունը կախում չուներ անհատ կալվածատերերից։ Դա հնարավորություն էր ավել նրանց հիմնելու համեմատաբար կայուն տնտեսություններ։

Գյուղախմբի փայտաշեն, բայց շքեղ կառուցվածք ունեցող եկեղեցին հիմնագրվել է 1850 թ.։

Ուլու-բուղարում զբաղվում էին դաշտամշակությամբ (եգիպտացորեն, ցորեն, գարի), բանջարաբուծությամբ, անասնապահությամբ ու կթնամշակությամբ։ Տարածված էր նաև մեղվարուծությունը։

Կապաճեխզի գյուղախումբ։ Էշեճի-կրան։ Ապաալ գետի արեելքում, Զարշամպայից շուրջ

2,5 ժամ հարավ, լերդևազական նուշնանուն դյուղից ներքև՝ լեռնալանջերում ընկած հայկական դյուղ, որն ուներ 24 տուն բնակիչ (Ղյուվելեկեցի, Քյահնեցի, Սեկյան, Դաղարցի, Սեվլեցի աղգատոհմերից)՝ մեծ մասը քյոչեբեներ։ Ձարշամպայից մինչև էշնեքի-կրան արահետն անցնում է աջարացիների, թուրքերի ու չերքեզների ձևիլ, էլրիկում, Կումքուլի, Բոյաջիլի, Կյովշելի ու չերքեզական էշնեքի-կրան դյուղերի միջով։

Կապանևիզ[1]։ էշնեքի-կրանին հարավից սահմանակից անխտոն համշենահայ այս դյուղն ուներ 67 տուն բնակչո։թյուն, մեծամասնությունը՝ սևրականաահր։ Դյուղը բաղկացած էր առհմահյուն թաղերից, որոնցից բաղմամարդ էին՝ Քեշիշյոց, Ցալանուղցոց, Ավետացոց, Կարապետացոց և Թորսցոց թաղերը։ Դյուղում կային նահապետական բարքերով ապրող բաղմամարդ ընտանիքներ. օրինակ, Քեշիշցոց Մակար քեսու ամուսնացած հինդ որդիները՝ 28 շունչ ապրում էին մի հարկի տակ և համատեղ անտեսություն վարում։

Ինչպես Կապաճեվիզի, այնպես էլ շրջակա դյուղերի վարելահողերը մեծ մասամբ սևահողային, հեշա մշակելի, բերքատու հարթավայրեր ու մասամբ լեռնալանջեր (պառակներ) էին։ Առանձին անտեսություններ հողամասեր ունեին նաև ջեռափնյա ջրարրի վայրերում։ Ջրարրի հողամասերում հիմնականում բրինձ էին մշակում, որն տոատ ու որակյալ բերք էր տալիս։ Սեփական հարմար հողամասեր չունեցողները կապալով բրինձը ցանում էին կալվածատերերի հողերում։ Ամրագր գյուղում չալթուկ (կեղևահան չորված բրինձ) ծեծելու միակ ղինդը պատկանում էր հարուստ դյուղացիներից մեկին, որը որպես վարձ վերցնում էր մաքրած բրինձի 4%-ը։

Բացի բրնձից, որի ցանելու հնարավորությունները խիստ սահմանափակ էին, ինչպես Կապաճեվիզում, այնպես էլ շրջակա դյուղերում դրեխավոր ու եկամտաբեր ղրաղմունքը ծխախոտագործությունն էր։ Դավառակում մշակում էին ամենուր հռչակված բուրումնավետ Սամսոնի տեսակի ծխախոտը, որի բաժմանը՝ 6 օխան (4,8 կղ) վաճառում էին թուրքական մեկ ոսկով։

Թեպետ հացահատիկներից առաջնությունը տրվում էր եղիպացորենին, սակայն թե՛ որպես կորկոտացու և թե՛ որպես բերանփոխացու ցանում էին նաև դարի, ցորեն, հաճար։

Անասնապահությունը, կաթնամշակությունն ու հավարուծությունը յուրաքանչյուր ընտանիքի պարտադիր ղրաղմունքն էր։ Խոշոր եղջերուվոր անասուններից հավասարապես տարածված էին կովն ու դոմեշը։ Շատերն ունեին հեծկան ձիեր, որոնք ըստ անհրաժեշտության օգտագործվում էին նաև որպես բեռնակիր անասուն։

Կանեփի մշակությամբ հիմնականում բավարարում էին անտեսության պահանջներն ու մասամբ՝ վաճառում։

Մեղվարուծությամբ ղբաղվում էին սեփական կաբիքները բավարարելու համար։ Բացառություն էին բաղմաթիվ մեղվափեթակներ ունեցողները։

Պտղատու ծառերից մշակում էին տանձենի, խնձորենի, սալորենի, բալենի։

Տափարակ վարելահողերը մեծ մասամբ հերկում էին չաթալ-արորներով, իսկ պառակները՝ նահապետական արորով, որին ճառոր էին ասում։ Լեխարր, որը Տրապիզոնի շրջակայքում հողը հերկելու հիմնական գործիքն էր, Ձարշամպա գավառակում բոլորովին բացակայում էր։ Երկրագործական ձեռքի դործիքներից տարածված էր տարրեր ձևի ու մեծության փեսատը (ըրիչ)։

Տարածված փոխադրական միջոցները երկանիվ սայլերն (հարթավայրերում) ու կղախներն (ղառիվայրերում) էին։ Որպես լծկան ու քաշող ուժ էին օդտագործվում եղն ու դոմեշը։

Գյուղի ս. Կարապետ եկեղեցին կառուցվել է 1834-ին։ Ունեին տղաների տարրական վարժատուն։

Խառմաձլար։ Այս դյուղը նախկինում եղել էր Կապաճեվիզի թաղերից մեկը։ Ուներ 29 տուն համշենահայ բնակիչ (Դանիելցի, Նահապետցի, Տիբոնցի և Ավճցի աղգատոհմերից)։ Աղդային-մշակութային կյանքով Կապաճեվիզի անբաժան մասն էր կազմում։

Կուրշումլի (Խուրշումլի)։ Սա համանուն վիճակի վարչական կենտրոնն էր, ուր նստում էր միդուրը (կառավարիչ)։ Գանվում է Ապտալ գետի ձախ ափին՝ Կապաճեվիզից շուրջ մեկ ժամ, Ձարշամպային 4 ժամ հեռավորության վրա։ Ինչպես ասվել է, Կուրշումլին շրջակա գյուղերով եղել է այս երկրամասը փախած համշենահայերի առաչին ու մնայուն հանգրվանը։ Մեր դարի սկզբներին բնակիչներից շատերը սեփական տնտեսության աեր էին դարձել։ Վարչական կենտրոնի մոտ էր դանվում թուրքական թաղը։ Հայերը բնակվում էին առանձին թաղում։ Գյուղն ուներ 26 տուն հայ բնակչություն (Թորոսցի, Թոփչցի, Իճյան, Թեքնեճցի և այլ աղգատոհմերից)։ Ջբաղմունքներն ու երկրագործական դործիքները նույնն էին, ինչ Կապաճեվիզում, բացի բրնձի մշակումից, քանի որ սրանք հարմար հողամասեր չունեին։

[1] ԷՀՀմածինն ամսագրում (1966 թ., № 6) այս գյուղի անունը Կապաճեվիզի փոխարեն Կապաչեվիզ է գրված։

Կուրշումլիի ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է 1799-ին ու Ջարշամպա գավառակը գաղթած համշենահայերի առաջին աղոթարանն է եղել։

Յայլաճյուղ։ Սա Կուրշումլի վիճակի կենտրոնական ու գլխավոր գյուղն էր և նրա աղգային-մշակութային կյանքի կենտրոնը։ Գյուղի բաղմամարդ աղգատոհմերից էին Մելքոնցիք, Մարգարցիք, Օհոնցիք, Սյունկյուրդցիք, Մտրկոսցիք, Ավետցիք՝ ընդամենը 46 տուն։

Յայլաճյուղում էր գտնվում շրջակա գյուղերի ամենաարձակարգ 6-ամյա ուսումնարանը, որը հոգևորական դպրոց էր կոչվում։

Պիքեխէր։ Յայլաճյուղի հանդիպակաց, ղետի արևելյան ափին գտնվող փոքր գյուղ, որն ուներ 13 տուն բնակչություն (Իճյան և Մումճցի ազգատոհմերից)։

Օխոր-կալ։ Յայլաճյուղից շուրջ մեկ ժամ արևմուտք ընկած հայարնակ գյուղ, 27 տուն բնակչությամբ, որոնցից միայն 4-ը Մելքոնցի, մնացյալները Կարանցիներ[62] էին, այդ պատճառով էլ գյուղը հայտնի էր նաև Կարանցոց-գեղ անունով։ Մեծ մասը քյոշերներ էին։ Աղդային-մշակութային կյանքով (դպրոց, եկեղեցի) Յայլաճյուղի անբաժան մասն էր կազմում։

Ըստ երևույթին դյուղի կենտրոնում բնդարձակ հարթավայր՝ կալ լինելու հետևանքով դյուղըն ստացել էր Օխոր-կալ անունը։

Աղլուջ (Աղլաջ)։ Խորմանլարից շուրջ 1,5 ժամ հարավ-արևմուտք էր ընկած այս դյուղը, որն ուներ 40 տուն բնակչություն (Քարաղցի, Ջաքրցի, Քեշշյան և Դիմիչցի աղգատոհմերից)։ Գյուղն ընկած էր անտառածածկ լեռներով շրջապատված գեղատեսիլ բացատում։ Վարելահողերը փխրուն-սևահողային ու բերքատու էին։

Գյուղի ս. Հակոբ եկեղեցին կառուցվել է 1851-ին։

Ունեին տղաների տարրական վարժատուն։

Ինգիրկցոց-մահալա։ Յայլաճյուղից շուրջ կես ժամ հարավ, փոքր բնակավայր, որի 8 տուն բնակչությունից երեքը Սյունկյուրդցիներ, հինդր՝ Ավետցիներ էին։

Սյունկյուրդցոց-գեղ։ Յայլաճյուղից շուրջ 1,5 ժամ հարավ-արևմուտք ընկած լեռնային այս գյուղն ուներ 16 տուն բնակիչ, րոլորը Սյունկյուրդյաններ՝ մի նախահոր սերունդ։ Տեղացիների վկայությամբ, գյուղը հարուստ էր սյունկյուղի՝ անկաքարի կամ չելչաքարի հանքերով, դրա հետևանքով էլ կոչվել էր Սունկյուրդյոյի։ Նույն վկայությամբ, այս տոհմի Ուստյան ազգանունը Սյունկյուրգյանի է վերանվանվել այդ գյուղում բնակվելու պատճառով։ Գյուղը Յայլաճյուղի թաղն էր համարվում։

Սյունկյուրդցոց-գեղի բնակիչների մեծամասնությունը կալվածատերերի (քյոշերի) վարձակալներն էին։

Կալթաղ կամ Փափագցոց-գեղ։ Սյունկյուրդցոց-գեղից 1 ժամ հարավ-արևմուտք ընկած լեռնային դյուղ, առողջարար կլիմայով ու բերրի հողերով։ Գյուղի երկու թաղերում (Վերին ու Ներքին-Կալթաղ) բնակվում էր 22 տուն համշենահայ (Փափաղցի, Գոշկոնցի և Ծատուրցի ազգատոհմեր)։

Կալթաղում առաջնակարգ ղբաղմունք էր կանեփի մշակումը, որի ղբալի մասը վաճառում էին։ Լայնորեն ղբաղվում էին անասնապահությամբ։

Բուղար-լիճի կամ Գոշկոնցոց-գեղ։ Կալթաղին հարավից սահմանակից գյուղ, որտեղ բնակվում էր 20 տուն Գոշկոնցի (Գոշկոնյան)։

Մելեթի գուղսվխումբ։ Այս գյուղերը ընկած էին Սպտալ գետի վերին հոսանքի աջ ափի լեռնային, մեծ մասամբ անտառածածկ շրջանում, որոնք էին.

Մելեթցոց-գեղ։ Սյունկյուրդցոց գյուղից շուրջ մեկ ժամ հարավ, Սպտալ գետի արևմտյան ափերին հիմնված այս փոքր գյուղն ուներ 18 տուն բնակչություն՝ րոլորը Մելեթցոց աղգատոհմից։

Էքսուզցոց-գեղ։ Մելեթցոց-գեղից հարավ ընկած այս գյուղում բնակվում էր 13 տուն հայ բնակչություն, րոլորն էլ Էքսուզցոց աղգատոհմից։

Էլուճ-թեռե։ Էքսուզցոց-գեղից կես ժամ հարավ-արևելք ընկած լեռնային գյուղ, որտեղ բընակվում էր 20 տուն համշենահայ՝ մեծամասնությունը վարձակալներ։ Առաջնակարգ ղբաղմունքը անասնապահությունն ու կաթնամշակումն էր։

Կապալաղ (Կապգալակ)։ Էլուճ-թեռե. 2 ժամ հարավ-արևմուտք, Ջարշամպայից 2 ժամ հարավ, լեռնային, ղուտ համշենահայ դյուղ, որը բաղկացած էր երեք թաղից՝ Կապալաղ, Բիչիմլի-ղևլ, Օլուքլու-ղևլ։ Կապալաղում կար 29 տուն (Սեֆերցի, Գոշկոնցի, Թահմաղցի, Դիմիրճցի և Սյունկյուրդցի աղգատոհմերից), Բիչիմլի-ղևլում՝ 19 տուն (Սեֆերցի և Դեմիրճցի), Օլուքլու-ղևլում՝ 13 տուն (միայն Դեմիրճցի դերդաստանից), ընդամենը 52 տուն։ Զբաղվում էին անասնապահությամբ, դաշտամշակությամբ, մեղվաբուծությամբ։ Կանեփ մշակում էին ինչպես սեփական կարիքների, այնպես էլ վաճառելու համար։

Մոտակա փոքր դյուղերի աղգային-մշակութային կյանքի կենտրոնը տյս դյուղն էր։ Ունեին

[62] Օխոր-կալում է ծնվել Սովետական Միության հերոս Երվանդ Գևորգի Կարանյանը։

ՋԱՐՇԱՄՊԱՅԻ ԵՎ ԹԵՐՄԵԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ

Կրթական և կրոնական օջախներ (սխեմատիկ քարտեզ)

հ-ամյա վարժատուն, Գյուղի ս. Կաթողիկոս Լևոնյան կառուցվել է 1844 թ.։

Կոնաղլուղ (Կոնաղլըղ)։ Գտնվում է Կապալուղից շուրջ 2 ժամ հարավ-արեելք, գեղեցկանիստ սարահարթում. սառնորակ ջրեր ու առողջարար կլիմա ունեցող գյուղ էր, որի երկու թաղերը՝ Կոնաքլուղ և Քիրփիճլի ունեին 45 տուն բնակչություն. առաջինում՝ 30 տուն (Գոչկոնցի, Նաաուրցի, Պարսիկցի, Քոշեցի, Կարմիրցի, Մարկարցի), երկրորդում՝ 15 տուն (Հորիկցի, Անգեռցի, Ջերելցի, Մարդարցի աղգաատհմերից)։

Ինչպես այս, այնպես էլ մոտակա գյուղերի վարելահողերը մեծ մասամբ սեահողային ու բերրատուտ են։ Զբաղվում էին անասնապահությամբ, կաթնամշակությամբ ու դաշտամշակությամբ։ Պահում էին մեծ թվով մեղվափեթակներ։ Լայնորեն տարածված էր կանեփի մշակումը, որի զգալի մասը վաճառում էին։ Գյուղը հարուստ էր անասուններով։

Հողերը հիմնականում վարում էին սովորական արորներով, մասամբ (հարթավայրերում)՝ շաթալ արորով։

Փոխագրական միջոցները հիմնականում երկանիվ (եգի, գոմեշի) սայլն ու կրգախն էին։ Հարուստ էին հեծկան ձիերով։

Կոնաքլուգը այս կոդմերում եղել է համշենահայերի առաջին բնակավայրերից մեկը։

Ունեին տարրական վարժատուն։

Գյուղի ս. Լուսավորիչ եկեղեցին հիմնվել է 1835 թ.։

Կարքլուղ։ Կապալաղից մեկ ժամ հարավ, լեռնային գյուղ, հարուստ անասուններով։ Գյուղն իր 4 թաղերով (Մժեգուա, Զողալուա, Ալախարման, Կարքլուղ) ուներ ընդամենը 46 տուն բնակիչ (Կարքլուղում՝ 9 տուն, Մժեղուաում՝ 12, Ալախարմանում՝ 15 և Զողալուաում՝ 10)։

Կավշաղ։ Ջրարաշխ լեռների լանջերին հիմնրված այս գյուղն ուներ 18 տուն բնակչություն։ Գլխավոր զբաղմունքը անասնաբուծությունն ու կաթնաանասնությունն էր։

Այվաճուղի (Մարքիլ) վիճակը։ Այս շրջանում գտնվող բնակավայրերն բնկած էին Չխլ-իրմաք և Ապաալ գետերի միջև։

Գափու-գայա։ Էլրի-աերեից շուրջ մեկ ժամ հարավ բնկած համշենահայ գյուղ։ Այն Կոչագայա և Հոմրիկցոց-գեղ թաղերով ուներ շուրջ 28 տուն բնակիչ, մեծամասնությունը՝ Մինասցի, Թոփչցի և Հոմրիկցի գերդաստաններից։ Զբաղվում էին ծխախոտագործությամբ, գաշամշակությամբ և անասնապահությամբ։ Ունեին տարրական դպրոց։

Գյուղի ս. Մինաս Եկեղեցին կառուցվել է 1819 թ.։

Չիֆք-ի։ Տափու-գայալին հարավ-արեելբից սահմանակից այս գյուղում բնակվում էր շուրջ 44 տուն համշենահայ (Մարգարցիք, Ավճըցիք, Թոմացիք, Թերղցիք, Քեշիշցիք, Օքսուղցիք)։

Ունեին տարրական վարժատուն ու եկեղեցի։

Շաճնա-գյոլ։ Չիֆք-իչին հարավ-արեելքից սահմանակից հայարնակ այս գյուղն ուներ 24 տուն բնակչություն։

Գարըգլուղ (Քըլըճլի)։ Շահնա-գյոլից մի ժամ հարավ-արևմուտք բնկած համշենահայերի բազմամարդ այս գյուղն ուներ 50 տուն բնակչություն (սեփականատեր ու քյոշեբեն)։ Գյուղի ս. Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1871 թ.։

Գյուղն ուներ բարեկարգ 6-ամյա արական վարժատուն, ուր հաճախում էին նաև մոտակա հայ գյուղերի աղաներր։

Քեսթանե-կելիր։ Գարրգլուղից շուրջ մի ժամ հեռու համշենահայ այս գյուղն իր էղրի-քրրիշ, Խորդ-Ալի, Թոնկին-գեղ թաղերով ուներ 60 տուն բնակչություն, մեծ մասը վարձակալ գյուղացիներ (Գոչյան, Գարա-Արթնցի, Քյանեցի, Շախ-Մելիքցի, Նաաուրցի, Կարմիրցի, Աելվիցի, Ավճրցի, Շահմելցի գերդաստաններից)։

Գյուղն ուներ աղաների 6-ամյա վարժատուն։

Գյուղի ս. Ակոր եկեղեցին հիմնվել է 1848-ին։

Թեռեջեն գտնվում է Չխլ-իրմաքի (Իրիս գետ) ձախ ափին, Ջարշամպայից շուրջ 10 ժամ հեռու, Կարմիրցոց գյուղից հոսող վտակի և Չխլ-իրմաքի միացման տեղում։ Թերեջեում բնակվում էր շուրջ 102 տուն համշենահայ։

Թերեջեից մինչև Ջարշամպա թեպեա գոյություն ուներ պրաստի ճանապարհ, սակայն հիմնական հաղորդակցությունը (բեռների փոխադրում, ճանապարհորդություն) կատարվում էր նավակներով՝ Չխլ-իրմաք գետի ընթացքով։ Գետի հոսանքով Ջարշամպա հասնում էին 8—10 ժամում, իսկ վերադառնում էին 15—20 ժամում։ Քաղաքից վերադարձին (հոսանքն ի վեր) նավակը ղեկավարում ու քարշ էին տալիս նավակի ցոուկին (քթին) կապած պարանով։ Նավասաինների քանակը համապատասխանում էր բեռի ծանրությանը՝ 2—6 հոգի։ Թերեջեից և ուրիշ վայրերից Ջարշամպա փոխագրում էին գյուղատնտեսական մթերքներ, իսկ քաղաքից՝ արդյունաբերական ապրանքներ։

Թերեջեի և Ջարշամպայի միջև, Չխլ-իրմաքի ձախ ափին գտնվում էին հետևյալ բնակավայրերը.

Թղթալատ: Ջարշամպալից շուրջ 2 ժամ հեռու, Ռուբքահայ խառն գյուղ: Հայերը՝ 13 տուն:

Եղբար-չալը: Ջարշամպալից շուրջ երեք ժամ հեռու, նույնպես Թուրք և հայ խառն գյուղ: Հայերը 15 տուն էին:

Ճեճիլ: Թուրք և հայ խառն գյուղ, Ջարշամպալից 4 ժամ հեռու: Հայերը 12 տուն էին:

Ճեճիլի մոտ Եշիլ-իրմաքին է միանում Ճգնավորցոց ջուրը (նահ՝ ձորը), որի վրա ջրաղացներ կային:

Սերուճցոց-գեղ: Թղթալոտչին արևմուտքից սահմանակից գյուղ, շուրջ 10 տուն, բոլորը Մերոնյան գերդաստաններից:

Էյնել: Մարթիլին հյուսիսից հարևան հայկական փոքր գյուղ (Քաղ):

Մարթիլ (Մարթել): Եշիլ-իրմաք (Իրխ) գետի ձախ ափին, Թեքուր գյուղից հարավ ընկած բնակավայր: Ջարշամպալից գրասեի ճանապարհով շուրջ 10, իսկ լեռնային արահետներով 6 ժամ հեռու ընկած բնակավայր, շուրջ ՕՕ տուն հայ բնակչությամբ՝ Թաթուլցի, Մինասցի, Կարմիրցի, Թորոսցի, Օհանցի, Կասումցի և այլ գերդաստաններից:

Գյուղի ս. Հակոբ եկեղեցին հիմնվել է 1811 թ.:

Մարթիլ և Էյնել գյուղերի երկհատ եկեղեցին կառուցվել էր երկու Թաղերի միջտեսչի հարթավայրում: Այս եկեղեցին էին հաճախում ոչ միայն մոտակա, այլև հեռավոր գյուղերի հավատացյալները՝ հատկապես ամռ օրերին: Մեծ հանդիսավորությամբ էր կատարվում Ջատկի մեռելոցի օրը՝ երկուշաբթին: Այդ օրը Մարթիլ գյուղի գերեզմանոցում մեռյալների հիշատակին հացկերույթ էր տրվում: Այնտեղ էին հավաքվում նաև հեռավոր Կուրշամլիի, Գափու-գալայի, Էյրի-տերեի, Սբինճուղի և այլ գյուղերի բնակիչները:

Քահանան հավատացյալներին պատվիրում էր մեռելոցի օրը «Հարկինքըդ» (մեռելահացը) ապուր (առատ) ընդել:

Մարթիլ, Էյնել և մոտակա գյուղերի երկու գպրոցները՝ վարժատները նույնպես կառուցվել էին նույն վայրում:

Պեռիկցոց-գեղ: Մարթիլի հարավ-արևելքում: Ուներ 61 տուն բնակչությամբ (հարևան Աղյուղ գյուղի հետ միասին):

Կարմիրցոց-գեղ: Պեռիկցոց-գեղից արևելք ընկած այս գյուղն ուներ շուրջ ՇՕ տուն բնակչությամբ՝ բոլորն էլ Կարմիրցոց աղգատոհմից: Գյուղի բնակիչ էր գյուղապետը՝ մուխթարը: Գյուղի մոտից անցնում էր մի փոքր գետ, որը Թեքուչեի մոտ թափվում էր Եշիլ-իրմաքը:

Այվեճուղի վիճակի հիշյալ բնակավայրերում հայերը գլխավորապես զբաղվում էին դաշտամշակությամբ (ևրիպատացորեն, ցորեն, գարի, հաճար, կանեփ, կոտռիլ՝ գետնախնձոր և կարտոֆիլ) և անասնապահությամբ (կով, ոչխար, այծ):

Մշակելի հողամասերը մեծ մասամբ ղարիբատ՝ պատակ վարերր էին, սակայն անտող, հեշտ մշակելի և բերքատու:

Բեռնակիր անասուններից տարածված էին ձին, էշը և ջորին: Շրջանում հայերի հետ խառն և առանձին գյուղերում բնակվող Թուրքերը, Չերքեզներն ու մահմեդական վրացիները հայերի հետ բարիդրացիական կապեր ունեին, միմյանց հետ ապրում էին հաշտ ու համերաշխ:

Այվաճուղ: Ջարշամպալից շուրջ 8 ժամ հեռու, գետափնյա (Եշիլ-իրմաքին) գյուղ, հայ և Թուրք խառն բնակչությամբ: Այվաճուղին հարավ-արևմուտքից և հարավից սահմանակից էին, համապատասխանաբար՝ Մարթիլ և Թեքեչե գյուղերը: Այստեղ էր նստում միդուրլ՝ վիճակի կառավարիչը: Գյուղն ուներ 21 տուն հայ բնակչություն: Գասումցի, Մինասցի և Աագալցոց ազգատոհմերից:

Այվաճուղը Մարթիլի անրաժան մասն էր համարվում:

Տաղըտղուզ: Այվաճուղից շուրջ մեկ ժամ հարավ-արևմուտք ընկած լեռնային այս գյուղում բնակվում էր 12 տուն համշենահայությունն (Դարակլղցի, Դեմիրճցի, Չիլիմցի ու Ավճցի գերդաստանները), Ազգային-մշակութային կյանքով (ղպրոց, եկեղեցի) կապված էին Մարթիլ գյուղի հետ:

Կումբաքի զյուղախումբ: Կումբաք: Մարթիլից մեկ ժամ արեմուտք ընկած համշենահայ գյուղ՝ 53 տուն բնակչությամբ (Մումճցի, Քուլլցի, Թոխլըցի, Մարգարցի, Էօքսուզցի և Մաքոսցի գերդաստանները):

Էարեղ-քել (Օաեի-քել): Կումբաքին հարավ-արևմուտքից հարևան այս գյուղում բնակվում էր 29 տուն համշենահայ:

Ոմեին տղաների տարրական դպրոց:

Գյուղի ս. Աստվածածին եկեղեցին հիմնադրվել է 1858 թ.:

Աչա-խաուրման: Տաշղուզազից շուրջ մեկ ժամ արևմուտք ընկած այս փոքր գյուղում բնակվում էր 15 տուն համշենահայ՝ մեծամասնությամբ վարձակալ գյուղացիներ:

Ջարռա-գեղ: Աչա-խաուրմանից 1 ժամ արևմուտք, Ապտալ լեռեի ափին լեռնային գյուղ, զուլալ ջրերով ու առողջարար կլիմայով: Ուներ շուրջ 20 տուն համշենահայ բնակչություն:

Սայաղ. Այվաճուղից 3, Ջարշամպալից 12 ժամ հարավ, Սեբաստիայի սահմանամերձ լեռնային գյուղ: Իրեն հարակից Պեռիկցոց Քաղով

միատուն ուներ 61 տուն բնակիչ (Թահմազցի, Գյուլլցի, Մատինցի, Դեմիրճցի, Պևաիկցի, Թքանցի, Պարսումցի և այլ գերդաստաններ)։

Գլխավոր զբաղումները անասնապահությունն ու կաթնատնտեսությունն էր, կային նաև մեծաքանակ մեղու պահողներ։

* * *

Ալվաճոտքի վիճակի մեջին ու հատկապես հնուսվոր գյուղերի բնակչության գլխավոր զբաղումնքն անասնապահությունն ու կաթնամշակությունն էր։ Հացահատիկներից առանձնապես ապրծված էր եդիպտացորենը (լաղուա), որի հետ հոմատեղ մշակում էին ռանջարեզն ու կանապղենն։ Առանձին գյուղերում նուշենիկ կոտորկը (գետնախնձորն ու կարտոֆիլը) ցանում էին եդիպտացորենի արտերում հատատեղ։ Շատ գյուղերում տարածված էր մեղվարուծությունը։ Արտերը հիմնականում հերկում էին պատենական արորով, հարթավայրերում՝ մասամբ շաթալ-արորով։ Փոխադրական գլխավոր միջոցները երկանիվ սայլերն ու կըղախներն էին, ինչպես նաև գրաստը (էշ, ձի, ջորի)։

Ինչպես ամրողջ գավառում, այստեղ ևս անեծրը փայտաշեն էին։ Փայտակերտ էին նաև եկեղեցիներն ու գպրոցները։

Բնակչության մեծամասնությունը կալվածատերերի վարձակալներն էին. 1908 թ. հեղաշրջումից հետո ասաիճանարար սեփականատերերի թիվը զգալիորեն աճում է։

* * *

Շիլ-իրմաքից արևելք ընկած հայարնակ գյուղերը դասվում էին Զարշամպալի հարավ-արևելքում՝ Զաթաղ, Օրթա-օյմաք և էրինջուզ գյուղախմբերում։

Զաթաղի գյուղախումբ: Օդդու-բաշի: Զարշամպալից 3 ժամ հարավ-արևելք, պետական խճուղուց մեկ ժամ վերև, հարմարավետ դիրքով համշենահայ այս գյուղն իր հեռին-օդը թաղով ուներ 50 տուն բնակիչ, մեծամասնությունը վարձակալ գյուղացիներ։ Զարշամպալից մինչև Օդդու-բաշի բոլորը թուրքերի, աջարացիների, չերքեզների գյուղեր էին։

Ունեին տարրական վարժարան։

Քեշապցոց-գեղ: Ընկած էր Օդդու-բաշիից հարավ-արևելք, որտեղ բնակվում էին 25 տուն՝ Քեշապցի գերդաստանից։

Էմիրխոճ: Օդդու-բաշիին արեելքից սահմանակից այս գյուղի 36 տուն համշենհայերի մեծամասնությունը սեփական տնտեսության տեր էր։

Մովկար-բաշի: Օդդու-բաշիից մեկ, Զարշամպալից 4 ժամ հեռու, բաղմամարդ հայկական գյուղ, որն ուներ 80 տուն բնակիչ, մեծամասնությունը սեփականատեր։ Մովկար-բաշին շրջանի ամենաազամակերպված ու առաջավոր հայկական գյուղն էր։

Գյուղն ուներ 6-ամյա արական վարժատուն։

Համաձայն տեղացիների վկայության, գյուղի եկեղեցին կառուցվել է 1850-ական թվականներին։

Տերե-Զաթալի կամ Թաթուլցոց-գեղ: Մովկար-բաշիից կես ժամ հարավ ընկած հայարնակ գյուղ, որտեղ ապրում էր 30 տուն սեփականատեր ու վարձակալ համշենահայ, մեծամասնությունը Թաթուլցոց գերդաստանից։

Զաթաղ: Գյուղախմբի կենտրոնը հանդիսացող այս բնակավայրը դասվում է Մովկար-բաշիի հարավ-արևմուտքում, որն ուներ շուրջ 60 տուն համշենահայ բնակիչ՝ մեծ մասը սեփականատեր։

Զաթաղում կար փայտաշեն դպրոց ու եկեղեցի։

Քյոյ-յեռի: Զաթաղից կես ժամ արևմուտք գտնվող այս գյուղում բնակվում էր 24 տուն վարձակալ ու սեփականատեր համշենահայ։

Աղգային-մշակութային կյանքով կապված էին Զաթաղի գյուղախմբի գյուղերի հետ։

Զաթաղի գյուղախմբի վերը հիշված բոլոր գյուղերի գլխավոր զբաղմունքը ծխախոտագործությունն էր։ Գյուղատնտեսական մյուս ճյուղերով (դաշտամշակություն, անասնապահություն և այլն) հիմնականում բավարարում էին բնաանիքի պահանջները։

Շրջանում հարթավայրեր քիչ լինելու հետևանքով, հողերը հիմնականում հերկում էին պատենական արորներով։ Որպես լծկան անասուն օգտագործում էին եղն ու դոմեշը։ Շատերն ունեին հեծկան ձի։ Ինչպես ամրողջ գավառակում, այնպես էլ այստեղ, որպես հիմնական փոխադրության միջոց օգտագործում էին երկանիվ սայլերն ու կըղախները։ Բնակարաններն ու հասարակական (եկեղեցի, դպրոց) կամ օժտնդակ շենքերը փայտաշեն էին։

Համարյա բոլոր հայարնակ գյուղերը շրջապատված էին մահմեդականների (չերքեզ, աշարացի, թուրք) գյուղերով։ Կային նաև փոքրաթիվ հումական բնակավայրեր։

Օրթա-օյմաքի գյուղախումբ: Այս շրջանը դասվում է Զաթաղի հարավային լեռնաշխարհում։ Շրջանի հայարնակ գյուղերն էին.

Տալլի-յաթաղ (Տալըղըղչ): Մովկար-բաշիից մեկ ժամ, Զարշամպալից 5 ժամ հարավ բնակած լեռնային այս գյուղում բնակվում էր 30 տուն

Ախալցխայի գավառակում մինչև վերջերս պահպանվում էին հին ավանդական տոներ, որոնցից մեկը Ամանորն էր։ Ամանորը նշում էին հունվարի 14-ին։ Տոնի նախորդ օրը՝ հունվարի 13-ին, տղաները տնից տուն էին գնում և ուրախ երգերով շնորհավորում տանտերերին։ Տանտերերը նրանց պատրաստված էին լինում ընդունելու։ Նրանք տղաներին տալիս էին ընկուզեղեն, չամիչ, թխվածքաբլիթներ, իսկ աղջիկներին՝ ոսկեզօծ մետաքսե թաշկինակներ։

Ամանորի առավոտյան տղաները գնում էին ձորակ և այնտեղ հավաքում ուռենու ճյուղեր։ Ճյուղերը տուն բերելուց հետո դնում էին դռան առջև, որպեսզի տարվա ընթացքում տան մեջ չմտնի չար ոգի։ Ուռենու ճյուղերը պահում էին մինչև Զատիկ, որից հետո դրանք այրում էին։

Ամանորի գիշերը տղաները տնից տուն էին գնում՝ ցորենի հատիկներ հավաքելու։ Հավաքված ցորենը տանում էին ջրաղաց, աղում և ստացված ալյուրից թխում էին մեծ հաց, որը կոչվում էր «Ամանորի հաց»։ Հացի մեջ դնում էին մի դրամ, որը ով գտնում էր, նրան համարում էին տարվա երջանիկ մարդ։

Ամանորի հացը կտրում էին ընտանիքի բոլոր անդամների թվով, և ով որ ներկա չէր լինում, նրա համար էլ պահում էին մի կտոր։ Ամանորի հացը կտրելուց հետո ընտանիքի անդամները միմյանց շնորհավորում էին տարվա առթիվ։

Ամանորի հացը կտրելուց հետո ընտանիքի անդամները սկսում էին ուտել։ Ուտելիս ոչ ոք չէր կարող ասել, թե հացը համեղ է, որովհետև հավատում էին, որ եթե ասես, հացը կդառնա դառը։

Ամանորի հացը ուտելուց հետո ընտանիքի անդամները սկսում էին խաղալ տարբեր խաղեր, որոնցից ամենատարածվածը «Ամանորի խաղն» էր։ Խաղի ժամանակ ընտանիքի անդամները նստում էին շրջանաձև և մեջտեղում դնում էին մի ամանով ջուր։ Ամանի մեջ գցում էին մի մատանի։ Ամանի ջուրը խառնում էին և ասում էին.

— Ամանոր, ամանոր, ո՞ւմ ես տալու։

Ամանորը պատասխանում էր.

— Ով որ ուզում է, թող խմի։

Ամանորի խաղի ժամանակ ամանի ջուրը խմում էին բոլորը, և ով որ մատանին գտնում էր, նա համարվում էր տարվա երջանիկ մարդ։

Ամանորի խաղերից հետո ընտանիքի անդամները սկսում էին պարել։ Պարելիս նրանք երգում էին հետևյալ երգը.

Ամանոր, ամանոր,
Ամանորի տանտեր,
Ամանորի հացը
Ամանորի տանտեր։

Ամանորի հացը կտրելուց հետո ընտանիքի անդամները սկսում էին ուտել։ Ուտելիս ոչ ոք չէր կարող ասել, թե հացը համեղ է, որովհետև հավատում էին, որ եթե ասես, հացը կդառնա դառը։

